Կէս գիշերուն ,	A minuit .
Աւելի քիչ , նուազ .	Moins ( peu ին քաղղատականն է . կթէ գոյականն մը առաջ է , իրմէ ետքը de կ'ուզէ ) .

ԳԻՏ. Demi ածականը գոյականնէ մը առաջ անխորտիկ կը մնայ , այսինքն՝ գոյականին հետ սեռով չի համաձայնիր , կամ թէ ըսենք . թէև գոյականը իգական է , ինք արական կը մնայ . միայն երկուքին մէջ տեղ միութեան գիծ ( trait d'union ) կը գրուի . ինչպէս , une demi-heure . Բայց երբ գոյականէն ետքն է , սեռիւ միայն ( ոչ թուով ) գոյականին հետ կը համաձայնի , այսինքն՝ կթէ գոյականն արական է , արական կը գրուուի , կթէ գոյականն իգական է , իգական կը գրուուի , այլ միշտ եզակի կը մնայ , թէև գոյականը յոքնակի ըլլայ . ինչպէս , Une heure et demie, deux heures et demie. un mois et demi, deux mois et demi. Demie, իգական վերջաւորութեամբ իբր գոյական կը գործածուի .

Cette horloge sonne les demies. Այս ժամացոյցը կէսերը կը զարնէ :

48. Հրահանգ

Տուն երթալ կ'ուզէ՞ք . — Երթալ կ'ուզեմ . — Ձեր որդին իմ տունս երթալ կ'ուզէ՞ . — Ձեր տունը երթալ կ'ուզէ . — Ձեր եղբայրը իւր տո՛ւնն է . — Հոն է . — Ո՛ւր երթալ կ'ուզէ՞ք . — Իմ տունս երթալ կ'ուզեմ . — Ձեր տղաքն իմ տունս երթալ կ'ուզե՞ն . — Ձեր տունը երթալ չեն ուզեր . — Այս տոմսակը որ՞՞ւ տունս տանել կ'ուզէ՞ք . — Կրացույս տունը տանել կ'ուզեմ . — Ձեր սպասաւորը տոմսակս ձեր հօրը տունը տանել կ'ուզէ՞ . — Տանել կ'ուզէ . — Ձեր եղբայրը հրացաններս թուփացուցն տունը տանել կ'ուզէ՞ . — Տանել կ'ուզէ . — Մեր թշնամիները մեր ատրճանակներն որ՞՞ւ տունս տանել կ'ուզեն . — Տաճկաց տունը տանել կ'ուզեն . — Կօչկակարը մեր մուճակներն ո՞ւր տանել կ'ուզէ . — Ձեր տունը տանել կ'ուզէ . — Տուն տանել կ'ուզէ՞ . — Հոն տանել չուզեր . — Կ'ուզէ՞ք իմ տունս դալ . — Ձեր տունը երթալ չեմ ուզեր . — Ո՛ւր երթալ կ'ուզէ՞ք . — Բարի Անդղիացուց տունը երթալ կ'ուզեմ . — Բարի Իտալացիք մեր տունը երթալ կ'ուզե՞ն . — Երթալ չեն ուզեր . — Ո՛ւր երթալ կ'ուզեն . — Տեղ մը երթալ չեն ուզեր :

49. Հրահանգ

Ձեր որդին մեր տունը (կամ մեզի) տանել կ'ուզէ՞ք . — Ձեր տունը տանել չեմ ուզեր , այլ նաւապետին տունը . — Ե՞րբ կ'ուզէք նաւապետին տունը տանել . — Վաղը կ'ուզեմ տանել . — Ձեր տղաքը բժշկին տունը տանել կ'ուզէ՞ք . — Տանել կ'ուզեմ . — Ե՞րբ տանել կ'ուզէք . — Այսօր տանել կ'ուզեմ . — Ժամը քանի՞ին տա-

նել կ'ուզէ՞ք . — Ճամբ երկուք ու կէտին . — Մըր կ'ուզէ՞ք ձեր սպասաւորը բժշկին տունը դրկել . — Այսօր զրկել կ'ուզեմ . — Ճամբ քանի՞ն . — Ճամբ տասը քասորդ անցած . — Տեղ մը երթալ կ'ուզէ՞ք . — Տեղ մը երթալ կ'ուզեմ . — Ո՛ւր կ'ուզէ՞ք երթալ . — Սկոյտիսացւոյն տունը կ'ուզեմ երթալ . — Իրլանտացին կ'ուզէ՞ ձեր տունը գալ . — Մեր տունը գալ կ'ուզէ . — Ձեր սրտին մէկուն տունը երթալ կ'ուզէ . — Մէկուն տունը երթալ կ'ուզէ . — Որո՞ւ տուն երթալ կ'ուզէ . — Իւր բարեկամներուն տունը երթալ կ'ուզէ . — Արանիացիք աւել մը երթալ կ'ուզե՞ն . — Տեղ մը երթալ չեն ուզեր . — Ձեր բարեկամը մէկուն տունը երթալ կ'ուզէ . — Մէկուն տունը երթալ չուզեր :

### 50. Հրահանգ

Մըր կ'ուզէ՞ք ձեր պատանին նկարչին տունը տանել . — Այսօր կ'ուզեմ տանել . — Այս թռչուններն ո՛ւր տանել կ'ուզէ . — Տեղ մը տանել չուզեր . — Բժիշկը կ'ուզէ՞ք այս մարդուն տունը տանել . — Տանել կ'ուզեմ . — Բժիշկը մըր կ'ուզէ երթալ ձեր եղբորը տունը . — Այսօր կ'ուզէ երթալ . — Մեղի սպասաւոր մը զրկել կ'ուզէ՞ք . — Ձեզի մէկ մը կ'ուզեմ զրկել . — Նքկարչին տունը տղայ մը զրկել կ'ուզէ՞ք . — Մէկ մը զրկել չեմ ուզեր . — Նաւասպետը որո՞ւ տունն է . — Մէկուն տունը չէ . — Ձեր եղբայրը ժամանակ ունի՞ իմ առնս երթալու . — Երթալու ժամանակ չունի . — Գաղիացին տոմսակ մ'ալ գրել կ'ուզէ . — Կ'ուզէ հաս մ'ալ գրել . — Ձեր բարեկամը գրելու այնչափ տոմսակ ունի՞ որչափ ես . — Ճիշդ այնչափ գրելու բաղձանք ունի . — Որո՞ւ կ'ուզէ գրկել զանոնք . — Իւր բարեկամներուն կ'ուզէ գրկել . — Ո՞վ կ'ուզէ փոքր տոմսակներ գրել . — Երիտասարդը կ'ուզէ գրել . — Եղ-

բօրս տունը շատ գիրք տանել կ'ուզէ՞ք . — Քանի մը հաս միայն կ'ուզեմ տանել :

Յ1. Հրահանգ

Կ'ուզէ՞ք մեր բարեկամին տունն արկղ մ'ալ զրկել . — Տակաւին ոչ սակաւ զրկել կ'ուզեմ . — Խոյրարարը տակաւին սրչափ բեղոյր կ'ուզէ զրկել . — Տակաւին վնց (հաս) կ'ուզէ զրկել . — Գերձակը կ'ուզէ՞ այնչափ մուճակ զրկել սրչափ կօշկակարը . — Աւելի քիչ (նուազ) կ'ուզէ զրկել . — Ձեր սրդին նաւապետին տունը երթալու քաջասրտութիւն ունի՞ . — Արթալու քաջասրտութիւն ունի , բայց ժամանակ չունի . — Կ'ուզէ՞ք այնչափ շուն գնել սրչափ ձի . — Աւելի ասոնցմէ կ'ուզեմ գնել քան թէ անոնցմէ . — Ժամը քանի՞ն կ'ուզէ՞ք ձեր սպասաւորը Հոլանտացոյն տունը զլրկել . — Ժամը վնցին քառորդ մնացած կ'ուզեմ զրկել . — Ձեր հայրը ժամը քանի՞ն իւր տունն է . — Կէսօրին իւր տունն է . — Ձեր բարեկամը ժամը քանի՞ն կ'ուզէ զրկել իւր տոմսակները . — Կէս գլխերուն կ'ուզէ զրկել . — Նաւապետին տունը երթալու կը վախնա՞ք . — Ձեմ վախնար , բայց կ'ամչնամ երթալ :

ԳԻՏ. Ա. Գաղիերէնի մէջ դերանուն խնդիրները միշտ եւ ամէն բայի քով դրուելու են . Հայերէն կըրնանք շատ անգամ այս խնդիրները զանց ընել . զորօրինակ՝ Տոմսակս ձեր հօրը տունը կ'ուզէ՞ք տանել . ասոր պատասխան կրնանք ըսել . Կ'ուզեմ տանել : Գաղիերէնի մէջ պէտք է ըսել . Կ'ուզեմ զայն (տոմսակը) հոն (հօրս տունը) տանել . Voulez-vous porter mon billet chez votre père ? — Je veux l'y porter .

ԳԻՏ. Բ. Porter կը նշանակէ անշունչ բան մը տանել , կամ վերցունելով տանել . իսկ mener կը նշանակէ :

Հնչար մը տանել , ան որ կրնայ քաղել , երթալ մէկ-  
տեղ . աստի կ'ըստի . Porter un billet, բայց Mener un  
enfant chez quelqu'un.

## Ի. ԳԱՅ. Vingtième Leçon.

Համար ( վասն ) .	Pour.
Տեսնել .	Voir (*) 3.
Հայ դնելու համար աստի ու .	Avez-vous de l'argent pour
նիք .	acheter du pain ?
Ս. Նիմ .	J'en ai.
Ձեր եղբորը տունը երթալ կու .	Voulez-vous aller chez votre
ղէք դանի տեսնելու համար .	frère pour le voir ?
Վասնանակ չունիմ հոն երթալ	Je n'ai pas le temps d'y aller
դանի տեսնելու համար .	pour le voir.
Ձեր եղբայրը դանակ մը աճի՞	Votre frère a-t-il un couteau
խոր հացը կտրելու համար .	pour couper son pain ?
Կտրելու համար անկէ ( դանակ )	Il n'en a pas pour le couper.
չունի .	
Աւելել .	Balayer 4.
Սպաննել , մորթել .	Tuer 4.
Աղել .	Saler. 4.
Կրնալ , կարող ըլլալ .	Pouvoir (*) 3.
Կրնա՞ք .	Pouvez-vous ?
Կրնամ .	Je peux կամ je puis.
Չեմ կրնար .	Je ne peux pas կամ je ne puis.
Կրնայ .	Peut-il ?
Կրնայ .	Il peut.
Չի կրնար .	Il ne peut pas.
Կրնանք .	Nous pouvons.
Կրնաք .	Vous pouvez.
Կրնան .	Ils peuvent.
Ձեռ .	Mé ( էղ. հայտ. Ս. գէղք գեր .
	տեսի ինքիր , régime di-
	rect. )

Ձանի, զայն, զնա .	Le (եղ. հայց. դեր. Գ. դէմք, սեռի խնդիր) .
Ձխ տեսնել .	Me voir .
Ձայն տեսնել .	Le voir .
Մարդը տեսնել .	Voir l'homme .
Ձանի սպաննել, մորթել .	Le tuer .

Տրական շինելու համար կը դործածուի A, որ le յօդով միանալով կ'ըլլայ au, եւ յօքնակին les յօդով միանալով կ'ըլլայ aux. ձայնաւորով կամ անձայն հ ով սկսող անուններէ առաջ à եւ le եղակիին մէջ չեն միանար, այլ կ'ըլլայ à l' :

Բարեկամին, A l'ami .	Բարեկամներուն, Aux amis .
Մարդուն, A l'homme .	Մարդոց, Aux hommes .
Նաւապետին, Au capitaine .	Նաւապետներուն, Aux capitaines .
Գիրքին, Au livre .	Գիրքերուն, Aux livres .
Անոր ( դեր . արական ) .	Lui ( Գ. դէմք դեր. էական, ար. և իգ. բնութ. խնդիր, régime indirect ) .

Ինծի .	Me ( Ա. դէմք դեր. էական, բնութ. խնդիր, régime direct ) .
--------	--

Ինծի խօսել .	Me parler .
Անոր խօսել .	Lui parler .
Անոր գրել .	Lui écrire .
Ինծի գրել .	M'écire ( գոխանակ me écrire . քովէ քով երկու ձայնաւորի հնչումն ականջի աղէկ չի դար. անոր համար օ կրճատեալ է ) .

Մարդուն խօսել .	Parler à l'homme .
Նաւապետին խօսել .	Parler au capitaine .
Նաւապետին գրել .	Ecrire au capitaine .
Կրնա՞ք ինծի գրել .	Pouvez-vous m'écire ?
Կրնամ գրել .	Je puis vous écrire .
Մարդը կրնա՞յ ձեզի խօսել .	L'homme peut-il vous parler ?
Կրնայ խօսել .	Il peut me parler .

Կ'ուզէ՞ք ձեր եղբորը գրել .	Voulez-vous écrire à votre frère ?
Կ'ուզեմ անոր գրել .	Je veux lui écrire.
Կտար .	Le panier.
Գորգ (խայի) .	Le tapis.
Յատակ , դեղին ( սենեկի ) .	Le plancher.
Կատու .	Le chat.
Գիրքը մտրդունը գրկել կ'ուզէ՞ք .	Voulez-vous envoyer le livre à l'homme ?
Ղրկել կ'ուզեմ .	Je veux le lui envoyer.
Երբ կ'ուզէք գրել .	Quand voulez-vous le lui envoyer ?
Վաղը կ'ուզեմ գրել .	Je veux le lui envoyer demain.

Տրական դերանուններ      Հայցական դերանուններ

Ենձի .	me	կամ	à moi .	Զես ,	me	կամ	moi .
Անոր (նա) lui	„	a lui .	Զանի ,	le	„	lui .	
Մեզի .	nous	„	à nous .	զմեզ ,	nous		
Ձեզի .	vous	„	à vous .	զՁեզ ,	vous		
Անոնց .	leur	„	à eux .	Զանոնք ,	les	„	eux .

ԳԻՏ. Ա. Առաջին սեան դերանունները , me, lui (ար .) nous, vous, leur, le, les, բայէն միշտ առաջ կը գրուին (բայ ի հրամայականէն) . իսկ երկրորդ սեան դերանուններն . à moi, à lui, à nous, à vous, à eux, moi, lui (հայց .) , eux, եւ ամէն դոյական ինդիք միշտ բայէն ետքը կը գրուին , ինչպէս օրինակներէն կը տեսնուի :

Ձեզի խօսել կ'ուզէ՞ .	Veut-il vous parler ?
Ենձի խօսել չուզեր , այլ ձեզի .	Il ne veut pas parler à moi, mais à vous.
Կ'ուզէ՞ք անոր գրել .	Voulez-vous lui écrire ?
Ձեմ ուզեր անոր գրել , այլ անոր եղբորը .	Je ne veux pas écrire à lui, mais à son frère.

ԳԻՏ. Բ. Երբ երկու այլեւայլ դէմքի դերանուն խընդիր կայ , առաջին եւ երկրորդ դէմքի դերանունը , թէ

և բնութեան խնդիր , այսինքն՝ արական ըլլայ , երբորդ գէմքի գերանունէն առաջ կը գրուի : Եթէ երկուքն ալ երբորդ գէմքի են , սեռի խնդիրը ( հայցականը ) բնութեան խնդրէն ( արականէն ) առաջ կը գրուի :

Եզ.

Յր.

Զայն ինձի , Me le.  
 Զայն մեզի , Nous le.  
 Զայն ձեզի , Vous le.  
 Զայն անոր , Le lui.  
 Զայն անոնց , Le leur.

Զանոնք ինձի , Me les.  
 Զանոնք մեզի , Nous les.  
 Զանոնք ձեզի , Vous les.  
 Զանոնք անոր , Les lui.  
 Զանոնք անոնց , Les leur.

Երբ կ'ուզէք կողովն ինձի զըրկեմ . Quand voulez-vous m'envoyer le panier ?

Այսօր կ'ուզեմ զըրկեմ . Je veux vous l'envoyer aujourd'hui.

ԴԻՏ. Գ. Առաջ ըսուեցաւ թէ որոշեալ անուան կամ անուանց տեղ , le, les գերանունները կը գրուին . իսկ անորոշ կամ մասնական մտքով առնուած անուան կամ անուանց տեղ en գերանունը կը գրուի . ինչպէս՝ Գիրքը կամ գիրքերն ինձի տալ կ'ուզէք . — Տալ կ'ուզեմ . Voulez-vous me donner le livre կամ les livres ? — Je veux vous le կամ les donner . ինձի գիրք տալ կ'ուզէք . — Տալ կ'ուզեմ . Voulez-vous me donner des livres ? — Je veux vous en donner . Մենք հրահանգներուն մէջ անկէ , անսցմէ գերանունները զանց կ'ընենք . Գաղիերէնի մէջ en միշտ գրուելու է , ինչպէս նաեւ ուրիշ գերանուն խնդիրներ որոնք Հայերէնի մէջ կըրնան զանց առնուիլ :

ԴԻՏ. Գ. En գերանունն ուրիշ գերանուններէն ետքը կը գրուի . ինչպէս .

M'en,	Ենձի անկէ , անանցմէ
Lui en,	Անոր ,, ,,
Nous en,	Մեզի ,, ,,
Vous en,	Ձեզի ,, ,,
Leur en,	Անանց ,, ,,

Տալ .	Donner 4.
Փոխ տալ .	Prêter.
Ենձի հաց տալ կ'ուզէ՞ք .	Voulez-vous me donner du pain ?
Տալ կ'ուզեմ .	Je veux vous en donner.
Եզրորոս ստակ փոխ տալ կ'ուզէ՞ք .	Voulez-vous prêter de l'argent à mon frère ?
Փոխ տալ կ'ուզեմ .	Je veux lui en prêter.

## ԷԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒԱՆՅ ՀՈՒՈՂՈՒՄԸ

	Եզ .	Աք .	Իզ .				
Ո. Ես ,	je, moi.	Դուն ,	tu, toi	Ան ,	il, lui.	Ել .	elle.
Ս. Իմ ,	de moi.	Քու ,	de toi.	Անոր ,	de lui.	Դ'ել .	d'elle.
Տ. Ենձի ,	me,	Քեզի ,	te,	Անոր ,	lui,	Լի .	lui.
	à moi.		à toi.		à lui.	Ել .	à elle.
Հ. Ձես ,	me, moi.	Քեզ ,	te, toi.	Ան ,	le, lui.	Լա, Ել .	la, elle.

## Յք .

Ո. Մենք ,	nous.	Դուք ,	vous.	Անանք ,	ils.	Ել .	elles.
Ս. Մեր ,	de nous.	Ձեր ,	de vous.	Անանց .	d'eux.	Դ'ել .	d'elles.
Տ. Մեզի ,	nous.	Ձեզի ,	vous.	Անանց ,	leur.	Լի .	leur.
	nous.		vous.		à eux.	Ել .	à elles.
Հ. Մեզ ,	nous.	Ձեզ ,	vous.	Ձանանք ,	les.	Ել .	elles.
					eux.	Ել .	elles.

ԴԻՏ. Ա. Պէտք է դիտնալ որ Գաղիերէնին սեռա-  
կանք մեր բացառականին եւ պատմականին նշանա-  
կաւթիւնն ալ ունի , եւ խօսքին իմաստէն կը հասկըց-  
ուի . ուստի de nous, կը նշանակէ մեր , մեք եւ մեր  
վրայով :

ԳԻՏ. Բ. En գերանուճը de lui, d'elle, d'eux, d'elles, գերանուճնց նշանակութիւնն ունի . եւ y գերանուճը à lui, à elle, à eux, à elles, գերանուճնց նշանակութիւնն ունի . կամ թէ ըսենք , en սեռական է , y արքական :

ԳԻՏ. Գ. Je, tu, il, ils, միշտ բայի հետ միայն իրրեւ աէր բայի կը գործածուին . Moi, toi, lui, nous, vous, eux, elle, elles թէ մինակ եւ թէ de, à, եւ ուրիշ նախադրութիւններով կը գործածուին . իսկ me, te, le, la, les, ամենեւին նախադրութիւն չեն ունենար . me, te, եւ nous, vous մինակ՝ թէ արական եւ թէ հայցական են . le, la, les հայցական են միայն :

(\*) Գաղղիերէն աէր բային sujet կը կոչուի , եւ ուղղական է . Սեռի խնդիրը complément կամ régime direct կ'ըսուի , եւ հայցական է . մնացեալ հոլովները՝ սեռական , արական , եւայլն , եւ բոլոր նախադրութեամբ խնդիրներ complément կամ régime indirect կը կոչուին որ մեր քերականական լեզուով բնութեան խնդիր կ'ըսուի :

### 52. Հրահանգ

Ատաղձագործը մուրճ մը գնելու համար բաւական ստակ ունի՞ . — Բաւական ունի . — Նաւապետը նաւ մը գնելու համար բաւական ստակ ունի՞ . — Հատ մը գնելու համար բաւական ստակ ունի . — Գեղացին հաց գնելու բաղձանք ունի՞ . — Գնելու բաղձանք ունի , բայց գնելու համար բաւական ստակ չունի . — Ձեր որդին տոմսակ մը գնելու համար թուղթ ունի՞ . — Ձունի . — Եղբայրս տեսնելու ժամանակ ունի՞ք . — Ձանի տեսնելու ժամանակ չունիմ . — Ձեր հայրը զիս տեսնել կ'ուզէ՞ . — Ձեզ տեսնել չուզեր . — Ձեր սպասուորը գետինն սուլելու համար աւել մը ունի՞ . — Աւ-

լելու համար աւել մը ունի . — Աւել կ'ուզէ՞ . — Աւել կ'ուզէ . — Նաւատոյն տարմ գնելու համար ստակ ունի՞ . — Գնելու համար ստակ չունի . — Ձեր խոսակերպը եղան միս գնելու համար ստակ ունի՞ . — Գնելու համար ստակ ունի . — Վառեակներ գնելու համար ստակ ունի՞ . — Յիշի . — Խմ եղան միտս աղելու համար բաւական աղ ունի՞ք . — Աղելու համար բաւական ունիմ . — Ձեր բարեկամը զիս տեսնելու համար առնա սոյ կ'ուզէ՞ . — Չուզեր ոչ ձեր տանը երթալ , ոչ ալ ձեզ տեսնել . — Ձեր դրացին իւր ձին սպաննելու բաղձանք ունի՞ . — Չանի սպաննելու բաղձանք չունի . — Ձեր բարեկամները սպաննել կ'ուզէ՞ք . — Թշնամիներս միայն կ'ուզեմ սպաննել :

### 53. Հրահանգ

Արնա՞ք ինծի հայ կտրել . — Արնամ կտրել . — Ատրելու համար դանակ մը ունի՞ք . — Հատ մը ունիմ . — Չեւնոյներս կրնա՞ք նորոգել . — Արնամ նորոգել , բայց ընելու բաղձանք չունիմ . — Գերձակը կրնա՞յ ինծի հանդերձ մը շինել . — Արնայ հատ մը շինել . — Բըժըշկին խօսել կ'ուզէ՞ք . — Անոր խօսել կ'ուզեմ . — Ձեր որդին ինծի խօսելու համար զիս տեսնել կ'ուզէ՞ . — Կ'ուզէ ձեզ տեսնել ձեզի սիւստ մը տալու համար . — Չիս սպաննել կ'ուզէ՞ . — Ձեզ սպաննել չուզեր . մինակ ձեզ տեսնել կ'ուզէ . — Ձեր ծեր բարեկամին որդին եզ մը մորթել կ'ուզէ՞ . — Արկու հատ մորթել կ'ուզէ . — Մեր կատուն սպաննելու սժ բաղձանք ունի . — Մեր դրացոյն մանչը դանի սպաննելու բաղձանք ունի . — Ինծի սրչափ ստակ կրնաք զրկել . — Ձեզի քսան ֆրանք կրնամ զրկել . — Խմ գորդս ինծի դըրկել կ'ուզէ՞ք . — Դրկել չեմ ուզեր . — Առջկակարին քան մը զրկել կ'ուզէ՞ք . — Առջկակներս զրկել կ'ուզեմ . — Ձեր հանդերձներն անոր զրկել կ'ուզէ՞ք . — Ո՛չ , զա-

նոնք դերձակին կ'ուղեմ գրկել . — Դերձակը կրնայ իմ հանդերձներս ինծի գրկել . — Ձի կրնար գրկել . — Ձեր տղաքը կրնաս ինծի գրել . — Արնան գրել . — Ձեր կողովն ինծի փոխ տալ կ'ուղէ՞ք . — Փոխ տալ կ'ուղեմ :

54. Հրահանգ

Ղինի խմելու համար դաւաթ մը ունի՞ք . — Հառ մը ունիմ , բայց զինի չունիմ . չայ միայն ունիմ . — Ղինի զնելու համար ինծի ստակ տալ կ'ուղէ՞ք . — Տալ կ'ուղեմ , բայց շատ չունիմ . — Ա'ուղէ՞ք ձեր ունեցածը տալ ինծի . — Տալ կ'ուղեմ . — Արնա՞ք այնչափ զինի խմել որչափ կաթ . — Արնամ այնչափ ասկէ խմել որչափ անիէ . — Ձեր գրաչին կրակ ընելու համար փայտ ունի՞ . — ( Անկէ ) ընելու համար փայտ ունի , բայց հայ եւ կարագ զնելու համար ստակ չունի . — Անոր փոխ տալ կ'ուղէ՞ք . — Փոխ տալ կ'ուղեմ . — Գերմանացւոյն կ'ուղէ՞ք խօսել . — Անոր կ'ուղեմ խօսել . — Ո՛ւր է . — Ամերիկացւոյն որդւոյն տունն է . — Գերմանացին կ'ուղէ՞ ինծի խօսել . — Ա'ուղէ խօսել ձեզի . — Ի՞մ եղբօրս թէ ձերինին կ'ուղէ խօսել . — Երկուքին ալ կ'ուղէ խօսել . — Մեր գրաչւոյն տղաքը կրնա՞ն աշխատիլ . — Արնան աշխատիլ , բայց չեն ուղեր :

55. Հրահանգ

Հողանտացւոյն տղոյը խօսել կ'ուղէ՞ք . — Խօսել կ'ուղեմ անոնց . — Անոնց ի՞նչ կ'ուղէ՞ք տալ . — Անոնց աղէկ կարկանդակ կ'ուղեմ տալ . — Ա'ուղէ՞ք անոնց բան մը փոխ տալ . — Անոնց չեմ կրնար բան մը փոխ տալ . բան մը չունիմ . — Խոհակերը եզն աղելու համար տակաւին աղ ունի՞ . — Տակաւին քիչ մը ունի . — Տակաւին որիդ ունի . — Տակաւին շատ ունի . — Ա'ուղէ՞ անկէ ինծի տալ . — Ա'ուղէ տալ . — Այս փոռեակը

թէ անիկա կ'ուզէ մարթեղ . — Ոչ ասիկա ոչ անիկա կ'ուզէ մարթեղ . — Ի՞նչ եղ մարթեղ կ'ուզէ . — Գեղապետներ կ'ուզէ մարթեղ . — Այս եղբ թէ անիկա կ'ուզէ մարթեղ . — Երկուքն ալ կ'ուզէ մարթեղ . — Ը՞ղ մեզի պաքցամաս դրկել կ'ուզէ . — Հացադործը կ'ուզէ դրրկել . — Ի՞նչու բան մը ունի՞ք . — Ի՞նչու բան մը չունիմ :

### 56. Հրահանգ

Ձեր սրդին ի՞նչ ունի բնելու . — Ունի գրեղ ( պիտի գրէ ) իւր աղէկ բարեկամներուն եւ նաւասպաններուն . — Որո՞ւ կ'ուզէ՞ք խօսել . — Կ'ուզեմ խօսել խապապուտի եւ Գաղիապուտի . — Կ'ուզէ՞ք անոնց ստակ տալ . — Կ'ուզեմ տալ . — Այս մարդուն հաց տալ կ'ուզէ՞ք . — Տալ կ'ուզեմ . — Անոր հանգերձ մը տալ կ'ուզէ՞ք . — Հատ մը տալ կ'ուզեմ . — Ձեր բարեկամներն ինձի սուրճ տալ կ'ուզեն . — Տալ կ'ուզեն . — Ձեր զիբքերն ինձի փոխ տալ կ'ուզէ՞ք . — Փոխ տալ կ'ուզեմ . — Ձեր խշահակները ձեր գրացիներուն փոխ տալ կ'ուզէ՞ք . — Փոխ տալ չեմ ուզեր . — Ձեր հայելիները կ'ուզէ՞ք անոնց փոխ տալ . — Փոխ տալ կ'ուզեմ . — Ձեր անձրեւնոցներն որո՞ւ փոխ տալ կ'ուզէ՞ք . — Իմ բարեկամներուս փոխ տալ կ'ուզեմ . — Ձեր բարեկամը իւր ձորձը ( ճերմկեղէնը ) որո՞ւ փոխ տալ կ'ուզէ . — Մէկուն փոխ տալ չուզեր :

ԻԱ. ԳԱՍ. Vingt-et-unième Leçon.

Որո՞ւ (քիմէ՞) .

A qui ? (Հարցում, որոյ պատասխանը արական հոլով է) .

Ո՞վ .

Qui ?

Ի՞նչ .

Que ? quoi ?

ՀԱՐՑԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒԱՆ ՀՈՒՈՎՈՒՄԸ

Անճանց համար

Իրաց համար

Ուղղ. և հայց .

Տէր բոյ՛ի և .

Սեւ. ի խնդիր .

Սեւ. Յատկա-

ցուցել .

Տրակ. ինչու-

թեան խնդ .

Ո՞վ, զո՞վ. Qui ?

Որո՞ւ. De qui ?

Որո՞ւ. A qui ?

Ի՞նչ, Que ? quoi ?

Ի՞նչ բանի. De quoi ?

Ի՞նչ բանի. A quoi ?

ԳԻՏ. Qui ? ո՞վ, յոքնակի չունի, թէ արական է և թէ իգական . ուտի կ'ըսուի . Qui est ? Ո՞վ է . Qui sont ? Որո՞նք են :

Նոյնպէս է que ? ի՞նչ, որ իրաց վրայ կ'ըսուի :  
 Quoi ? ի՞նչ, բայի հետ չի գործածուիր :

Պատասխանել .

Մարդուն պատասխանել .

Մարդոց պատասխանել .

Որո՞ւ կ'ուզէք պատասխանել .

Եզրօրս կ'ուզեմ պատասխանել .

Անոր պատասխանել .

Անոնց պատասխանել .

Տոմսակին պատասխանել .

Անոր պատասխանել .

Տոմսակներուն պատասխանել .

Անոնց պատասխանել .

Répondre à .

Répondre à l'homme .

Répondre aux hommes .

A qui voulez-vous répondre ?

Je veux répondre à mon frère .

Lui répondre .

Leur répondre .

Répondre au billet .

Y répondre .

Répondre aux billets .

Y répondre .

Y դերանունը եղակի և յոքնակի արականի տեղ է ,

և ընդհանրապէս իրաց համար կ'ըսուի , և. lui, leur գե-  
րանուանց նշանակութիւնն ունի :

Կ'ուզէ՞ք սամակիս պատաս- Voulez-vous répondre à mo<sup>n</sup>  
խանել . billet ?

Կ'ուզեմ՝ անոր պատասխանել . Je veux y répondre.

Կ'ուզէ՞ք սամակներուս պա- Voulez-vous répondre à mes  
տասխանել . billets ?

Կ'ուզեմ՝ անոնց պատասխանել . Je veux y répondre.

Տեսարանք . Le spectacle.

Թատրանք . Le théâtre.

Պարահանդէսք . Le bal.

Թատրանք ( ս'ւր , շարժում և գաղարուճ ) . Au théâtre.

Թատրաներք ,, ,, Aux théâtres.

Պարահանդէսք ,, ,, Au bal.

Պարահանդէսներք ,, ,, Aux bals.

Պարտէզք ,, ,, Au jardin.

Պարտէզներք ,, ,, Aux jardins.

Մթերանոցք , գանձատունք Le magasin.

( մազազան ) :

Գրասենեակք : Le comptoir.

Խուկան . Le marché.

Հոն Y ( մկր . )

Հոն երթալ . Y aller.

Հոն ըլլալ . Y être.

Տեսարան երթալ կ'ուզէ՞ք , Voulez-vous aller au spec-  
tacle ?

( Հոն ) երթալ կ'ուզեմ . Je veux y aller.

Ձեր եղբայրը տեսարանն է : Votre frère est-il au spec-  
tacle ?

Հոն է : Il y est.

Հոն չէ . Il n'y est pas.

Ո՞ւր է : Où est-il ?

Մէջք , կամ : ի , նախդիր . Dans.

Ձեր հայրը իւր պարտէ՞զն է . Votre frère est-il dans son  
jardin ?

Հոն է : Il y est.

Վաճառականն ո՞ւր է .	Où est le marchand ? <i>կամ</i> , Où le marchand est-il ?
Իւր մթերանոցն է .	Il est dans son magasin.
Ի՞նչ ունիք ընկու .	Qu'avez-vous à faire ?
Ի՛նչու բան մը չունիմ .	Je n'ai rien à faire.
Մարդը իսկու ի՞նչ ունի .	Qu'est ce que l'homme a à boire ?
Իսկու բան մը չունի .	Il n'a rien à boire.
Իսկու բան մը ունի՞ք .	Avez-vous quelque chose à boire ?
Տամակի մը պատասխան ունիմ տալ .	J'ai à répondre à un billet.
Ձեր եղբորը խօսելիք ունի՞մ .	J'ai à parler à votre frère.

57. Հրահանգ

Ինծի գրել կ'ուզէ՞ք . — Ձեզի գրել կ'ուզեմ . — Իստա-  
գացւոյն գրել կ'ուզէ՞ք . — Անոր գրել կ'ուզեմ . — Ձեր  
եղբայրը կ'ուզէ՞ գրել Անգլիացւոց . — Անոնց գրել  
կ'ուզէ , բայց անոնք բաղձանք չունին անոր պատաս-  
խանելու . — Ձեր բարեկամին պատասխանել կ'ուզէ՞ք .  
— Անոր պատասխանել կ'ուզեմ . — Բայց որո՞ւ պա-  
տասխանել կ'ուզէք . — Իմ աղէկ հօրս պատասխանել  
կ'ուզեմ . — Ձեր աղէկ բարեկամներուն պատասխանել  
չէ՞ք ուզեր . — Անոնց պատասխանել կ'ուզեմ . — Ո՞վ  
կ'ուզէ ձեզի գրել . — Բուրացիին կ'ուզէ ինծի գրել .  
— Անոր պատասխանել կ'ուզէ՞ք . — Անոր պատասխա-  
նել չեմ ուզեր . — Ո՞վ կ'ուզէ գրել մեր բարեկամնե-  
րուն . — Մեր գրացւոյն տղաքը կ'ուզեն անոնց գրել .  
— Անոնք պատասխան տալ կ'ուզեն անոնց . — Պա-  
տասխան տալ կ'ուզեն . — Որո՞ւ կ'ուզէք գրել . — Բու-  
սիացւոյն կ'ուզեմ գրել . — Անիկա ձեզի պատասխան  
տալ կ'ուզէ . — Ինծի պատասխան տալ կ'ուզէ , բայց  
չի կրնար . — Սպանիացիք կրնան մեզի պատասխան  
տալ . — Մեզի չեն կրնար պատասխան տալ , բայց

մենք կրնանք անսոց պատասխանել . — Այս տոմսակը որսւ կ'ուզէք գրկել . — Կա՞նազործին կ'ուզեմ գրկել :

## 58. Հրահանգ

Ի՞նչ ունիք ընկու . — Գրէ՞լիք ունիմ . — Ի՞նչ ունիք գրելու . — Տոմսակ մը ունիմ գրելու . — Որսւ . — Ատաղճազործին . — Ձեր հայրն ի՞նչ ունի խմելու . — Ազէ՛կ զինի ունի խմելու . — Ձեր սպասաւորը խոմելու բան մը ունի՞ . — Չայ ունի խմելու . — Կոշկաւորն ի՞նչ ունի ընկու . — Մտճակներս ունի նորոգելու . — Ի՞նչ ունիք նորոգելու . — Իերձանէ զուշ պաներս ունիմ նորոգելու . — Որսւ խօսելիք ունիք . — Նաւապետին խօսելիք ունիմ . — Ի՞ր կ'ուզէք անոր խօսել . — Անոր տունը . — Ձեր եղբայրը որսւ խօսելիք ունի . — Ձեր որդւոյն խօսելիք ունի . — Անդ զիայն ի՞նչ ունի ընկու . — Տոմսակի մը պատասխանելիք ունի (պիտի պատասխանէ) . — Ի՞նչ տոմսակի պատասխանելիք ունի . — Բարի Գերմանացւոյն տոմսակին ունի պատասխանել . — Գաղխացւոյն (տոմսակին) պատասխանելիք ունի՞մ . — Անոր պատասխանելիք ունիք . — Ի՞նչ տոմսակի պատասխանելիք ունիք . — Իմ ազէ՛կ բարեկամս (տոմսակին) պատասխանելիք ունիմ . — Ձեր եղբայրը տոմսակի մը պատասխանելիք ունի՞ . — Տոմսակի մը պատասխանելիք ունի . — Ի՞՞՞ տոմսակներու պատասխանելիք ունի . — Մեր տղաքը քանի մը տոմսակներու պատասխանելիք ունին . — Վաճառականաց տոմսակներուն պատասխանել կ'ուզէ՞ք . — Անոնց պատասխանել կ'ուզեմ . — Ձեր եղբայրն ա՞յս տոմսակին թէ անոր կ'ուզէ պատասխանել . — Ոչ ստոր եւ ոչ անոր կ'ուզէ պատասխանել . — Մէկը կ'ուզէ՞ պատասխանել իմ տոմսակիս . — Ոչ ոք կ'ուզէ անոր պատասխանել :

## 59. Հրահանգ

Ձեր հայրն ի՞նչ տոմսակներու կ'ուզէ պատասխանել . — Իւր աղէկ բարեկամներուն (տոմսակներուն) միայն կ'ուզէ պատասխանել . — Իմ տոմսակիս կ'ուզէ՞ պատասխանել . — Ա'ուզէ պատասխանել . — Մէկուն պատասխանելիք ունի՞ք . — Մէկուն պատասխանելիք չունիմ . — Իմ տոմսակներուս ս'ի կ'ուզէ պատասխանել . — Ձեր բարեկամները կ'ուզեն պատասխանել . — Պարահանդէս երթալու բաղձանք ունի՞ք . — Հոն երթալու բաղձանք ունիմ . — Ե՞րբ կ'ուզէք երթալ . — Այսօր . — Ժամը քանի՞ի՞ն . — Ժամը տասն ու կէսին . — Ձեր մանչը կ'ըր տեսարան տանել կ'ուզէք . — Ա'ուզեմ վաղը տանել . — Ժամը քանի՞ի՞ն կ'ուզէք տանել . — Ժամը վեցին քառորդ մնացած . — Ձեր որդին ս'ըր է . — Տեսարանն է . — Ձեր բարեկամը պարահանդէսն է . — Հոն է . — Աճառականն ս'ըր է . — Իւր դրասնեակն է . — Ձիս ս'ըր կ'ուզէք տանել . — Ձեզ իմ մթերանոցս կ'ուզեմ տանել . — Ձեր խոհակերնն ս'ըր երթալ կ'ուզէ . — Շուկան երթալ կ'ուզէ . — Ձեր եղբայրը չուկան է . — Հոն չէ . — Ո՞ւր է . — Իւր մթերանոցն է :

## 60. Հրահանգ

Հոլանտացին ս'ըր է . — Իւր յարդանոցն է . — Տեսարան երթալու համար տունս դալ կ'ուզէ՞ք . — Ձեր տունը երթալ կ'ուզեմ, բայց տեսարան երթալու բաղձանք չունիմ . — Իրլանտացին ս'ըր է . — Շուկան է . — Ո՞ր թատրոնը երթալ կ'ուզէք . — Գաղիացուցը երթալ կ'ուզեմ . — Ի՞մ պարտէզս թէ Սկովտիացուցը կ'ուզէք երթալ . — Ոչ ձերինը եւ ոչ Սկովտիացուցը կ'ուզեմ երթալ . Իտալացուցը կ'ուզեմ երթալ . — Բը-

ժիշկը մեր միջերանոցները թէ Հոլանտացւոյ (միջերանոցները) երթալու բաղձանք ունի, — Ոչ ձերինները եւ ոչ Հոլանտացւոյ (միջերանոցները) կ'ուզէ երթալ, այլ Պաղիտացւոյ միջերանոցները, — Շուկան ի՞նչ կ'ուզէք գնել, — Կտրոյ մը եւ գորգեր կ'ուզեմ գնել, — Ո՛ր կ'ուզէք տանել զանոնք, — Չանոնք սասն տանել կ'ուզեմ:

## 61. Հրահանգ

Որչափ գորգ կ'ուզէք գնել, — Երկու հաս կ'ուզեմ գնել, — Չանոնք որո՞ւ տալ կ'ուզէք, — Սպասաւսրիս տալ կ'ուզեմ, — Վեախնն աւելու բաղձանք ունի՞, — Ի՞նչեքու բաղձանք ունի, բայց ժամանակ չունի, — Անգղիացիք շատ միջերանոցներ ունի՞ն, — Շատ ունին, — Պաղիտացիք ունի՞ն այնչափ շուն որչափ կատու, — Աւելի ասոնցմէ ունին քան թէ անոնցմէ, — Ձեր միջերանոցներուն մէջ շատ հրացան ունի՞ք, — Շատ ունինք անոնցմէ (հրացան), բայց շատ ցորեն չունինք, — Մեր հրացանները տեսնել կ'ուզէ՞ք, — Չանոնք տեսնելու համար ձեր միջերանոցներն երթալ կ'ուզեմ, — Բան մը գնել կ'ուզէ՞ք, — Բան մը գնել կ'ուզեմ, — Ի՞նչ գնել կ'ուզէք, — Պրտահ մը, հայելի մը եւ սարձանեթակ մը կ'ուզեմ գնել, — Ձեր արկղը ո՞ր կ'ուզէք գնել, — Շուկան կ'ուզեմ գնել զայն, — Ձեր միջերանոցներուն մէջ ունի՞ք այնչափ գինի որչափ չայ, — Այնչափ մէկէն սենինք որչափ միւսէն, — Չորձս ո՞վ սրատակ կ'ուզէ, — Ոչ ոք կ'ուզէ սրատակ:

## 62. Հրահանգ

Անգղիացիք մեզի հաց տալ կ'ուզեն, — Տալ կ'ուզեն, — Կ'ուզեն մեզի այնչափ կարագ տալ որչափ հաց, — Աւելի ասկէ տալ կ'ուզեն մեզի քան թէ ան-

կէ . — Այս մարդուն ֆրանք մը տալ կ'ուզէ՞ք . — Ոչ տակաւ տալ կ'ուզեմ . — Հինգ հաս տալ կ'ուզեմ . — Գաղիացիք մեղի ի՞նչ փոխ տալ կ'ուզեն . — Մեղի շատ դիրք փոխ տալ կ'ուզեն . — Աճաստականին դըրելու ժամանակ ունի՞ք . — Անոր կ'ուզեմ գրել , բայց այսօր ժամանակ չունիմ . — Գերմանացւոյն ե՞րբ պատասխանել կ'ուզէք . — Այդը պատասխանել կ'ուզեմ . — Ժամը քանի՞ի՞ն . — Ժամը ութի՞ն . — Սպանիացիին ո՞ւր երթալ կ'ուզէ . — Տեղ մը չուզեր երթալ . — Ձեր սպասուորը կ'ուզէ՞ արգանակս տաքցնել . — Կ'ուզէ տաքցնել . — Կրակս ընել կուզէ՞ . — [Կնել կ'ուզէ . — Հացագործի ո՞ւր երթալ կ'ուզէ . — Կ'ուզէ անտառն երթալ . — Պատանին ո՞ւր է . — Թատրոնն է . — Նաւապետին պարահանդէմն ո՞վ կայ . — Մեր տղաքն ու մեր բարեկամները հոն են :



ԻՐ. ԴԱՍ. Vingt-deuxième Leçon.

ԴԻՏ. Ո՞ւր հարցման պատասխանը Գաղիերէնի մէջ à la dans նախադրութիւններով կը կազմուի . à նախադրութիւնը կը գործածուի , երբ տեղը բաց կամ ընդարձակ է . dans կը գործածուի , երբ տեղը գոց կամ ամիսփ է . Ո՞ւր է . — Թատրոնն է . Où est-il ? — Il est au théâtre. Ո՞ւր է . — Պարտէզն է . Où esi-il ? — Il est dans son jardin.

Եգ.

Անկիւնը . au coin.

Ծակը . au trou.

Ծակին } մէջ .  
Ծակերուն

Յատակը , տակը .

Պարկին տակը ,

էլտակին անկիւնը .

Յբ.

Անկիւնները . aux coins.

Ծակերը . aux trous.

Dans le trou.

Dans les trous.

Au fond.

Au fond du sac.

Au coin du feu.

Ծայրք .	Au bout.
Համբուռն ծայրք .	Au bout du chemin.
Համբաներուն ծայրք .	Au bout des chemins.
Համբան .	Le chemin.
Բերել ասլ .	Envoyer chercher.
Երթալ բերել .	Aller chercher.
Գինի բերել ասլ կ'ուզէ՞ք .	Voulez-vous envoyer chercher du vin ?
Բերել ասլ կ'ուզե՞մ .	Je veux en envoyer chercher.
Ձեր մանչը երթալ հաց բերել կ'ուզէ՞ .	Votre garçon veut-il aller chercher du pain ?
Երթալ բերել չուզեր .	Il ne veut pas en aller chercher.
Բժիշկը բերել ասլ կ'ուզե՞մ .	Je veux envoyer chercher le médecin.
Ձանի բերել ասլ կ'ուզե՞մ .	Je veux l'envoyer chercher.
Եղբայրներս բերել ասլ կ'ուզէ .	Il veut envoyer chercher mes frères.
Ձանսը բերել ասլ կ'ուզէ .	Il veut les envoyer chercher.
Գուտթաներ բերել ասլ կ'ուզէ՞ք .	Voulez-vous envoyer chercher des verres ?
Բերել ասլ կ'ուզե՞մ .	Je veux en envoyer chercher.
Ի՞նչ ունիք ընկու .	Qu'avez-vous à faire ?
Շուկան երթալիք ունի՞մ . (պիտի երթամ)	J'ai à aller au marché.
Ի՞նչ ունիք խմելու .	Qu'avez-vous à boire ?
Աղէկ գինի ունի՞ք խմելու .	Nous avons à boire de bon vin.
Ձեր գուլպաներն ունիք նորս-գելու . (պիտի նորոգէք)	Vous avez à raccommoder vos bas.
Ունին .	Ils ont.
Մարդիկն ի՞նչ ունին ընկու .	Qu'ont à faire les hommes ?
Մթերանոցը երթալիք ունին .	Qu'est-ce que les hommes ont à faire ?
Այս իրիկուն .	Ils ont à aller au magasin.
Իրիկունք .	Ce soir.
Այս առտու .	Le soir.
Առտուն .	Ce matin.
	Le matin.

Հիմա . A présent.  
 Դուն . Tu.

Դուն ունիս , դուն ես . Tu as, tu es.  
 Յողնած ես . Es-tu fatigué ?  
 Յողնած չեմ . Je ne suis pas fatigué.  
 Մարդիկը յողնած են . Les hommes sont-ils fatigués ?

ԳԻՏ. Ածակաները , գոյականէն թէ առաջ ըլլան եւ թէ ետքը , գոյականին հետ թուով եւ սեռիւ կը համաձայնին . զոր օրինակ . L'homme est fatigué. les hommes sont fatigués. La femme est fatiguée. Les femmes sont fatiguées.

Անոնք յողնած չեն . Ils ne sont pas fatigués.  
 Կ'ուզես , կրնաս . Tu veux, tu peux.  
 Կրակս կ'ուզե՞ս բնել . Veux-tu faire mon feu ?  
 Ընել կ'ուզեմ , բայց չեմ կրնա . Je veux le faire, mais je ne puis.  
 Կը վախնաս . A-tu peur ?  
 Չեմ վախնար , Je n'ai pas peur.  
 Կը մոխմ . J'ai froid.  
 Անօթի՞ք ես . As-tu faim ?  
 Վաճառել ( ծախել ) . Vendre 4.  
 Ըսել . Dire (\*) 4.

ԳԻՏ. Երբ Բայր հրամայել , պատուիրել , նշանակութեամբ կը գործածուի , իբրէ կտքը de նախադրութեամբ աներեւոյթ մը կ'ուզէ . այս աներեւոյթն հայերէն աշխարհաբարի մէջ որ շողկապով դիմաւոր բայ կը գրուի . զոր օրինակ . Սպասաւորին ըսէք որ կրակը շինէ . Dites au domestique de faire le feu.

Մէկուն բսել . Dire à quelqu'un.  
 Բառը , խօսքը . Le mot.  
 Կ'ուզէ՞ք սպասաւորին ըսել որ կրակը շինէ . Voulez-vous dire au domestique de faire le feu ?  
 Կ'ուզեմ ըսել որ շինէ . Je veux lui dire de le faire.

	ԵԳ.		ՅՐ.
Քու կինդ .	Le tien.	Քու կիններդ .	Les tiens.
Քու գիրքդ .	Ton livre.	Քու գիրքերդ .	Tes livres.

## 63. Հրահանգ

Շաքար բերել տալ կ'ուզէ՞ք . — Բերել տալ կ'ուզեմ .  
 — Որդեակ (տղաս) , երթալ կարեանդակ բերել կ'ուզեմ . — Այո , հայր , երթալ բերել կ'ուզեմ . — Ո՞ւր երթալ կ'ուզես . — Պարտէզ ( dans le, au ) երթալ կ'ուզեմ . — Պարտէզն ո՞վ կայ ( է ) . — Մեր բարեկամներուն տղաքն հոն են . — Բժիշկը բերել տալ կ'ուզէ՞ք . — Բերել տալ կ'ուզեմ . — Եղբայրս երթալ բերել ո՞վ կ'ուզէ . — Սպասաւորս երթալ բերել կ'ուզէ . — Ո՞ւր է . — Իւր գրասենեակն է . — Արդանակս ինծի տալ կ'ուզէ՞ք , — Ձեզի տալ կ'ուզեմ . — Ո՞ւր է . — Կրակիմն անկիւնն է ( քովն է ) . — Երթալ կաթ բերելու ( դնելու ) համար ինծի ստակ տալ կ'ուզէ՞ք . — Երթալ բերելու համար ձեզի ստակ տալ կ'ուզեմ . — Ձեր ստակն ո՞ւր է . — Գրասենեակս է . — Երթալ բերել կ'ուզէ՞ք . — Երթալ բերել կ'ուզեմ . — Ձիս դնել կ'ուզէ՞ք . — Ձեմ կրնար դնել . ստակ չունիմ . — Ձեր կատուն ո՞ւր է . — Ծակն է ( ծակին մէջն է ) . — Ո՞ր ծակն է . — Յարդանոցին ( թաւան իւի ) ծակը . — Այս մարդուն չունն ո՞ւր է . — Նաւին մէկ անկիւնն է . — Գեղացիին իւր ցորենն ո՞ւր ունի ( դրած , պահած է ) . — Իւր պարկին մէջ ունի . — Կատու մը ունի՞ . — Հաս մը ունի . — Ո՞ւր է . — Պարկին տակն է . — Ձեր կատունս այս պարկին մէջն է . — Հոն է :

## 64. Հրահանգ

Ընելու բան մը ունի՞ք . — Ընելու բան մը ունիմ .  
 — Ի՞նչ ունիք ընելու . — Գուլպաներս ունիմ նորոգելու .

լու, եւ ճամբուն ծայրն երթալ . — Ճամբուն ծայրն սիլ կայ . — Հայրս հոն է . — Ձեր խոհակերը խմելու բան մը ունի՞ . — Գինի եւ աղէկ արգանակ ունի խըմելու . — Արնա՞ք ինձի այնչափ կարագ տալ որչափ հաց . — Ձեզի աւելի ասկէ կրնամ տալ քան թէ անկէ . — Ձեր բարեկամը կրնա՞յ այնչափ դինի խմել որչափ սուրճ . — Ձի կրնար այնչափ ասկէ խմել որչափ անկէ . — Մէկուն խօսելիք ունի՞ք . — Ոչ սակաւ մարդաց խօսելիք ունիմ . — Ո՞րչափ մարդաց խօսելիք ունիք . — Չորս (հողւոյ) խօսելիք ունիմ . — Յ՛րբ անոնց խօսելիք ունիք (սլիտի խօսիք) . — Այս իրիկուն . — Ժամը քանի՞ն . — Ժամը իննի՞ն քառորդ մընացած . — Յ՛րբ կրնաք շուկան երթալ . — Առտուն կրնամ երթալ . — Ժամը քանի՞ն . — Ժամը եօթն ու կէսին . — Գաղիացւոյն տունը ե՞րբ կ'ուզէք երթալ . — Այս իրիկան կ'ուզեմ երթալ . — Բժշկին տունն առտո՞ւն թէ իրիկունը կ'ուզէք երթալ . — Առտուն կ'ուզեմ երթալ . — Ժամը քանի՞ն . — Ժամը ինք քառորդ անցած :

### 65. Հրահանգ

Այնչափ տունակ ունի՞ք գրելու որչափ Անգղիացիք . — Անոնցմէ քիչ ունիմ գրելու . — Գերմանացւոյն խօսել կ'ուզէ՞ք . — Անոր խօսել կ'ուզեմ . — Յ՛րբ խօսակ կ'ուզէք . — Հիմա . — Ո՞ւր է . — Անտառին միւս ծայրն է . — Շուկան երթալ կ'ուզէ՞ք . — Չորձ (ճերմկեղէն) գնելու համար հոն երթալ կ'ուզեմ . — Ձեր դքացիները շուկան երթալ չե՞ն ուզեր . — Ձին կրնար երթալ . յոգնած են . — Իրիկունն անտճորը երթալու քաջարտութիւն ունի՞ս . — Երթալու քաջարտութիւն ունիմ, բայց ոչ իրիկունը . — Ձեր տղաքը տուն սակներուս կրնա՞ն պատասխանել . — Արնան պատասխանել . — Սպասաւորին ի՞նչ ըսել կ'ուզէք . — Անոր

բակ կ'ուզեմ որ կրակն բնէ և մթերանայն սուչէ .  
 — Կ'ուզէ՞ք ձեր եղբորն բակ որ քուք ձին ինծի վաճառ-  
 սէ . — Կ'ուզեմ անոր բակ որ ձեզի վաճառէ . — Ի՞նչ  
 կ'ուզէք բակ ինծի . — Ձեզի խօսք մը բակ կ'ուզեմ .  
 — Չմ'զ ականակ կ'ուզէք . — Այսօրայն ականակ կ'ու-  
 զեմ . — Անոր բակու բան մը ունի՞ք . — Անոր քանի  
 մը բառ ունիմ բակու . — Եղբայրս ի՞նչ պիտիբ որ վա-  
 ճառակ կ'ուզէ . — Քուկիմնեբդ կ'ուզէ վաճառակ և ոչ  
 իրեննեբդ :



Ի.Գ. ԳԻՍ. Vingt-troisième Leçon.

Գուրս ելլել .	Sortir (*) 2.
Մնալ .	Rester 1.
Ե՞րբ կ'ուզէք գուրս ելլել .	Quand voulez-vous sortir ?
Հիմա ելլել կ'ուզեմ .	Je veux sortir à présent.
Տու՛նք մնալ .	Rester à la maison.
Հոս .	Ici, y.
Հոս մնալ .	Rester ici.
Հան .	Là, y.
Հոս մնալ կ'ուզէ՞ք .	Voulez-vous rester ici ?
Մնալ կ'ուզեմ .	Je veux y rester.
Ձեր բարեկամը հոս մնալ կ'ուզէ՞ .	Votre ami veut-il rester là ?
Մնալ չուզեբ .	Il ne veut pas y rester.
Ձեր եղբորը աու՛նք երթալ կ'ու- զէ՞ք .	Voulez-vous aller chez votre frère ?
Կ'ուզեմ երթալ .	Je veux y aller, կամ լու և.ս . Je veux aller chez lui.
Հա՛նգութիւնք . Շնորհքք .	Le plaisir.
Շնորհք բնել, հա՛նգել .	Faire plaisir, un plaisir.
Կ'երթա՞ք ( կ'ուզէ՞ք երթալ ) .	Allez-vous ?
Կ'երթամ ( կ'ուզեմ երթալ ) .	Je vais.
Չեմ երթար .	Je ne vais pas.
Կ'երթաս .	Tu vas.
Կ'երթա՞յ .	Va-t-il ?
Կ'երթայ .	Il va.

Չերթար . Il ne va pas.  
 Կ'երթանք (կ'ուղևնք երթալ) . Allons-nous ?  
 Կ'երթանք (կ'ուղևնք երթալ) . Nous allons.

ԳԻՏ. Ա. Aller բայը Գաղիներէնք մէջ շատ անգամ  
 անմիջապէս ըլլալու գործողութիւն մը ցուցնելու հա-  
 մար կը գործածուի՝ ետեւէն աներևոյթ մը ասնելով  
 առանց նախադրութեան :

Ի՞նչ պիտի ընէք, կամ ընելու Qu'allez-vous faire ?  
 Վայ էք .

Պիտի կարդամ (սյոթնքն՝ հի- Je vais lire.  
 մա, անմիջապէս) .

Կարդալ . Lire (\*) 4.

Չեր եղբորը տունը կ'երթամք . Allez-vous chez votre frère ?

Անոր տունը կ'երթամ . Je vais chez lui.

Ո՞ւր կ'երթայ . Où va-t-il ?

Հօրը տունը կ'երթայ . Il va chez son père.

Ամէն, բոլոր . Եղ. Tout le. Յք. Tous les.

Ամէն օր . Tous les jours.

Ամէն առտու . Tous les matins.

Ամէն իրիկուն . Tous les soirs.

Ի . Il est.

Ուշ . Tard.

Ժամը քանի՞ն է . Quelle heure est-il ?

ԳԻՏ. Բ. Quelle, իրականն է quel ածականին, եւ  
 համաձայնած է heure, ժամ ըստին հետ որ իրական է .

Ժամը երեքն է . Il est trois heures.

Կէսօր է . Il est midi.

Կէսօրը քառորդ անցած է . Il est midi et quart, կամ mi-  
 di et un quart.

Ժամը վեցին քառորդ կայ . Il est six heures moins un  
 quart.

Ժամը մէկ ու կէսն է . Il est une heure et demie.

Ճանչնալ . Connaître (\*) 4.

Մարդ մը ճանչնալ . Connaître un homme.

Պէտքը . Le besoin.

Պէտք ունենալ (բանի մը) . Avoir besoin de.

Պէտք ունիմ (անոր) . J'en ai besoin.

ԳԻՏ. Գ. Avoir besoin, Գաղիերէն ոչ թէ Հայերէնի պէն տրակումն, այսինքն՝ à նախնորութեամբ, այլ de նախնորութեամբ խնդիր կ'անու. :

- Այս գանակին պէտք ունի՞ք. Avez-vous besoin de ce couteau ?
- Պէտք չունիմ. Je n'en ai pas besoin.
- Այս գանակներուն պէտք ունի՞ք. Avez-vous besoin de ces couteaux ?
- Պէտք ունիմ. J'en ai besoin.
- Պէտք չունիմ. Je n'en ai pas besoin.
- Բանի մը պէտք չունիմ. Je n'ai besoin de rien.
- Ստակի պէտք ունի՞ք. A-t-il besoin d'argent ?
- Պէտք չունի. Il n'en a pas besoin.
- Լըթալու պէտք չունի. Il n'a pas besoin d'y aller.
- Ի՞նչ բանի. De quoi ?
- Ի՞նչ բանի պէտք ունիք. De quoi avez-vous besoin ?

ԷԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒԱՆՑ ՍԵՌԱԿԱՆԸ ԿԱՄ ԲԱՅԱՌՍ ԿԱՆԸ  
(Բնութեան խնդիր. Տես Գաս Ի.)

- Իմ քու Անոր De moi, de toi, de lui, en (ինէ), (քեզմէ), (տնկէ).
- Մեր Ձեր Անոնց De nous, de vous, d'eux, en. (մենէ), (կենէ), (անոնցմէ).
- Ձեր հայրն ինձի պէտք ունի՞ք. Votre père a-t-il besoin de moi ?
- Ձեզի պէտք ունի. Il a besoin de vous.
- Այս գիրքերուն պէտք ունի՞ք. Avez-vous besoin de ces livres ?
- Պէտք ունիմ. J'en ai besoin.
- Իմ եղբայրներուս պէտք ունի՞ք. A-t-il besoin de mes frères ?
- Անոնց պէտք ունի. Il a besoin d'eux, համ, Il en a besoin.

ԳԻՏ. Գ. En, իրաց համար կ'ըսուի մանաւանդ քան անձանց համար. զոր օրինակ, Եղբորս պէտք ունի՞ք. —Պէտք ունիմ. Avez-vous besoin de mon frère ? —J'ai besoin de lui. Այս գիրքին պէտք ունի՞ք. —Պէտք ունիմ. Avez-vous besoin de ce livre ? —J'en ai besoin.

66. Հրահանգ

Ինծի չնորհք մը (հաճութիւն) մը ընել կ'ուզէ՞ք .  
 —Այո, տէր, ս'րբ . —կ'ուզէ՞ք սպասաւորիս ըսել որ  
 կրակին ընէ . —կ'ուզեմ ըսել որ ընէ . —կ'ուզէ՞ք ա-  
 նոր ըսել որ մթերանոցներն աւլէ . —կ'ուզեմ ըսել որ  
 աւլէ . —Ձեր հօրը ի՞նչ ըսել կ'ուզէ՞ք . —կ'ուզեմ ա-  
 նոր ըսել որ իւր ձին ձեզի վաճառէ . —կ'ուզէ՞ք ըսել  
 ձեր որդւոյն որ հօրս տունը երթայ . —կ'ուզեմ ըսել  
 որ երթայ . —Ինծի ըսելու բան մը ունի՞ք . —Ձեզի  
 ըսելու բան մը չունիմ . —Հօրս ըսելու բան մը ու-  
 նի՞ք . —Խօսք մը ունիմ անոր ըսելու . —Այս մար-  
 գիկը կ'ուզե՞ն իրենց գորգերը վաճառել . —Չանոնք  
 վաճառել չեն ուզեր . —Յովհանն, հո՞ն ես . —Այո,  
 տէր, հոս եմ . —Ի՞նչ ընելու վրայ ես . —Ձեր խոյ-  
 րարարին կ'երթամ անոր ըսելու համար որ ձեր բե-  
 ղոյրը նորոգէ . —Դերձակին կ'ուզե՞ս երթալ ըսելու  
 համար որ հանդերձներս նորոգէ . —Երթալ կ'ուզեմ .  
 —Շուկան երթալ կ'ուզէ՞ք . —Երթալ կ'ուզեմ . —Ձեր  
 վաճառականն ի՞նչ ունի վաճառելու . —Մորթէ գեղե-  
 ցիկ ձեռնոցներ, սանտրեր, աղէկ ասուի եւ փայտէ  
 գեղեցիկ կողովներ ունի վաճառելու . —Երկաթէ հը-  
 րացաններ ունի՞ վաճառելու . —Ունի վաճառելու .  
 —Իւր ձիերն ինծի վաճառել կ'ուզէ՞ . —Վաճառել կ'ու-  
 չէ . —Վաճառելու բան մը ունի՞ք : —Վաճառելու  
 բան մը չունիմ :

67. Հրահանգ

Ո՞ւշ է . —Ուշ չէ . —Ժամը քանի՞ն է . —կէսօրը  
 քառորդ անցած է . —Նաւապետը ժամը քանի՞ն  
 դուրս ելլել կ'ուզէ . —Ժամը ութին քառորդ մնացած  
 ելլել կ'ուզէ . —Ի՞նչ ընելու վրայ էք . (Ի՞նչ պիտի

ընէք) . — Պիտի կարգամ . — Ի՞նչ ունիք կարգալու .  
 — Աղէկ գիրք մը ունիմ կարգալու . — Չայն ինծի փօխ  
 տալ կ'ուզէ՞ք . — Փօխ տալ կ'ուզեմ . — Ա՛յրք փօխ տալ  
 կ'ուզէք . — Ազգը փօխ տալ կ'ուզեմ . — Գարս ել-  
 լելու բաղձանք ունի՞ք . — Գարս ելլելու բաղձանք  
 չունիմ . — Ա՛ուզէ՞ք հոս մնալ , սիրելի բարեկամս .  
 — Հոս չեմ կրնար մնալ . — Ա՛ւր երթալիք ունիք  
 ( պիտի երթամք ) . — Գրասենեակն ունիմ երթալ ( պի-  
 տի երթամ ) . — Մ՛րք կ'ուզէք պար երթալ . — Այս ի-  
 բրկուն . — Ժամը քանիի՞ն . — Այս գիշերին . — Իրի-  
 կունը թէ առտուն կ'երթամք Ակոլտիացւոյն տունը .  
 — Առտուն եւ իրիկունը կ'երթամ . — Հիմա ս՛ւր կ'եր-  
 թամք . — Թատրոն կ'երթամ . — Չեր որդին ս՛ւր կ'եր-  
 թայ . — Տեղ մը չերթար . իւր առմասկները գրելու  
 համար տունը կը մնայ . — Չեր եղբայրն ս՛ւր է . — Իւր  
 մթերանոցն է . — Գարս ելլել չուզեր . — Ոչ , տէր ,  
 գարս ելլել չուզեր . — Հոն ի՞նչ ընելու վրայ է ( պի-  
 տի ընէ ) . — Իւր բարեկամներուն գրելու վրայ է ( պի-  
 տի գրէ ) . — Հո՞ս թէ հոն կ'ուզէք մնալ . — Հոս մնալ  
 կ'ուզեմ . — Չեր հայրն ս՛ւր մնալ կ'ուզէ . — Հոն մնալ  
 կ'ուզէ . — Մեր բարեկամը պարտէզը մնալու բաղ-  
 ձանք ունի . — Հոն մնալու բաղձանք ունի :

### 68. Հրահանգ

Հոլանտացին ժամը քանիի՞ն իւր առնն է . — Ամէն  
 իրիկուն ժամն ինը քատորդ անցած իւր առնն է .  
 — Չեր խոհարարը Մ՛րք շուկայ կ'երթայ . — Ամէն առ-  
 տու ժամը հինգ ու կէսին կ'երթայ . — Չեր դրացին  
 Մ՛րք Իրլանտացւոյն տունը կ'երթայ . — Ամէն առտու  
 հոն կ'երթայ . — Ժամը քանիի՞ն . — Առտուան ժամը  
 ութին . — Ի՞նչ կ'ուզէք գնել . — Բան մը գնել չեմ  
 ուզեր , բայց հայրս եզ մը գնել կ'ուզէ . — Այս եզը  
 թէ անիկա գնել կ'ուզէ . — Ոչ ասիկա գնել կ'ուզէ ոչ .

անիկա . — Ո՞րը կ'ուզէ գնել . — Ձեր բարեկամները կ'ուզէ գնել . — Աճառատիանը տակաւին հանդերձ մը ունի՞ վաճառելու . — Տակաւին հատ մը ունի , բայց չուզեր վաճառել . — Այս մարդը տակաւին դանակ մը ունի՞ վաճառելու . — Այլ եւս դանակ չունի , այլ տակաւին քսնի մը հրացան ունի վաճառելու . — Մըր կ'ուզէ զանոնք վաճառել . — Այսօր կ'ուզէ վաճառել . — Ո՞ւր . — Իւր միջերանոցը . — Կ'ուզէ՞ք բարեկամս տեսնել . — Ձանի ճանհնալու համար կ'ուզեմ տեսնել . — Կ'ուզէ՞ք տղաքս ճանհնալ . — Ձանոնք ճանհնալ կ'ուզեմ . — Ո՞րչափ տղաք ունիք . — Երկու հատ միայն ունիմ , բայց եղբայրս ինէ աւելի ունի . վեց հատ ունի . — Այս մարդը չափէն աւելի գինի խմել կ'ուզէ . — Ձափէն աւելի խմել կ'ուզէ . — Բաւական գինի ունի՞ք խմելու . — Շատ չունիմ , բայց բաւական ունիմ . — Ձեր եղբայրը չափէն աւելի կարկանդակ գնել կ'ուզէ . — Շատ գնել կ'ուզէ , բայց ոչ չափէն աւելի :

### 69. Հրահանգ

Ինծի դանակ մը փոխ կրնամք տալ . — Հատ մը փոխ կրնամ տալ ձեզի . — Ձեր հայրը կրնայ գիրք մը փոխ տալ ինծի . — Ոչ սակաւ կրնայ փոխ տալ ձեզի . — Ի՞նչ բանի պէտք ունիք . — Աղէկ հրացանի մը պէտք ունիմ . — Այս նկարին պէտք ունի՞ք . — Պէտք ունիմ . — Ձեր եղբայրը ստակի պէտք ունի՞ . — Պէտք չունի . — Մուճակի պէտք ունի՞ . — Պէտք չունի . — Ի՞նչ բանի պէտք ունի . — Բանի մը պէտք չունի . — Այս դաւաղաններուն պէտք ունի՞ք . — Պէտք ունիմ . — Ո՞վ չաքարի պէտք ունի . — Ոչ ոք պէտք ունի . — Մէկը պղպեղի պէտք ունի՞ . — Ոչ ոք պէտք ունի . — Ի՞նչ բանի պէտք ունիմ . — Բանի մը պէտք չունիք . — Ձեր հայրն ա՛յս նկարներուն թէ անոնց պէտք ունի . — Ոչ ասոնց ոչ անոնց պէտք ունի . — Ինծի պէտք ունի՞ք .

—Չեղի պէտք ունիմ . —Մեր պէտք ունիք ինծի .  
 —Հիմա . —Ի՞նչ ունիք ինծի բսկու . —Խօսք մը ա-  
 նիմ ձեզի բսկու . —Չեր սրդին մեզի պէտք ունի՞-  
 —Չեղի եւ ձեր եզրացնեբուն պէտք ունի . —Իմ  
 սպասաւորիս պէտք ունի՞ք . —Պէտք ունիմ . —Մէ-  
 կը եզրօրս պէտք ունի՞ . —Ոչ սք անոր պէտք ունի .  
 —Չեր հայրը բանի մը պէտք ունի . —Բանի մը պէտք  
 չունի . —Անդդիային ի՞նչ բանի պէտք ունի . —Չոր-  
 ձի պէտք ունի . —Գահարեղէններու պէտք չունի՞ .  
 —Պէտք չունի . —Նաւաստան ի՞նչ բանի պէտք ու-  
 նի . —Պարցամասի , կաթի , պանրայ եւ կարապի  
 պէտք ունի . —Ինծի բան մը տալու վրայ էք . —Չե-  
 ցի հայ եւ զինի տալու վրայ եմ ( հիմա պիտի տամ ) :



ԻՊ. ԳԱՍ. Vingt-quatrième Leçon.

ՆԵՐԿԱՅ ԺԱՄԱՆԱԿ Le présent.

ԿԱՆ Ա. Ներկայ ժամանակը շինելու համար՝ պէտք  
 է գիտնալ բային ջնդունելութիւն ներկան , Participe  
 présent, որ ան կը վերջաւորի , ինչպէս՝ aimant, finis-  
 sant, recevant, vendant.

ԿԱՆ Բ. Ներկային յօքնակի երեք գէժքերը կը շին-  
 ւին՝ անք օնս ի փոխելով Ա. գէժքին մէջ , ez ի՞ Բ.  
 գէժքին մէջ , ent ի՞ Գ. գէժքին մէջ . ինչպէս՝ aim-ant-  
 nous aim-ons, vous aim-ez, ils aim-ent.

ԳԻՏ Ա. Բայերուն Սահմանական ներկան , ջնդու-  
 նելութիւն ներկան , ջնդունելութիւն անցեալը , Անե-  
 բուսիք եւ Անցեալ սրոշեալը՝ Նախնական ժամա-  
 նակներ , Temps primitifs կը կոչուին :

ԳԻՏ Բ. Ամէն բայի եզա՛լի Բ. գէժքը s կ'ունենայ ,  
 բայ ի Ա. Լծորդութեան (aimer) բայերուն հրամայա-  
 կանէն որ առանց s ի կ'ըլլայ , ինչպէս՝ parle, խօսէ :

Բայց եթէ հրամայականն անմիջապէս ետքը en եւ  
 y կու դան , Հրամայականը՝ ձայնի քաղցրութեան հա-  
 մար s կ'անուու . *ինչպէս՝* Donnes-en à ton frere. Անկէ  
 եղբորդ ատւր . Portes-y tes livres. Գիրքերդ հոն տար :  
 Ներկային եզ. Գ. դէմքը Ա. Լծորդութեան մէջ Ա.  
 դէմքին պէս է . Բ. եւ Գ. Լծորդութեանց մէջ է կ'աու-  
 նու . Գ. Լծորդութեան մէջ ամենեւին բան մը չաու-  
 նուր , արմատին հետ նայն է : Բայի մը արմատը կը  
 դանուի , երբ բային աներևոյթին er, ir, oir, re մաս-  
 նիկները կը վերցունես :

ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԲ

Les Temps Primitifs

Աներևոյթ	Ընդ. ներ.	Ընդ. անց.	Սճմ. ներ.	Անց. ան.
Infinitif	Participe présent	Participe passé	Présent	Passé défini
Aimer.	Aimant.	Aimé.	J'aime.	J'aimai.
Finir.	Finissant.	Fini.	Je finis.	Je finis.
Recevoir.	Recevant.	Reçu.	Je reçois.	Je reçus.
Rendre.	Rendant.	Rendu.	Je rends.	Je rendis.

Ա. ԼԾՈՐԴՈՒԹԻԻՆՆ Premier conjugaison

Աներ .	Ընդ . ճերկ	Ինֆնիտիվ .	Participe présent.
խօսել .	խօսելով .	Parler.	Parlant.

Ներկայ ժամ .

կը խօսիմ , կը խօսիս , կը խօսի .	Je parle , tu parles, il parle.
կը խօսինք , կը խօսիք , կը խօսին .	Nous parlons, vous parlez, ils parlent.

Բ. ԼԾՈՐԴՈՒԹԻԻՆՆ Deuxième Conjugaison.

Լմացունել , լմացունելով .	Finir, finissant.
կը լմացունեմ , կը լմացունես , կը լմացունէ .	Ja finis, tu finis, il finit.

Կը ըննցուաներ, կը ըննցուանէր, Nous finissons, vous finissez,  
կը ըննցուանեն. ils finissent.

Գ. ԼՅՈՐԳՈՒԹԻՒՆ

Troisieme Conjugaison.

Կ'ընդունիմ, կ'ընդունիս, Je reçois, tu reçois, il re-  
կ'ընդունի . çoit.  
Կ'ընդունիր, կ'ընդունիր, Nous recevons, vous rece-  
կ'ընդունին. vez, ils reçoivent.

ԳԻՏ. Ա. Ինչպէս կը տեսնուի, այս Գ. յճարգութեան մէջ ներկային յօքնակի Գ. գէժքը քիչ մը ասարկեր կ'ըլլայ, այսինքն՝ ընդունելութիւն ներկային սչ թէ ant e, այլ evant e oivent ի կը վախուի :

ԳԻՏ. Բ. Ինչպէս նախընթաց դասերուն մէջ պատահեցաւ, կան անուններ որոց մէջ e գիրը a, o, u գիրերէն առաջ cédille կ'աւանու (ç) . Ինչպէս Français, garçon. Բայերուն մէջ ալ այսպէս է . կըր բայի մը վերջին արմատական գիրը e է, ինչպէս՝ rec-evoir, e գիրը խանարհան մէջ a, o, u գիրերէն առաջ cédille կ'աւանու, u գիրին հնչումը աւելու համար . ապա թէ սչ p կը հնչուի :

Գ. ԼՅՈՐԳՈՒԹԻՒՆ

Quatrieme Cenjugaison.

Կը վաճառեմ, կը վաճառես, Je vends, tu vands, il vend.  
կը վաճառէ .  
Կը վաճառենք, կը վաճառէք, Nous vendons, vous vendez.  
կը վաճառեն . ils vendent.

ԳԻՏ. Ա. Endre, andre, ondre, oudre, erdre, ordre վերջաւորած բայերը՝ սնմ. ներկային բոլոր գէժքերուն մէջ d գիրը կը պահեն . Ինչպէս՝ vendre, je vends. ré- pandre, je répands. répondre, je réponds. mou dre, je mouds. perdre, je perds. tordre, je tords. Եւայլն . Բայց eindre, aindre, oindre, soudre վերջաւորած բայերուն ներկային մէջ d գիրը կը կորսուի . Ինչպէս . peindre, je peins, tu

peins, եւն. craindre, je crains. joindre, je joins, եւն. absoudre, j'absous, եւն :

ԳԻՏ. Բ. ՎԵՐՐ Բ. կանոնին մէջ ըսինք թէ բայերուն սահմանական ներկային յօքնալի երեք դէմքերն ընդունելութիւն ներկայէն կը շինուին . ant e ons, ez եւ ent ի փոխելով : Գ. Լծորդութեան վերաբերեալ բայերէն հետեւեալներուն քանի մը դէմքերը կը զարտուղին այն կանոնէն : Այս զարտուղութիւնները կը նշանակենք հոս :

Ըլլալ, բլլալով .  
Եմք, էք, են .

Etre (\*), étant.  
Nous sommes, vous êtes, ils sont.

Ունենալ, ունենալով .  
Ունինք, ունիք, ունին .

Avoir (\*), ayant.  
Nous avons, vous avez, ils ont.

Գիտնալ, գիտնալով .  
Գիտենք, գիտէք, գիտեն .

Savoir (\*), sachant.  
Nous savons, vous savez, ils savent.

Ընել, ընելով .  
Կ'ընէք, կ'ընեն .

Faire, faisant.  
Vous faites, ils font.

Ըսել, ըսելով .  
Կ'ըսէք .

Dire, disant.  
Vous dites.

Ուրիշ բայեր, որոց սահմանական ներկային յօքնալի Գ. դէմքը միայն յիշեալ կանոնէն կը զարտուղի :

1. Aller,	Երթալ .	allant.	ils vont,	կ'երթան .
2. Venir,	Գալ .	venant.	ils viennent,	կու գան .
Tenir,	Բռնել .	tenant.	ils tiennent,	կը բռնեն .
Acquérir,	Ստանալ .	acquérant	ils acquièrent,	կը ստանան .
Mourir,	Մեռնել .	mourant.	ils meurent,	կը մեռնին .
3. Recevoir,	Ընդունել .	recevant.	ils reçoivent,	կ'ընդունին .
Devoir,	Պարտիլ .	devant.	ils doivent,	պարտին .
Mouvoir,	Շարժիլ .	mouvant.	ils meuvent,	կը շարժին .
Pouvoir,	Կրնալ .	pouvant.	ils peuvent,	կրնան .
Vouloir,	Ուզել .	voulant.	ils veulent,	կ'ուզեն .
4. Boire,	Խմել .	buvant.	ils boivent,	կը խմեն .
Prendre,	Առնել .	prenant.	ils prennent,	կ'առնուեն .

Այս բայերուն յսքնակի կրորդ գէմքերը միայն նը-  
շանակուեցան , քանզի Ա. և Բ. գէմքերը , վերի կա-  
նոնին համեմատ , բնուանելութիւն ներկային ant վեր-  
ջաւորութիւնը օն ևւ ez ի փոխելով կ'ըլլան , ինչպէս՝  
Allant, nous allons, vous allez. Venant, nous venons, vous  
venez.

Recevoir ին պէս կ'ըլլան , apercevoir, concevoir ևւ  
արիջ evoir վերջաւորած բայեր :

Արել , արարել .

Կը սիրեմ , կը սիրէ .

Կը սիրես , կը սիրէք .

Կը սիրենք , կը սիրեն .

Շարել , կարգադրել .

Aimer 1.

J'aime, il aime.

Tu aimes, vous aimez.

Nous aimons, ils aiment.

Ranger, arranger 1.

Mettre (\*) 4 en ordre.

ԳԻՏ. Ա. Ger, ժէ, վերջաւորած բայերուն խնարհ-  
ման մէջ , ուր որ ց գիրէն ետքը a, o ձայնաւորները  
կու գան , ց ին ևւ այս ձայնաւորներուն մէջանդ ան-  
ձայն e մը կ'աւելցուի , այսպէս , gea, geo, արպէս գի  
ժ ձայնը պահուի , ապա թէ ոչ կ' կը հնչուի . ինչպէս  
ga, go, կա , կօ :

Զանի կը սիրէք .

L'aimez-vous?

ԳԻՏ. Բ. Գերանուն խնդիրներ , ինչպէս me, te,  
nous, vous, lui, leur, le, la, les, en, y, բայէն առաջ կը  
դրուին :

Կը սիրեմ զնա .

Je l'aime.

Չեմ սիրեր զնա .

Je ne l'aime pas.

Չեք ձին կը վաճառէք .

Vendez-vous votre cheval?

Կը վաճառեմ զչին .

Je le vends.

Կը վաճառէք զպին .

Le vendez-vous?

Տամակը ձեզի կը զրկէ .

Vous envoie-t-il le billet?

Կը զրկէ զպին ինձի .

Il me l'envoie.

ԳԻՏ. Գ. Ayer, oyer, uyer վերջաւորած բայերուն

խոնարհման մէջ, ուր որ զիրէն ետքը անձայն Ե մը կու գայ, զ զիրը ի ի կը փոխուի: Ոմանք այր վերջաւորածներուն զը կը պահեն. զոր օրինակ՝ փոխանակ ըսելու je paie կ'ըսեն, je paye որ payer, հասուցանել, վճարել, բայէն է:

Կը գրկեմ, կը գրկես, կը գրկէ, J'envoie, tu envoies, il envoio, ils envoient.

Կ'աւլեմ, կ'աւլես, կ'աւլէ, Je balaie, tu balaies, il balaie, ils balaient.

Սղատաւորը գետինը կ'աւլէ. Le domestique balaie-t-il le plancher ?  
Կ'աւլէ. Il le balaie.

ԳԻՏ. Գ. Հետեւեալ բայերուն սահմանական ներկային յոքնակի երեք գէմքը, վերի կանոնին համեմատ, ընդունելութիւն ներկայէն կը շինուին, զոր օրինակ,

Ecrire, ընդ. ներկ. écrivant. nous écrivons, vous écrivez, ils écrivent.

Ձարտուղութիւնները քիչ մը առաջ նշանակուեցան ինչպէս,

Faire, ընդ. ներկ. faisant. nous faisons, vous faites, ils font. Տես եւ վերը Գ. Լծորդութեան Բ. գիտողութեան մէջ:

Հոս սհմ. ներ. եզակի 3 գէմքերը միայն կը գնենք.

Ընել.	Faire (*),	faisant,	je fais,	tu fais,	il fait.
Խմել.	Boire,	buvant,	je bois,	tu bois,	il boit.
Գալ.	Venir,	venant,	je viens,	tu viens,	il vient.
Գրել.	Ecrire,	écrivant,	j'écris,	tu écris,	il écrit.
Տեսնել.	Voir,	voyant,	je vois,	tu vois,	il voit.
Ըսել.	Dire,	disant,	je dis,	tu dis,	il dit.
Նյլել.	Sortir,	sortant,	je sors,	tu sors,	il sort.
Կարդալ.	Lire,	lisant,	je lis,	tu lis,	il lit.
Ճանչնալ.	Connai-	connais-	je con-	tu con-	il con-
հալ.	tre,	sant,	nais,	nais,	naît.
Բանալ.	Ouvrir,	ouvrant,	j'ouvre,	tu ouvres,	il ouvre.

Անոր առնակը կը բանա՞ք. Ouvrez-vous son billet ?  
Ձեմ բանար. Je ne l'ouvre pas.

Այսօր քնեցրը կը բանայ .	Ouvre-t-il les yeux ?
կը բանայ .	Il les ouvre.
Զ՞՞՞՞՞՞՞ կը սիրէք .	Qui aimez vous ?
Հայրս կը սիրեմ .	J'aime mon père.
Ձեր հայրը իւր սրգին կը սիրէ՞ .	Votre père aime-t-il son fils ?
կը սիրէ .	Il l'aime.
կը սիրէ՞ք ձեր ազգայրը .	Aimez-vous vos enfants ?
կը սիրեմ .	Je les aime.
Գինին կը սիրէ՞ք .	Aimez-vous le vin ?
կը սիրեմ .	Je l'aime.
Ի՞նչ կը սիրէք .	Qu'aimez-vous ?
Մրդուզ .	Du cidre.
Մրդուզը կը սիրեմ .	J'aime le cidre.
Ամերիկացին .	L'Américain.
Ամերիկացին ի՞նչ կը սիրէ .	Qu'aime l'Américain ?
Սուրճը կը սիրէ .	Il aime le café.

## 70. Հրահանգ

Ձեր եղբայրը կը սիրէ՞ք . — կը սիրեմ . — Ձեր եղբայրը ձեզ կը սիրէ՞ . — Ձխս չի սիրեր . — Ձխս կը սիրէ՞ս , բարի ազաս . — Քեզ կը սիրեմ . — Այս գէշ մարդը կը սիրէ՞ս . — Ձեմ սիրեր . — Զ՞՞՞՞՞՞՞ կը սիրէք . — Իմ ազաքս կը սիրեմ . — Զ՞՞՞՞՞՞՞ կը սիրէք . — Մեր բարեկամները կը սիրենք . — Մէկը կը սիրենք . — Մէկը չենք սիրեր ( ոչ ոք կը սիրենք ) . — Մէկը մեզ կը սիրէ . — Ամերիկացիք մեզ կը սիրեն . — Բանի մը պէտք ունի՞ք . — Բանի մը պէտք չունիմ . — Ձեր հայրն ի՞նչ բանի պէտք ունի . — Իւր սպասաւորին պէտք ունի . — Ի՞նչ բանի պէտք ունիք . — Տոմսակի պէտք ունիմ . — Այս տոմսակին թէ անոր պէտք ունիք . — Ասոր պէտք ունիմ . — Անիկա ի՞նչ կուզէք ընել . — Բանալ կ'ուզեմ կարդալու համար . — Ձեր որդին մեր տոմսակները կը կարդայ . — կը կարդայ . — Մըր կը կարդայ . — կը կարդայ երբ որ կ'ընդունի . — Ինձի շափ տոմսակ կ'ընդունի . — Ձենէ աւելի կ'ընդունի . — Ինչ

ծի ի՞նչ կու տաք . — Ձեզի բան մը չեմ տար . — Այս գիրքն իմ եղբորս կու տա՞ք . — Կու տամ . — Անոր թռչունն մը կու տա՞ք . — Հատ մը կու տամ . — Ձեր գիրքերը որո՞ւ փոխ կու տաք . — Իմ բարեկամներուս փոխ կու տամ . — Ձեր բարեկամն ինձի հանդերձ մը փոխ կու տա՞յ . — Ձեզի հատ մը փոխ կու տայ . — Ձեր հանդերձներն որո՞ւ փոխ կու տաք . — Մէկու մը փոխ չեմ տար :

71. Հրահանգ

Բան մը կը կարգադրէ՞ք . — Բան մը չենք կարգադրեր . — Ձեր եղբայրն ի՞նչ կը շարէ . — Իւր գիրքերը կը շարէ . — Ձեր նաւը կը վաճառէ՞ք . — Ձեմ վաճառեր . — Նաւապիան իրենը կը վաճառէ՞ . — Կը վաճառէ . — Ամերիկացին ի՞նչ կը վաճառէ . — Իւր եզերը կը վաճառէ . — Անգղիացին իւր տոմսակը կը լմնցունէ՞ . — Կը լմնցունէ . — Ի՞նչ տոմսակներ կը լմնցունէք . — Իմ բարեկամներուս զրաճներս կը լմնցունեմ . — Մեծ պարտէզս կը տեսնէ՞ք . — Կը տեսնեմ . — Ձեր հայրը կը տեսնէ՞ մեր նաւերը . — Ձի տեսներ . բայց մենք կը տեսնենք . — Ո՞րչափ զինուոր կը տեսնէք . — Շատ կը տեսնենք , երեսնէ աւելի կը տեսնենք . — Բան մը կը խմէ՞ք . — Գինի կը խմեմ . — Նաւաստին ի՞նչ կը խմէ . — Մրգուղ կը խմէ . — Գինի՞ թէ մրգուղ կը խումենք . — Գինի եւ մրգուղ կը խմենք . — Իտալացիք ի՞նչ կը խմեն . — Տուրմ կը խմեն . — Տուրմ կը խմե՞նք . — Կը խմենք . — Ի՞նչ կը գշես . — Տոմսակ մը կը գրեմ . — Որո՞ւ . — Դրացւոյս . — Ձեր բարեկամը զի՞ր գրէ . — Կը գրէ . — Որո՞ւ կը գրէ . — Իւր գերձակին կը գրէ :

## 72. Հրահանգ

 տաի . — Ար գործածեմ . — Ձեր գանակը կրնա՞մ գոր-  
 ծածել . — Այնաս գործածել , բայց սէտք չէ որ գրեղ  
 կարես . — Եղբայրներս ձեր գիրքերը կրնա՞ն գործա-  
 ձել . — Այնան գործածել . — Ձեր հրացանը կրնա՞ք  
 գործածել . — Այնաք գործածել , բայց սէտք չէ զայն  
 սպականել . — Իմ փայտս ի՞նչ բրի՞ք . — Տաքնալու  
 համար գործածեցի . — Ձեր հայրն իմ ձիս գործածեց .  
 — Գործածեց . — Մեր գրացիները մեր հանդերձները  
 գործածեցի՞ն . — Չգործածեցին , քանզի անոնց սէտք  
 չունեցան . — Բեզոյրս ս՞ով գործածեց . — Ոչ ոք գոր-  
 ծածեց . — Ձեր եղբորն բսի՞ք որ իչնէ . — Ըսելու չը  
 համարձակեցայ . — Ինչո՞ւ չհամարձակեցաք բսել .  
 — Քանզի չուզեցի արթնցնել . — Ձեզի բսած է որ  
 չարթնցնէք . — Ըսած է որ չարթնցնեմ , եթէ կը քը-  
 նանայ :

## 462. Հրահանգ

Այսօր ածիլուեցա՞ք ( դուք ձեզ կ'ածիլե՞ք ) . — Ածիլուեցայ . — Ձեր եղբայրն ածիլուեցա՞ւ . — Չածիլուեցաւ , այլ զինք ածիլել տուաւ . — Ստէպ կ'ածիլուե՞ք . — Ամէն առտու կ'ածիլուիմ , եւ երբեմն նաեւ իրիկունը . — Իրիկունը ե՞րբ կ'ածիլուիք . — Երբ տունը ճաշ չեմ ընել . — Ձեր հայրն օրը քանի՞ անգամ կ'ածիլուի . — Օրն անգամ մը միայն կ'ածիլուի , բայց հօրեղբայրս օրը երկու անգամ կ'ածիլուի . — Ձեր հօրեղբորորդին ստէպ կ'ածիլուե՞ . — Երկու օրն անգամ մը միայն կ'ածիլուի . — Առտուն ժամը քանի՞ն կը հագուիք . — Նախաճաշ ընելուս պէս կը հագուիմ , եւ կը նախաճաշեմ ամէն օր ժամը ութին կամ ութը քառորդ անցած . — Ձեր բարեկամը նախաճաշէն առաջ կը հագուի . — Հագուելէն առաջ կը նախաճաշէ . — Իրիկուան ժամը քանի՞ն կը հանուիս . — Թատրոնէն գալուս պէս կը հանուիմ . — Ամէն իրիկուն թաաւրոն կ'երթա՞ս . — Ամէն իրիկուն չեմ երթար , քանզի լաւ է ուսանել քան թատրոն երթալ . — Ժամը քանի՞ն կը հանուիս , երբ թատրոն չես երթար . — Այն առեւն ընթրելուս պէս կը հանուիմ , եւ ժամը տասնին պակեկու կ'երթամ . — Տղան արդէն հագուեցուցի՞ք . — Դեռ չհագուեցուցի , քանզի դեռ կը ննջէ . — Ժամը քանի՞ն կ'ելէ . — Արթնցուելունս պէս կ'ելլէ . — Ինծի չափ կանուխ կ'ելլե՞ք . — Ձեմ գիտեր թէ դուք ժամը քանի՞ն կ'ելլէք , բայց ես արթննալուս պէս կ'ելլեմ . — Ա՛ուզե՞ք սպասաւորիս ըսել որ դիս վաղը ժամը չորսին արթնցնէ . — Ա՛ուզեմ ըսել . — Ինչո՞ւ այսպէս կանուխ ելաք . — Տղայքս այնչափ աղմուկ ըլին որ դիս արթնցուցին . — Աղէկ քնացա՞ք . — Աղէկ չքնացայ , քանզի չափազանց աղմուկ ըրիք .

—Քարի նստապետը ժամը քանի՞նչն արթնցաւ . — Աստուան ժամը հինգը քատորդ անցած արթնցաւ :

## 463. Հրահանգ

Տղտա ի՞նչպէս վարուեցաւ . — Շատ աղէկ վարուեցաւ . — Եզրայրս դէպ ի ձեզ ի՞նչպէս վարուեցաւ . — Գէպ ինձ շատ աղէկ վարուեցաւ , քանզի դէպ ամէն մարդ աղէկ կը վարուի . — Այս մարդուն դրել ( աշխատութիւնը ) կ'արժէ . — Անոր դրել չարժեր . — Կարկանդակ մը գնելու համար ձիէ իջնել կ'արժէ . — Չարժեր , քանզի երկայն ասնն չէ որ կերաք . — Այս աղքատին բան մը տալու համար ձիէ իջնել կ'արժէ . — Այս , քանզի կ'երևի թէ պէտք ունի , բայց կրնաք առանց ձիէ իջնելու անոր բան մը տալ . — Լաւագո՞նք է թատրոն երթալ քան ուսանել . — Լաւագո՞նք է առիկա ընել քան անիկա . — Լաւագո՞նք է Գաղիերէն կարգալ սորվել քան խօսել սորվել . — Առանց խօսել սորվելու կարգալ սորվել աշխատութիւնը չարժեր . — Լաւագո՞նք է պատկել երթալ քան պատուելու երթալ . — Լաւագո՞նք է առիկա ընել քան անիկա . — Լաւագո՞նք է Գաղիա երթալ քան Գերմանիա . — Չարժեր Գաղիա կամ Գերմանիա երթալ , երբ մարդ համբարդելու բաղձանք չունի . — Արջապէս այս մարդէն զերծա՞ք . — Անկէ զերծայ . — Ինչո՞ւ ձեր հայրն իւր ձիերը ձեռքէ հանեց . — Ասնն զի անոնց պէտք չունէր . — Ձեր վաճառահանը վերջապէս յաջողեցա՞ւ իւր վնասուած շաքարը ձեռքէ հանելու . — Ձեռքէ հանելու յաջողեցաւ . — Ապառի՞կ ծախեց . — Ասնխիկ կրցաւ ծախել , այնպէս որ ապառիկ չծախեց . — Ձեզի կարգալ ո՞վ սորվեցուց . — Գաղիացի վարպետի մը քով սորվեցայ . — Ձեզի դրել սորվեցա՞ւց . — Ինձի կարգալ եւ դրել սորվեցուց . — Ձեր

եղբորը հաշիւ ս'վ սորվեցուց . — Գաղիացի վարպետ մը սորվեցուց . — Ձիւս կը կանչէք . — Ձեզ կը կանչեմ . — Ի՞նչ կը հաճիք . — Ինչո՞ւ չէք ելլեր , չէք դիտեր որ արդէն ուշ է . — Ինչ է ի՞նչ կը խնայէք . — Բոլոր ստակս կորսնցուցի , եւ կու գամ ազաչելու որ ինձի փոխ տաք . — Ժամը քանի՞ն է . — Արդէն ժամը վեցը քառորդ անցած է , եւ բաւական քնացաք . — Շատո՞նց է որ ելաք . — Ժամ ու կէս է որ ելած եմ . — Ինձի հետ պտոյտ մը ընել կ'ուզէ՞ք . — Ձեւ կրնար պտտելու երթալ , քանզի Գաղիերէնի վարպետիս կը սպասեմ :

— 00000 —

ԵՒ. ԳԱՍ. Cinquante-troisième Leçon.

ՅՈՒՍԱԼ .

Espérer ( ետեւէն եկած ա-  
ներեւոյթը առանց de նա-  
խադրութեան .

ԴԻՏ. Ա. Երբ բայի մը վերջընթեր վանկին օ ձայնաւորը սուր շեշտ , accent aigu ( ' ) ունի՝ բուխ շեշտ , accent grave ( ` ) կ'առնու , երբ իրմէ ետքի վանկն ան-  
ձայն օ ու վ կը վերջանայ . զորօրինակ . Céder, je cède, tu cèdes, il cède.

Կը յուսամ , կը յուսաս , կը յուսայ . J'aspère, tu espères, il espère.

Կը յուսա՞ք . Espérez-vous ? Կը յուսանք . Nous espérons.

Ձանի հոն գտնել կը յուսա՞ք . Espérez-vous l'y trouver ? ( Լ. Դաս Դիւս. Ա. )

Կը յուսամ . Je l'espère.

Փոխել .

Changer.

Բան մը ուրիշ բանի մը հետ փոխել . Changer կամ troquer une chose contre une autre.

Բեզդրս անոր բեզդրին հետ կը փոխեմ . Je change կամ je troque mon chapeau contre le sien.

- Փոխել (խոսք մեկ բանը, այս-  
ինքն՝ մեկը թողուլ ուրիշ  
մը առնուլ) . Changer de (առանց յօդի) .
- (Եղջր կամ ձեր բեղջրը կը  
փոխել) . Changez-vous de chapeau ?
- Կը փոխեմ . J'en change .
- Չորձը (ճերմկեղէնը) կը փոխե . Il change de linge .
- Իրենց հանգերեները կը փոխեն . Ils changent d'habits .
- Խառնուել . Se mêler .
- Մարդոց մէջ կը խառնուիմ . Je me mêle parmi les gens .
- Չինուորիկերուն մէջ կը խառնուի . Il se mêle parmi les soldats .

Ի՞նչ .

- Ճանչնալ ( յիշել որ տե-  
սան է ) . Reconnaître (\*). կը խոնարհի  
connaître թ պէս ( Տես Գ.առ  
ԻԳ. Գիտ. Գ. և Գ.առ ԼԳ. )
- Այս մարդը կը ճանչնա՞ր . Reconnaissiez-vous cet hom-  
me ?
- Այնչափ տակնէ ի վեր չեմ տե-  
սած որ չեմ ճանչնար (կոր) . Je ne l'ai pas vu depuis si  
longtemps que je ne le  
reconnais plus .
- Այնչափ հաց ունիմ որ չեմ  
կ'ընար ուտել (ուտելու հա-  
մար ինձի պէտք եղածէն ա-  
ւելի ) . J'ai plus de pain que je n'en  
puis manger .

ԳԻՏ. Բ. Էրբ , ինչպէս վերի խօսքին մէջ է , երկու  
նախադասութիւն իրարու հետ կը բաղդասուին , plus,  
moins, mieux, autrement, plus tôt que մակրայներով ,  
երկրորդ նախադասութիւնը որ այս մակրայներէն ետ-  
քը կու գայ՝ բացասական կ'ըլլայ առանց pas ի , եթէ  
առաջին նախադասութիւնը հաստատական է . իսկ ե-  
թէ առաջին նախադասութիւնը բացասական է , երկ-  
րորդը հաստատական ըլլալու է . զորօրինակ . Je n'ai  
pas plus d'argent que vous croyez . Չեր կարծածէն աւե-  
լի ստակ չունիմ . J'ai plus d'argent que vous ne croyez .  
Չեր կարկածէն աւելի ստակ ունիմ :

- Այս մարդն աւելի ստակ ունի *Cet homme a plus d'argent*  
քան որչափ ծախք չընէր . *qu'il n'en dépensera pas.*  
Պէտք եղածէն աւելի զինի կայ . *Il y a plus de vin qu'il n'en*  
*faut.*
- Պէտք եղածէն աւելի ստակ ու- *Vous avez plus d'argent*  
նիք . *qu'il ne vous en faut.*
- Մեզի պէտք եղածէն աւելի *Nous avons plus de souliers*  
մուծակ ունինք . *qu'il ne nous en faut.*
- Այս մարդը կարծածէն քիչ *Cet homme a moins d'amis*  
բարեկամ ունի . *qu'il ne pense.*
- Ձեզ ձեր կարծածէն աւելի ա- *Je vous comprends mieux*  
ղէկ կը հասկնամ . *que vous ne pensez.*
- Ըսածէն տարբեր կերպով կը *Il agit autrement qu'il ne*  
ըսածէ . *dit.*
- Իւր կարծածէն աւելի շուտ *Il est arrivé plus tôt qu'il*  
հասաւ . *ne pensait.*
- Երեւակայել . *S'imaginer.* Խորհել . *Penser.* Շահել . *Gagner.*
- Ձեր հայրն արդէն մեկնեցա՞ւ . *Votre père est-il déjà parti ?*  
Մեկնելու պատրաստ է . *Il est prêt à partir.*
- Պատրաստ . *Prêt.* Պատրաստել . *Préparer.*  
Պատրաստուիլ . *Se préparer.*  
Պատրաստ կենալ . *Se tenir prêt.*  
Ճեղքել . *Fendre.*
- Մեկուն սիրտը ճեղքել . *Fendre le cœur à quelqu'un.*  
Այս մարդուն սիրտը կը ճեղ- *Vous fendez le cœur à cet*  
քէք ( կը ծակէք ) . *homme.*
- Որ՞ա սիրտը կը ծակեմ . *A qui est-ce que je fends le*  
*cœur ?*
- Սփռել . *Répandre.* Տարածել . *Étendre.*
- Երկայն , մանրամասն խօ- *S'étendre sur.*  
սել . Տարածուիլ .
- Այս մարդն այս նիւթին վրայ *Cet homme s'étend toujours*  
միշտ երկայն կը խօսի . *sur ce sujet.*
- Առարկան , նիւթը . *Le sujet; l'objet.*  
Գետինը տարածուիլ . *S'étendre sur le plancher.*
- Կախել . *Pendre à.* Պատր . *Le mur.*

Վերաբերուս պատին կը կախեմ . Je pends mon habit au mur.  
Խոր բեղջըրը ծառին կը կախե . Il pend son chapeau à l'arbre.

Գողը . Le voleur . Աւաղակը . Le brigand.

Մեր մուշակները դամին կը կա . Nous pendons nos souliers  
խնդ . aux clous.

Գողը կախուեցաւ . Le voleur a été pendu.

Կոչողը ծառին ս'վ կախեց . Qui a pendu le panier à  
l'arbre?

Հուզկահաղը . Le voleur de grand che-  
min.

Միշտ փութաջան էք , եւ միշտ . Vous êtes toujours studieux,  
այնպէս պետի բլար . et vous le serez toujours.

ԳԻՏ . Գ . Երբ քանի մը նախադասութիւններէ բա-  
ղադրեալ խօսքի մը բայերը միեւնոյն աէր բայիի կը  
վերաբերին , աճէն մէկ բային վրայ գերանուն աէր  
բային պետի կրկնուի . նոյնպէս գերանուն խնդիրները :

Ձեր եղբայրն իմաստուն է , եւ . Votre frère est sage et il le  
միշտ այնպէս պետի բլար . sera toujours .

Բարեկիրթ սրդի մը երէք իւր . Un fils bien élevé ne fait  
հորը վիշտ չի պատճառեր . jamais de chagrin à son  
զանի կը սիրէ , կը պատուէ . père ; il l'aime, l'honore et  
եւ կը յարգէ . le respecte .

Երկուցն առեճէ ի վեր , շա- . Depuis longtemps .  
տանդուրնէ .

Շատանցուրնէ հիւանդ է . Il est malade depuis long-  
temps .

Շատանց է որ հիւանդ է . Il est longtemps qu'il est  
malade .

#### 164. Հրահանգ

Այսօր տամակ մը ընդունել կը յուսամք . — Հաս մը  
ընդունել կը յուսամ . — Որով . — Բարեկամներուս մէ-

կէն . — Ի՞նչ կը յուսաս . — Կը յուսամ ազգականներս այսօր տեսնել , քանզի դաստիարակս ( précepteur ) դիս անոնց տունը տանել խոստացաւ . — Ձեր բարեկամը բան մը ընդունել կը յուսամ . — Բան մը ընդունել կը յուսայ , քանզի շատ աշխատեցաւ . — Կանուխ Բարիզ հասնել կը յուսամք . — Ժամը ութը քառորդ անցած հոն հասնել կը յուսանք , քանզի մեր հայրն այս իրիկուն մեզ կը սպասէ . — Չանի տունը գտնել կը յուսամք . — Կը յուսանք . — Ի՞նչ բանի հետ փոխեցիք ձեր կառքը որուն վրայով ինծի խօսեցաք . — Չանի գեղեցիկ արարացի ձիու մը հետ փոխեցի . — Ձեր գիրքն իմինիս հետ փոխել կ'ուզէք . — Ձեմ կրնար , քանզի Գաղիերէն ուսանելու համար անոր պէտք ունիմ . — Ձեր բեղոյրն ինչո՞ւ կը հանէք . — Կը հանեմ , քանզի իմ ծեր վարպետիս դաշը կը տեսնեմ . — Շուկան երթալու համար բեղոյր կը փոխէք . — Շուկան երթալու համար չեմ փոխեր , այլ նուագածութեան երթալու համար . — Նուագածութիւնը ե՞րբ պիտի ըլլայ ( տեղի ունենայ ) . — Միւս վազիւ տեղի պիտի ունենայ . — Ինչո՞ւ կ'երթաք . հոս չէք զբօսնուր . — Կը խարուիք , եթէ կ'ըսէք թէ հոս չեմ զբօսնուր . քանզի կը վստահացնեմ ձեզ որ ձեզի հետ խօսելու մէջ շատ զուարճութիւն կը գտնեմ . բայց կ'երթամ , վասնզի ազգականիս պարահանդէսին կը սպասուիմ . — Հոն երթալ խոստացամք . — Խոստացայ . — Անզղիացի նաւապետին տունը երթալու համար բեղոյր փոխեցի՞ք . — Բեղոյր փոխեցի , բայց ոչ վերարկու ոչ ալ մուճակ փոխեցի . — Սրը քանի՞ անգամ հանգերձ կը փոխես . — Ճաշելու եւ թատրոն երթալու համար կը փոխեմ :

## 465. Հրահանգ

Այս մարդոց մէջ ինչո՞ւ կը խանութիք . — Անոնց մէջ կը խանութիմ, դիւանալու համար թէ իմ վրայով ինչ կ'ըսեն . — Ի՞նչ պիտի ըլլաք, եթէ միշտ զինուորներուն մէջ կը խանութիք . — Ձեզ գիտեր թէ ինչ պիտի ըլլամ, բայց կը վստահացնեմ ձեզ որ անոնք ինծի վնաս պիտի չընեն, քանզի անոնք մէկուն վնաս չեն բներ . — Ձեր հայրը նանչցածք . — Այնչափ երկայն տակն է դանի չեմ տեսած, որ չճանչցայ . — Այն ձեզ նանչցա՞ւ . — Կակոյն նանչցաւ դիւ . — Ո՞րչափ տակն է որ այս վերաբերուն ունիք . — Շատոնց է որ ունիմ . — Ո՞րչափ տակն է որ ձեր եղբայրն այս հրացանն ունի . — Շատ երկայն տակն է որ ունի . — Միշտ Գաղիերէն կը խօսիք . — Այնչափ երկայն տակն է չեմ խօսած, որ գրեթէ բարբոսիմ մտոյած եմ . — Ո՞րչափ տակն է որ ձեռ հօրեղբորդին Գաղիերէն կը սորվի . — Երեք ամիս միայն է . — Ձեզի չափ դիտէ՞ . — Ինչ աւելի դիտէ, քանզի աւելի երկայն տակն է որ կը սորվի . — Գիտէ՞ք ինչու համար այս մարդը չուտեր . — Կարծեմ թէ անօթի չէ, քանզի աւելի հաց ունի քան որչափ կրնայ ուտել . — Ձեր որդւոյն ստակ տալիք . — Աւելի տալի քան որչափ ծախք պիտի չընէ . ( այնչափ տալի որ չի կրնար ամէնը ծախք բնել ) . — Ինծի դուտիմ մը մրդուզ տալ կ'ուզէ՞ք . — Մրդուզ խմելու պէտք չունիք, քանզի պէտք եղածէն աւելի դինի կայ . — Կոր բեղոյր մը գնելու համար հրացանս ծախելո՞ւ եմ . — Շախելու պէտք չունիք, քանզի ձեզի պէտք եղածէն աւելի ստակ ունիք . — Կօշկահարին խօսել կ'ուզէ՞ք . — Անոր խօսել չեմ ուզեր, քանզի մեզի պէտք եղածէն աւելի մուճակ ունինք . — Գաղիացիք ինչո՞ւ կ'ուրախանան . — Կ'ուրախանան,

քանզի կը կարծեն թէ շատ աղէկ բարեկամներ ունին . — Ուրախանալու իրաւունք չունին . — Իրաւունք չունին , քանզի աւելի քիչ բարեկամ ունին քան որչափ կը կարծեն :

## 166. Հրահանգ

Ընծի հետ մեկնելու պատրաստ էք . — Եմ . — Ձեր հօրեղբայրը մեզի հետ կը մեկնի . — Մեզի հետ կը մեկնի , եթէ կ'ուզէ . — Կ'ուզէ՞ք անոր ըսել որ վաղիւ իրիկուան ժամը վեցին մեկնելու պատրաստ ըլլայ . — Ըսել կ'ուզեմ . — Այս երիտառարզը մեկնելու պատրաստ է . — Գեռ ոչ , բայց ընդհուկ պատրաստ պիտի ըլլայ . — Այս մարդն ինչո՞ւ կախուեցաւ . — Կախուեցաւ , քանզի մէկը սպաննեց . — Կախուեցա՞ւ մարդը որ ձեր եղբորմէն ձի մը գողցաւ . — Պատժուեցաւ , բայց չկախուեցաւ . մեր երկրին մէջ հուղկահարները միայն կը կախուին . — Վերարկուս ի՞նչ բրիք . — Պատին կախեցի . — Բեղոյրս ծառէն կախել կ'ուզէ՞ք . — Կախել կ'ուզեմ . — Մուճակներս շտեռա՞ք . — Չանք ձեր անկողինին տակը դտայ , եւ դամբն կախեցի . — Ձեր հրացանը գողցող գողը կախուեցա՞ւ . — Պատժուեցաւ , բայց չկախուեցաւ . — Այս նիւթին վրայ ինչո՞ւ երկայն կը խօսիք . — Վասն զի ամէն նիւթոյ վրայ պէտք է խօսել . — Եթէ ձեզի մտիկ ընելու եւ պատասխանելու ստիպուած եմ , երբ այս նիւթին վրայ կ'երկայնաբանէք , բեղոյրս դամբն կախեմ , եւ ապա ձեզ մտիկ ընեմ եւ ըստ կարի ( de mon mieux ) պատասխանեմ . — Աղէկ կ'ընէք :

ԾԴ. ԳԱՍ. Cinquante-quatrième Leçon.

Ազէկ (առողջ) բլլալ .	Se porter bien.
Ի՞նչպէս էք .	Comment vous portez-vous ?
Ազէկ եմ .	Je me porte bien.
Ձեր հայրն ի՞նչպէս է .	Comment se porte monsieur votre père ?
Ազէկ չէ .	Il ne se porte pas bien.
Ձեր եղբայրը, հօրեղբորդին .	Monsieur votre frère; men- sieur votre cousin.
Ձեր եղբայրները .	Messieurs vos frères.

ԳԻՏ. Ա. Գաղիերէնի մէջ քաղաքաւարութեան հա-  
մար հայր, մայր, եղբայր, քոյր եւ ասանց նման բա-  
սերուն հետ, Monsieur, Տէր, Madame, Տիկին, Mademoiselle, Օրիորդ փառասները կը դործածուին . Mon-  
sieur ին յսքնակին է Messieurs. Madame ինք՝ Mesdames.  
Mademoiselle ինք՝ Mesdemoiselles. Une madame, une made-  
moiselle չըսուիր, պէտք է ըսել, une dame, փիկին մը,  
une demoiselle, օրիորդ մը :

Ձեր հօրեղբայրները .	Messieurs vos oncles.
Բանի մը վրայ տարակուսել .	Douter de quelque chose.
Ասոր վրայ կը տարակուսե՞ք .	Doutez-vous de cela ?
Կը տարակուսիմ .	J'en doute.
Չեմ տարակուսիր .	Je n'en doute pas.
Ի՞նչ բանի վրայ կը տարակու- սիք .	De quoi doutez-vous ?
Ի՞նչպէս ըսածին վրայ կը տա- րակուսիմ .	Je doute de ce que l'homme m'a dit.

Տարակոյտ . Le doute. Անտարակոյտ . Sans doute.

Միտարան բլլալ բանի մը վր-  
պայ . Convenir de quelque  
chose.

Յայտմ՝ միտարան էք .	Convendez-vous de cela ?
Միտարան եմ .	J'en conviens.

ԳԻՏ. Բ. Հայերէն կ'ըսենք, Այս ինչ բանին համար

այսչափ ֆրանք վճարեցի . Գաղիերէն կ'ըսուի , Բան մը այսչափ ֆրանք վճարեցի : Նոյնպէս Հայերէն կ'ըսենք , Այս ինչ բանը այսչափ ֆրանքի գնեցի , Գաղիերէն պէտք է ըսել՝ Այս ինչ բանը այսչափ ֆրանք գնեցի . վերջապէս ստակիւն անունը հայցական կը դրուի :

Այս բեղջյրին համար ո՞րչափ վճարեցիք .	Combien avez-vous payé ce chapeau ?
Անոր համար երեք սկուտ վճարեցի .	Je l'ai payé trois écus.
Այս ձին հինգ հարիւր ֆրանքի գնեցի .	J'ai acheté ce cheval cinq cents francs.
Գինը .	Le prix.
Գինին վրայ միաբանեցա՞ք .	Etes-vous convenus du prix ?
Միաբանեցանք .	Nous sommes convenus.
Ի՞նչ բանի վրայ միաբանեցաք .	De quoi êtes-vous convenus ?
Գնոյն վրայ .	Du prix.
Համաձայնել բանի մը վրայ .	S'accorder de quelque chose.
Զգալ , զգացած , զգալով .	Sentir (2); senti; sentant.
Նը զգամ , կը զգաս , կը զգայ .	Je sens, tu sens, il sent.
Հաւանել , հաճել .	Consentir (à սլ խնդիր) .
Հոն երթալու կը հաճիմ .	Je consens à y aller.
Սակայն . Cependant . կրել ( հանդերձ ) . Porter .	
Ի՞նչ հանդերձ կը կրէ .	Quels vêtements porte-t-il ?
Գեղեցիկ հանդերձներ կը կրէ .	Il porte de beaux vêtements.
Հանդերձ , հազուսար .	Le vêtement.
Սովորութեանս հակառակ .	Contre mon ordinaire.
Ըստ սովորութեան .	Comme à l'ordinaire, comme de coutume.
Ընկերակիցս ( օրթագ ) .	Mon associé.
Բան մը դիտել .	S'apercevoir 3. de quelque chose.

Ատիկա կը գիտե՞ք . . .	Vous apercevez-vous de cela ?
Կը գիտեմ .	Je m'en aperçois.
Ատիկա գիտեցի՞ք .	Vous êtes-vous aperçu de cela ?
Ըրածը գիտեցի՞ք .	Vous êtes-vous aperçu de ce qu'il a fait.
Դիտեցի .	Je m'en suis aperçu.
Սպասել , սկնու՛նել .	S'attendre à .
Զեք հարկը սրմէն տամակ մը ընդունելու կը սպասե՞ք .	Vous attendez-vous à recevoir un billet de votre oncle ?
Կը սպասեմ , կը յաւատմ .	Je m'y attends.
Կը սպաս .	Il s'y attend.
Կը սպասենք .	Nous nous y attendons.
Սպասեցի՞նք .	Nous y sommes-nous attendus ?
Սպասեցինք .	Nous nous y sommes attendus .
Հայթայթ ել ( ճարել ) .	Se procurer.
Ստակ չեմ կրնար հայթայթել .	Je ne peux pas, <i>կամ</i> je ne puis me procurer de l'argent.
Զի կրնար առելիք հայթայթել .	Il ne peut se procurer de quoi manger.
Ըան մը , կամ մէկը ծաղրել .	Se moquer de quelque chose ou de quelqu'un.
Ամէն մարդ կը ծաղրէ .	Il se moque de tout le monde.
Այս մարդը կը ծաղրէք .	Vous moquez-vous de cet homme ?
Զեմ ծաղրեր .	Je ne m'en moque pas, <i>կամ</i> je ne me moque pas de lui.
Կենալ , մնալ .	S'arrêter, rester ( Տես ԼԵ-ԴԱՍՍ . ԳԼԿՍ . )
Երկայն տակն կեցա՞ք Պերլին .	Vous êtes-vous arrêté longtemps à Berlin ?
Երեք օր միայն կեցայ .	Je ne m'y suis arrêté que trois jours.

Բնակել .	Séjourner.
Ձեր եղբայրը հիմա ո՞ւր կը ըլլէ .	Où monsieur votre frère séjourne-t-il actuellement ?
Հիմա .	Actuellement.
Բնակութեան տեղ .	Le séjour.
Բարիք գեղեցիկ բնակութեան տեղ մի է .	C'est un beau séjour que Paris.
Կարդալէն ետքը .	Après avoir lu, կամ, après la lecture.
Չբազդելս ետքը .	Après m'être occupé (Տես խ. Գաս) .
Ձեր հագուելէն ետքը .	Après vous être habillé.
Հագուելէն ետքը .	Après s'être habillé ?
Մեր ածիլուելէն ետքը .	Après nous être rasés.
Անոնց տաքնալէն ետքը .	Après s'être chauffés.
Կարդալէն ետքը գիրքը ասի (տիրոջը) .	J'ai rendu le livre après l'avoir lu.
Չիս կարելէն ետքը դանակը նետակն .	J'ai jeté le couteau après m'être coupé.
Հագուելէն ետքը նուագածու .	Vous êtes allé au concert après vous être habillé.
Թեան դացիք .	Il est allé au théâtre après s'être habillé.
Հագուելէն ետքը թատրան դրնաց .	Il est allé au théâtre après s'être habillé.
Ածիլուելէն ետքը նախածաշքը .	Nous avons déjeuné après nous être rasés.
Տաքնալէն ետքը դուրս ելան .	Ils sont sortis après s'être chauffés.
Հիւանդը .	Le malade.
Բաւական աղէկ .	Assez, passablement bien.
Շատ ուշ է .	Il est bien tard, կամ, très-tard.
Շատ հեռու է .	C'est bien loin, կամ très-loin.

## 167. Հրահանգ.

Ձեր հայրն ի՞նչպէս է . — Սանկ է . — Ձեր հիւանդն ի՞նչպէս է . — Այսօր կրէկուրնէ քիչ մը ավելի աղէկ

է . — Շատո՞նց է որ ձեր եղբայրները շտեմար . — Երկու որ է որ շտեմար . — Ի՞նչպէս եւ . — Բաւական ազգէկ եմ . — Ո՞րչափ աստն է որ ձեր հօրեղբորորդին Գաղիերէն կը սորվի . — Երեք ամիս միայն է որ կը սորվի . — Արդէն կը խօսի . — Կը խօսի , կը կարգայ եւ կը դրէ լաւ քան ձեր եղբայրը որ երկու տարիէ ի վեր կը սորվի . — Շատո՞նց է որ հօրեղբորս վրայ լուր առած չէք . — Հազիւ տասնեւհինգ որ է որ անոր վրայ լուր տած եմ . — Հիմա մեր կը բնակի . — Պէ՛րզին կը բնակի , բայց եղբայրս լննարա է . — Երկայն աստն Վիլէնա կեցա՞ք . — Տասնեւհինգ որ կեցայ . — Ձեր հօրեղբորորդին Բարիզ ս՛րչափ աստն կեցաւ . — Ամիս մը միայն կեցաւ . — Հօրեղբորս խօսել կը սիրէ՞ք . — Անոր խօսել շատ կը սիրում , բայց չեմ սիրեր որ դիս ծաղրէ . — Ինչո՞ւ ձեզ կը ծաղրէ ( ձեր վրայ կը խնդայ ) . — Ձիս կը ծաղրէ , վասն զի դէշ կը խօսում . — Ձեր եղբայրն ինչո՞ւ բարեկամ չունի . — Չունի , վասն զի ամէն մարդ կը ծաղրէ . — Այս մարդն ինչո՞ւ կը ծաղրէք . — Չանի ծաղրելու միտք չունիմ . — Կաղաչեմ որ չընէք , քանզի սիրտը կը ծակէք , եթէ ծաղրէք . — Ըսածիս վրայ կը տարակուսի՞ք . — Ձեմ տարակուսիր . — Այս մարդուն ձեզի ըսածին վրայ կը տարակուսի՞ք . — Կը տարակուսիմ , քանզի տալ պատած է . — Վերջապէս գնեցի՞ք ձին զոր անցեալ ամիս գնել ուղեցիք . — Չգնեցի , քանզի չկրցայ տասկ հայթայթել .


#### 468. Հրանանկ

Ձեր հօրեղբայրը վերջապէս պարտէզը՞ գնեց . — Չը գնեց , քանզի գնոյն վրայ չմիտքանեցաւ . — Այս նրկարին գնոյն վրայ վերջապէս միտքանեցա՞ք . — Միտքանեցանք . — Ո՞րչափ վճարեցիք անոր համար . — Ա-

նոր համար տասն եւ հինգ հարիւր (հազար հինգ հարիւր) ֆրանք վճարեցի. — Այսօր ի՞նչ գնեցիր. — Երկու գեղեցիկ ձի, երեք գեղեցիկ նկար եւ գեղեցիկ հրացան մը գնեցի. — Նկարներուն համար ի՞նչ վճարեցիր. — Չանոնք եօթն հարիւր ֆրանքի գնեցի. — Սո՛ւղ կը գտնէք (կը կարծէք). — Սուղ չեմ գտներ. — Ձեր ընկերակցին հետ համաձայնեցա՞ք. — Անոր հետ համաձայնեցայ. — Նաւին դինը ձեզի վճարել կը հաճի՞. — Ինծի վճարել կը հաճի. — Դադրիս երթալու կը հաճիք (հաճութիւն կու տա՞ք). — Հոն երթալու հաճութիւն կու տամ. — Ձեր ծեր բարեկամը նորէն տեսա՞ք. — Նորէն տեսայ. — Ճանչցա՞ք. — Գրեթէ չճանչցայ, քանզի, հակառակ իւր սովորութեան, մեծ բեղոյր մը կը կրէ. — Ի՞նչպէս է. — Շատ աղէկ է. — Ի՞նչ զգեստ կը կրէ. — Գեղեցիկ նոր զգեստներ կը կրէ. — Ձեր մանչուն ըրածը դիտեցիք. — Դիտեցի. — Ձանի պատժեցի՞ք անոր համար. — Պատժեցի. — Ձեր հայրը ձեզի արդէն զրե՞ց. — Դեռ ոչ, բայց այսօր անկէ տոմսակ մը ընդունել կը սպասեմ. — Ի՞նչ բանի վրայ կը գանգատիք. — Ստակ հայթայթել չը կրնալուս կը գանգատիմ. — Այս խեղճ մարդիկն ինչո՞ւ կը գանգատին. — Ար գանգատին, քանզի չեն կրնար ուտելիք հայթայթել. — Ձեր ծնողքն ի՞նչպէս են. — Ըստ սովորութեան, շատ աղէկ են. — Ձեր հօրեղբայրն աղէկ է. — Սովորականէն աւելի աղէկ է. — Լուր առի՞ք մեր բարեկամին վրայ որ Գերմանիա է. — Անոր շատ անգամ գրեցի, բայց դեռ չպատասխանեց.

## 169. Հրանանգ

Ի՞նչ բրիք գիրքերը զոր Անդղիացի նաւապետը ձեռքի փոխ առաւ . — Անոր տուի կարգալէն կաքը . — Ձեր դանակն ինչո՞ւ նետեցիք . — Ձիւս կտրելէն կաքը նետեցի . — Նաւազածութեան կ'ըր գացի . — Հագուելէն կաքը գացիք . — Ձեր կզբայրը կ'ըր պարահանգէս գնաց . — Հազուելէն կաքը գնաց . — Ե՛րբ նախաճաշ բրիք . — Ածիլուելէն կաքը նախաճաշ բրինք . — Մեր բարեկամները կ'ըր դուրս ելան . — Տաքնալէն կաքը դուրս ելան . — Ձեր մանչն ինչո՞ւ պատժեցիք . — Պատժեցի , քանզի խմ ամենէն գեղեցիկ դաւախմ կտարեց . — Անոր գինի տուի . փոխանակ խմելու գայն , նոր գորգին ժրայ թափեց ( սփռեց ) , եւ դաւախմ կտարեց . — Այս ատու ի՞նչ բրիք . — Ելելէն կաքը ածիլուեցայ , եւ նախաճաշելէն կաքը դուրս ելայ . — Ձեր հայրը երէկ իրիկուն ի՞նչ բրաւ . — Տեսաքան երթալէն կաքը ընթրեց , եւ ընթրելէն կաքը պատկելու գնաց . — Անուխ կլա՞ւ . — Արեւին կլիկուն կլաւ :



ՅԵ. ԳԱՍ. Cinquante-cinquième Leçon.

ԻՒԱԿԱՆ ՍԵՌԻ ԱՅԱԿԱՆՔ ԵՒ ԳՈՅԱԿԱՆՔ .

( Substantifs et adjectifs du genre féminin ).

ԻՒԱԿԱՆ ՈՐՈՇԵԱԼ ԹՕԳԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ .

ԵՂ. Ուղ. la. Սեւ. de la. Տը. à la. Հայց. Գա.

Յք. „ les. „ des. „ aux. „ les.

Կե՞ք . la femme. Մայրը . la mère. Աղջիկը , դուստրը . la fille. Քոյրը . la sœur. Լոյսը , ճրագը . la lumière. Շիշը la bouteille. Բանալին . la clef. Շապիկը . la chemise.

Այս բաներուն յոքնակին կը շինուի , անոնց վերջը  
 s մը դնելով , ինչպէս , կանայք , les femmes, մայրե-  
 րը , les mères, եւայլն :

Նա , անիկա , անոնք . elle, elles. (Տես դերանուանց տախ-  
 տակը Դաս Ի.)

Ունի՞ (իդ.) A-t-elle ? Ունի . Elle a. Չունի . Elle n'a pas.  
 Ունի՞ն . Ont-elles ? Ունին . Elles ont. Չունին . Elles n'ont pas-

		Ուշ .	Սեռ .	Տր .	Հայց .
Իդ .	Իմ	Ma,	de ma,	à ma,	ma-
„	Քու	Ta,	de ta,	à ta,	ta-
„	Իւր	Sa,	de sa,	à sa,	sa-
	Անոր				
Յք .	Իմ	Mes,	de mes,	à mes,	mes-

ԴԻՏ Ա . Ma, ta, sa, ստացական անականայ յոքնա-  
 կին արականներուն հետ նոյն է , այսինքն՝ mes, tes,  
 ses. անս եւ Դաս Թ : Mon, ton, son կը դրուի , երբ  
 անունն արական է . ma, ta, sa կը դրուի , երբ անունն  
 իգական է :

Հայրը , որդին եւ դուստրը . Le père, son fils et sa fille.  
 Մայրը , որդին եւ դուստրը . La mère, son fils et sa fille.  
 Տղան , եղբայրը եւ քայրը . L'enfant, son frère et sa sœur.

ԴԻՏ Բ . Son, sa. յոք . ses, ինչպէս նաեւ leur, leurs,  
 Թէ Անոր , անոց , եւ Թէ Իր , իրենց կը նշանակէ :  
 Խօսքէն պէտք է հասկնալ :

	Եգ .	Յոք .
Իմ գրիչս , իմ գրիչներս .	Ma plume, mes plumes.	
Քու պատարաքաղիչ , քու պա- տարաքաղիչք .	Ta fourchette, tes four- chettes.	
Իւր կամ անոր ձայնը , իւր կամ անոր ձայները .	Sa voix, ses voix.	

Մեր ձեռքը, մեր ձեռքերը . Notre main, nos mains-  
 Զեր բերանը, ձեր բերանները . Votre bouche, vos bouches-  
 Իրանց կամ անոնց դուռը, ի- Leur porte, leurs portes-  
 բանց կամ անոնց դուռները .

ԳԻՏ. Գ. Leur ստացական ածականը եւ leur, il դեր-  
 անուան յոք. արականը, շխտիկու չէ . Je leur parle,  
 Անոնց կը խօսիմ . Կոս leur գերանուն արական խնդիր  
 է parle բային . Je vois leur frère. անոնց եղբայրը կը  
 տեսնեմ . Կոս leur ստական ածական է frère ին, եւ  
 յոքնակին կ'ըլլայ leurs. Je vois leurs frères. անոնց եղ-  
 բայրները կը տեսնեմ :

ԳԻՏ. Գ. Ածականներն իդական կ'ըլլան անոնց վեր-  
 ջը անձայն Ե մը գրուելով, որոնց յոքնակին Ե մը առ-  
 նելով կ'ըլլայ .

Փոքր մամը .	La petite chandelle .
Փոքր մամերը .	Les petites chandelles .
Մեծ շիշը .	La grande bouteille .
Մեծ շիշերը .	Les grandes bouteilles .

Quel ? Ի՞նչ, ածականին իդականը կ'ըլլայ quelle.

Ի՞նչ կին . quelle femme ? Ի՞նչ կանայք . quelles femmes?  
 Ի՞նչ աղջիկ . quelle fille ? Ի՞նչ աղջիկներ . quelles filles ?

Ce, այս, զուցական ածականին իդականը կ'ըլլայ  
 cette. յոքնակին արականին ոչէս է ces.

Այս կինը . cette femme. Այս կանայք . ces femmes. Այս  
 քրտորդը . cette demoiselle-ci. Այն օրիորդները . ces demoi-  
 selles-là.

Այդ մեծկամուրջ տիկինը . Cette jeune dame-là.  
 Այդ մանկամարդ տիկնայք . Ces jeunes dames-là.  
 Աջ ձեռքը . La main droite. Զախ ձեռքը . La main gauche.

Ձեռքս կը ցաւի .	J'ai mal à la main.
Ակռա , ակռաներ .	La dent, les dents.
Ձեր ակռան կը ցաւի .	Avez-vous mal aux dents ?
Գլուխս կը ցաւի .	J'ai mal à la tête.
Քովս կը ցաւի .	J'ai mal au côté.
Անոր սառլաները կը ցաւին .	Il a mal aux pieds.
Գէմբը .	La figure, la vue, le visage.
Բերանը . La bouche.	Այտը . La joue.
Լեզուն . La langue.	Դուռը . La porte.
Պատուհանը . La fenêtre.	Փողոցը . La rue.
Ճամբան . La route.	Քաղաքը . La ville.
Ոստոյնը . La toile.	Պառաւը . La vieille femme.

ԳԻՏ. Ե. Ածականներն իրենց վերջը անձայն է ( օ ) մը աննելով իդական կ'ըլլան ( Տես վերը Գլու. Ե. ) . իսկ օ վերջաւորող ածականներուն արականն ու իդականը նոյն է . զորօրինակ .

Mon petit frère .	Պզտիկ եղբայրս .
Ma petite sœur .	Պզտիկ քոյրս .
Un homme aimable .	Սիրուն մարդ մը .
Une femme aimable .	Սիրուն կին մը .
Սենեակը . La chambre.	Ջուրը . L'eau ( իշ . )

Առջեւի սենեակը . La chambre du devant,	կամ	sur le devant.
Ետեւի սենեակը . La chambre du derrière,	կամ	sur le derrière.
Վերի սենեակը . La chambre du haut.		

### ԻԳԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԱՆ 80Ի

Ուշ .	} de la, de l'.	Սեռ . de.
Հոյ .		Տր . à de la, à de l'.

Մասնական յօդին վրայ տես եւ ժԱ. դասը .

Լոյս , de la lumière.	Մետաքս , de la soie.
Աղէկ ապուր .	De bonne soupe.

ԳԻՏ. Զ. El, eil, en, on, et վերջաւորած ածականները վերջին բաղաձայնը կրկնելով անձայն e կ'աւանան իրականին մէջ :

- Անդուիժ . cruel, cruelle.      Կման . pareil, pareille.  
 Անդուիժ (ցուայի) ստուգու. Une cruelle certitude.  
 Թիւն մը .  
 Կման (այսպիսի) խոստում մը . Une pareille promesse.  
 Հին , նախնի . ancien, ancienne.      Բարի . Bon, bonne.      Համբ . muet, muette.  
 Հին ճանօթ մը .      Une ancienne connaissance.  
 Աղէկ ճշմարտութիւն մը .      Une bonne vérité.  
 Համբ կին մը .      Une femme muette.

ԻՊԱԿԱՆ ԱՆՈՐՈՇ ՅՅԻՒՆ ՀՈՂՈՎՈՒՄԸ

- Ուղ . } une.  
 Հայ . }  
 Ասարիների կին մը .      Une femme vertueuse.  
 Սե . d'une.  
 Տր . à une.

ԳԻՏ. Լ. x վերջաւորող ածականներուն x դիրք իրականին մէջ se ի կը փոխուի . vertueux, իգ . vertueuse.  
 Լըջանիկ տիտղոս մը .      Une demoiselle heureuse.  
 ( տր . heureux ) .

ԳԻՏ. Բ. f վերջաւորող ածականաց f դիրք իրականին մէջ ve ի կը փոխուի . actif, իգ . active.

- Կոր պարեգոս մը .      Une robe neuve ( տր . neuf ) .  
 Պարզմտական սուսջարկու .      Une proposition naïve ( տր . naïf ) .  
 Թիւն մը .  
 Գրիչ սեճիք ,      Avez-vous n<sup>h</sup> plume ?  
 Ոչ , տիկին , չսեճիք .      Non, madame, je ne l'ai pas.  
 Ի՞նչ շիշ կտարեցիք .      Quelle bouteille avez-vous cassée ?  
 Ի՞նչ դուռ բացեք .      Quelle porte avez-vous ouverte ?

ԳԻՏ. Թ. Բայերուն ընդունելութիւն անցեալը երբ  
 avoir ուլ է, իրմէ առաջ եղող սեռի խնդրոյն հետ կը  
 համաձայնի սեռիւ եւ թուով, բայց ոչ իրմէ ետքը ե-  
 ղող սեռի խնդրոյն հետ :

Պատուհանը բացե՞ք .	Avez vous ouvert la fenêtre ?
Բացի .	Je l'ai ouverte.
Ի՞նչ պատուհաններ բացիք .	Quelles fenêtres avez-vous ouvertes ?
Կինը ի՞նչ շիշեր կտարեց .	Quelles bouteilles la femme a-t-elle cassées ?
Ո՞ր օրհորդը պարահանդէս տա- րիք .	Quelle demoiselle avez-vous conduite au bal ?
Ի՞նչ ջուր խմեցիք .	Quelle eau avez-vous bue ?
Ի՞նչ նամակներ գրեցիք .	Quelles lettres avez-vous écrites ?

Ասիկա ( իդ . ) celle-ci.	Ասոնք ( իդ . ) celles-là.
Այս գրիչն ունիք թէ անիկա .	Avez-vous cette plume-ci ou celle-là ?
Ոչ ասիկա ունիմ՝ ոչ անիկա .	Je n'ai ni celle-ci ni celle-là.

Զայն ( իդ . ) la.	Ջանոնք ( իդ . ) les.
Այս կինը կը տեսնե՞ք .	Voyez-vous cette femme ?
Կը տեսնեմ զիս .	Je la vois.
Քոյրերս տեսա՞ք .	Avez-vous vu mes sœurs ?
Ոչ, օրհորդ, զանոնք չտեսայ .	Non, mademoiselle, je ne les ai pas vues.
Անոր ( տր . ) lui.	Անոնց . leur.

ԳԻՏ. Ժ. Lui եւ leur տրական դերանունը թէ ա-  
 րական եւ թէ իգական է :

Եղբորս, եղբայրներուս կը խո- սի՞ք .	Parlez-vous à mon frère, à mes frères ?
Անոր, անոնց կը խօսիմ .	Je lui, leur parle.
Քրոջս, քոյրերուս կը խօսի՞ք .	Parlez-vous à ma sœur, à mes sœurs ?
Անոր, անոնց կը խօսիմ .	Je lui, leur parle.

Իռչոր լավձ .	De grosse toile.
Աղէկ ջուր .	De bonne eau.
Աճեւոց (Փէշքիշ) ժը .	Une serviette.

Քանի մը անականաց իդականը յատուկ կերպ մը ունի :

	Ար.	Իգ.	Ար.	Իգ.
Յած ,	bas,	basse.	Իռչոր ,	gros, grosse.
Թանձր ,	épais,	épaisse.	Յոչնած ,	las, lasse.
Որոշ ,	exprès,	expresse.	Ո թնշ ,	nul, nulle.
Ախրուն ,	gentil,	gentille.	Յեմար ,	sot, sotté.
Գէր ,	gras,	grasse.		

Գեղեցիկ .	} beau, belle. } bel.	Ինեդ .	} fou, folle. } fol.
Նոր .		{ nouveau, nouvelle. { nouvel.	
Մեր .	{ vieux, vieille. { vieil.		

(\*) Bel, nouvel, vieil, fol, mol ձայնաորով կամ ան-  
ձայն ի ով սխտղ արական անուններէն առաջ կը դըր-  
ուին , ձայնի անուշաթեան համար :

ԴԻՏ. Ժ.Ա. Eur վերջաորով անականներէն ոմանք ,  
( այսինքն բայերուն ընդունելութիւն ներկային ant  
վերջաորութիւնը eur ի վտխելով շինուածներուն մեծ  
մասը ) իդականի մէջ euse կ'ըլլան :

	Ար.	Իգ.
Tromper, trompant.	trompeur,	trompeuse,
Mentir, mentant.	menteur,	menteuse,
Parler, parlant.	parleur,	parleuse,

Առանց ընդունելութիւն ներկայէ մը շինուած ըլլա-  
ւու , teur վերջաորողները , իդական trice կ'ըլլան :

Ար.	Իգ.	
Exécuteur,	exécutrice.	Գործագրող.
Persécuteur,	persécutrice.	Հալածիչ.

EUR վերջաւորող ածականներ ալ կան, որոց իդականը կ'ըլլայ *eresse*.

Ար.	Իգ.	
Enchanteur, enchanteresse.		Կախարդող.
Pécheur, pécheresse.		Մեղաւոր.
Vengeur, vengeresse.		Վրէժխոյզ.

Հետեւեալ ածականները տարբեր իդական ունին :

Արձակուած.	Absous,	absoute.
Հեղ.	Bénin,	bénigne.
Ճերմակ.	Blanc,	blanche.
Գիւրաբեկ.	Caduc,	caduque.
Արեւի.	Favori,	favorite.
Գալար, թարմ.	Frais,	fraîche.
Ազատ.	Franc,	franche.
Յղի.	Grec,	grecque.
Երկայն.	Long,	longue.
Չարակամ.	Malin,	maligne.
Հրապարակական.	Public,	publique.
Չոր.	Sec,	sèche.

	Ար.	Իգ.
Երր (երրորդ).	Tiers.	tierce.
Տաճիկ.	Turc,	turque.
Մասնիչ.	Traître,	traîtresse.

ԳԻՏ. ԺԲ. Al վերջաւորած ածականներն իդական կ'ըլլան ըստ կանոնի, իրենց վերջն անձայն օ մը առնելով. զոր օրինակ՝ austral, australe, հարաւային. boreal, boréale, հիւսիսային, ելն :

Քրիստոնեան .	Le chrétien.	la chrétienne.
Հրեան .	Le juif.	la juive.
Սև .	Le nègre.	la négresse.
Ինկեր մը .	Un compagnon.	une compagne.
Բարեկամ մը .	Un ami.	une amie.
Տօնել .	Célébrer, fêter.	

470. Հրահանգ

Ձեր եղբայրներն ի՞նչպէս են . — Բանի մը օրէ ի վեր շատ աղէկ են . — Ո՛ւր կը բնակին . — Բարիք կը բնակին . — Տաճիկները կօթնակին (շարթուն) ո՞ր օրը կը աճեն . — Ուրբաթը կը աճեն . բայց քրիստոնեայք կը աճեն կիրակին . հրեայք՝ շաբաթը , եւ սեւերն՝ իրենց ծննդեան օրը . — « Ձեր գեղացւոց մէջ շատ խենթեր կան , այնպէս չէ՞ » , հարցուց անցեալ օր փոխտօնայ մը գեղացւոց մը : Ասիկա պատասխան առաւ : « Տէր , սա՛նք զիճակի մէջ անոնցմէ՛ կը գանուին » . « Խենթերն երբեմն ճշմարտութիւնը կ'ըսեն » , ըսաւ փոխտօնայն . — Ձեր քոյրն իմ ոսկիէ ժապաւէնս ունի՞ . — Չունի . — Ի՞նչ ունի . — Բան մը չունի . — Ձեր մայրը բան մը ունի՞ . — Ոսկիէ գեղեցիկ պատառաքաղ մը ունի . — Իմ մեծ շիշս ո՞վ ունի . — Ձեր քոյրն ունի . — Երբեմն մայրս կը սեանէ՞ք . — Ստէպ կը սեանեմ . — Ձեր քոյրը կ'ըր տեսաք . — Տասն եւ հինգ օր կայ տեսայ . — Իմ գեղեցիկ բնկոյզներս ո՞ւնի . — Ձեր բարի քոյրն ունի . — Արծաթէ պատառաքաղերս ալ ունի՞ . — Չանոնք չունի . — Չանոնք ո՞վ ունի . — Ձեր մայրն ունի . — Ի՞նչ պատառաքաղ ունիք . — Իմ երկաթէ պատառաքաղս ունիմ . — Ձեր քոյրերն իմ ծագիկներս ունեցա՞ն . — Չունեցան , բայց կարծեմ թէ աղայք զանոնք ունեցան . — Ձեր եղբայրն ի՞նչ բանի վրայ կը գանդատի . — Ար գանդատի , վասն զի աջ ձեռքը կը ցաւի . — Ինչո՞ւ կը գանդատիք . — Ար գանդատիմ , քանզի ձախ ձեռքս կը ցաւի :

## 171. Հրահանգ

Ձեր քոյրն իմ մօրս չափ տարւո՞ք է . — Ա՛յնչափ տարւոք չէ, բայց աւելի մեծ է . — Ձեր եղբայրը բան գնե՞ց . — Բրաւ (գնեց) . — Ի՞նչ գնեց . — Գեղեցիկ ոստայն (կտաւ) եւ աղէկ գրիչներ գնեց . — Մետաքսէ զանկաղաններ չգնե՞ց . — Դնեց . — Ձեր քոյրը կը գրէ՞ . — Ոչ, տիկին, չի գրեր . — Ինչո՞ւ չի գրեր . — Վասն զի ձեռքը կը ցաւի . — Ձեր գլացւոյն աղջիկն ինչո՞ւ դուրս չելլեր . — Դուրս չելլեր, վասն զի տուրները կը ցաւին . — Քոյրս ինչո՞ւ չի խօսիր . — Վասն զի բերանը կը ցաւի . — Արծաթէ գրիչս չտեսա՞ր . — Չտեսայ . — Առջեւի վրայ սենեակ մ'ունի՞ս . — Ետեւի վրայ հատ մը ունիմ, բայց եղբայրս առջեւի վրայ հատ մը ունի . — Վերի՞ սենեակ է . — Այնպէս է . — Մեր հօշկակարին կինը դուրս կ'ելլէ՞ . — Ոչ, տիկին, դեռ չելլեր, քանզի դեռ շատ հիււանդ է . — Ձեր պղտիկ քոյրն ի՞նչ չի չկտրեց . — Կտրեց զայն զոր մայրս երէկ գնեց . — Ի՞մ ապուրէս թէ մօրս (ապուրէն) կերաք . — Ոչ ձերինէն կերայ, ոչ ձեր մօրն (ապուրէն), այլ իմ բարի քրոջս (ապուրէն) . — Տեսա՞ք կինը որ այս առտու իմ տունս եկաւ . — Չտեսայ . — Ձեր մայրն ինքզինք ցուցո՞ւց . — Չցուցայ :

## 172. Հրահանգ

Ձեր քիթը կը ցաւի՞ . — Քիթս չի ցաւիր, այլ ակուններս կը ցաւին . — Ձեր մատը կարեցի՞ք . — Ոչ, տիկին, ձեռքս կարեցի . — Ինծի գրիչ մը տալ կ'ուզէ՞ք . — Հաս մը տալ կ'ուզեմ . — Ասիկա՞ ունենալ կ'ուզէք թէ անիկա . — Ոչ մին եւ ոչ միւսը կ'ուզեմ ունենայ . — Ի՞րը կ'ուզէք . — Ձեր քրոջն ունեցածը

կ'ուղեմ. — Մ՞՞րս աղէկ սեւ մետաքար թէ քրոջս (մե-  
տաքար) կ'ուղէք. — Ոչ ձեր մօրը կ'ուղեմ ոչ ձեր քը-  
րոջը, այլ ձեր ունեցածը. — Այս գրչով գրել կ'ու-  
ղէք. — Անով գրել կ'ուղեմ. — Իւրաքանչիւր կլին  
ինքզինք սիրուն (բարեբարոյ) կը կարծէ, իւրաքան-  
չիւրն անձնասիրութիւն (իւր վրայ համարում, amour-  
propre) ունի. — Արանց պէս, բարեկամ, մէկը ինք-  
զինք գիտուն կը կարծէ, որ չէ. եւ շատ արք ու-  
նայնասիրութեամբ զկանայս կը գերազանցեն. — Ի՞նչ  
ունիք. — Բան մը շունիմ. — Ձեր քոյրն ինչո՞ւ կը  
զանգատի. — Վասն զի այտը կը ցաւի. — Ձեր եղ-  
բօրը ձեռքը կը ցաւի. — Ոչ, բայց քովը կը ցաւի.  
— Պատուհանը կը բանա՞ք. — Ար բանամ, վասն զի  
չտփազանց սաք է. — Ձեր քոյրն ի՞նչ պատուհաններ  
բացաւ. — Առջևի սենեկիները բացաւ. — Իմ կլին  
ծանօթիս պարահանդէսը գացի՞ք. — Վայի. — Ո՞ր  
օրիորդները պարահանդէս տարիք. — Քրոջս բարե-  
կամները տարի. — Արքաւեցի՞ն. — Շատ կարաւե-  
ցին. — Ձբօսա՞ն. — Ձբօսան. — Երկայն առնն պա-  
րահանդէսը կեցա՞ն. — Երկու ժամ կեցան. — Այս օ-  
րիորդը Տաճիկ է. — Ոչ, Յոյն է. — Վաղիերէն կը  
խօսի. — Ար խօսի. — Անդդիերէն չի՞ խօսիր. — Այն  
պէ կը խօսի, բայց Վաղիերէն աւելի աղէկ կը խօսի.  
— Ձեր քոյրն ընկեր մը ունի՞. — Հաս մը ունի. — Ձա-  
նի կը սիրէ. — Շատ կը սիրէ, քանզի անիկա շատ  
սիրուն է :

## ԵՉ. ԴԱՍ. Cinquante-sixième Leçon.

Գեղ երթալ. Aller à la campagne.

Գեղն ըլլալ. Etre à la „

Դրամասեղանը երթալ. Aller à la banque.

Դրամասեղանն ըլլալ. Etre à la „

Պորոսն , A la bourse.

Խոհանոցը , A la cuisine.

Եկեղեցին , A l'église.

Գաղիերէնի դպրոցը .

Կարաւի դպրոցը .

Կատակերգութիւնը .

Օրերան .

Որսի երթալ .

Որսի ըլլալ .

Ջկնորսութեան երթալ .

Ջկնորսութեան ըլլալ .

Որսալ .

Գետը , A la rivière.

Մասանը , A la cave.

Դպրոցը , A l'école.

A l'école de français.

A l'école de danse.

La comédie.

A l'opéra ( արական ) .

Aller à la chasse.

Etre à la chasse.

Aller à la pêche.

Etre à la pêche.

Chasser.

Բոլոր օրը . toute la journée. Բոլոր առտուն . toute la matinée. Բոլոր իրիկունքը . toute la soirée. Բոլոր գիշերը . toute la nuit. Բոլոր տարին . toute l'année. Բոլոր շաբաթը . toute la semaine.

Բոլոր ընկերութիւնը .

Ե՛կէն , միանգամայն .

Յանկարծ .

Toute la société.

Tout à la fois.

Tout-à-coup, soudainement.

Այս տարի . cette année. Այս շաբաթ . cette semaine. Անցեալ շաբաթ . la semaine dernière. Գալ շաբաթ . la semaine prochaine.

Բոլոր կանայք .

Ամէն անգամ .

Ամէն շաբաթ .

Toutes les femmes.

Toutes les fois.

Toutes les semaines.

ԴիՏ. Ա . Jour, օր . matin, առտու . soir, իրիկունք , ժամանակի բաժանումները կը նշանակեն . journée, matinée, soirée, այն բաժանումներուն բոլոր տեսողու-

Թիւնը կը նշանակեն . զոր օրինակ , Ամէն օր զիս տեսնելու կու գայ . Il vient me voir tous les jours . Բոլոր ցորեկը առնը մնացի . Je suis resté chez moi toute la journée . Ամէն առաւ ժամ մը կը սրտախմ . Je me promène tous les matins pendant une heure . Բոլոր առաւուն անձրևեայ . Il a plu toute la matinée . Վաղն իրիկուն ձեզ տեսնելու կու գամ . J'irai vous voir demain au soir . Իրիկունն ժամանակն ո՛ւր սլախի անցունէք . Où passerez-vous la soirée ? Եոյնպէս առարի , ժամանակին առարի կոչուած բաժանումը կը ցուցնէ . année, այն ժամանակին տեսողութիւնը . Վէց առարի է որ եղբայրս ինձի գրած չէ . Il y a six ans que mon frère ne m'a pas écrit երջանիկ առարին այն է զոր մարդ առանց ձանձրութեան եւ խօթութեան կ'անցունէ . Une année heureuse est celle que l'on passe sans ennui et sans infirmité .

Ձեր տիկին մայրը .

Madame votre mère .

Ձեր օրերդ քոյրը .

Mademoiselle votre sœur .

Ձեր օրերդ քոյրերը .

Mesdemoiselles vos sœurs .

Անձ մը .

Une personne .

ԳԻՏ . Բ . Personne, կրր անձ կը նշանակէ , անուն է եւ իդական է . յօդով կը գործածուի , la կամ une personne . յՔ . les personnes . կրր ոչ ոք կը նշանակէ , անորչ գերանուն է (pronom indéfini) , թէ արանց եւ թէ կանանց համար կ'ըսուի , առանց յօդի կը գործածուի , եւ յօքնակի չունի . Personne n'est plus joli que vous, madame . Personne n'est plus grand que ce monsieur .

Ականջի ցաւը .

Le mal d'oreille .

Սրտի թալուկ (խառնուիլ) .

Le mal de cœur .

Փորի ցաւը .

Le mal de ventre .

Ատամբորի ցաւը .

Le mal d'estomac .

Ստամոքսի ցաւ ունի .	Elle a des maux d'estomac.
Քոյրը սաստիկ զլխու ցաւ ունի ,	Sa sœur a un violent mal de tête.

## ՍՏԱՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆՔ ԻԴԱԿԱՆ

Եզ .

Իմինս , քու կինդ , անորը կամ իրենը .	La mienne, la tienne, la si- enne.
Մերինը , ձերինը , անոնցը կամ իրենցը .	La nôtre, la vôtre, la leur.

Յոր .

Իմիններս , քու կիններդ , ելն .	Les miennes, les tiennes, les siennes.
Մերինները , ձերինները , ելն .	Les nôtres, les vôtres, les leurs.

ԴԻՏ. Գ. Notre, votre ածականաց օ ին վրայ պարոյղ ( ^ ) accent circonflexe չի գրուիր . notre père, votre mère. բայց երբ այս բառերը գերանուն են , օ ին վրայ պարոյղը գնելու է : Le nôtre, la vôtre, ելն :

Ի՞՞՞՞ գրիչս թէ անորն ունիք .	Avez-vous ma plume ou la sienne ?
Անորն ունի՞մ .	J'ai la sienne.
Ձեր մորաքեռն ի՞նչ գրկել կ'ուզէք .	Que voulez-vous envoyer à votre tante ?
Անոր քաքար մը գրկել կ'ուզեմ .	Je veux lui envoyer une tourte.
Անոր պտուղ ալ գրկել կ'ուզէ՞ք .	Voulez-vous lui envoyer aussi des fruits ?
Կ'ուզեմ գրկել .	{ Je veux lui en envoyer.
Գիրքերը քոյրերուս գրկեց՞՞ք .	{ Je lui en enverrai.
Դրկեց՞՞ք .	Avez-vous envoyé les livres à mes sœurs ?
	Je les leur ai envoyés.

Յուշ, la douleur.	Հօրեղբօրացիկը, la cousine.
Քաշարը, la tourte.	Եղբօր, քրոջ աղջկիկը - la nièce.
Գեղձը, la pêche.	Աղախինը, la servante.
Կապույտը, la fraise.	Աղբակահիկը ( կին ), la parente.
Կեռասը, la cerise.	Գրացիկ ( կին ), la voisine.
Լրացիկը, la gazette.	Խոհակերը ( կին ), la cuisinière.
Վաճառքը, la marchandise.	Քեռայրը, le beau-frère.
Հօրաքույրը } la tante.	Եղբօրը կինը, la belle-sœur.
Մօրաքույրը }	

ԳԻՅ. Գ. Հեռուեաց անուններուն խղականներն առ ղախաններէն ասորքեր են :

Ա.բ.

Ի.գ.

Աբբա մը, un abbé.	Աբբասուհի մը, une abbessé.
Գերասան մը, un acteur.	Գերասանուհի մը, une actrice.
Գեապան մը, un ambassadeur.	Գեապանուհի մը, une ambassadrice.
Աշկերտ մը ( աքհետի ), un apprenti.	Աշկերտուհի մը, une apprentie.
Հովիւ մը, un berger.	Հովուուհի մը, une bergère.
Բարեբար մը, un bienfaiteur.	Բարեբարուհի մը, une bienfaitrice.
Կոմս մը, un comte.	Կոմսուհի մը, une comtesse.
Կարուիչ մը, un danseur.	Վարձակ մը, une danseuse.
Աստուած մը, un dieu.	Աստուածուհի մը, une déesse.
Գաբա մը, un duc.	Գրսուհի մը, une duchesse.
Կայսր մը, un empereur.	Կայսրուհի մը, une impératrice.
Հիմնադիր մը, un fondateur.	Հիմնադիր կին մը, une fondatrice.
Առիւծ մը, un lion.	Մասակ առիւծ մը, une lionne.
Հիթանոս մը, un païen.	Հիթանոս կին մը, une païenne.
Գեղացի մը, un paysan.	Գեղացի կին մը, une paysanne.
Իշխան մը, un prince.	Իշխանուհի մը, une princesse.
Պաշտպան մը, un protecteur.	Պաշտպան կին մը, une protectrice.
Թագաւոր մը, un roi.	Թագուհի մը, une reine.

ԳԻՏ. Ե. Արուեստաւորաց անուններ , երբ այն արուեստները ընդհանրապէս արք կը կատարեն , իգական չունին , եւ առանց վտիտխուժեան կանանց համար եւս կ'ըսուին . ինչպէս են՝ auteur, մատենագիր . sculpteur, անդրիագործ . peintre, նկարիչ . poète, քերթող :

Անիկա (կին) աղէկ քերթող է . Elle est bon poète.

Նկարիչ է (կնոջ մը համար) . Est-elle peintre ?

Մատենագիր է (կին մը) . Elle est auteur.

Գողել . 2. վարձել . Louer.

Արդէն սենեակ մը վարձեցի՞ք . Avez-vous déjà loué une chambre ?

Խոստովանել , ճանչնալ . Convenir de quelque chose.

Ասիկա կը խոստովանի՞ք . Convenez-vous de cela ?

Կը խոստովանիմ . J'en conviens.

Ձեր յանցանքը կը խոստովանի՞ք . Convenez-vous de votre faute ?

Կը խոստովանիմ որ ասիկա յանցանք է . Je conviens que c'est une faute.

Խոստովանել . Avouer, confesser.

Այնչափ . Tant.

Այնչափ մնձ ունի որ ամէնը վառել անհնար է . Elle a tant de chandelles qu'elle ne saurait les brûler toutes.

Պաղել . Se refroidir . Հարուսի ըլլալ . S'enrhumer.

Հիւանդ ընել . Rendre malade.

Եթէ այնչափ կ'ուտէք , ասիկա ձեզ հիւանդ կ'ընէ . Si vous mangez tant, cela vous rendra malade.

ԳԻՏ. Զ. Երբ նախընթաց նախադասութիւն մը նորէն կը յիշուի , il դերանուամբ կը սկսի խօսքը , երբ նախընթաց նախադասութիւնը չի յիշուիր , cela ով կը սկսի . զոր օրինակ ,

Ձեր հրացանն ինձի փոխ տալ ձեզի կը յարմարի՞ . Vous convient-il de me prêter votre fusil ?

Չայն ձեզի փոխ տալ ինձի չի յարմարի . Il ne me convient pas de vous le prêter.

Այդ (բանը) բնի չի յարմուր .	Cela ne me convient pas- rbr .
Ո՞ւր հարբուխ առիք .	Où vous êtes-vous enrhumé ?
Օրերոյցէն ելած ասեմա առի .	Je l'ai gagné en sortant de l'opéra .
Հարբուխ ասեմալ .	Etre enrhumé .
Հարբուխը , le rhume .	Հազը . la toux .
Բրտառու թիւնը .	Le refroidissement .
Կուրծքի հարբուխ ունիմ .	J'ai un rhume de poitrine .
Հազ ունիք .	Vous avez un rhume de poi- trine .
Կուրծք . la poitrine .	Ըղեղը , le cerveau .

473. Հրահանգ

Ձեր հօրեղբորորդին ս՛ւր է . — Խահանոցն է . — Ձեր  
խահակերուհին աստուրն բրա՛ւ (պատրաստե՛ց) . — Բրաւ ,  
քանիցի աստուրը սեղանն է . — Ձեր տիկին մայրն ս՛ւր  
է . — Եկեղեցին է . — Ձեր քոյրը գպրոց դնա՛ց . — Գը-  
նաց . — Ձեր մայրը սաէպ եկեղեցի կ'երթա՛յ . — Ամէն  
առաւու եւ ամէն իրիկուն կ'երթայ . — Առաւան ծա-  
մը քանի՛ն եկեղեցի կ'երթայ . — Ելլելուն պէս կ'եր-  
թայ . — Ժամը քանի՛ն կ'ելլէ . — Արևը ծագելուն  
կ'ելլէ . — Այսօր գպրոց կ'երթա՛ք . — Կ'երթամ .  
— Գպրոցն ի՞նչ կը սորվիք . — Կարգալ , գրել եւ խօ-  
սել կը սորվիմ . — Ձեր հօրաքոյրն ս՛ւր է . — Փոքր  
քրոջս հետ տեսարան դնաց . — Ձեր քոյրերն այս ի-  
րիկուն օրերայի կ'երթան . — Ոչ , տիկին , կաքաւի  
գպրոցը կ'երթան . — Գաղիերէնի գպրոցը շէ՛ն եր-  
թար . — Առաւուն հոն կ'երթան , բայց իրիկունը շին  
երթար . — Ձեր հայրը սրսի դնաց . — Որտի չկրցա՛ւ  
երթալ , քանիցի հարբուխ ունի . — Որտի երթալ կը սի-  
րէ՞ք . — Կ'ուզեմ մանաւանդ ձկնորսութեան երթալ  
քան սրսի երթալ . — Ձեր հայրը դեռ գե՛ղն է . — Ա-  
յս , տիկին , դեռ հոն է . — Ի՞նչ կ'ընէ հոն . — Որտի

և. ձկնորսութեան կ'երթայ . — Գեղը որս ըրի՞ք . — Բոլոր ցորեկ որս ըրի . — Մօրս տունը սրչափ ատեն կեցաք . — Բոլոր երեկոյն հոն կեցայ . — Շատո՞նց է որ զղեմկը գացած չէք . — Անցեալ շաբաթ գայի . — Հոն շատ մարդ գտա՞ք . — Երեք անձինք միայն գտայ . կոմսը , կոմսուհին և անոնց գուսարը :

#### 174. Հրահանգ

Այս աղջիկներն իրենց եղբարցը չափ խելօ՞ք են . — Անոնցմէ աւելի խելօք են . — Ձեր քոյրերը Գերմաներէն խօսել գիտե՞ն . — Ձեն գիտեր , բայց կը սորվին . — Ձեր մօրը բան մը բերի՞ք . — Անոր աղէկ տըտուղներ և գեղեցիկ քաքար մը բերի . — Ձեր եղբօր աղջիկները ձեզի ի՞նչ բերին . — Մեզի աղէկ կենաս , աղէկ ելակ և աղէկ գեղձ բերին . — Գեղձ կը սիրէ՞ք . — Շատ կը սիրեմ . — Ձեր քոյրը ձեզի սրչափ գեղձ տուաւ . — Քսանէն աւելի տուաւ , — Այս տարի շատ կեռաս կերա՞ք . — Շատ կերայ . — Ձեր փոքր քրոջը տուի՞ք . — Անոր այնչափ տուի որ ամէնը չի կրնար ուտել . — Ձեր բարի գրացուհւոյն ինչո՞ւ չտըւիք : — Ուղեցի տալ , բայց անուղ չուղեց , քանզի կեռասը չի սիրեր . — Անցեալ տարի շատ տանձ (poire) եղա՞ւ . — Շատ եղաւ . — Ձեր հօրեղբօրաղջիկն ելակ ունի՞ . — Այնչափ ունի որ ամէնը չի կրնար ուտել :

#### 175. Հրահանգ

Ձեր քոյրերն ինչո՞ւ տեսարան չեն երթար . — Ձեն կրնար երթալ , քանզի հարբուխ ունին , և ասիկա զանոնք շատ հիւանդ կ'ընէ . — Տէր հարբուխ առին . — Երէկ իրիկուն օրերայէն ելլելու ատեն առին , — Ձեր քրոջը կը յարմարի՞ (կ'ախորժէ՞) գեղձ ուտել . — Անկէ ուտել անոր չի յարմարիր , քանզի արդէն շատ կե-

բաւ , եւ եթէ բոլորն ուտէ , ստիկա զանի հիւանդ  
կ'ընէ . — Անցեալ դիշեր աղէկ քնացա՞ք . — Աղէկ չը  
քնացայ , քանզի աղաքս սենեկիս մէջ շատ աղմուկ  
բրին . — Արէկ իբիկուն ս'ւր էիք . — Բեռայրիս տունն  
էի . — Ձեր եղբորը կիներ տեսա՞ք . — Տեսայ . — Ի՞նչ  
պէս է . — Սովորականէն աւելի աղէկ է . — Իսպաղիք .  
— Ձիտաղացինք , այլ քանի մը աղէկ գիրքեր կարդա-  
ցինք . քանզի եղբորս կիներ կ'ուղէ մանաւանդ կար-  
դալ քան խաղալ . — Այսօր լրագիրը կարդացի՞ք .  
— Արդացի . — Նոր բան մը կա՞յ . — Նոր բան մը չը  
կարդացի . — Ո՞ւր էիք , քանի որ ձեզ չտեսայ . — Վի-  
էնա , Բարիդ եւ Պէրլին էի . — Հօրաքեռս խօսեցա՞ք .  
— Խօսեցայ . — Ի՞նչ կ'ըսէ . — Կ'ըսէ թէ ձեզ տեսնել  
կ'ուղէ . — Գրիչս ս'ւր գրիք . — Նստարանին վրայ դը-  
րի . — Այսօր ձեր եղբորաղջիկը տեսնելու միտք ու-  
նի՞ք . — Չանի տեսնելու միտք ունիմ , քանզի ինծի  
խոստացաւ մեր հետ ճաշել . — Ար դարմանամ այս բն-  
տանիքին վրայ , քանզի հայրն անոր թաղաւորն է ,  
եւ մայրը՝ թաղուհին . աղաքն ու սոցասաւորներն այս  
աւերութեան հպատակներն են . ազոց ուսուցիչները  
ոգաչանեաններն են , որ թաղաւորին եւ թաղուհոյն  
հետ կոստախարութեան խնամոցը մասնակից են . բարի  
դաստիարակութիւնը որ ազոց կը արուի՝ վեհապետին  
թաղն է .

## 476. Հրահանգ

Արդէն սենեակ մը վարձեցի՞ք . — Հատ մը վարձե-  
ցի . — Ո՞ւր վարձեցիք . — Վարձեցի գաջն Կիլիսոմ փու-  
ղոցը , թիւ հարիւր յիսուն եւ երկու . — Որո՞ւ տու-  
նը (քով) վարձեցիք . — Այն մարդուն տունը (քով)  
որոյ սրգին ձի մը գնեց . — Ձեր հայրը որո՞ւ համար  
տեսնակ մը վարձեց . — Հատ մը վարձեց խոր սրգոյն

համար որ Գաղիայէ նոր եկաւ . — Ինչո՞ւ ձեր խոս-  
տումը չբռնեցիք . — Ձեմ յիշեր ձեզի խոստացածս .  
— Ձմեղ անցեալ հինգշաբթի նուազածութեան տանել  
չխոստացա՞ք . — Կը խոստովանիմ ( կ'ընդունիմ ) որ  
ձեզի դայդ խոստանալու աղէկ չըրի . սակայն նուա-  
զածութիւնը տեղի չունեցաւ . — Ձեր եղբայրն իւր  
յանցանքը կը խոստովանի՞ . — Կը խոստովանի . — Ձեր  
հօրեղբայրն այս տոմսակին վրայ ի՞նչ կ'ըսէ . — Կ'ըսէ  
թէ աղէկ դրուած է . բայց կը խոստովանի թէ աղէկ  
չըրաւ նաւապետին դրկելուն . — Ձեր յանցանքն հիմա  
կը խոստովանի՞ք . — Կը խոստովանիմ որ ափիս յան-  
ցանք է . — Աերարկուս ս'ըր դտաք . — Կապոյտ սե-  
նեկին մէջ դտայ . — Բեղոյրս ծառին կախել կ'ուզէ՞ք .  
— Կախել կ'ուզեմ . — Այսօր ի՞նչպէս էք . — Շատ ա-  
ղէկ չեմ . — Ի՞նչ ունիք . — Սաստիկ գլխացաւ մը եւ  
հարբուխ մը ունիմ . — Ո՞ւր հարբուխ առիք . — Նըէկ  
իրիկուն տեսարանէն ելած ատենս առի :



ԾԷ. ԳԱՍ. Cinquante-septième Leçon.

ԸՆԴՈՒՆ. ՆԵՐԿԱՅ. Du participe présent.

Գաղիերէն բայերուն ընդունելութիւններկայն՝ սահ-  
մանական ներկայ յօքնակի Ա. դէմքէն կը շինուի՝  
ons ք ant ի փոխելով :

- |    |     |                 |            |
|----|-----|-----------------|------------|
| 1. | լծ. | Nous parlons,   | parlant.   |
| 2. | „   | Nous finissons, | finissant. |
| 3. | „   | Nous recevons,  | recevant.  |
| 4. | „   | Nous rendons,   | rendant.   |

Հետեւեալ հինգ բայերը կը զարտուղին .

Avoir, ayant. Etrê, étant. Echoir, échéant. Savoir, sa-  
chant. Seoir, séant.

ԳԻՏ. Ա. Echoir, պայմանադրի, փոխանակադրի, ելն, պայմանաժամին լրանալուն կ'ըսուի : Soir զգեստի մը մէկուն աղէկ յարժարելուն, վաչկելուն կ'ըսուի (յագ-չել) :

ԳԻՏ. Բ. [Նոդունելութիւն ներկայն Վաղիերէնի մէջ ստէպ կը գործածուի, մանաւանդ երբ տէր բայի մը միեւնոյն ժամանակի մէջ երկու գործողութիւն կատարելը բացատրել կ'ուզուի . եւ Հայերէն քանի մը կերպով կը թարգմանուի . այսինքն՝ աներևոյթին հետ ստեմն բառը գնելով, աներևոյթին գործիականովը, եւ երբեմն ող մասնիկով :

Cet homme mange en cour- Այս մարդը վազելու տակնը  
rant. կ'ուտէ .

Je corrige en lisant. Կարդալու տակնս կը սրբա-  
գրեմ .

Je questionne en ensei- Սարվեցնելու տակնս հարցում  
gnant. կ'ընեմ, կամ Հարցումներ  
ընելով կը սարվեցնեմ .

Vous parlez en me répon- Ինծի պատասխանելով կը խօ-  
dant. սիք .

Pourquoi as-tu menti, sa- Ինչո՞ւ ստեցիր, գիտնալով որ  
chant pourtant que cela տսիկա արգելեալ է .  
est défendu ?

Tout voyageur venant de Հոսմէն եկող ամէն ճամբորդ  
Rome dit qu'il a vu le pape. կ'ըսէ թէ Պապը տեսաւ .

Cet homme qui me demande Այս մարդուն որ, խաղալու  
de l'argent, ayant la manie մտլութիւն ունենալով, ինչ  
du jeu, je ne lui prêterai ստակ կը խնդրէ, լուծա մը  
pas un liard. անգամ փոխ չեմ տար .

[Նոդունելութիւն ներկայն Վաղիերէն կը ցուցնէ նա-  
և պատճառ, եւ այն տակն շատ անգամ en նախա-  
դրութեամբ կը գործածուի :

Dieu étant juste, il récom- Աստուած, ի՞նչն զի արդար է,

pense la vertu.

ասարինութիւնը կը վարձարէ .

Հարցունել, հարցում ընել. Questionner.

Փողզաարը, la cravate. Կառքը, la voiture. Տունը, la maison. Նամակը, գիրը, la lettre. Սեղանը, la table. Հնաանիքը, la famille. Խոստումը, la promesse. Արունքը, la jambe. Կոկորդի ցաւը, le mal de gorge. Կոկորդը, la gorge.

Կոկորդս կը ցաւի .

J'ai mal à la gorge.

Միս (ուտելու), la viande.

Միս, մարմին (մարդոյ, անասնոյ), la chair.

Աղած միս .

De la viande salée.

Դալար, թարմ միսը .

De la viande fraîche.

Դալար եղան միս .

Du bœuf frais.

Զով ջուր .

De l'eau fraîche.

Կերակուրը, ջամբը .

L'aliment.

Խորտիկը .

Le mets.

Աղած խորտիկներ .

Des mets salés.

Կաթնեղէն .

Du laitage.

Ճամբորդը .

Le voyageur.

Բաշել .

Marcher (avoir ուժ) .

Այսօր շատ քայլեցի .

J'ai marché beaucoup aujourd'hui.

Մըն մը երթալ .

Faire un mille.

Փարսախ մը ( ժամու մը ճամբայ ) երթալ .

Faire une lieue.

Քայլ մը ընել .

Faire un pas.

Մեղոց բանեցնել .

Faire des démarches.

Ճամբորդութիւն մ'ընել .

Faire un voyage.

Ճառ մը ըսել .

Faire un discours.

Գործ մը .

Une affaire.

Գործ ընել .

Faire des affaires.

Բանի մը խառնուել .

Se mêler de quelque chose.

Ի՞նչ բանի կը խառնուիք .

De quoi vous mêlez-vous ?

Իմ գործերուս կը խառնուիմ .

Je me mêle de mes propres affaires.

Այս մարդը միշտ ուրիշներուս

Cet homme se mêle toujours

գործերուն կը խառնուի .	des affaires des autres կամ d'autrui.
Ուրիշին գործերուն չեմ խառ- նուիր .	Je ne me mêle pas des af- faires d'autrui.
Ուրիշը , ուրիշները .	Autrui (անորոշ գերանուն) .
Նկարչութեամբ կը զբաղի .	{ Il se mêle de peindre. { Il s'occupe de peindre.
Նկարչութիւնը , la peinture.	Քիմիան , la chimie.
Քիմիագէտը , le chimiste.	Արուեստը , l'art (ար) .
Նորանշան .	Etrange, singulier.
Ստարական .	Etranger.
Նորանշան , զարմանալի է .	C'est étrange.
Զբաղել . S'occuper. ( de ով գոյականէ առաջ , à ով ան- բնականէ առաջ ) .	
Վերաբերել . concerner, regarder quelqu'un.	
ԳԻՏ . Դ . Regarder quelqu'un կը նշանակէ նաև սե- կուն նայել :	
Ինձի չգերաբերան բանին խառ- նուել չեմ սիրեր .	Je n'aime pas à me mêler de ce qui ne me regarde pas.
Արեկա մեկուն չի գերաբերիր .	Cela ne regarde personne.
Ըստ մը հոգը չբոլոր .	Ne pas se soucier de quel- que chose.
Իրեն ձգել , քաշել .	Attirer.
Մագնիսը երկաթը կը քաշէ .	L'aimant attire le fer.
Անոր երգը զիս կը քաշէ .	Son chant m'attire.
Կախարդել , հիացնել .	Enchanter, charmer.
Կախարդեալ , հիացեալ եմ .	J'en suis charmé, enchanté (ար) . J'en suis charmée, enchantée (եր) .
Գեղեցկութիւնը , la beauté. Համաձայնութիւնը , դաշն (ձայ- նի) , l'harmonie. Զայն , la voix. Կարողութիւն , le pouvoir. Խաղամնչութիւն , la manie du jeu. Մոլի սէր բանի մը , la manie.	

Կրկնել.

Répéter.

Կրկնում, la répétition. Սկիզբ, le commencement.

Իմաստութիւն, la sagesse. Ուսում, l'étude.

Տէրը, le seigneur, le monsieur, le maître.

Ազէկ յիշողութիւն մը, une bonne mémoire.

Յուշակ հաշուի (բուսուլա). le mémoire.

Սոխակ.

Le rossignol.

Ամէն սկիզբ դժուարին է.

Les commencements sont difficiles.

Ստեղծել.

Créer.

Ստեղծումը, la création. Ստեղծողը, le créateur, Երախտք, le bienfait. Տէրոջը երկիւղը, la crainte du Seigneur. Երկինքը, le ciel. Երկիրը, la terre. Միայնութիւնը, la solitude. Վարդապետութիւնը, la doctrine, la leçon. Բարութիւնը, la bonté.

Ալիւր, de la farine. Աշօրի, le moulin.

ԳԻՏ. Ե. ԽԻ. դասին մէջ ըսուեցաւ որ դերանուանական կամ փոխադարձ բայերը être օժանդակով կը խոնարհին : Բայց կան ուրիշ բայեր ալ որ փոխադարձ չեն, եւ être օժանդակը կ'ուզեն : Այսպէս են հետեւեալ բայերը :

Aller (\*), երթալ.

Intervenir (\*), միջամտել.

Arriver, հասնել.

Entrer, մտնել.

Déchoir (\*), իյնալ.

Mourir (\*), մեռնել.

Décéder, բաժնուել, մեռնել.

Naître (\*), ծնանել.

Tomber, ընկնալ.

Partir (\*), մեկնել.

Venir (\*), գալ.

Sortir (\*), դուրս ելլել.

Devenir (\*), բլլալ.

Parvenir (\*), հասնել, յաջողել.

Disconvenir (\*), ժխտել.

չել.

Դեռ չեկաւ (կնոջ մը համար). Elle n'est pas encore venue.

Կանայք արդէն եկան.

Les femmes sont-elles déjà venues ?

Դեռ չեկան.

Elles ne sont pas encore venues.

ԳԻՏ. Զ. Etre ով խանարհող բայերուն ընդունելու թիւն անցեալը (part. passé) աէր բայիին հետ սեռիւ եւ թուով կը համաձայնի :

## 177. Հրահանգ


Այսօր մեղի հետ ճաշել կ'ուզէ՞ք . — Շատ հաճութեամբ . — Ի՞նչ խորանի ունիք , կամ , ի՞նչ ունիք ուտելու . — Աղէկ ապուր , թարմ միս եւ աղած միս , ինչպէս 'սաեւ կաթնեղէն ունինք . — Արհիշե՛ք կը սիրէ՞ք . — Արիշ ամէն կերակրէ աւելի կ'ընտրեմ դայն . — Ճաշելու պատրաստ էք . — Աստրաստ եմ . — Ընդհուպ մեկնելու միտք ունի՞ք . — Չալ շարժու մեկնելու միտք ունիմ . — Մինեմ կը ճանապարհորդէք . — Այ , ախիլն , հօրեղբօրս հետ կը ճանապարհորդեմ . — Հեմի՞ թէ կ'առքով կ'երթաք . — Առքով կը ճամբորդենք . — Զեր Պէրլին (ըրած) վերջին ճամբորդութեան ատեն մէկուն հանդիպեցա՞ք . — Շատ ճամբորդներու հանդիպեցանք . — Այս ամառ ժամանակն ինչո՞վ անցունելու միտք ունիք . — Փոքր ճամբորդութիւն մը ընելու միտք ունիմ . — Զեր վերջին ճամբորդութեան ատեն շատ քաղցի՞ք . — Քաղց շատ կը սերեմ , բայց հօրեղբայրս կ'առքով երթալ կը սիրէ . — Քաղց չուզե՞ց . — Նախ քաղց ուղեց , բայց քանի մը քայլ ընելէն ետքը կ'առք հեծնել ուղեց , այնպէս որ շատ չքաղցի . — Այսօր դպրոցն ի՞նչ ըրիք . — Մեր ուսուցչին մտիկ ըրինք . — Ի՞նչ ըսաւ . — Ասաուծոյ բարութեան վրայ մեծ ճառ մը ըրաւ : Ըսելէն ետքը (թէ) , « Արհիտ մը ուսմանց մայրն է , եւ աղէկ յիշողութիւն մը Ասաուծոյ մեծ երախտիքն է » , յաւել . « Ասաուած երկնի եւ երկրի արարիչն է , Տիրոջը երկիւզն ամէն խնամութեան սկիզբն է . — Բոլոր օրն օրս պարտեղին մէջ ի՞նչ կ'ընէք . — Ար պատիմ . — Զեզ

ի՞նչ բան հոն կը քաշէ . — Թռչնոց երգը զիս հոն կը քաշէ . — Սոխակներ կա՞ն . — Կան , եւ անոնց երգին համաձայնութիւնը զիս կը կախարդէ . — Այն սոխակները ձեր վրայ աւելի՞ կարողութիւն ունին քան նրկարչութեան (կամ՞նկարներու) գեղեցկութիւնը , կամ ձեր խանդակախօս մօրը ձայնը որ ձեզ այնչափ կը սիրէ . — Ար խոստովանիմ որ այս փոքրիկ թռչնոց երգին համաձայնութիւնը իմ վրայ աւելի կարողութիւն ունի քան իմ ամենէն սիրելի բարեկամացս ամենէն խանդակախօսքերը :

### 178. Հրահանգ

Ձեր եղբորազջիկն իւր միայնութեան մէջ ինչո՞վ կը դբօսնու . — Շատ կը կարգայ , եւ իւր մօրը նամակներ կը դրէ . — Ձեր հօրեղբայրն իւր միայնութեան մէջ ինչո՞վ կը դբօսնու . — Նկարչութեան եւ քիմիայի կը դբաղի . — Այլ եւս գործ չը՞նենք . — Այլ եւս չընենք , քանզի այնչափ տարւօք է որ չի կրնար (trop âgé pour) . — Ինչո՞ւ ձեր գործերուն կը խառնուի . — Սովորաբար ուրիշներուն գործերուն չի խառնուիր , բայց խմբներու կը խառնուի , քանզի զիս կը սիրէ . — Ձեր վարպետը ձեզի այսօր ձեր դասն արտասանել տուա՞ւ . — Արտասանել տուաւ . — Գիտցա՞ք . — Շատ աղէկ գիտցայ . համարներ այլ ըրի . բայց ձեզի ի՞նչ պէտք է (qu'est-ce que cela vous fait ?) , կ'աղաչեմ . — Նս սովորաբար չեմ խառնուիր ուրիշներուն գործերուն որ ինծի չեն վերաբերիր , բայց ձեզ այնչափ կը սիրեմ որ ձեր ըրածին մեծ շահ ունիմ . (je m'intéresse beaucoup à) . — Մէկը ձեր վրայ հոգ կ'ընէ՞ (se soucier) . — Մէկը հոգ չընենք իմ վրայ , քանզի չեմ արժեք (je n'en vaud pas la peine) . — Ձեր համարներն ո՞վ կը սրբադրէ . — Արպակտս կը սրբադրէ . — Ի՞նչպէս կը

սրբազրէ . — Այս սրբազրէ կարգալով զանձնք , եւ զանձնք կարգալով ինծի կը խօսի . — Ձեր վարպետը ո՞րչափ բան կ'ընէ մէկէն ( à la fois ) . — Ձոյս բան կ'ընէ միեւնոյն ժամանակի մէջ . — Ի՞նչպէս . — Այս կարգայ եւ կը սրբազրէ համարներս , ինծի կը խօսի եւ միանգամայն հարցումներ կ'ընէ . — Ձեր օրիորդ քոյրը կաքաւելու ատենը կ'երգէ . — Աշխատելու ատենը կ'երգէ , բայց կաքաւելու ատենը չի կրնար երգել . — Ձեր մայրը մեկնեցա՞ւ . — Գեւ չմեկնեցաւ . — Ե՛րբ պիտի մեկնի . — Վաղիւ առտուն պիտի մեկնի . — Ժամը քանի՞ն . — Ժամը եօթի՞ն քառօրդ մնացած . — Ձեր քոյրերը հասա՞ն . — Գեւ չհասան , բայց այս իրիկուն կը սպասենք . — Երեկոյն մեզի հետ պիտի անցունեն . — Կեզի հետ պիտի անցունեն , քանզի խոստացան . — Առաւօտեան միջոյն ( la matinée ) ո՞ր անցուցիք . — Գեզն անցուցի . — Ամէն առտու գեղ կ'երթա՞ք . — Ամէն առտու չեմ երթար , այլ շարաթն երկու անգամ . — Ձեր եղբոր աղջիկն ինչո՞ւ զիս տեսնելու չեկաւ . — Շատ հիւանդ է , եւ քոյրը ցերեկն իւր սենեակն անցուց :



ԵՐ. ԳԱՍ. Cinquante-huitième Leçon.

ԱՆՅԵԱԼ ԱԳԱՌՆԻ

( Du futur Passé կամ Composé )

Անցեալ ապամինն բաղադրեալ ժամանակ է , եւ կը չինտի օժանդակին պարզ ապամիէն առ բային ընդունելութիւն անցեալէն :

Աիրած պիտի ըլլամ .	J'aurai aimé.
„ „ „ ըլլաս .	Tu auras „
„ „ „ ըլլած .	Il, elle aura aimé.

Սերած պիտի ըլլանք .	Nous aurons aimé.
„ „ ըլլաք .	Vous aurez „
„ „ ըլլան .	Ils, elles auront „
Եկած „ ըլլամ .	Je serai venu, ( եղ. ) venue.
„ „ ըլլաս .	Tu seras „ „ „
„ „ ըլլայ .	{ Il sera „ „ „
„ „ ըլլանք .	{ elle sera venue.
„ „ ըլլաք .	Nous serons venus, ( եղ. ) ve-
„ „ ըլլան .	nues.
„ „ ըլլաք .	Vous serez „ „ „
„ „ ըլլան .	{ Ils seront venus.
	{ Elles seront venues.
Գողուած պիտի ըլլամ .	J'aurai été loué, ( եղ. ) louée.
„ „ ըլլաս .	Tu auras été „ „ „
„ „ ըլլայ .	{ Il aura été loué.
	{ Elle aura été louée.
„ „ ըլլանք .	Nous aurons été loués, louées.
„ „ ըլլաք .	Vous aurez „ „ „
„ „ ըլլան .	{ Ils auront „ „ „
	{ Elles „ „ „ louées.

Մնալ . rester . Մնացորդ պահել . avoir de reste .

Երբ ձին վճարեմ, ինծի ստարակուտ միայն պիտի մնայ .	Quand j'aurai payé le che- val, il ne me restera que dix écus.
Ձեզի ո՞րչափ ստակ կը մնայ .	Combien d'argent vous res- te-t-il ?
Ինծի ֆրանք մը կը մնայ .	Il me reste un franc.
Ինծի ֆրանք մը միայն կը մնայ .	Il ne me reste qu'un franc.
Ձեր եղբորը ո՞րչափ կը մնայ .	Combien reste-t-il à votre frère ?
Անոր մէկ սկուտ կը մնայ .	Il lui reste un écu.
Ձեր քրոջը ո՞րչափ կը մնայ .	Combien reste-t-il à votre sœur ?
Անոր երեք սու միայն կը մնայ .	Il ne lui reste que trois sous.
Ձեր եղբայրներուն ո՞րչափ կը մնայ .	Combien reste-t-il à vos frères ?
Անոնց մէկ լուի ( ստակ ) կը մնայ .	Il leur reste un louis.

Երբ գերեակին վճարեն, անոնց  
Հարիւր ֆրանք պիտի մնայ .  
Quand ils auront payé le  
tailleur, il leur restera  
cent francs.

ԳԻՏ. Ա. Երբ երկու ապաննի գործողութիւնն կայ,  
ստիարարար ստաջ՞ բլլալու. գործողութիւնն անցնալ  
ապաննի կը դրուի . վերջն բլլալու գործողութիւնը՝  
պարզ ապաննի :

Երբ մտարեոս տունն բլլամ, Կուր յիս տեսնելու կու գամք .  
Quand je serai chez ma  
tante, viendrez-vous me  
voir ?

Երբ գրելը լմեցնէք, ինծի հետ Կուր գրելը մը ընելու կու գամք .  
Quand vous aurez fini d'é-  
crire, viendrez-vous faire  
un tour de promenade  
avec moi ?

Պատի խաղաք, երբ ձեր գատը Կուր յիս յաւանդելու  
լմեցնէք .  
Vous jouerez, quand vous  
aurez fini votre thème.

Ի՞նչ պիտի ընէք, երբ ճաշէք .  
Que ferez-vous, quand vous  
aurez diné ?

Երբ ձեր եզրորը հետ խոսիմ, Կուր ձեր եզրորը հետ խոսիմ, Կուր ձեր եզրորը հետ խոսիմ,  
պիտի գիտնամ ի՞նչ ինչ ը-  
նելու եմ .  
Quand j'aurai parlé à votre  
frère, je saurai ce que j'ai  
à faire.

Faire chaud, froid, clair, obscur. Տաք, ցուրտ, լուսա-  
ւոր, մութ է :

Il fait de la boue. Գնի է .  
Fait-il sale dehors, կամ dans Գուրորը, կամ փողոցն աղտոտ  
la rue ? է .  
Fait-il de la poussière ? Գոշի է .  
Il fait beaucoup de pous- Ծառ փոշի է .  
sière.

Գուրոր .

Dehors.

Մտնել .

Entrer dans.

Սենեակս մտնել կու գամք .

Voulez-vous entrer dans ma  
chambre ?

Մտնել կ'ուզեմ .	Je veux y entrer.
Հոն պիտի մտնե՞ք .	Y entrerez-vous ?
Պիտի մտնեմ .	J'y entrerais.
Նստել . s'asseoir. Etre assis, իգ. assise.	
Մեծ աթոռին վրայ նստած է . Il est assis sur la grande chaise.	
Նստարանին վրայ նստած է (կնն) . Elle est assise sur le banc.	
Լեցունել .	Remplir de.
Շիշ մը գինուով լեցունել .	Remplir de vin une bouteille.
Այս շիշը ջրով կը լեցունե՞ք .	Remplissez-vous d'eau cette bouteille ?
Քսակս ստակով կը լեցունեմ .	Je remplis ma bourse d'argent.
Փորը մտով կը լեցունե .	Il se remplit le ventre de viande.
Գրպան ( ճեպ ) .	La poche.
Մինա՞յ եկար .	Etes-vous venu tout seul ?
Ոչ, բոլոր մարդիկս բերի .	Non, j'ai amené tout mon monde.
Տանել .	Mener. porter.
ԴԻՏ. Բ. Mener, կը նշանակէ տանել բան մը որ կըրնայ քալել դալ . porter, վերցունելով տանել է : Նայել պէտք է դիտնալ amener եւ apporter բայերուն հասմար :	
Այս շունն ախուր տանել կ'ուզե՞ք .	Voulez-vous mener ce chien à l'écurie ?
Տանել կ'ուզեմ .	Je veux l'y mener.
Այս հրացանը հօրս կը տանե՞ք .	Portez-vous ce fusil à mon père ?
Անոր կը տանիմ .	Je le lui porte.
Գաւազանք . la canne. Ախուր . l'écurie.	
Բերել .	Amener, apporter.
Բոլոր իւր մարդիկը բերաւ .	Il a amené tout son monde.
Ձեր եղբայրը բերե՞ք .	Avez-vous amené votre frère ?

Մեքի .	Je l'ai amené.
Ձխազանին ըսիք որ ձին բնի բերե .	Avez-vous dit au palefrenier de m'amener le cheval ?
Սարաւանդասազաք , ձիազա- նը ( սէյիս ) .	Le palefrenier.
Գիրքերս բնի կը բերե՞ք .	M'apportez-vous mes livres ?
Կը բերեմ .	Je vous les apporte.
Իջնել .	Descendre.
Հորն իջնել .	Descendre dans le puits.
Լեռնն իջնել .	,, la montagne.
Գետն իջնել .	,, la rivière.

ԳԻՏ. Գ. Descendre, իջնել, բայք երբ հայցական խոն-  
դիր կ'անուս , avoir ով կը խոնարհի , այլազգ' être ով .  
զոր օրինակ , il a descendu la montagne . Լեռնն իջաւ .  
Elle est descendue d'une famille honorable . Պատուաւոր  
ընտանիքէ իջած է : Այսպէս է նաեւ monter, ելլել  
բայք :

Ելլել ( վեր , վրան ) .	Monter.
Լեռն ելլել .	Monter la montagne.
Ձեր եղբայրն ո՞ւր գնաց .	Où votre frère est-il allé ?
Բարն ելաւ .	Il a monté la colline.
Ձի ելլել ( հեծնել ) .	Monter à cheval.
Կառք ելլել .	Monter en voiture.
Նաւ վր ելլել .	Monter sur un vaisseau.
Աղաչել .	Prier ( երբէ կարք de ով ա- ներեւոյթի կ'ուղէ , զոխա- նակ գիմուսը բայի ) .
Ձեր եղբորը կ'ուղէ՞ք աղաչել որ իջնե .	Voulez-vous prier votre frère de descendre ?

Մորսքը , la barbe . Գետակը , la rivière . Գետը , le fleuve .  
Հեղեղը , le torrent .  
Գետն ի վեր երթալ . Remonter le fleuve .

## 179. Հրահանգ

Ձեր ծնողքը վաղը գեղ պիտի երթան . — Պիտի չերթան , քանզի փոշի է . — Այսօր սրտակուռ պիտի երթանք . — Պատակուռ պիտի չերթանք , քանզի դուրսը շատ աղտոտ է . — Այդ լեռան ետին աղցականիս գլեակը կը տեսնէք . — Այը տեսնեմ . — Հոն մանե՞նք . — Մանենք , եթէ ձեզի հաճոյ է . — Այս սենեակը մանել կ'ուզէք . — Հոն չեմ մտներ , քանզի հոն մուխ ( de la fumée ) է . — Բարի լոյս , տիկին . — Մանել չէք ուզեր . — Նստել չէք ուզեր . — Այս մեծ աթոռին վրայ նստիմ . — Կ'ուզէք ինձի ըսել թէ ինչ եղաւ ձեր եղբայրը . — Ձեզի ըսեմ . — Ձեր քոյրն ո՞ւր է . — Ձէք տեսներ . — Նստարանին վրայ նստած է . — Ձեր հայրը նստարանին վրայ նստած է . — Ոչ , աթոռին վրայ նստած է . — Բոլոր ստակս ծախեցիք ( վաճակեցիք ) . — Բոլորը չծախեցի . — Ո՞րչափ կը մնայ քեզի . — Շատ չի մնար . հինգ ֆրանքէն աւելի չի մնար . — Ձեր քոյրերուն ո՞րչափ ստակ կը մնայ . — Անոնց երեք սկուտէն աւելի չի մնար . — Ձեր գերծակին վճարելու համար ձեզի բաւական ստակ կը մընայ . — Անոր վճարելու համար ինձի բաւական կը մնայ . բայց եթէ վճարեմ , շատ չի մնար ինձի . — Ձեր եղբայրներուն ո՞րչափ ստակ պիտի մնայ . — Անոնց հարիւր սկուտ պիտի մնայ . — Իտալիա ե՞րբ պիտի երթաք . — Իտալերէն սորվելուս պէս պիտի երթամ . — Ձեր եղբայրները ե՞րբ Գաղիա պիտի երթան . — Գաղիերէն գիտնալունս պէս պիտի երթան . — Ե՞րբ պիտի սորվին . — Ազէկ վարպետ մը դաննելունս պէս պիտի սորվին . — Մեզի ո՞րչափ ստակ պիտի մնայ , երբ աչք ձիերը վճարենք . — Երբ վճարենք , մեզի հարիւր սկուտ միայն պիտի մնայ :

## 180. Հրահանգ

Այս դարձէն բան մը կը շահի՞ք . — Շատ չեմ շահիր , բայց եզրայրս շատ կը շահի . քսակը ստակով կը լեցունէ . — Արշափ ստակ շահեցա՞ք . — Շատ բան չշահեցայ , բայց հայրս շատ շահեցաւ . գրողանը ստակով լեցուց . — Ընչո՞ւ չաշխատիր այս մարդը . — Աստիակ մըն է , քանզի ուրիշ բան չընէր բայց եթէ բար սրն ուտել . փորը միշտ մտով կը լեցունէ , այնպէս որ հիւանդ պիտի բլլայ , եթէ այնչափ ուտելը շարունակէ . — Այս շիշն ինչո՞վ լեցուցի՞ք . — Գինով լեցուցի . — Այս մարդը ձիւս հող պիտի տանի՞ . — Հող տանել կ'ուզէ . — Այդասաւորիս ո՞վ հող պիտի տանի . — Պանդոկատկար հող պիտի տանի . — Ձեր սպասաւորը մեր ձիւրուն հող պիտի տանի՞ . — Հող պիտի տանի . — Ձեր հանդերձներուն հող կը տանի . — Հող կը տանի , քանզի ամէն որ զանոնք կը խողանէ . — Երբէք գաղխական գինի խմած էք . — Երբէք խմած չեմ . — Շատմո՞ց է որ գաղխական հաց կերած չէք . — Երբէք տարիի մօտ է որ կերած չեմ . — Բեռայրս ցաւցուցի՞ք . — Ես գանի չցաւցուցի , բայց այն իմ մատս կարեց . — Ընչո՞վ ձեր մաւր կարեց . — Այն գանակով զար սնոր փոխ տուիք :

## 181. Հրահանգ

Ձեր հայրը վերջապէս հասա՞ւ . — Ամէն՞ անող գըտիմէ հասաւ . բայց գեռ չգտայ . — Բժիշկը ձեր եզրայրը ցաւցուց . — Ցաւցուց , քանզի սնոր մաւր կարեց . — Այս մարդուն սրունքը կարուեցա՞ւ . — Արարուեցաւ . — Ձեր սպասաւորէն զո՞ն էք . — Շատ գահեմ , քանզի ամէն բանի յարմար է . — Ի՞նչ գիտէ .

—Ա՛յն բան գիտէ . —Ձի հեծնել գիտէ . —Գիտէ .  
 —Ձեր եղբայրը վերջապէս Անգղիայէ եկա՞ւ . —Ե-  
 կաւ , եւ ձեզի գեղեցիկ ձի մը բերաւ . —Իւր ձիա-  
 պանին ըսա՞ւ որ դանի բերէ . —Ըսաւ որ բերէ .  
 —Այս ձիուն վրայ ի՞նչ կ'ըսէք . —Ա՛րսեմ որ գեղե-  
 ցիկ եւ աղէկ է . եւ կ'աղաչեմ որ դանի ախոռը բե-  
 րէք . —Երէկ ժամանակն ի՞նչ բանով անցուցիք .  
 —Նուազածութեան գացի , եւ ետքը տեսարան .  
 —Այս մարդը ե՛րբ հորն իջաւ . —Այս առտու իջաւ .  
 —Ելա՞ւ . —Չամ մըն է որ ելաւ . —Ձեր եղբայրն  
 ո՛ւր է . —Իւր սենեակն է . —Ա՛ռդէ՞ք անոր ըսել որ  
 իջնէ . —Ա՛ռդեմ ըսել , բայց դեռ հագուած չէ . —Ձեր  
 բարեկամը տակաւին լեռան վրայ է . —Արդէն իջած  
 է . —Գետակը ելա՞ք թէ իջաք . —Իջանք . —Հոր-  
 եղբորորդիս ձեզի խօսեցա՞ւ մեկնելէն առաջ . —Առու-  
 քը չմտած ինծի խօսեցաւ . —Եղբայրս տեսա՞ք .  
 —Նաւը հեծնալէն առաջ տեսայ . —Առքով երթալ  
 աւելի՞ աղէկ է քան թէ նաւ հեծնելը . —Առք հեծ-  
 նելն աշխատութիւն չարժեր , ոչ ալ նաւը հեծնել ,  
 երբ մարդ ճամբորդելու բաղձանք չունի :



ԾԹ. ԳԱՍ. Cinquante-neuvième Leçon.

ԱՆԿԱՏԱՐ. De l'imparfait.

Սահմանական անկատարը կը շինուի ընդունելու-  
 թիւն ներկային ant մասնիկը ais ի փոխելով :

Ա. դիմք. Բ. դիմք. Գ. դիմք.

եզ.	ais.	ais.	ait.
Յգք.	ions.	iez.	aient.

Ա. 1.ժ.	}	Je parlais, tu parlais, il parlait.
Parlant.		Nous parlions, vous parliez, ils parlaient.
Բ. 1.ժ.	}	Je finissais, tu finissais, il finissait.
Finissant.		Nous finissions, vous finissiez, ils finissaient.
Գ. 1.ժ.	}	J'apercevais, tu apercevais, il apercevait.
Apercevant.		Nous apercevions, vous aperceviez, ils apercevaient.
Դ. 1.ժ.	}	Je rendais, tu rendais, il rendait.
Rendant.		Nous rendions, vous rendiez, ils rendaient.

Այս կանոնէն երկու բացառութիւն կայ .

Ayant.	}	J'avais, tu avais, il avait.
		Nous avions, vous aviez, ils avaient.
Sachant.	}	Je savais, tu savais, il savait.
		Nous savions, vous saviez, ils savaient.

ԳԻՏ. Ա. Անկասար կը գործածուի, նախ՝ անցեալ գործողութեան մը ստինն կզած գործողութիւն մը յուսյնելու համար . երկրորդ՝ սովորական կամ սակայ կրկնուած գործողութիւն մը յուսյնելու :

Երբ Պերլին էի, սակայ կ'երթայի բարեկամներս տեսնելու .

Quand j'étais à Berlin, j'allais souvent voir mes amis.

Սակայ Շամպելյեղէ կ'երթայիք, երբ Բարիզ էիք .

Alliez-vous souvent aux Champs-Élysées, quand vous étiez à Paris ?

Հասնողէջիք արուեստներն ազիտութեաները կը մշակէին, և արժանիքը կը զարձարէին .

Les Romains cultivaient les arts et les sciences, et récompensaient le mérite.

Կը պատե՞ք .

Vous promeniez-vous ?

Չէի պատեր .

Je ne me promenais pas.

Բարե՞զ էիք, երբ թագաւորն հան էր .

Étiez-vous à Paris lorsque le roi y était ?

Հան էի, երբ այն հան էր .

J'y étais, lorsqu'il y était.

- Ո՛ւր էիք, երբ ես Լոնդրա էի. OÙ étiez-vous, lorsque j'étais à Londres ?
- Ե՛րբ կը նախաճաշէիք, երբ Գերմանիա էիք. Quand déjeûniez-vous lorsque vous étiez en Allemagne ?
- Կը նախաճաշէի, երբ հայրս կը նախաճաշէր. Je déjeûnais lorsque mon père déjeûnait.
- Կ'աշխատէի՞ք, երբ այն կ'աշխատէր. Travaillez-vous lorsqu'il travaillait ?
- Կ'ուսումնէի, երբ այն կ'աշխատէր. J'étudiais lorsqu'il travaillait.
- Ձուկ. du poisson. Որսի միս. du gibier.
- Երբ հօրս տունը կը բնակէի, աւելի կանուխ կ'ելլէի որչափ հիմա չեմ բնէր. Quand je demeurais chez mon père, je me levais de meilleure heure que je ne le fais à présent (Տես Գրաս ԾԻ. Գրա. Բ.)
- Երբ այն երկիրը կը բնակէինք, ստեղծ ձկնորսութեան կ'երթայինք. Quand nous demeurions dans ce pays-là, nous allions souvent à la pêche.
- Երբ հիւանդ էի, ըստը օրը անկողինը կը կենայի. Quand j'étais malade, je gardais le lit toute la journée.
- Անցեալ ամառ, մինչ զեղն էի, շատ պտուղ կար. L'été passé, pendant que j'étais à la campagne, il y avait beaucoup de fruits.
- Բան մը. une chose. Նոյն բանը. la même chose.
- Նոյն մարդը. Le même homme.
- Հաւասար է (նոյն բան է) - C'est égal.
- Այսպիսի, այնպիսի մը. Un tel, (իդ.) une telle.
- Այնպիսի մարդ մը. Un tel homme.
- Այնպիսի մարդիկ. De tels hommes.
- Այնպիսի կին մը. Une telle femme.
- Այնպիսի կանայք. De telles femmes.
- Նման, այսպիսի. Pareil, (իդ.) pareille.
- Այսպիսի մարդիկ յարգանաց արժանի են. De pareils hommes méritent de l'estime.

Գուրս , hors de ( նախ . ) .	Գուրսը ( մի . ) dehors.
Քաղքէն դուրս .	Hors de la ville.
Էկեղեցին քաղքէն դուրս է .	L'église est hors de la ville.
Քաղքէն դուրս ձեզի պիտի սպասեմ .	Je vous attendrai hors de la ville.
Այսօր մեր տունէն դուրս կը ճաշէք .	Aujourd'hui nous dinons hors de chez nous.
Քաղքին դուռը .	La porte de la ville.
Խարսցը .	La barrière.
Գուն ուրիշ .	Rarement.
Օղի , de l'eau de vie.	Կեանքը , la vie.
Խր կեանքը ( ապրուստը ) շահել .	Gagner sa vie à . . .
Կեանքս աշխատելով կը շահեմ .	Je gagne ma vie à travailler.
Խր կեանքը գրելով կը շահի .	Il gagne sa vie à écrire.
Ստակս աշխատելով կը շահեմ .	Je gagne mon argent en travaillant.
Այս մարդն իւր կեանքը ինչո՞ք կը շահի .	A quoi cet homme gagne-t-il sa vie ?
Շարունակել .	Վերստին եկած աներեւոյթը de ով կամ à ով .
Խր ճառը կը շարունակի .	Il continue son discours.
Աղէկ ախորժակ մը .	Un bon appétit.
Պատմութիւն .	Le conte, la narration.
Եղիւրդը ( դուռի մը , ելն . ) .	Le bord ( d'un verre, etc )
Եզր , ափն .	Le bord, la rive.
Ծովեզր .	Le bord de la mer.
Ծովն եղիւրդը .	Au bord de la mer.
Եզր ծովու .	Le rivage, la côte.
Մարդիկ .	Les gens.
Բարի մարդիկ են .	Ce sont de bonnes gens.

ԳԻՏ. Ա. Bord, ամէն ջուրի եզերքի կ'ըսուի . côte ծովի եզերք է . rive, մեծամեծ գետերու համար կ'ըսուի . rivage մինակ ծովու համար : Bord ջուրին կը դայի . côte ջուրէն վեր է . rivage ընդարձակ ծովեզր է :

ԳԻՏ. Բ. Gens արական է, բայց անոր նախագաս եղող ածականք՝ իզական կը գրուին : Եթէ gens էն ետքը de ով բառ մը դայ, ինչպէս gens de bien, gens de lettres, ելն, նախագաս ածականն արական կ'ըլլայ :

Չար մարդիկ են.  
Ծեր մարդիկը .

Ce sont de méchantes gens.  
Les vieilles gens.

Բայց gens ին յետագաս ածականներն արական կը գրուին :

Այս մարդիկն սյնպէս չար են ինչպէս վնասակար . Ces gens sont aussi méchants que dangereux.

Եթէ gens էն առաջ tout ածականը միայն է, արական կը գրուի . Tous les gens. Եթէ tout ին եւ gens ին մէջտեղ ածական մը կայ, ոչ միայն այն ածականը, հապա նաեւ tout, իզական կ'ըլլայ, ինչպէս . Toutes les méchantes gens. Եթէ tout ին եւ gens ին մէջտեղի ածականն իզականաւերջ է (անձայն e ով կը վերջաւորի), tout արական կը մնայ . Tous les honnêtes gens.

## 182. Հրահանգ

Ար սիրուէի՞ք երբ Տրեղտա էիք . — Ձէի ատուեր (ատելի չէի) . — Ձեր եղբայրը կը սիրուէր երբ Լոնտրա էր . — Ար սիրուէր եւ կը յարգուէր . — Նորը Սպանիա էիք . — Հոն էի երբ դուք հոն էիք . — Ո՞վ կը սիրուէր եւ ո՞վ կ'ատուէր . — Անոնք որ խելօք, յարատեւ եւ հնազանդ էին՝ կը սիրուէին . եւ անոնք որ չար, ծոյլ եւ անհնազանդ էին՝ կը պատժուէին, կ'ատուէին եւ կ'արհամարհուէին . — Պէրլին էիք, երբ Թագաւորն հոն էր . — Հոն էի, երբ այն հոն էր . — Ձեր հօրեղբայրը Լոնտրա՞ էր, երբ ես հոն էի .

— Հոն էր , երբ դուք հոն էիք . — Ո՞ւր էիք , երբ ես Տրեզուս էի . — Բարիզ էի . — Ձեր հայրն ո՞ւր էր , երբ դուք Վիէնա էիք . — Անգղիա էր . — Ս՛րբ նախաճաշ էի , երբ հօրեղբայրս կը նախաճաշէր . — Ա՛յախատէլ՛ք , երբ այն կ'աշխատէր . — Ա՛ռսանէի , երբ այն կ'աշխատէր . — Ձեր եղբայրը կ'աշխատէ՞ր , երբ դուք կ'աշխատէիք . — Ար խաղար , երբ ես կ'աշխատէի . — Մեր նախնիքն ի՞նչ բանով կ'ապրէին . — Ձիամբ եւ որսի մտով միայն կ'ապրէին , քանզի ամէն օր որսի եւ ձկնորսութեան կ'երթային . — Հոռմայեցիք ի՞նչ մարդիկ էին . — Շատ աղէկ մարդիկ էին , քանզի արուեստներն ու զիտութիւնները կը մշակէին եւ արժանիքը կը վարձատրէին . — Ձեր բարեկամները ստէպ տեանելու կ'երթայի՞ք , երբ Պէրլին էիք . — Ստէպ զանոնք տեանելու կ'երթայի . — Երբեմն Շանդ-Էլիզէ կ'երթայի՞ք , երբ Բարիզ էիք . — Ստէպ կ'երթայի :

183. Հրահանգ


Ի՞նչ կ'ընէիք , երբ այս երկիրը կը բնակէիք . — Երբ հոն կը բնակէինք , ստէպ ձկնորսութեան կ'երթայինք . — Պատելու չէի՞ք երթար . — Երբեմն պատելու կ'երթայի . — Աանուխ կ'ելլէ՞ք . — Ոչ ձեզի չափ վաղ . բայց երբ հօրեղբորս տունը կը բնակէի , աւելի կանուխ կ'ելլէի քան որ հիմա կ'ընեմ ( հիմա Ելածէս աւելի կանուխ ) . — Անկողինը կը մնայի՞ք երբեմն , երբ ձեր հօրեղբորը տունը կը բնակէիք . — Երբ հիւանդ էի , բո՛ւր օրն անկողինը կը մնայի ( garder le lit ) . — Այս տարի շատ պտուղ կա՞յ . — Ձեմ գիտեր , բայց անցեալ ամառ , երբ դեղն էի , շատ պտուղ կար . — Ի՞նչ բանով կը շահիք ձեր կիանքը ( ապրուստը ) . — Կեանքս աշխատելով կը շահիմ . — Ձեր

բարեկամն իւր կեանքը գրելով կը շահի . — Խօսելով  
 եւ գրելով կը շահի . — Այս տեսքը իրենց կեանքն  
 աշխատելով կը շահին . — Բան մը չընելով կը շահին ,  
 քանզի այնչափ ծոյլ են որ չեն աշխատիր ( ւրօք . . .  
 pour ) . — Ձեր բարեկամն ի՞նչ բանով շահեցաւ այս  
 ստակը . — Աշխատելով շահեցաւ . — Ինչո՞վ կը շահե-  
 իք ձեր կեանքը , երբ Անդդիա էիք . — Կեանքս գը-  
 ընելով կը շահէի . — Ձեր բարեկամն իւր կեանքը գրե-  
 լով կը շահէր . — Աշխատելով կը շահէր , — Այսպիսի  
 անձ մը երբէք տեսա՞ք . — Այնպիսի մը երբէք չտե-  
 սայ . — Մեր եկեղեցին արդէն տեսա՞ք . — Դեռ տե-  
 սած չեմ . — Ո՛ր է . — Քաղաքէն դուրս է . եթէ տե-  
 նել կ'ուզէք , ձեզի հետ երթամ ցուցնելու դայն .  
 — Մով ինչ կողերքը բնակող մարդիկ ինչո՞վ կ'ապրին .  
 — Ձկնորսութեամբ միայն կ'ապրին . — Ինչո՞ւ այլ չէք  
 ուզեր որսի երթալ . — Երէկ բոլոր օրը որսացի եւ  
 տղեկ թռչուն մը միայն գարկի ( tuer ) , այնպէս որ  
 այլ որսի չեմ երթար . — Ինչո՞ւ չէք ուտեր . վաճան  
 դի աղէկ ակործակ չունիմ . — Ինչո՞ւ ձեր եղբայրն  
 այնչափ կ'ուտէ . — վաճան դի աղէկ ակործակ ունի :

#### 184. Հրահանգ

Ձո՞վ կը փնտռէք . — Պզտիկ եղբայրս կը փնտռեմ .  
 — Եթէ գտնել կ'ուզէք , պէտք է պարտէղ երթալ ,  
 քանզի հոն է . — Պարտէղը մեծ է , եւ պիտի չկրնամ  
 դանի գտնել , եթէ չէք ըսեր թէ պարտէղին որ մա-  
 սին մէջ է . — Նստած է մեծ ծառին տակ , որուն  
 տակ մենք երէկ նստած էինք . — Հիմա պիտի գը-  
 նեմ . — Հանդերձներս ինչո՞ւ չբերիք . — Շինուած չէ-  
 ին , այնպէս որ չէի կրնար բերել . բայց հիմա կը բե-  
 րեմ . — Ձեր դասը սորվեցաք . ձեր քոյրն իրենն ին-  
 չո՞ւ չսորվեցաւ . — Մօրս հետ պատելու դնաց , այն-

պէս որ չկրցաւ սորվիլ . բայց վաղը պիտի սորվի .  
 — Համարս նրբ պիտի սրբազրէք . — Պիտի սրբա-  
 գրեմ , երբ ձեր քրոջը ( համարները ) բերէք . — Կը  
 կարծէք թէ սխալ բրած էք . — Ձեմ դիտեր . — Եթէ  
 սխալ բրած էք , ձեր դասն աղէկ ուսած չէք . քան-  
 զի գասերն աղէկ սորվել պէտք է կրթութեանց մէջ  
 սխալ չընելու համար . — Նոյն բան է ( հող չէ , c'est  
 égal ) , եթէ այսօր չէք սրբազրեր , վաղը կը սորվիմ .  
 — Ձեր համարներուն մէջ պէտք չէ սխալ ընել , քան-  
 զի սխալ չընելու համար ինչ որ պէտք է ունիք .



Կ. ԳԱՍ. Soixantième Leçon.

ԱՆԿԱՏԱՐԻ ՎՐԱՅ ( Շարունակութիւն )

Այն բայերը որոնց ընդուն. ներկան յան կը վերջա-  
 ւորի , ինչպէս՝ oublier, oubliant. rire, riant. prier, pri-  
 ant, անկառարին յօք. Ա. եւ. Բ. դէմքերուն մէջ եր-  
 կու i կ'ունենան :

J'oubliais, tu oubliais, il oubliait.  
 Nous oublions, vous oubliez, ils oublièrent.

Երբ գպրոց կ'երթայինք , շատ. Quand nous allions à l'école,  
 անդամ մեր գիրքերը կը մոռ- nous oublions souvent nos  
 նայինք . livres.  
 Ձեր աղոց համար Տերոջը կ'ա- Priez-vous souvent le Sei-  
 դաչէնք ստէպ , երբ եկեղեցի gneur pour vos enfants,  
 կ'երթայիք . quand vous alliez à l'é-  
 glise ?

ԴԻՏ. Ա. Ընդուն. ներկան յան վերջաւորող բայեր ,  
 ինչպէս՝ payer, payant. croire, croyant. fuir, fuyant. voir,

voyant, անկատար յսք. Ա. եւ Բ. դէմքերուն մէջ Կ էն ետքը i ալ կ'ուզեն. ինչպէս -

Je payais, tu payais, il payait.

Nous payions, vous payiez, ils payaient.

Երբ ստակ կ'ընդունէինք, ա- Պայիս ընդունելով զարծիքս, զէկ զիբքեր գնելու կը գործածէինք զայն. Պայիս ընդունելով զարծիքս, զէկ զիբքեր գնելու կը գործածէինք զայն.

Երբ այս վաճառականէն կը գնէիք, միշտ կանխիկ չէիք վճարեր. Պայիս ընդունելով զարծիքս, զէկ զիբքեր գնելու կը գործածէինք զայն.

Ձեր քոյրը ձեր փողպատը նորոգելու յաջողեցա՞ւ. Վոյր քոյրը ձեր փողպատը նորոգելու յաջողեցա՞ւ.

Յաջողեցաւ. Elle y est parvenue.

Կինը շուկայէն գարձա՞ւ. La femme est-elle revenue du marché ?

Դեռ չգարձաւ. Elle n'en est pas encore revenue.

Կանայք այս բանին վրայ միասին են (կ'ընդունին). Les femmes sont-elles convenues de cela ?

Միասին են. Elles en sont convenues.

Ձեր քոյրն ո՞ւր գնաց. Où votre sœur est-elle allée ?

Իկեղեցի գնաց. Elle est allée à l'église.

### ԹԵԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ. Conditionnel Présent.

Այս ժամանակը կը շինուի, ապառնւոյն մէջ նկատուեալ փոփոխութիւնն ընելով :

Ապ. rai, ras, ra. rons, rez, ront.  
Թեակ. rais. rais, rait. rions, riez, raient.

J'aurais, tu aurais, il aurait.

Nous aurions, vous auriez, ils auraient.

Je serais, tu serais, il serait.

Nous serions, vous seriez, ils seraient.

Je parlerais, tu parlerais, il parlerait.

Nous parlerions, vous parleriez, ils parleraient.

ԴԻՏ. Բ. Թէ՛ականինն հետ միշտ si, երբ, շաղկապով կատուած նախադասութիւն մը կից է, որուն բայը միշտ անկատար է, եւ թէ՛ական բային գործողութեանը սլայմանը կամ թէ՛ութիւնն է : Թէ՛ականը Հայերէն անկատար կամ սպառնի կը թարգմանուի, ետեւէն թէ՛ութեամբ . զոր օրինակ, Je parlerais. si... կը խօսէր, եթէ . . . :

- Եթէ ստակ ունենայի, նոր վե- Si j'avais de l'argent, j'au-  
րարիւ մը կ'ունենայի . rais un habit neuf.
- Եթէ ասիկա ընել գիտնայիր, Si tu savais faire ceci, tu  
ասիկա ընել պիտի ուզէիք . voudrais faire cela.
- Եթէ կրնար, պիտի ուզէր . S'il pouvait, il voudrait.
- Կ'երթայի, եթէ ժամանակ ու- J'irais, si j'avais le temps-  
նենայի . նենայի .
- Եթէ գիտնար ինչ որ դուք S'il savait ce que vous avez  
բրէք ( ձեր բրածը ), ձեզ կը fait, il vous gronderait.  
յանդիմանէր .
- Յանդիմանել, սաստել . Gronder.
- Եթէ փայտ ունենար, կրտի S'il avait du bois, il ferait  
կ'ընէր . du feu.
- Եթէ մարդիկը դային, անոնց Si les hommes venaient, il  
խմելու բան մը տալ պէտք faudrait leur donner quel-  
էր . que chose à boire.
- Եթէ մեր նամակներն ընդու- Si nous recevions nos let-  
նէինք, վաղը միայն կը կարգա- tres, nous ne les lirions  
յինք . que demain.
- Ոչ առաջ . Ne—pas avant. կամ ne pas  
avant de ( աներեւոյթէ մը  
առաջ ) .

ԹԵԱԿԱՆ ԱՆՅԵԱԼ. Conditionnel Passé.

Այս ժամանակը կը շինուի օժանդակին թէ՛ական երկայէն եւ բային ընդունելութիւն անցեալէն : Թէ՛ա-

Կան անցեալն ալ իւր կտուէն si ուլ գերակատար կ'ուզէ . զոր օրինակ , J'aurais parlé, si j'avais fait . . . Խօսած կ'ըլլայի , եթէ . . . Ըրած ըլլայի :

J'aurais, tu aurais, il aurait parlé.

Nous aurions, vous auriez, ils auraient parlé.

Je serais, tu serais, il serait parti; elle serait partie.

Nous serions, vous seriez, ils seraient partis; elles seraient parties.

Եթէ ստակս ընդունած ըլլայի, նոր մուսակներ գնած կ'ըլլայի .

Si j'avais reçu mon argent, j'aurais acheté des souliers neufs.

Եթէ կանուխ ելած ըլլայիք , հարբուխ աւած չէիք ըլլար .

Si vous vous étiez levé de bonne heure, vous ne vous seriez pas enrhumé.

Եթէ ձեռուքները լուացած ըլլար , զանոնք սրած կ'ըլլար .

S'il s'était lavé les mains, il se les serait essuyées.

Եթէ իրենց ծեր ձին ծախած ըլլային , լաւագոյն մը հայթայթած կ'ըլլային .

S'ils s'étaient défaits de leur vieux cheval, ils s'en seraient procuré un meilleur.

Եթէ զայս գիտնայի , տարբեր կը վարուէի .

Si je savais cela, je me comporterais différemment.

Եթէ զայս գիտցած ըլլայի , այլազգ վարուած կ'ըլլայի .

Si j'avais su cela, je me serais comporté autrement.

Եթէ ասիկա գիտած ըլլայիր , խարուած չէիր ըլլար .

Si tu t'étais aperçu de cela, tu ne te serais pas trompé.

Գաղիերէն կը սորվէ՞ք , եթէ ես սորվէի .

Apprendriez-vous le français, si je l'apprenais ?

Կը սորվէի , եթէ դուք սորվէիք .

Je l'apprendrais, si vous l'appreniez.

Գերմաներէն սորված կ'ըլլայի՞ք , եթէ ես սորված ըլլայի .

Auriez-vous appris l'allemand, si je l'avais appris ?

Սորված կ'ըլլայի , եթէ դուք սորված ըլլայիք .

Je l'aurais appris, si vous l'aviez appris.

Գաղիա կ'երթայի՞ք , եթէ ձեզի հետ երթայի .

Iriez-vous en France, se j'y allais avec vous ?

Կ'երթայի , եթէ ինծի հետ երթայիք .

J' (y) irais si vous y alliez avec moi.

Պերմանիս դացած կ'ըլլայիք , Եթէ ձեզի հետ դացած ըլ- լայի .	Seriez-vous allé en Alle- magne, si j'y étais allé avec vous ?
Պուրս կ'ըլլէիք , եթէ ես տունը մնայի .	Sortiriez-vous, si je restais à la maison ?
Տունը կը մնայի , եթէ դուք դուրս կ'ըլլէիք .	Je resterais à la maison, si vous sortiez.
Նամակ մը գրած կ'ըլլայիք , Եթէ տոմսակ մը գրած ըլ- լայի .	Auriez-vous écrit une lettre, si j'avais écrit un billet ?
Ահա գիրքս .	Voilà, voici mon livre.
Ահա նա .	Le voilà; (իդ.) la voilà.
Ահա նորս .	Les voici. Ահա ես . Me voici.
Ահա ինչու համար .	Voilà pourquoi.
Ահա ինչու համար կ'ըսեմ .	Voilà pourquoi je le dis.
Ռտուրներս կը մնին .	J'ai froid aux pieds.
Ռտուրները կը մնին .	Il a froid aux pieds.
Ձեռուները (կին) կը մնին .	Elle a froid aux mains.
Բոլոր մարմնովս կը մնիմ .	J'ai froid par tout le corps.
Գլուխս կը ցաւի .	La tête me fait mal.
Սրունք կը ցաւի .	La jambe lui fait mal.
Քողբ կը ցաւի .	Il a mal au côté.
Լեզուս շատ կը ցաւի .	La langue lui fait bien mal.
Ահա առակ մը (Թաղաղ) . Փեսայ .	Une assiette.
Խորդ որդի , ուրջու .	Le beau-fils, le gendre.
Հարս , նու .	Le beau-fils.
Խորթ աղջիկ .	La belle-fille, la bru.
Յառաջադիմութիւն .	La belle-fille.
„ „ ընել .	Le progrès.
Ուսմանց , գիտութեանց մէջ յառաջադիմութիւն ընել .	Faire des progrès.
Հիւանդութեան մը յառաջա- դիմութիւնը կամ յառաջ- դիմութիւնները .	Faire des progrès dans les études, dans les sciences.
Անք , խորթ հայր .	Le progrès կամ des progrès d'une maladie.
Ձրքանչ , խորդ մայր .	Le beau-père.
	La belle-mère.

## 185. Հրահանգ

Բան մը կը մոռնայի՞ք, երբ դպրոց կ'երթայիք .  
 — Ստէպ մեր գիրքերը կը մոռնայինք . — Ո՞ւր կը մոռ-  
 նայիք . — Դպրոցը կը մոռնայինք . — Բան մը կը մոռ-  
 նայի՞նք . — Բան մը չէինք մոռնար . — Ձեր մայրը  
 մէկուն համար կ'աղօթէ՞ր, երբ եկեղեցի կ'երթար .  
 — Իւր տղոցը համար կ'աղօթէր . — Երբ ձեր ստակը  
 կ'ընդունէիք, լ՞նչ կ'ընէիք . — Աղէկ գիրքեր գնելու  
 կը գործածէինք . — Ձերինն ալ կը գործածէի՞ք գիր-  
 քեր գնելու . — Ոչ, մենք կը գործածէինք աղքատաց  
 օգնելու . — Ձեր դերձակին չէի՞ք վճարեր . — Կը վը-  
 ճարէինք . — Միշտ կանխիկ կը վճարէի՞ք, երբ վա-  
 ճառականէն կը գնէիք . — Միշտ կանխիկ կը վճարէ-  
 ինք, քանզի երբէք ապառիկ չենք գներ . — Ձեր  
 քոյրը յաջողեցա՞ւ ձեր դուշմաները նորոգելու . — Յա-  
 ջողեցաւ . — Ձեր մայրը եկեղեցիէն դարձա՞ւ (եկա՞ւ) .  
 — Դեռ չեկաւ . — Ձեր մայրն ո՞ւր գնաց . — Եկեղեցին  
 գնաց . — Մեր հօրեղբօր աղջկունք ո՞ւր դացին .  
 — Նուագածուժեան դացին . — Դեռ անկէ չեկա՞ն .  
 — Դեռ չեկան .

## 186. Հրահանգ

Ո՞վ է հոն . — Ես եմ . — Այս մարդիկն ո՞վ են .  
 — Օտարականներ են որ ձեզի խօսել կ'ուզեն . — Ո՞ր  
 երկրէն են . — Ամերիկացի են . — Ո՞ւր է գիրքս .  
 — Ահա . — Հապա գրի՞չա . — Ահա . — Ո՞ւր է ձեր  
 քոյրը . — Ահա նա . — Մեր հօրեղբօր աղջկունք ո՞ւր  
 են . — Ահա նոքա . — Ո՞ւր էք, Ժան . — Ահա ես .  
 — Ձեր տղաքն ինչո՞ւ Գաղիա կը բնակին . — Գաղիա-  
 րէն սորվել կ'ուզեն . ահա ինչու համար Գաղիա կը

ընակին . — Ինչո՞ւ կրակին մօտ նստած էք . — Ձեռ-  
ուքներս եւ ոտուքներս կը մսին . ահա ինչու համար  
կրակին մօտ նստած եմ . — Ձեր քրոջը ձեռուքները  
կը մսին . — Ոչ , այլ ոտուքները կը մսին . — Ձեր ատի-  
կին հօրաքոյրն ի՞նչ ունի . — Արոււր կը ցաւի . — Այս  
կինն ի՞նչ ունի . — Անոր լեզուն շատ կը ցաւի . — Ինչ-  
ո՞ւ չէք ուտեր . — Ախորժակ ունենայէս առաջ պիտի  
չուտեմ . — Ձեր քոյրն ախորժակ ունի՞ . — Ախորժակ  
ունի . (անօթի է) . ահա ինչու համար այնչափ կ'ու-  
տէ . — Եթէ կարդացիք ձեզի փոխ տուած գիրքերս ,  
ինչո՞ւ դանձնք ինծի չէք տար . — Անգամ մ'ալ կար-  
դարու միտք ունիմ . ահա ինչու համար դանձնք դեռ  
ձեզի չառի . բայց երկրորդ անգամ կարդացած ըլլա-  
լուս պէս՝ կու տամ . — Մուճակներս ինչո՞ւ չբերիք .  
— Շինուած չէին . ահա ինչու համար չբերի . բայց  
հիմա (ահա) կը բերեմ . ահա նոքա . — Ձեր քոյրն իւր  
համարներն ինչո՞ւ չսորվեցաւ . — Իւր ընկերին հետ  
պտոյտ մը ընելու գնաց . ահա ինչու համար չսորվե-  
ցաւ . բայց կը խոստանայ վաղիւ սորվել , եթէ զա-  
նի չէք յանդիմաներ :

### 187. Հրահանգ

Ստակ կ'ունենայի՞ք , եթէ ձեր հայրն հոս ըլլար .  
— Կ'ունենայի , եթէ հոս ըլլար . — Գոհ եղած կ'ըլլա-  
յի՞ք , եթէ գիրքեր ունեցած ըլլայի . — Շատ գոհ ե-  
ղած կ'ըլլայի , եթէ ունեցած ըլլայիք . — Պղտիկ եղ-  
բայրս գոված կ'ըլլայի՞ք , եթէ խելօք եղած ըլլար .  
— Եթէ խելօք եղած ըլլար , ստուգիւ զանի ոչ միայն  
գոված , այլեւ սիրած , պատուած եւ վարձատրած  
կ'ըլլայի . — Ար գովուէի՞նք , եթէ մեր համարներն ը-  
րած ըլլայինք . — Եթէ անսխալ ընէիք , կը գովուէիք  
եւ կը վարձատրուէիք . — Եղբայրս պատժուած պիտի

չըլլա՞ր, եթէ իւր համարներն ըրած ըլլար. — Պատ-  
ժուած չէր ըլլար, եթէ զանոնք ըրած ըլլար. — Քոյ-  
րըս գովուած կ'ըլլա՞ր, եթէ յաջողակ եղած չըլլար.  
— Ստուգիւ գովուած չէր ըլլար, եթէ շատ յաջողակ  
եղած չըլլար, եւ եթէ առտուընէ մինչեւ իրիկուն աչ-  
խատած չըլլար. — Ինծի բան մը կու տայի՞ք, եթէ  
շատ խելօք ըլլայի. — Եթէ շատ խելօք ըլլայիք, եւ  
եթէ աղէկ աշխատէիք, զեղեցիկ զիրք մը կու տայի.  
— Ձեր քոջը գրած կ'ըլլայի՞ք, եթէ Բարիզ գացած  
ըլլայի. — Անոր գրած կ'ըլլայի եւ անոր զրկած կ'ըլ-  
լայի գեղեցիկ բան մը, եթէ հոն գացած ըլլայիք. — Աը  
խօսէի՞ք, եթէ ձեզ մտիկ ընէի. — Աը խօսէի, եթէ  
զիս մտիկ ընէիք, եւ եթէ ինծի պատասխանէիք.  
— Մօրս խօսած կ'ըլլայի՞ք, եթէ զանի տեսած ըլլա-  
սիք, — Եթէ զանի տեսած ըլլայի, անոր խօսած կ'ըլ-  
լայի, եւ աղաչած կ'ըլլայի որ ձեզի ոսկիէ գեղեցիկ  
ժամացոյց մը զրկէր :

### 188. Հրահանգ

Լուի Ժ.Գ. ի սենեկապետներէն ( valet de chambre )  
մէկը, այս թագաւորէն կը խնդրէր, երբ անիկա ան-  
կողին կը մտնէր, առաջին նախագահին ( le premier  
président ) յանձնել ( recommander ) դատ մը զոր իւր  
աներոջը դէմ ունէր, եւ կ'ըսէր, զանի ( զթագաւո-  
րը ) ստիպելով. « Բա՛ւէ, Տէր ( Sire ), խօսք մը միայն  
ըսէք՝ բաւական է » ( vous n'avez qu'un mot à dire ) :  
« Այո », ըսաւ Լուի Ժ.Գ. « առ հողս չէ » ( ce n'est  
pas de quoi je suis en peine ; բայց ըսէ ինծի, եթէ ա-  
ներոջդ տեղն ( à la place ) ըլլայիր, գոհ կ'ըլլայի՞ր,  
եթէ այն խօսքն ( mot ) ըսէի » :

Եթէ մարդիկը գային, անոնց խմելու բան մը տալ  
սլէտք էր. — Եթէ կարենար ասիկա ընել, անիկա ը-

նեղ պիտի ուզէր. — Միշտ յոյս ունենցած եմ (se flatter), սիրելի եղբայրս, որ դիւս կը սիրէք այնչափ որչափ ես ձեզ կը սիրեմ. բայց հիմա կը տեսնեմ որ խաբուած եմ. — Կուզէի գիտնալ, ինչո՞ւ համար առանց ինձ պատահու գացիրք. — Լսեցի (apprendre), սիրելի քոյրքս, որ ինձի սրդողած էք, վասն զի առանց ձեզ պատահու գացի. — Կ'ապահովեմ զձեզ որ, եթէ դիտցած ըլլայի թէ հիւանդ չէիք, ձեզ առնելու եկած կ'ըլլայի. բայց ձեր առողջութեան վրայ ձեր բժշկէն տեղեկութիւն առի, եւ ինձի ըսաւ որ դուք ութ օրէ ի վեր անկողինն էիք :

489. Հրահանդ

Քաղիացի պաշտօնակալ մը Վիէնայի արքունիքը հասած (եկած) ըլլալով, թերեղա կայսրուհին անոր հարցուց, թէ կը կարծէր արդեօք որ Ա. իշխանուհին զոր նախընթաց իրիկունը (la veille) տեսած էր, իրօք աշխարհիս ամենէն գեղեցիկ կի՞նն էր, ինչպէս որ կ'ըսուէր. « Տիկին », պատասխանեց պաշտօնակալը. « երէկ այնպէս կը կարծէի ». — Այս միսն ի՞նչպէս կը գտնէք. — Շատ աղէկ կը գտնեմ. — Այս ձուկէն կըտոր մը խնդրելու կը համարձակկի՞մ. — Եթէ շնորհք կ'ընէք ձեր սկաւառակն ինձի տալու (passer), ձեզի կու տամ անկէ. — Կ'ուզէ՞ք շնորհք ընել գաւաթս լեցունել (verser à boire). — Շատ հաճութեամբ. — Կիկերոն իւր փեսային, որ շատ փոքր էր, քովը (մէջքը) երկայն սրոյ՛ գալը (\*\*\*) տեսնելով, ցտաւ. « Փեւսաս այդ սուրբին ո՞վ կապեց » :

(\*) Voici, ահա, մօտաւոր բանի մը համար կ'ըսուի. voilà, հեռաւորի մը համար :

(\*\*) Հայերէն կ'ըսենք՝ Մէկուն գալը տեսնել, մէկուն լալը լսել, եւն. Քաղիերէն պէտք է ըսել, Մէ-

կը դալ տեսնել, մէկը լալ լսել. դոր օրինակ. Je vois  
votre frere venir. ձեր եղբորը դալը կը տեսնեմ. J'entends  
pleurer l'enfant. տղուն լալը կը լսեմ. Այս տեսակ խօս-  
քերու մէջ աներևոյթը՝ venir, pleurer, կը նշանակեն  
venant, pleurant, եւ ստորոգելի են. J'entends pleu-  
rer l'enfant, կը նշանակէ՝ J'entends l'enfant pleurant-  
այսինքն՝ կը լսեմ տղան լացող, որ կու լայ :



### ԿԱ. ԴԱՍ. Soixante-et-unième Leçon.

Ձեր հօրաքոյրն ի՞նչ եղաւ. Qu'est devenue votre tante ?  
Ձեմ գիտեր ինչ եղաւ. Je ne sais pas ce qu'elle est  
devenue.

Ձեր քոյրերն ի՞նչ եղան. Que sont devenues vos  
sœurs ?

Ձեմ կրնար ըսել ձեզի թէ ինչ եղան. Je ne peux pas vous dire ce  
qu'elles sont devenues.

Մեռնել, մեռած, մեռնելով. Mourir (\*) ; mort; mourant.  
կը մեռնիմ, կը մեռնիս, կը մեռնի. Je meurs, tu meurs, il meurt-

Պիտի մեռնի՞ք. Mourrez-vous ? ( Տես Գաս  
ԽԶ. )

Պիտի մեռնիմ. Je mourrai.

Այրն այս առաու մեռաւ. L'homme est mort ce matin,  
կինն ալ մեռաւ. et la femme est morte  
aussi.

Գինին աղէկ կը ծախուի. Le vin se vend bien.

Գինին դալ տարի աղէկ պիտի  
ծախուի. Le vin se vendra bien l'an-  
née prochaine.

Այս գուռը գիւրաւ կը գոց-  
ուի. Cette porte se ferme faci-  
lement.

Այս պատուհանը գիւրաւ չի  
բացուի. Cette fenetre ne s'ouvre pas  
facilement.

Այս նկարը հեռուէն կը տես-  
նուի. Ce tableau se voit de loin.

Հեռուէն .	De loin.
Չմեռուան զգեստներն ամառը չեն կրուիր ( տարուիր ) .	Les vêtements d'hiver ne se portent pas en été.
Ասիկա չըսուիր .	Cela ne se dit pas.
Ասիկա չըմբռնուիր .	Cela ne se conçoit pas.
Ըմբռնել , հասկնալ .	Concevoir.
Յայանի է .	C'est clair.
Ըստ պարագայից .	Selon les circonstances.
Պարագան .	La circonstance.
Կրնայ բլլալ .	C'est selon.
Գոհ , ուրախ .	Bien aise, content de ...
Տխուր , վշտացած .	Fâché.
Հարուստ էք .	Etes-vous riche ? Եմ . Je le suis.
Կանայք շատ գեղեցիկ են .	Les femmes sont-elles bien jolies ?
Են . Հարուստ և գեղեցիկ են .	Elles le sont; elles sont ri- ches et belles.
Գաղիացի՞ էք .	Etes-vous de France ?
Եմ .	J'en suis.
Ո՞ր երկրէն է .	De quel pays est-elle ?
Գաղիայէն ( Գաղիացի ) է .	Elle est de France.
Կը վշտանայի՞ք ( չէ՞ք ուզէր ) հարուստ բլլալ .	Seriez-vous fâché d'être riche ?
Չէի վշտանար .	Je n'en serais pas fâché.
Մեկուն գէմ վշտանալ .	Etre fâché contre quelqu'un.
Բանի մը համար վշտանալ .	Etre fâché de quelque chose.
Ի՞նչ բանի վրայ վշտացած էք .	De quoi êtes-vous fâché ?
Ըրած բլլալնուդ վշտացած էք .	Etes-vous fâché de l'avoir fait.
Վշտացած եմ .	J'en suis fâché.
Փաղաքավար , մարդասէր .	Honnête, civile, obligeant.
Անքաղաքավար , ամարդի .	Malhonnête.
Անքաղաքավար , կոպիտ .	Impoli, incivil, désobligeant.
Երջանիկ .	Heureux, ( եղ . ) heureuse.
Թշուառ .	Malheureux, ( եղ . ) malheureuse.
Դիւրին , faclie . Դժուարին , difficile . Օգտակար , utile .	
Անօգուտ , inutile . Թեթեւ , léger . Ծանր , lourd .	

Շատ գրել օգտակար է .	Est-il utile d'écrire beaucoup ?
Օգտակար է .	C'est utile.
Ուրիշին ինչքն առնուլ աղէկ է .	Est-il bien de prendre le bien d'autrui ?
Չար է . C'est mal . Աղէկ չէ . Ce n'est pas bien .	Աղէկ . Bien . Գէշ, չար . Mal.
Ասիկա ի՞նչ բանի օգտակար է .	A quoi cela est-il bon ?
Ասիկա բանի մը օգտակար չէ .	Cela n'est pas bon à rien.
Ա,ս ի՞նչ է .	Qu'est ce que c'est que cela ?
Չեմ գիտեր ինչ է .	Je ne sais pas ce que c'est.
Ի՞նչ է .	Qu'est-ce que c'est ?
Չեմ գիտեր ինչ է .	Je ne sais ce que c'est.
Ի՞նչպէս կը կոչուիք ( ձեր անունն ի՞նչ է ) .	Comment vous appelez vous ?
Շարլ կը կոչուիմ .	Je m'appelle Charles.
Ասիկա Գաղիերէն ի՞նչպէս կը կոչուի .	Comment cela s'appelle-t-il en français ?
Ասիկա Գաղիերէն ի՞նչպէս կ'ըսուի .	Comment dit-on cela en français ?
Ասիկա ի՞նչպէս կը կոչուի .	Comment appelle-t-on cela ?
Գէորգ երրորդ .	George Trois.

ԴԻՑ. Ա. Թագաւորաց եւ ուրիշ իշխանաց համար Գաղիերէն փոխանակ դասականի (ordinal), բացարձակ (cardinal) թուականները կը գործածուին, բայց առաջին եւ երկրորդէ . ուստի կ'ըսուի՝ Louis quatorze, փոխանակ ըսելու quatorzième. Լոտովիկոս չորեքտասաներորդ : Բայց կ'ըսուի Henri premier, կամ second, Հենրիկոս առաջին կամ երկրորդ : Կրնայ ըսուիլ նաեւ Henri deux. Հենրիկոս երկրորդ : Կարողոս հինգերորդ կայսեր եւ Սեքստոս հինգերորդ Պապին համար Quint բառը կը գործածուի, այսպէս . Charles-Quint, Sixte-Quint, փոխանակ Charles cinq, Sixte cinq ըսելու :

Հարաւոտ հինգերորդ այլեւայլ եւրոպական լեզուներ վարժ կը խօսէր .	Charles-Quint parlait cou- ramment différentes lan- gues européennes.
Եւրոպա , եւրոպական .	L'Europe, européen.
Վարժ ( Չուրի պէս խօսել ) .	Couramment.
Մանաւանդ քան . . .	Plutôt que de . . .
Ստակս վտանելու տեղ մանա- ւանդ կը պահեմ .	Plutôt que de dissiper mon argent, je le garderai.
Կը վճարեմ մանաւանդ քան թէ կ'երթամ անոր տունը .	Je le payerai plutôt que d'aller chez lui.
Կ'սրբեմ մանաւանդ վերարկուն քան թէ զպին կը կրեմ .	Je brûlerai plutôt l'habit que de le porter.
Ինէ շատ ( կանուխ ) հասաւ .	Il est arrivé plus tôt que moi.
Կիսամաշ հանդերձ մը .	Un habit à demi usé.
Բաները վեր ի վերջը ընել .	Faire les choses à demi.

ԳԻՏ. Բ. Plutôt, կը նշանակէ մանաւանդ . զատ գրը-  
ուելով , plus tôt, կը նշանակէ աւելի կանուխ :

190. Հրահանգ

Ձեր հօրեղբայրն ի՞նչ եղաւ . — Ձեզի ըսեմ ինչ ե-  
ղաւ . ահա արժողը որուն վրայ յաճախ կը նստէր .  
— Մեռա՞ւ . — Մեռաւ . — Ն՞րբ մեռաւ . — Մեռաւ ,  
երկու տարի կայ . — Շատ կը ցաւիմ . — Ինչո՞ւ չէ՞ք  
նստիր . — Նի՞քէ քովս կենալ կ'ուզէք , կը նստիմ .  
ըսոյց եթէ կ'երթաք , ձեզի հետ կ'երթամ . — Ձեր հօ-  
րաքոյրն ի՞նչ եղաւ . — Ձեմ գիտեր ինչ եղաւ . — Կ'ու-  
զէ՞ք ինծի ըսել , ինչ եղաւ ձեր քոյրը . — Կ'ուզեմ ը-  
սել ինչ եղաւ . — Մեռա՞ւ . — Չմեռաւ . — Ի՞նչ եղաւ .  
— Վիէնա գնաց . — Ձեր քոյրերն ի՞նչ եղան . — Ձեմ  
կրնար ձեզի ըսել թէ ինչ եղան , քանզի երկու տա-  
րի է որ զանոնք տեսած չեմ . — Ձեր ծնողքը դեռ  
կենդանի՞ են . — Մեռան . — Ո՞րչափ ատեն է որ ձեր

հօրեղբոր աղջիկը մնում է . — Վեց ամիս է որ մնում է . — Գինին անցած տարի աղէկ կը ծախուէր . — Չափազանց աղէկ չէր ծախուեր , բայց դալ տարի աղէկ պիտի ծախուի . քանզի շատ պիտի ըլլայ , եւ սուղ պիտի չըլլայ . — Ինչո՞ւ դուռը կը բանաք . — Չէ՞ք տեսներ թէ ինչպէս ծուխ է հոս . — Լը տեսնեմ , բայց պէտք է պատուհանը բանալ վտիանակ դուռը բանալու . — Պատուհանը դիւրաւ չի բացուիր . ահա ինչու համար ( վասն որոյ ) դուռը կը բանամ . — Մըր պիտի գոցէք . — Այլ եւս ծուխ ( մուխ ) չըլլալուն պէս պիտի գոցեմ . — Յաճախ ձկնորսութեան կ'երթայի՞ք , երբ այս երկրին մէջ էիք . — Յաճախ ձկնորսութեան եւ որսի կ'երթայինք . — Եթէ մեղի հետ դեղ գալ կ'ուզէք , հօրս դղեակը պիտի տեսնէք . — Շատ բարի ( մարդասէր ) էք , տէր . բայց արդէն տեսած եմ այն դղեակը ( տունը ) :

#### 191. Հրահանգ

Հօրս դղեակը մըր տեսաք . — Անցեալ տարի ճամբորդելով տեսայ . — Շատ դեղեցիկ դղեակ մ'է , եւ հեռուէն կը տեսնուի . — Ասիկա ի՞նչպէս կ'ըսուի . — Ասիկա չըսուիր . չըմբռնուիր ( չի հասկցուիր ) . — Չեր լեղուին մէջ ամէն բան չի՞ բացատրուիր . — Ամէն բան կը բացատրուի ( exprimer ) , բայց ոչ ինչպէս ձերինին մէջ . — Վաղը կանուխ պիտի ելլէ՞ք . — Լըրնայ ըլլալ ( c'est selon ) . Եթէ կանուխ կը պառլիմ , կանուխ կ'ելլեմ . բայց եթէ ուշ կը պառլիմ , ուշ կ'ելլեմ . — Տղաքս կը սիրէ՞ք . — Եթէ խելօք են , պիտի սիրեմ . — Վաղը մեղի հետ պիտի ճաշէ՞ք . — Եթէ սիրած կերակուրներս պատրաստել կուտաք , ձեզի հետ կը ճաշեմ . — Կարդայի՞ք նամակը զոր այս առտու ընդունեցաք . — Դեռ չըբացի . — Մըր պիտի

կարգաք . — Ժամանակ ունենալուս պէս պիտի կարգամ . — Ասիկա ի՞նչ բանի օգտակար է . — Ասիկա բանի մը օգտակար չէ . — Ինչո՞ւ գետնէն վերցուցիք . — Վերցուցի , ձեզի ցուցնելու համար . — Կրնա՞ք բսել ինծի թէ ինչ է . — Չեմ կրնար ըսել , քանզի չեմ գիտեր . բայց եղբորս պիտի հարցունեմ , ան ձեզի կ'ըսէ : — Տէր գտաք . — Անտառին մօտ գետակին եղերքը գտայ . — Հեռուէ՞ն տեսաք . — Հեռուէն տեսնելու պէտք չունէի , քանզի գետակին քովէն կ'անցնէի . — Այսպիսի բան մը երբէք տեսա՞ծ էք . — Երբէք . — Շատ խօսել օգտակար է . — Կրնայ ըլլալ . երբ օտար լեզու մը սորվել կ'ուզուի , օգտակար է շատ խօսել . — Գրել ա՞յնպէս օգտակար է ինչպէս խօսել . — Խօսելն աւելի օգտակար է քան գրել . բայց օտար լեզու մը սորվելու համար , երկուքն ալ պէտք է ընել . — Օգտակար է գրել ինչ որ կ'ըսուի . — Ասիկա անօգուտ է :

## 192. Հրահանգ

Այս գիրքն ո՞ւր ( ուստի՞ ) առիք . — Ձեր բարեկամին սենեակէն առի . — Ուրիշներուն գիրքերն առնելն աղէ՞կ է . — Աղէկ չէ , գիտեմ . բայց անոր պէտք ունէի , քանզի կարգալուս պէս անոր պիտի տամ ( ետ դարձունեմ ) . — Ի՞նչպէս կը կոչուիք . — Կիցեոմ կը կոչուիմ . — Ձեր քոյրն ի՞նչպէս կը կոչուի . — Լէոնորա կը կոչուի . — Ինչո՞ւ Շարլ իւր քրոջմէն կը դանգատի . — Վասն զի անիկա անոր զրիչներն առաւ . — Այս աղաք որմէ՞ կը դանգատին . — Ֆրանսուա կը դանգատի Լէոնորայէ , եւ Լէոնորա՝ Ֆրանսուայէ . — Ո՞վ իրաւունք ունի , — Երկուքն ալ իրաւունք չունին . քանզի Լէոնորա կ'ուզէր Ֆրանսուայի գիրքերն առնուլ , եւ Ֆրանսուա՝ Լէոնորա-

յինները . — Բասինի գործերը որո՞ւ փոխ տուիք ?  
 — Առաջին հատորը կիյեամի փոխ տուի , եւ երկրորդը՝ Լուիզային . — Ասիկա Գաղիերէն ի՞նչպէս կ'ըսուի . — Ասիկա այսպէս կ'ըսուի . — Ասիկա Գերմաներէն ի՞նչպէս է : — Ասիկա Գերմաներէն չըսուիր . — Գերձակը ձեր նոր վերարկուն բերա՞ւ . — Բերաւ , քայց ինծի չըլլար ( կամ չի վայելիր ) . — Ուրիշ մը պիտի չինէ՞ . — Ուրիշ մը պիտի չինէ . քանզի կ'ուզեմ ետ տալ մանաւանդ քան թէ կրել ( հազնել ) ( plutôt que de le porter, je le donnerai ) . — Այս ձին պիտի գործածէ՞ք . — Չեմ գործածեր . — Ինչո՞ւ չէք գործածեր . — Քանզի չի վերաբերիր ինծի . — Չայն պիտի վճարէ՞ք . — Կ'ուզեմ վճարել մանաւանդ քան թէ գործածել . — Այս գեղեցիկ գիրքերն որո՞ւ կը վերաբերին . — Կիյեամի կը վերաբերին . — Ո՞վ զանոնք ա՞նոր տուաւ . — Հայրը . — Չանոնք պիտի կարդա՞յ . — Պիտի սլատուէ մանաւանդ քան թէ պիտի կարդայ . — Ասիկա ձեզի ո՞վ բաւաւ . — Ինք ըսաւ :

### 193. Հրահանգ

Այս աիկինը ո՞ր երկրէն է . — Գաղիայէ է . — Գաղիայէ՞ ( գաղիացի՞ ) էք . — Ոչ , Գերմանիայէ եմ . — Ինչո՞ւ ձեր զգեստները նորոգելու չէք տար . — Չարժեք , քանզի ինծի նոր հանդերձներ պէտք են . — Ձեր կրած հանդերձն աղէկ չէ՞ . — Կէս մաշած հանդերձ մ'է , եւ բան մը չարժեք . — Կը վշտանայի՞ք , եթէ ձեր մայրը հասնէր . — Չէի վշտանար . — Ձեր քոյրը կը վշտանար , եթէ հարուստ ըլլար . — Չէր վշտանար . — Մէկուն դէմ վշտացած ( սրդողած ) էք . — Վշտացած եմ Լուիզայի դէմ որ օրերայի դնաց առանց բան մը ըսելու ինծի . — Ո՞ւր էիք , երբ այն դուրս ելաւ . — Իմ սենեակս էի . — Կ'ապահովեմ ձեզ

որ անիկա շատ վշտացած է . քանզի եթէ գիտցած  
 ըլլար թէ դուք ձեր սենեակին էք , ձեզ կանչած կ'ըլ-  
 ար ձեզ իւր հետը օրերան տանելու համար . — Շարլ  
 հինգերորդ որ շատ եւրոպական լեզուներ վարժ կը  
 խօսէր՝ սովորութիւն ունէր ըսելու թէ , սպաներէն  
 պէտք է խօսել աստուածոց հետ . իտալերէն՝ բարև  
 կամուհոյն հետ . գաղիերէն՝ բարեկամին հետ . դեր-  
 մաներէն՝ զինուորաց հետ . անգղիերէն՝ սագերուն  
 հետ . ունկարերէն՝ ձիերու հետ , եւ պոհլեմերէն՝ դի-  
 վին հետ ,



ԿԹ. ԴԱՍ. Soixante-deuxième Leçon.

Գալով. Quant à. Ինձի գալով. Quant à moi.

Այս բանին գալով, չեմ գիտեր թէ ինչ ըսեմ. Quant à cela, je ne sais que dire.

ԴԻՏ. Ա. Գաղիերէն կրբեմն գիմաւոր բայի տեղ ա-  
 ներեւոյթ կը գործածուի , եւ այն ատեն աներեւոյթէն  
 առաջ եղած բայը առանց pas ի մինակ ne ով բացա-  
 սական կ'ըլլայ , եւ աներեւոյթէն առաջ que կը դրուի :

- Չեմ գիտեր ինչ ընեմ. Je ne sais que faire.
- Չեմ գիտեր ուր երթամ. Je ne sais où aller.
- Չեմ գիտեր ինչ պատասխանեմ. Je ne sais que répondre.
- Չենք գիտեր ինչ պիտի գնենք . Nous ne savons qu'acheter.
- Հիւանդութենէ մը մեռանել . Mourir d'une maladie.
- Մտղկէ մեռաւ . Elle est morte de la petite vérole.
- Տրամութենէն մեռաւ . Elle est morte de chagrin.
- Մաղիկը . la petite vérole. Զեբմը . la fièvre.
- Օրընդմէջ ջերմ . La fièvre intermittente.

Կաթուածը .	L'apoplexie.	l'attaque d'apoplexie.
Ջերմ բռնեց .		{ Il avait un accès de fièvre.
Ջերմը նորէն բռնեց .		{ La fièvre l'a pris.
Կաթուածէ զարնուեցաւ .		La fièvre l'a repris.
		Il a été frappé d'apoplexie.
Զարնել .		Frapper.
Ստոյգ .		Sûr, (հդ.) sûre.
Ստոյգ եմ .	J'en suis sûr.	Je suis sûr de cela.
Ստոյգ եմ որ հասաւ .		Je suis sûr qu'elle est arrivée.
Ստոյգ եմ .		J'en suis sûr.
Բան մը պատահեցաւ .		Il est arrivé quelque chose.
Բան մը չպատահեցաւ .		Il n'est rien arrivé.
Ի՞նչ պատահեցաւ .		Qu'est-il arrivé ?
Անոր ի՞նչ պատահեցաւ .		Que lui est-il arrivé ?
Անոր արկած մը պատահեցաւ .		Il lui est arrivé un accident.
Թափել , լեցունել .		Verser.
Արտօսք մը .		Une larme.
Արցունք թափել .		Verser des larmes.
Խմելու համար լեցունել ( դա- ւաթը ) .		Verser à boire.
Այս մարդուն կը լեցունեմ իր .		Je verse à boire à cet homme.
Արտասուալից աչք .		Les larmes aux yeux.
Քաղցր , հեղ .		Doux, (հդ.) douce.
Թթու .		Sur, acide.
Անոյլ գինի , du vin doux .		Քաղցր օդ . un air doux.
Քաղցր զեփիւս .		Un doux zéphir.
Քաղցր քուն .		Un doux sommeil.
Բան մը պինդէս քաղցր չընել կեանքը , որչափ մեր բարե- կամեերուն ընկերութիւնն ու կենակցութիւնը .		Rien ne rend la vie si douce que la société et le com- merce de nos amis.
Նրթալ .		Se rendre à . . .
Բանակը , իւր գունդը երթալ .		Se rendre à l'armée, à son régiment.

խանակ մը , une armée.	Գունդ մը . un régiment.
Այն տեղը դայցի .	Je me suis rendu à cet endroit.
Հսն գնաց .	Il s'y est rendu.
Պսռալ , գռչել .	Crier.
Օգնել , aider ( հայց . կ'ուղէ . եւ իրմէ կարք անել . բնւոյթը à ուղ ) :	
Անոր կ'օգնեմ զայն բնելու .	Je l'aide à le faire.
Ձեզի կ'օգնեմ գրելու .	Je vous aide à écrire.
Կ'ուղեմ ձեզի օգնել աշ- խատելու .	{ Je veux vous aider à tra- vailler. { Je vous aiderai à travailler.
Օգնութեան կանչել , Crier à l'aide. Appeler au secours.	
Օգնութիւնք .	L'aide, le secours.
Մէկուն վրայ տեղեկութիւն տանալ .	S'informer de quelqu'un.
Այն պիտակն ինծի տալու շը- նորհք բնել կ'ուղէք .	Voulez-vous avoir la bonté de me passer ce plat ? կամ Voulez-vous me passer ce plat, s'il vous plaît ? կամ Veuillez me passer ce plat.
Եթէ կը հաճիք . Շնորհք ըրէք .	S'il vous plaît.
Ինչպէս որ կը հաճիք .	Comme il vous plaira.
Գուռը զարնել .	Frapper à la porte.
Մէկուն վստահել .	Se fier à quelqu'un.
Մէկուն չվստահել .	Se défier de quelqu'un.
Այս մտրդուն կը վստահեմք .	Vous fiez-vous à cet homme ?
Անոր կը վստահիմ .	Je me fie à lui.
Ինծի կը վստահի .	Il se fie à moi.
Ամէն մտրդու վստահելու չէ .	Il ne faut pas se fier à tout le monde.
Խնտալ , խնտացած , խնտ- լով .	Rire (*) de; ri; riant.
Կը խնտամ , կը խնտաս , երև .	Je ris, tu ris, il rit.
Ասոր վրայ կը խնտաք .	Riez-vous de cela ?
Կը խնտամ .	J'en ris.

Ի՞նչ բանի վրայ կը խնաման .	De quoi rient-ils, (իդ.) elles ?
Մէկուն երեսին խնամալ, ծաղ- րել .	Rire au nez de quelqu'un.
Ձանի ծաղրեցինք .	Nous lui avons ri au nez.
Ծաղրել մէկը .	{ Se rire, se moquer de quel- qu'un.
Ձեզ կը ծաղրեմ .	{ Plaisanter quelqu'un.
Մեզ կը ծաղրէիք .	Je me ris (me moque) de vous.
Ձեզ չէիք ծաղրեր .	Vous riez-vous de nous ? (Դաս Դ.)
Լեցուն .	Nous ne nous riions pas de vous.
Գերք մը լի սխալով .	Plein, rempli.
Միջոցներն ունենալ .	Un livre plein de fautes.
Այս ձին գնելու միջոցներն ու- նիք .	Avoir les moyens de.
Միջոցներն ունիմ .	Avez-vous les moyens d'a- cheter ce cheval ?
Միջոցները չունիմ .	J'en ai les moyens .
Հոն ո՞վ կայ .	Je n'en ai pas les moyens.
Ես եմ .	Qui est là ? Qui vive ?
Ա՞ն է .	C'est moi. Ես չեմ .
Ա՞ն է .	Ce n'est pas moi.
Ձեր եղբայրներն են .	Ա՞ն է .
	Est-ce lui ? Ան չէ .
	Ce n'est pas lui.
Անոնք են .	Sont-ce vos frères ? Est-ce que ce sont vos frères ?
Ան է (իդ.)	Ce sont eux. Անոնք չեն .
Ան է .	Ce ne sont pas eux.
Խօսողն ես եմ .	Ան է , C'est elle. Ան չէ .
Երեւոյնքն անոնք են .	Ce n'est pas elle.
Երեւոյնքն անոնք են .	Ան է .
Երեւոյնքն անոնք են .	Ce sont elles. Անոնք չեն .
Երեւոյնքն անոնք են .	Ce ne sont pas elles.
Երեւոյնքն անոնք են .	Խօսողն ես եմ .
Երեւոյնքն անոնք են .	C'est moi qui parle.
Երեւոյնքն անոնք են .	Երեւոյնքն անոնք են .
Երեւոյնքն անոնք են .	Sont-ce eux (elles) qui rient ?
Երեւոյնքն անոնք են .	Երեւոյնքն անոնք են .
Երեւոյնքն անոնք են .	C'est vous qui riez.
Երեւոյնքն անոնք են .	Երեւոյնքն անոնք են .
Երեւոյնքն անոնք են .	C'est toi qui l'as fait.

ԴԻՏ. Ա. Գերանունէ մը կտքը կկող յարարեցաւ կա-  
նին բայը , այն գերանուան հետ կը համաձայնի սե-  
ռիւ , թուով եւ գէմքով :

Եղբայրս և ես Գաղիերէն կը սորվինք . Mon frère et moi, nous apprenons le français.  
 Դ՛՛՛ք ըսիք ասիկա, տեարք . C'est vous, messieurs, qui avez dit cela.

ԴԻՏ. Բ. Երբ բայի մը տէր բայիները տարբեր դէմք են, բայը յօքնակի կը դրուի, եւ պատուաւոր դէմքին հետ կը համաձայնի :

Դ՛՛՛ք և ես գեղ պիտի երթանք , Vous et moi, nous irons à la campagne.

Նարբաղ և ես, աստուածոց բարութեան վրայ կը զարմանայինք , Narbal et moi, nous admirions la bonté des dieux.

Դ՛՛՛ւ և այն, պիտի պատժուիք . Lui et toi, vous serez punis.  
 Եղբայրդ և մենք, Գաղիերէն լեզուն կը սորվինք . Ton frère et nous, nous apprenons la langue française.

Դ՛՛՛ք և այն տունը պիտի մընաք . Vous et lui vous resterez, կամ vous resterez à la maison.

Դ՛՛՛ք գեղ պիտի երթաք, իսկ ես քաղաք պիտի դամ . Vous irez à la campagne, et moi, je reviendrai à la ville.

Ի՞նչ կ'ընէիք, երբ ձեր դաստիարակն հոս էր . Que faisiez-vous quand votre instituteur était ici ?

Բան մը չէի ընէր . Je ne faisais rien.

Ի՞նչ կ'ըսէիք . Que disiez-vous ?

Բան մը չէի ըսէր . Je ne disais rien.

194. Հրահանգ

Ձեր քոյրն ի՞նչ հիւանդութենէ մեռաւ . — Տենդէ մեռաւ . — Ձեր եղբայրն ի՞նչպէս է . — Եղբայրս կենդանի չէ . երեք ամիս է որ մեռաւ . — Կ՞զարմանամ, քանզի անցեալ ամառ շատ աղէկ էր, երբ ես գեղն էի . — Ի՞նչ բանէ մեռաւ . — Կաթուածէ մեռաւ . — Ձեր բարեկամին մայրն ի՞նչպէս է . — Աղէկ չէ . եւսանդ զանի ջերմ բռնեց, եւ այս ատու նորէն բըռնեց . — Օրընդմէ՞ջ ջերմ ունի . — Ձեմ դիտեր, բայց

յաճախ կը բռնէ ( avoir des accès de fièvre ). — Ի՞նչ եւ լաւ կլինը զոր ձեր մօրը տունը տեսայ . — Այս ատու կաթուածէ մտաւ . — Ձեր աշակերտներն իրենց համարները բերնուց կը սորվի՞ն . — Պիտի պատանն դանոնք մանաւանդ քան թէ բերնուց սորվին . — Այս մարգն ինէ ի՞նչ կը խնդրէ . — Կը խնդրէ ստակը զոր անոր պարտական էք . — Այժէ վաղն առտու տունս դալ կ'ուզէ , կը վճարեմ անոր ինչ որ պարտկան եմ . — Պիտի կորսնցնէ մանաւանդ իւր ստակը քան թէ հոն երթայ . — Ձեր ծեր սպասաւորին մայրն ինչո՞ւ արցունք կը թափէ . ի՞նչ պատահեցաւ անոր . — Արցունք կը թափէ , վասն զի ծեր եկեղեցականն , անոր բարեկամը , որ անոր այնչափ բարիք կ'ընէր , մտաւ քանի մը օր կայ . — Ի՞նչ հիւանդութենէ մտաւ . — Կաթուածէ դարնուեցաւ . — Ձեր հօրը օգնեցի՞ք իւր նամակները դրելու . — Օգնեցի . — Ինծի կ'օգնէ՞ք աշխատելու , երբ քաղաք երթանք . — Ձեզի կ'օգնեմ աշխատելու , եթէ դուք ինծի կ'օգնէք ապրուստս շահելու :

### 193. Հրահանգ

Տեղեկացա՞ք ( տեղեկութիւն խնդրեցի՞ք ) վաճառականին վրայ որ այնպէս աժան կը ծախէ . — Տեղեկացայ , բայց ոչ ոք կրցաւ ըսել ինծի թէ ինչ եղաւ . — Ո՞ւր կը բնակէր , երբ դուք երեք տարի կայ հոս էիք . — Այն աստն Շարլ փողոցը կը բնակէր , թիւ յիսուն եւ եօթը . — Այս գինին ի՞նչպէս կը գտնէք . — Շատ աղէկ կը գտնեմ , բայց քիչ մը թթու է . — Ձեր քոյրը խնձորներն ի՞նչպէս կը գտնէ . — Շատ աղէկ կը գտնէ , բայց կ'ըսէ թէ քիչ մը չափազանց քաղցր են . — Այս սնակն ինծի տալու ( passer ) շնորհք ընել կ'ուզէ՞ք . — Շատ հաճութեամբ . — Ձուկերը ձեզի տալ

(passer) պէ՞տք է . — Կ'աղաչեմ որ ինձի տաք . — Հա-  
ցը ձեր քրոջը տալ պէ՞տք է . — Շնորհք ըրած կ'ըլ-  
լաք (vous l'obligerez), եթէ դայն անոր տաք . — Ձեր  
մայրը մեր խորախիկներն ի՞նչպէս կը դռնէ . — Շատ ա-  
ղէկ կը դռնէ, բայց կ'ըսէ թէ բաւական կերաւ . — Ի-  
նէ ի՞նչ կը խնդրես . — Կ'աղաչեմ որ ինձի այս ոչխա-  
րի միտէն պղտիկ կտոր մը տաք . — Շիշն ինձի տալ  
կ'ուզէ՞ք, եթէ կը հաճիք . — Բաւական չխմեցի՞ք .  
— Դեռ ոչ, քանզի գեռ ծարաւի եմ . — Ձեզի գինի  
վեցունել պէ՞տք է . — Ոչ, մրդուզն աւելի կ'ընտրեմ .  
— Ինչո՞ւ չէք ուտեր . — Ձեմ գիտեր ինչ ուտեմ .  
— Դուռն ս'ի կը դարնէ . — Օտարական մըն է . — Ին-  
չո՞ւ կը պոռայ . — Աք պոռայ, վասն զի անոր մեծ չա-  
րիք մը պատահեցաւ . — Ձեզի ի՞նչ պատահեցաւ .  
— Ինձի բան մը չպատահեցաւ . — Այս իրիկուն ս'ւր  
պիտի երթաք . — Ձեմ գիտեր ուր երթամ . — Ձեր  
եղբայրներն ս'ւր պիտի երթան . — Ձեմ գիտեր ուր  
պիտի երթան . Ինձի դալով (խկ ես), թատրոն պի-  
տի երթամ . — Ինչո՞ւ քաղաք կ'երթաք . — Հոն կ'եր-  
թամ գիրքեր գնելու . — Կ'ուզէ՞ք ինձի հետ երթալ .  
— Կ'ուզեմ ձեզի հետ երթալ, բայց չեմ գիտեր թէ  
հոն ինչ պիտի ընեմ :

196. Հրահանգ

Այս մարդուն ապառիկ ծախել պէ՞տք է . — Արնաք  
անոր ծախել, բայց ոչ ապառիկ . պէտք չէ որ անոր  
վտահիք, քանզի ձեզի պիտի չվճարէ . — Մէկը խա-  
բած է . — Արդէն ոչ սակաւ վաճառակամներ խարեց  
որոնք անոր վտահացան . — Այս աիկիններուն վըս-  
տահելո՞ւ եմ . — Անոնց կրնաք վտահիլ . բայց ինձի  
դալով, ես չեմ վտահիր, քանզի շատ անգամ խար-  
ուեցայ կամանցմէ, եւ ահա ինչու համար կ'ըսեմ .

Պէտք է ամէն մարդու վստահել . — Այս վաճառականները ձեզի կը վստահին . — Անոնք ինծի կը վրատահին , եւ ես անոնց կը վստահիմ . — Այս տեարք որո՞ւ վրայ կը խնդան . — Մեզ կը ծաղրեն , քանզի շատ գէշ կը խօսինք . — Պէտք է ծաղրել այն անձինք որ գէշ կը խօսին . — Պէտք է դանոնք ծաղրել . պէտք է , ընդհակառակն , անոնց մտիկ ընել . եւ եթէ սխալ կ'ընեն , պէտք է ուղղել . — Ի՞նչ բանի վրայ կը խնտաք . — Ձեր բեղոյրին վրայ կը խընտամ . երբէ՞ն ի վեր այսպէս մեծ ( բեղոյր ) կը կրէք . — Գերմանիայէն դալէս ի վեր . — Ձի մը եւ կառք մը գնելու միջոցներն ունի՞ք . — Միջոցներն ունիմ . — Ձեր եղբայրն այս մեծ տունը գնելու միջոցներն ունի՞ք . — Միջոցները չունի . — Ձեր հօրեղբորորդին այս ձին պիտի գնէ՞ . — Պիտի գնէ , եթէ անոր կը յարմարի . — Նամակս ընդունեցա՞ք . — Շատ հաճութեամբ ընդունեցայ . դայն ցցուցի իմ գաղիերէնի վարպետիս , որ զարմացաւ անոր մէջ սխալ մը անգամ չըլլալուն վրայ . — Գոռնէյլի եւ Պուալոյի գործերն ընդունեցա՞ք , — Պուալոյիներն ընդունեցայ . — Գոռնէյլիներուն գալով , կը յուսամ դանոնք գալ շարթու ընդունել :

## 197. Հրահանգ

Գո՞ւն ես , Շարլ , որ գիրքս ազատեցիր . — Ես չեմ , ձեր ուզտիկ քոյրն է որ ազատեց . — Գեղեցիկ կազամարս ո՞վ կոտրեց . — Ե՛ս կոտրեցի . — Իմ վրաս դո՞ւք խօսեցաք . — Ձեր վրայ մենք խօսեցանք , բայց ձեր վրայ աղէկ միայն ըսինք . — Գուռն ո՞վ կը զարհնէ . — Ես եմ . — Կ'ուզէ՞ք բանալ . — Ի՞նչ կը բաղձաք . — Կու գամ խնդրել ստակը զոր ինձ պարտիք , եւ գիրքերը զոր ձեզ փոխ տուի . — Եթէ կ'ուզէք չը-

նորոք ընել վաղիւ գալ, երկուքն ալ կու տամ. — Գաշ-  
նակ զարնողը ձեր քոյրն է. — Այն չէ. — Ո՞վ է.  
— Հօրեղբօրս աղջիկն է. — Նկողները ձեր քոյրերն  
են. — Անոնք են. — Ձեզ ծաղրողները ձեր զրացու-  
հիններն են. — Մեր զրացուհիները չեն. — Ո՞վ է.  
— Կոմսուհւոյն աղջիկներն են, որուն եղբայրը ձեր  
տունը գնեց. — Այն տիկնա՞յք են որոց վրայ ինծի  
խօսեցաք. — Անոնք են. — Գերմաներէն պիտի սոր-  
վի՞ք. — Նղբայրս եւ ես պիտի սորվինք. — Վաղը  
գեղ պիտի երթա՞նք. — Ես գեղ պիտի երթամ, եւ  
դուք քաղաքը պիտի մնաք. — Քոյրերս եւ ես օրե-  
րայի պիտի երթա՞նք. — Գուք եւ ես տունը պիտի  
մնանք, բայց ձեր եղբայրը օրերայի պիտի երթայ.  
— Ի՞նչ կ'ըսէիք, երբ ձեր դաստիարակը ձեզ կը յան-  
դիմանէր. — Բան մը չէի ըսեր, վասն զի ըսելու բան  
մը չունէի. քանզի սպարաքս (համարս) ըրած չէի,  
եւ այն իրաւունք ունէր զիս յանդիմանելու. — Ի՞նչ  
կ'ընէիք, երբ անիկա գուրան էր. — Վին կը զարնէի,  
փոխանակ ընելու ինչ որ ինծի ընել տուած էր. — Նղ-  
բայրս ձեզի ի՞նչ ըսաւ. — Ինծի ըսաւ թէ աշխարհիս  
ամենէն երջանիկ մարդը կ'ըլլար, եթէ Գաղիերէն լե-  
զուն գիտնար, ըստը լեզուաց ամենէն օգտակարը :



ԿԳ. ԴԱՍ. Soixante-troisième Leçon.

- Կնճռեալ գործերու մէջ մըտ- S'attirer ( se faire ) de mau-  
նել. Գլխուն փորձանք բերել. vaises affaires  
Գժուարութեան մէջէն ելլել. Se tirer d'affaire; se tirer  
d'une mauvaise affaire.  
Այս գժուարութեան մէջէն ե- Je me suis tiré d'affaire.  
լաւ .  
Այս մարդը միշտ կնճռեալ գոր- Cet homme s'attire toujours

- Ժերու մէջ կը մանկէ, բայց de mauvaises affaires, mais  
միշտ մէջէն կ'ելլէ. il s'en tire toujours.
- Մէջը. Entre. parmi.
- Մէկուն հետ ծանօթանալ. Faire connaissance avec  
quelqu'un. Faire la con-  
naissance de quelqu'un.
- Անոր հետ ծանօթացայ. J'ai fait sa connaissance.
- Ձանի կը ճանչնա՞ք. Le ( la ) connaissez-vous ?
- Կը ճանչնամ. Je le ( la ) connais.
- Ծանօթս է. Il ( elle ) est de ma connais-  
sance.
- Բարեկամ չէ, ծանօթ է. Ce n'est pas un ami, ce n'est  
qu'une connaissance.
- Վայելի. Jouir de. Ուրախանալ. Se réjouir de.
- Աղէկ առողջութիւն մը կը վա- Jouissez-vous d'une bonne  
յիւէ՞ք. santé ?
- Առողջ բլլալ. Se porter bien. Etre en bonne santé.
- Աղէկ, ողջ առողջ է. Elle se porte bien. Elle est  
en bonne santé.
- Երեւակայիլ. S'imaginer. Մեր նմանները. Nos semblables.  
Նմանը չունի. Il n'a pas son semblable ( son pareil ).
- Մէկուն նմանիլ. Ressembler à quelqu'un.
- Այս մարդը եղբորս կը նմանի. Cet homme ressemble à mon  
frère.
- Այս գարեջուրը ջուրի կը նմա- Cette bière ressemble à de  
նի. l'eau.
- Իրար. L'un l'autre, l'une l'autre.
- Իրարու կը նմանինք. Nous nous ressemblons.
- Իրարու չն՞ նմանիր. Ils ( elles ) ne se ressem-  
blent pas.
- Եղբայրն ու քոյրն իրար կը սի- Le frère et la sœur s'aiment  
րեն. l'un l'autre.
- Իրարմէ գո՞հ էք. Etes-vous contents l'un de  
l'autre.
- Ենք. Nous le sommes. Ինչպէս որ. Ainsi que.

Գէտնք, կերպարանք .	La mine,
Երեւիլ .	Faire mine.
Երեւցունել, կեղծել .	Faire semblant de; feindre.
Այս մարդը զբը կը տեսնէք, կը թուի թէ մեզի պիտի մո- տենայ .	Cet homme que vous voyez, fait mine de s'approcher de nous.
Մէկուն զուարթ գէտնք ցուցը- նել .	Faire bonne mine à quel- qu'un.
Մէկուն դատան գէտնք ցուցը- նել .	Faire mauvaise mine à quel- qu'un.
Երբ այս մարդը տեսնելու կ'եր- թամ, վստահակ ինծի զու- արթ գէտնք ցուցնելու, դա- տան գէտնք կը ցուցնէ .	Quand je vais voir cet hom- me, au lieu de me faire bonne mine, il me fait mauvaise mine.
Այր զուարթագէտ .	Un homme de bonne mine.
Այր ժանտաղէտ, դատան .	„ de mauvaise mine.
Ժանտաղէտ մարդիկ .	Des gens „ „
Մէկը տեսնելու երթալ .	Aller voir quelqu'un.
Այցելութիւն ընել մէկուն .	Faire une visite, կամ visite à quelqu'un.
Տեղ մը յաճախել .	Fréquenter un lieu.
Ընկերութիւններ յաճախել .	Fréquenter des sociétés.
Մէկուն քով յաճախել .	Fréquenter quelqu'un.
Երեւալ, թուիլ .	Avoir l'air.
Ի՞նչպէս կ'երեւայ .	Quelle mine a-t-il ?
Միշտ խնդալից, ախուր, գոհ կ'երեւայ .	Il a l'air enjoué, triste, con- tent.
Ասողջ կ'երեւաք .	Vous avez l'air de vous bien porter.
Քփռիկ կ'երեւաք .	Vous avez l'air d'un médecin.
Բարկացած կ'երեւայ .	Il a l'air fâché.
Գոհ կ'երեւան .	Ils ont l'air content.
Մարդասեր, բարի երեւալ .	Avoir l'air bon.
Մէկուն կենացը խմել .	Boire à quelqu'un.
Մէկուն առողջութեանը խմել .	Boire à la santé de quelqu'un.
Ձեր առողջութեանը կը խմեմ .	Je bois à votre santé.
Իմ բանս լինցած է (վճարեալ վան իմ) .	C'est fait de moi
Լինցած է (բանը բանէն տն- ցած է) .	C'en est fait.

Մէկուն վիշտ պատճառել .	Causer de la peine à quelqu'un.
Այս մարդուն վիշտ պատճառեցիք .	Vous avez causé de la peine à cet homme.
Տեղ մը .	Un endroit.
Լողալու աղէկ տեղ մը գիտեմ .	Je connais un bon endroit à nager.
Ձգալ, կրել .	Eprouver (essuyer) .
Մեծ չարիք կրեցիք .	J'ai éprouvé beaucoup de malheurs.
Երկու բախտն ալ կրեց .	Il a éprouvé l'une et l'autre fortune.
Յուեր կը զգայ .	Il éprouve des douleurs.
Գէշ ընդունելութիւն չտեսայ .	Je n'ai éprouvé aucun mauvais traitement.

Կրել, կրած, կրելով . Souffrir; souffert; souffrant. Կը կրէս . Souffres-tu ? Կը կրեմ . Je souffre. Կը կրէ . Il souffre.

ԳԻՏ. Ա. Souffrir էն ետքը աներեւոյթիք de կամ à կրնայ ունենալ . Je souffre à l'entendre se plaindre. Անոր դանդաւանիքը լսելով կը ցաւիմ . Je souffre de la voir si malade. Ձանի այնպէս հիւանդ տեսնելով կը վշտանամ .

Գլուխը, ոտքը ցաւ, տխուր ունենալ .	Souffrir de la tête, du pied.
Եւքի ցաւ ունեցայ .	J'ai souffert de l'œil.
Իւր ցաւերը կը կրէ առանց դանդաւանելու .	Il souffre ses maux sans se plaindre.

Ձանջառութիւն ընել . Négliger (de աներեւոյթէն առաջ) .  
 Տեղի տալ, զիջանել . Céder (տես Դաս ԻԳ. Գիտ. Ա.)  
 Հարկին պէտք է տեղի տալ . Il faut céder à la nécessité.

Նետուիլ, յարձակիլ . S'élançer, se jeter.  
 Կատու՝ մուկին վրայ կը նետուի . Le chat s'élançer sur le rat.  
 Ձիուն վրայ նետուիլ (ոտնուլ) . S'élançer sur le cheval.

Չուրբ նեառելի .	Se jeter dans l'eau.
Լքուքն , աճուքն .	Un surcroît.
Ի քրուքն թշուառութեան , բարեբախտութեան .	Pour surcroît de malheur, de bonheur.
Ի քրուքն թշուառութեան , քսակս կորսնցուցի .	Pour surcroît de malheur, j'ai perdu ma bourse.
Խելքը կորսնցուցի .	Perdre sa tête.
Այս մարդը խելքը կորսնցուց , բնելիքը չի դիտեր .	Cet homme a perdu la tête, et il ne sait que faire (Դաս կի. Դիտ. Ա.)
Բացարձակապէս .	A toute force, absolument.
Այս մարդը կ'ուզէ բացարձակապէս իւր ստակը փոխ տալ ինձի .	Cet homme veut à toute force me prêter son argent.
Հետեւել , հետեւած , հետեւելով .	Suivre; suivi; suivant.
Կը հետեւիմ , կը հետեւիս , կը հետեւի .	Je suis, tu suis, il suit.
Ծտակն անոր ետեւէն կ'երթայ .	Il le suit de près.
Կտեւէն իյնալ , հալածել .	Poursuivre.
Պահպանել .	Conserver (չթողուլ որ ջնջուի) .

498. Հրահանգ

Ինչո՞ւ այս մարդոց քով կը յաճախէք . — Կը յաճախեմ , վասն զի ինձի օգտակար են . — Եթէ անոնց քով յաճախելու կը շարունակէք , ձեր գլխուն փորձանք կը բերէք , քանզի անոնք շատ թշնամի ունին . — Ձեր եղբայրն ի՞նչպէս կը վարուի . — Շատ աղէկ չի վարուիր , քանզի միշտ փորձանքի կը հանդիպի . — Երբեմն ձեր գլխուն փորձանք չէ՞ք բերեր ? — Ճշմարիտ է որ երբեմն կը բերեմ , բայց միշտ մէջէն կ'ելլեմ . — Կը տեսնէ՞ք սա մարդիկը որ մեզի մօտենալ կը ցուցնեն . — Կը տեսնեմ , բայց անոնցմէ չեմ վախնար . քանզի մէկու չարիք չէն ըներ . — Պարտինք հեռա-

նալ, քանզի չեմ սիրեր խառնուիլ մարդոց մէջ զորս չեմ ճանչնար. — Վաղաչեմ, մի վախնաք. քանզի հօրեղբայրս անոնց մէջ կը տեսնեմ. — Լողալու համար ողէկ տեղ մը գիտէ՞ք. — Հատ մը գիտեմ. — Ո՞ր է. — Գետակին անդին, անտառին ետին, մեծ ճամբուն մօտ. — Ե՞րբ երթանք լողալու. — Այս իրիկուն, եթէ կամիք. — Քողքին դրանն առջին ինծի սպասել կ'ուզէ՞ք. — Հոն ձեզ կը սպասեմ. բայց կ'աղաչեմ որ չի մոռնաք. — Գիտէ՞ք որ խոստումներս չեմ մոռնար. — Այս տիկնոջ հետ ո՞ր ծանօթութիւն ունեցաք. — Անոր հետ աղքատականներէս մէկուն առնը ծանօթութիւն ունեցայ. — Ինչո՞ւ ձեր հօրեղբորդին ինէ ստակ եւ գիրք կ'ուզէ. — Վասն զի յիմար է. քանզի ինէ՞ որ անոր ամենէն մօտ աղքատականն եմ եւ լաւադոյն բարեկամը բան մը չուզեր. — Ինչո՞ւ ճաշելու չեկաք. — Արդեւուեցայ, բայց դուք առանց ինծի կրցաք ճաշել. — Արդեւ կարծէք որ պիտի չճաշե՞նք, եթէ դուք չէք կրնար դալ, — Մինչեւ ե՞րբ ինծի սպասեցիք. — Մինչեւ ժամը եօթը քառորդ անցած ձեզի սպասեցինք. եւ որովհետեւ չեկաք, առանց ձեզի ճաշեցինք. — Իմ առողջութեանս խնայի՞ք. — Ձեր եւ ձեր ծնողաց առողջութեանը խնայինք :

#### 499. Հրահանգ

Ձեր հօրեղբայրն ի՞նչ դէմք ունի ( ի՞նչպէս կ'երեւայ ). — Շատ զուարթ կ'երեւայ, քանզի իւր աղոյսմէն շատ գոհ է. — Անոր բարեկամներն անոր չափ զուարթ դէմք ունին. — Ընդհակառակն, ախուր դէմք ունին, քանզի տժգոհ են : Հօրեղբայրս ստակ չունի եւ միշտ գոհ է, եւ անոր բարեկամները, որ շատ ( ստակ ) ունին, գրեթէ երբէք ( գոհ ) չեն. — Ձեր քոյրը կը սիրէ՞ք. — Շատ կը սիրեմ, եւ որովհետեւ դէպ

գիտ մարդասէր է, ես ալ դէսլ առ նա այնպէս եմ.  
բայց դուք ձերինն ինչո՞ւ կը սիրէք. — Իրար կը սի-  
րենք, քանզի միշտ իրարմէ դո՛ւ ենք. — Մարդ մը  
գինին կը սիրէր, բայց անոր վրայ երկու գէշ յատկու-  
թիւն կը դանէր. « Նթէ ջուր կը դնեմ, կ'ըսէր, կ'ա-  
պականեմ զայն. եւ եթէ չեմ դներ, այն գիտ կ'ապա-  
կանէ » . — Ձեր հօրեղբորորդին ձեզի կը նմանի՞ . — Ար  
նմանի . — Ձեր քոյրերն իրար կը նմաննին . — Իրար չեն  
նմանիր . քանզի մեծը ծոյլ եւ չար է . խկ պղտիկը  
յարատեւ եւ մարդասէր է դէսլ առ ամենայն ոք : — Ձեր  
մօրաքոյրն ի՞նչպէս է . — Շատ աղէկ է . — Ձեր մայրն  
առողջութիւն կը վայելէ՞ (ողջ առողջ է) . — Առող-  
ջութիւն վայելել կ'երեւակայէ, բայց կարծեմ թէ կը  
խարտի . քանզի վեց ամիս է որ գէշ հազ ունի որմէ  
չի կրնար ազատիլ . — Այս մարդը ձեզի գէմ նեղացած  
է . — Արծեմ թէ նեղացած է ինծի դէմ, քանզի դնա  
տեսնելու չեմ երթար . բայց չեմ սիրեր անոր տունը  
երթալ, քանզի երբ հոն կ'երթամ, զիս փոխանակ հա-  
ճութեամբ ընդունելու, տժգո՛հ կ'երեւայ . — Պէտք չէ  
այսպէս կարծել, ձեզի գէմ նեղացած չէ, քանզի այն-  
չափ շար չէ որչափ կ'երեւայ : Աշխարհիս ամենէն ա-  
ղէկ մարդն է . բայց պէտք է դանի ճանչնալ անոր  
յարդը գիտնալու համար (apprécier) . — Ձեր եւ անոր  
մէջտեղ մեծ տարբերութիւն մը կայ . դուք դուարթ  
գէմք կը ցուցնէք ձեզ տեսնել եկողներուն, խկ այն՝  
գէշ գէմք կը ցուցնէ :

200. Հրահանգ

Այսպէս ամէն մարդ ծաղրել կը վայլէ՞ . (est-ce bien?) .  
— Նթէ ձեր հանդերձը կը ծաղրեմ, ամէն մարդ չեմ  
ծաղրեր (ձեր հանդերձը ծաղրելով ամէն մարդ ծաղ-  
րած կ'ըլլամ) . — Ձեր որդին մէկուն կը նմանի՞ . — Մէ-

կու՛ն չի նմանիր . — Ինչո՞ւ չէք խմեր . — Ձեւ գիտեր ինչ խմում , քանզի աղէկ գինին կը սիրեմ , իսկ ձերինը քացախի կը նմանի . — Եթէ ուրիշ կ'ուզէք , մաւաանն իջնեմ ձեզի բերելու . — Չափազանց քաղաքավար ( poli ) էք , տէր , այսօր չեմ խմեր . — Շատո՞նց է որ հայրս կը ճանչնաք . — Շատոնց է որ կը ճանչնամ , քանզի անոր հետ ծանօթացած եմ , երբ դեռ դպրոցն էի : Յաճախ իրարու համար կ'աշխատէինք . եւ իբրեւ եզրարք՝ իրար կը սիրէինք . — Ար հաւատամ , քանզի իրարու կը նմանիք . — Երբ համարներս ըրած չէի ըլլար , այն կ'ընէր ինծի համար . եւ երբ այն իրեններն ըրած չէր ըլլար , ես անոր համար կ'ընէի . — Ինչո՞ւ ձեր հայրը բժիշկը կանչել կու տայ . — Հիււանդ է , եւ որովհետեւ բժիշկը չի գար , կանչել կու տայ զանի . — Ո՛հ , վճարեալ է վասն իմ . — Բայց , տէր Աստուած , ինչո՞ւ այսպէս կը պոռաք . — Ոսկիէ մասնիս , ամենէն ազնիւ հանգերձներս եւ բոլոր ըստակս գողցուեցան . ահա ինչու համար այսպէս կը պոռամ . — Այնչափ աղմուկ մ'ընէք , քանզի մենք առինք այս ամէնը ձեզի սորվեցնելու համար որ ձեր բաներուն աւելի հող տանիք , եւ ձեր սննեկին գուռը գոցէք , երբ դուրս կ'ելէք . — Ինչո՞ւ այսպէս տխուր կ'երեւաք . — Մեծամեծ դժբախտութիւններ կրեցի , բոլոր ստակս կորսնցնելէն ետքը , ժանտաղէմ մարգիկներէ ծեծուեցայ , եւ ի լրումն թշուառութեան , կը լսեմ որ բարի հօրեղբայրս զոր այնչափ կը սիրեմ , կաթուածէ զարնուած է . — Պէտք չէ որ այնչափ վշտանաք , քանզի գիտէք որ պէտք է անզի տալ հարկին :



ԿԳ. ԳԱՍ. Soixante-quatrième Leçon.

ԳԻՏ. Ա. ԻՆՔ, յ՛րջափ, ԻՆՔսփս, զարմացական բառերը Գաղիերէն զո՞ւ ո՞վ կը բացատրուին :

Ի՞նչ բարի էք . Que vous êtes bon ! Que de bonté vous avez !  
 Ի՞նչպէս անմիտ է . Qu'il est sot !

Ինչպէս երկրորդ օրինակէն կը տեսնուի, երբ զո՞ւ կ'ըսէք գոյականն մը կուգայ, գոյականը de նախադրուած իւնը կ'աւելու, եւ յ՛րջափ կը նշանակէ .

Ի՛րջափ բարութիւն ունիք ինձ . Que de bonté vous avez pour  
 ձի համար . moi !

Ի՛րջափ պարտաւորութիւն ունի՞մ ձեզի . Que d'obligations je vous ai !

Ի՞նչ անմիտ է ( իդ . ) . Qu'elle est sotté !

Ի՞նչ հարուստ է այս մարդը . Que cet homme est riche !

Մէկուն պարտաւորութիւն ունենալ, այսինքն՝ երախտապարտ ըլլալ . }  
 } Avoir des obligations à quelqu'un.

Անոր շատ երախտապարտ եմ . Je lui ai beaucoup d'obligations.

Ի՛րջափ բաղմունքիւն . Que de monde ! Ի՞նչ երջանիկ էք  
 Que vous êtes heureux ! Ո՛րջափ հարստութիւն ունի այս  
 մարդը . Que de richesses cet homme a ! կամ, a cet homme !  
 Ո՛րջափ ստակ վատած է այս մարդը իւր կենաց մէջ . Que d'argent  
 cet homme a dépensé dans sa vie !

Մէկուն բանի մը համար երախտապարտ ըլլալ . }  
 } Etre obligé à quelqu'un de quelque chose.  
 } Etre redevable à quelqu'un de quelque chose.

Անոր երախտապարտ եմ . Je lui en suis redevable.

Շնորհակալ ըլլալ . Remercier ( անձին անունը հայ-  
 ցական եւ իրին անունը սեռական կը դրուի ) :

Ինծի համար ձեր կրած աշխատութեանը շնորհակալ եմ, Je vous remercie de la peine que vous avez prise pour moi.

Ասկէ աւելի ի՞նչ մեծ բան կայ . Qu'y a-t-il de plus grand ?

Ասկէ աւելի անգութ բան մը կայ . Y a-t-il rien de plus cruel ?

Ասկէ աւելի ի՞նչ չար բան կայ . Qu'y a-t-il de plus méchant ?

Աւելի գեղեցիկ բան մը կայ . Est-il rien de plus beau ?

Ո՞րչափ մեծ . De quelle grandeur ? Ո՞րչափ բարձր . De quelle hauteur ?

Ո՞րչափ խորունկ . De quelle profondeur ?

ԳԻՏ. Գ. Չափ ցուցնելու համար Գաղիներէն avoir բայը կը գործածուի, եւ չափ ցուցնող անկանէն կամ գոյականէն առաջ de կը դրուի :

Անոր տունը ո՞րչափ բարձր է . Combien sa maison a-t-elle de haut կամ de hauteur ?

Իբր յիսուն ոտք բարձր է . Elle a environ cinquante pieds de haut կամ de hauteur.

Մեր տունը երեսուն ոտք լայն է . Notre maison a trente pieds de large կամ de largeur.

Այս սեղանը վեց ոտք երկայն է . Cette table a six pieds de long կամ de longueur.

Այս գետակը քսան ոտք խոր է . Cette rivière a vingt pieds de profondeur.

Հասակը (պոյ) . La taille. Ճշմարիտ . Vrai.

Ի՞նչ հասակ ունի այս մարդը . De quelle taille cet homme est-il ?

Այս աղան ի՞նչպէս հագուած էր . Comment cet enfant était-il habillé ?

Կանաչ հագուած էր . Il était habillé de vert.

Կապոյտ վերարկուով մարդը . L'homme à l'habit bleu.

Կարմիր շրջագետտով կինը . La femme à la robe rouge.

Ճշմարիտ է որ անոր տունն այրեցաւ . Est-il vrai que sa maison est brûlée ?

Ճշմարիտ է .	C'est vrai.
Ճշմարիտ չէ՞ .	N'est-ce pas ? <i>կամ</i> n'est-il pas vrai ?
Ինքեւս .	Peut-être.
Ինքեւս կ'երթամ .	J'irai peut-être.
Մասնակցիլ .	Partager.
Որո՞ւ .	A qui ? ( <i>Դաս</i> ԻԱ. և ԻԹ. )
Այս ձին որո՞ւ է .	A qui est ce cheval ?
Իմն է .	C'est le mien, <i>կամ</i> il est à moi.
Այս ձիերն որո՞ւ են .	A qui sont ces chevaux ?
Իմիններս են .	Ce sont les miens <i>կամ</i> ils sont à moi.
Այս տունն որո՞ւ է .	A qui est cette maison ?
Իմն է .	C'est la mienne, <i>կամ</i> elle est à moi.
Այս տուներն որո՞ւ են .	A qui sont ces maisons ?
Իմիններս են .	Ce sont les miennes, <i>կամ</i> elles sont à moi.
Դիմել, գալ փութով .	Accourir.
Շատ մարդիկ փութով եկան, բայց փոխանակ կրակը մարելու, թշուառականներն սկսան կողապակել .	Beaucoup d'hommes étaient accourus, mais au lieu d'éteindre le feu, les misérables s'étaient mis à piller.
Մէկուն օգնութեան դիմել, գալ .	Accourir au secours de quelqu'un.
Փրկել. Sauver.	Կողապակել. Piller.
Մէկուն կեանքն աղապակել .	Sauver la vie à quelqu'un.
Բանի մը սկսել .	Se mettre à quelque chose.
Սկսել .	Commencer, se mettre à.
Սկսաւ խնդալ .	Il se mit à rire.
Կրցա՞ն հրդեհը մարել .	Est-on parvenu à éteindre le feu ?
Կրցան, յաջողցան .	On y est parvenu.
Ժամացոյցը ժամերը կը ցուցնէ .	La montre marque les heures.
Յաւցնել .	Marquer, indiquer.

Բան մը մէկուն ջուջնել .	Indiquer quelque chose à quelqu'un.
Կազել, կռուիլ .	Se quereller.
Մէկուն հետ կազել .	Quereller quelqu'un.
Բանի մը վրայ վիճել .	Disputer sur quelque chose.
Այս մարդիկն ի՞նչ բանի վրայ կը վիճին .	Sur quoi ces gens di- sputent-ils ?
Կը վիճին ( կը մրցին ) թէ ով առաջ պիտի երթայ .	Ils disputent à qui ira le premier.
Այսպէս . Ainsi.	Չգիտնալ . Ignorer.
Առջի, նախընթաց իրիկունը .	La veille.
Այն օրուան առջի իրիկունը շաբաթ էր .	La veille de ce jour-là était un samedi.
Կիրակիին նախընթաց իրիկու- նը շաբաթ է .	La veille du dimanche est le samedi.

## 201. Հրահանգ

Այս մարդէն չէ՞ք կրնար ազատիլ ( se débarrasser ) .  
—Չեմ կրնար անկէ ազատիլ, քանզի բացարձակա-  
պէս կ'ուզէ ետեւէս գալ . —Խեղքը կորսնցուցած չէ՞ .  
—Կարելի է . —Ի՞նչ կ'ուզէ ձեռնէ . —Ինծի ձի մը ծա-  
խել կ'ուզէ, զոր չեմ գիտեր ինչ ընեմ . —Այս տու-  
ներն որո՞ւ են . —Իմն են . —Այս գրիչները ձեզի՞  
կը վերաբերին . —Ոչ, քրոջս կը վերաբերին . —Ա՞յն  
գրիչներն են որոցմով այնպէս գեղեցիկ կը գրէ . —Նոյ-  
ներն են . —Որո՞ւ է այս հրացանը . —Հօրս է . —Այս  
գիրքերը ձեր քրոջն են . —Անորն են . —Որո՞ւ է  
այս կառքը . —Իմն է . —Ո՞վ է մարդը որմէ կը դան-  
դատիք . —Կարմիր վերաբիւ կրողն է . — « Ի՞նչ  
տարբերութիւն կայ ժամացուցի մը եւ իմ մէջտեղ »,  
հարցուց տիկին մը երիտասարդ պաշտօնակալի մը .  
— « Տիկին », պատասխանեց ասիկա, « ժամացոյց մը  
ժամերը կը ցուցնէ . իսկ ձեր քով մարդ զանոնք կը  
մտնայ » . —Բուսիացի գիւղա-կան մը որ էչ տեսած

չէր՝ անոնցմէ ոչ սակաւ տեսնելով Գաղիա , ըսաւ , « Տէր Աստուած , ի՞նչ մեծ նապաստակներ կան այս երկրին մէջ » . — Մրշափ երախտապարտ եմ ձեզ , սիրելի բարեկամս , կեանքս փրկեցիք . առանց ձեզ վճարեալ էր վասն իմ . — Այս թշուառականները ձեզի վնաս բրին . — Ձիս ծեծեցին եւ գողցան , եւ երբ դաք ինձի օգնութեան եկաք , դիս հանուեցնելու եւ սպաննելու վրայ էին . — Նրջանիկ եմ ձեզ աշատելու ( délivrer ) այն աւազակներուն ձեռքէն . — Ի՞նչ բարի էք :

202. Հրահանգ

Այս իրիկուն Պարոն Ա. ի տունը պիտի երթա՞ք . — Թերեւս կ'երթամ . — Ձեր քոյրերն ալ պիտի երթան . — Թերեւս անոնք ալ պիտի երթան . — Նրէկ նուազածութեան ատեն դբօսա՞ք . — Չդբօսայ , քանզի այնչափ մարդ կար որ հաղիւ կը մանուէր . — Ձեզի սիրուն ընծայ մը կը բերեմ որմէ շատ գոն պիտի ըլլաք . — Ի՞նչ է . — Մետաքսէ փողպատ մըն է . — Ո՞ւր է . — Դրպանիս մէջ ունիմ ( դրպանիս մէջն է ) . — Ձեզի հաճո՞յ է . — Շատ հաճոյ է , եւ բոլոր սրտով շնորհակալ եմ . — Կը յուսամ թէ վերջապէս ինէ բան մը պիտի ընդունիք . — Ինձի ի՞նչ տալու միտք ունիք . — Ձեզի ըսել չեմ ուզեր . քանզի եթէ ըսեմ , հաճութիւն պիտի չունենաք երբ տամ . — Շուկան՝ մէկը տեսա՞ք . — Շատ մարդ տեսայ . — Ի՞նչպէս հագուած էին . — Ոմանք կապոյտ հագուած էին , ուրիշները կանաչ , այլք դեղին , եւ ոչ սակաւք՝ կարմիր . — Այս մարդիկն ո՞վ են . — Այն որ գորշ հագուած է՝ դրացիս է , եւ սեւագգեստ մարդը բժիշկն է որոյ որդին իմ դրացւոյս գաւազանի հարուած մը տուաւ . — Կանաչ հագուած մարդն ո՞վ է . — Ազգականներէս

մին է . — Ձեր երկրին մէջ շատ փիլիսոփաներ կան .  
 — Ձերինն մէջ եղածին չափ կան . — Այս բեղոյն  
 ինծի ի՞նչպէս է . — Ձեզի շատ ազէկ է . — Այս վե-  
 րարկուն ձեր եղբօրն ի՞նչպէս է . — Շատ սքանչելի  
 է . — Ձեր եղբայրը ձեզի չափ մեծ է . — Ինչ մեծ է ,  
 բայց ես անկէ տարուք եմ . — Այս մարդուն հասակն  
 ի՞նչ է . — Հինգ ոտք չորս մատ է . — Ձեր պանդո-  
 կապետին տունը ռըչափ բարձր է . — Այլ թառն ոտք  
 բարձր է . — Ձեր հօրը խորճանկ է . — Այո , աէր ,  
 յիսուն ոտք խոր է . — « Հոսմ շատ դիտուններ կան ,  
 այնպէս չէ » , կը հարցունէր Միլտոն Հոտմայեցոյ մը .  
 — « Ոչ այնչափ որչափ երբ դուք հոն էիք » , պա-  
 տասխանեց ասիկա :

### 203. Հրահանգ

Ճշմարիտ է որ ձեր հօրեղբայրն հասաւ . — Ա՛պա-  
 հովեմ ձեզ որ հասաւ . — Ճշմարիտ է որ թաղաւորը  
 ձեզ ապահովցուց իւր օգնութեան վրայ ( ձեզի օղ-  
 նութիւն խոստացաւ ) . — Ա՛պահովեմ ձեզ որ ճշմա-  
 րիտ է . — Ճշմարիտ է որ վեց հազար մարդիկը որոյ  
 կը սպասէինք , հասան . — Ըսուելը լսեցի . — Ա՛ու-  
 ղէ՞ք մեզի հետ ճաշել . — Ձեմ կրնար ձեզի հետ ճա-  
 շել , քանզի նոր կերայ . — Ձեր եղբայրը դաւաթ մը  
 գինի խմել կ'ուզէ . — Ձի կրնար խմել . կը վտահացը-  
 նեմ ձեզ որ նոր խմեց . — Ինչո՞ւ այս մարդիկը կը  
 կուտին . — Ար կուտին , քանզի չեն գիտեր թէ ինչ  
 ընեն . — Արալը մարելու յաջողեցա՞ն . — Յաջողեցան .  
 բայց կ'ըսուի թէ ոչ սակաւ տուներ այրեցան . — Բան  
 մը չկրցա՞ն ազատել . — Բան մը չկրցան ազատել ,  
 քանզի վոխանակ հրդեհը մարելու , եկող թշուառ-  
 կաններն սկսան կողոպտել . — Ի՞նչ պատահեցաւ .  
 — Մեծ դժբախտութիւն մը պատահեցաւ . — Բարե-

կամենեալ ինչո՞ւ առանց ինձի դացին . — Մինչև կէս օր ձեզի սպասեցին . եւ տեսնելով որ չէք դար , մեկնեցան . — Երկուշարթիին նախընթաց իրիկունն ի՞նչպէս կը կոչուի . — Երկուշարթիին նախընթաց իրիկունը կիրակի է . — Ինչո՞ւ համար օգնութեան չվազեցիք ձեր դրացոյն որուն տունն այրեցաւ . — Բոստրովին անգէտ էի ( ignorer ) թէ կրակն անոր տունը բռնած էր . քանզի եթէ դիտցած ըլլայի , անոր օգնութեան կը դիմէի :



ԿԵ. ԴԱՍ. Soixante-cinquième Leçon.

- Առաջագրել , մտաք դնել . Se proposer ( աներեւոյթք de ով ) .
- Այս ճամբորդութիւնն ընելու կ'առաջագրեմ . Je me propose de faire ce voyage .
- Որտե՞ մը երթալ կ'առաջագրէ . Il se propose d'aller à une partie de chasse .
- Մաս մը ( խաղ ) նարտ . Une partie d'échec .
- Մաս մը զնդակախաղ . Une partie de billard .
- Մաս մը թուղթ . Une partie de carte .
- Յաջողել . Réussir ( աներեւոյթք à ով ) .
- Ասիկա ընելու կը յաջողի՞ք . Réussissez-vous à faire cela ?
- Կը յաջողի՞մ . Je réussis .
- Չանալ . Tâcher ( աներեւոյթք de ով ) .
- Ի՞նչէ կը ջանամ . Je tâche de la faire .
- Յաջողել կը ջանամ . Je tâché d'y Réussir .
- Աւելի աղէկ ընելու ջանացէ՛ք . Tâchez de le bien faire .
- Որովհետեւ . Puisque, comme . երբ . lorsque .
- Որովհետեւ երջանիկ էք , ի՞նչո՞ւ կը գանդատիք . Puisque vous êtes heureux, pourquoi vous plaignez-vous ?

- Արովհետեւ հաս եմ, կը մնամ. Puisque je suis ici, j'y reste.  
Բանի մը տեղեակ ըլլալ. Etre au fait de quelque chose (en être bien instruit).
- Հասկնալ (բանէ մը), դիտնալ. S'entendre à . . . , savoir.  
Բանի մը տեղեկանալ. Se mettre au fait de quelque chose.
- Այս մարդն այս գործին տեղեակ է. Cet homme est au fait de cette affaire.  
Այս բանին տեղեակ եմ. Je suis au fait de cela, կամ je m'y entends.
- Ի վեր, հետէ. Depuis; dès.  
Այն վայրկեանէն ի վեր. Depuis ce moment.  
Երեսասարդութենէս, ծննդեանէս ի վեր, Depuis ma jeunesse; dès sa naissance.  
Մանկութենէն ի վեր. Dès l'enfance.  
Առաւօտէ մինչեւ ցերեկոյ. Depuis le matin jusqu'au soir; du matin au soir.  
Սկիզբէն մինչեւ վերջը. Depuis le commencement jusqu'à la fin.  
Ասկէ մինչեւ հան. Depuis ici jusque là, կամ d'ici là.
- Այս գիրքն երկու տարիէ ի վեր ունիմ. J'ai ce livre depuis deux ans.  
Երեք տարուքէն ի վեր Բարիդ կը բնակիմ. Je demeure à Paris depuis trois ans.
- Փչել. Souffler. Կրակը, քրտը մը փչել. Souffler le feu, une lumière.
- Նուազեցնել, վերածել. Réduire; réduire; réduisant.  
Կը վերածնու. Réduis-tu? Կը վերածեմ. Je réduis Կը վերածէ. Il réduit.
- ԳԻՏ. Ա. Réduire բային սլէս կը խոսարհին ,
- Թարգմանել, Traduire. Յառաջ բերել, Produire, Եղծանել, Détruire. Կառուցանել, Construire. Մտածանել, Introduire.
- Գինը նուազեցնել, իջեցնել. Réduire le prix.  
Թարգմանել թարգմանել. Traduire en français.

Գարջիերէնէ Գերմաներէնի Թարգմանել .	Traduire du français en allemand.
Մէկ լեզուէ ուրիշի մը Թարգ- մանել .	Traduire d'une langue dans une autre.
Ձեր քով կը մտնամեմ, ձեզի կը ներկայացնեմ .	Je l'introduis chez vous; je vous le présente.
Նոյն իսկ . իսկ . ինքն .	Même. յոք. mêmes.
Ես ինքն .	Moi-même. Դու ինքն .
Նա ինքն .	Lui-même (իդ.) Elle même.
Մէք ինքնին .	Nous-mêmes. Դուք ինքնին .
Անանք ինքնին .	Eux-mêmes. (իդ.) Elles-mêmes.
Ինքն իսկ .	Soi-même (անձը անորոշ խօսքերու մէջ) .
Ինքն իսկ բառ ինձի .	Il me l'a dit lui-même.
Ինձի իսկ բառ .	Il (me) l'a dit à moi-même.
Ներդիմը շողջարթել չուզուիր .	On n'aime pas à se flatter soi-même.
Անգամ, իսկ .	Même (միդ.)
Ոչ իսկ .	Ne pas même.
Նորարքն անգամ զանի չեն սիրեր .	Même ses frères ne l'aiment pas.
Հոյ գնելու անգամ բաւական ստակ չուի .	Il n'a pas même assez d'argent pour acheter du pain.
Պէտք է ամէն մարդ սիրել, իւր Թշնամիներն անգամ .	Il faut aimer tout le monde, même ses ennemis.
Նորէն .	De nouveau, derechef.
Նորէն կը խօսի .	Il parle de nouveau.
Իջնել, իյնալ (գինը) .	Baisser, tomber (ԾԱ. Գ.սս) .
Վաճառքին (ապրանքին) գինը կ'իջնէ .	La marchandise baisse de prix.
Կտարել (գինէն) .	Rabattre Կտես Batre Գ.սս Է.Գ.)
Աւերջնել (գինը, գրան գնել) .	Surfaire (faire le plus) .
Վրոյ դրած (աւելի պահանջած) չբլլաւու համար, չեմ կրնար կտարել (իջե- ցնել) գինը .	Ne vous ayant pas surfait, je ne saurais rien rabattre.

Աստուծոյ մը .	Une aune.
Բերել ( եկամուտ ) .	Rapporter.
Այս պաշտօնը ձեզի տարիէ սըլսփ կը բերէ .	Combien cet emploi ( cette charge ) vous rapporte-t-il ( elle ) par an ?
Պաշտօն մը , տեղ մը .	Un emploi, une charge.
Փախչել , խոյս տալ .	Prendre la fuite.
Լքանել , դատարիչ ըլլալ .	Désertier.
Կախը թողուց , փախաւ .	Il a déserté la bataille.
Փախչել , ճաղարեւել ( կծիկը դնել ) .	S'évader.
Գողը փախաւ , ճաղարեցաւ .	Le voleur s'est évadé.
Ամենեւին , բնաւ .	Pas du tout, aucunement, point du tout.

204. Հրահանգ

Ձեր քոյրն յառաջագիտութիւն կ'ընէ՞ . — Ա'ընէր , եւ  
թէ ձեզի չափ յարատեւ ըլլար . — Չէս կը շողոքոր-  
թէք . — Ամենեւին . կ'սպահովեմ ձեզ որ շատ դո՛ւ  
կ'ըլլայի , եթէ բոլոր աշկերտներս ձեզի պէս աշխա-  
տէին . — Այսօր ինչո՞ւ դուրս չէք ելլեր . — Ա'ելլէի ,  
եթէ օլը գեղեցիկ ըլլար . — Ձեզ վաղը տեքնելու հա-  
ճութիւնը պիտի ունենամ . — Եթէ կը բողձաք , կու  
դամ . — Ձեր համնելուն գեա հոս պիտի ըլլամ . — Այս  
իրիկուն քաղաք երթալու սրտեհութիւնը ( առիթը )  
պիտի ունենամք . — Ձեմ գիտեր , բայց հիմա կ'երթա-  
յի , եթէ աղէկ սրտեհութիւն մը ունենայի . — Այն-  
չափ հաճութիւն պիտի չունենայիք , եւ այնպէս եր-  
ջանիկ պիտի չըլլայիք , եթէ բարեկամներ եւ գիրքեր  
չունենայիք . — Մարդ իւր ( կենաց ) ընթացքին մէջ  
այնչափ թշուառութիւն ( misère ) պիտի չկրէր ( չզգար )  
եւ այնպէս ողորմելի պիտի չըլլար , եթէ այնպէս կար  
չըլլար . — Ուրիշներուն համար այն անզգայութիւնը

պիտի չունենայիք եւ անոնց աղաչանացն այնպէս խուչ  
 պիտի չըլլայիք, եթէ դուք ալ ատեն մը թշուառու  
 թեան մէջ եղած ըլլայիք. — Ասիկա չէիք ըսեր, եթէ  
 դիւ քաջ ճանչնայիք. — Ձեր քոյրն ինչու իւր համար-  
 ները չըրաւ. — Ըրած կ'ըլլար, եթէ արգելուած չըլ-  
 ար. — Եթէ աւելի աչիտառէիք եւ աւելի յաճախ խօ-  
 սէիք, աւելի աղէկ պիտի բացատրէիք (ձեր միտքը).  
 — Ձեզ կ'աղանովցնեմ որ աւելի աղէկ կը սորվէի, եթէ  
 աւելի ժամանակ ունենայի. — Ձենէ չեմ դանդատիր,  
 այլ ձեր քոյրմէն. — Գուք տեղի (պատճառ) չէիք ու-  
 նենար անկէ դանդատելու, եթէ անիկա ժամանակ ու-  
 նեցած ըլլար ընել՝ ինչ որ ընելու համար անոր տուիք.  
 — Գիտէ՞ք ինչ պատահեցաւ. — Բան մը չլսեցի (բա-  
 նի մը վրայով խօսուիլը չլսեցի). — Մեր գրայւոյն  
 առենն այրեցաւ. — Բան մը չկրցա՞ն ազատել. — Շատ  
 բախտաւոր եզան որ հոն եղած անձինք ազատել կըլ-  
 ցան. բայց հոն գտնուած կարասիներէն (effet) բան  
 մը չկրցան ազատել. — Ասիկա ձեզի ո՞վ ըսաւ. — Նոյն  
 իսկ մեր գրացին ըսաւ :

205. Հրահանգ

Ինչո՞ւ անանց ճրագի էք. — Հովը փչեց զայն (մա-  
 րեց), երբ դուք մտաք. — Այս ասուիին զինն ի՞նչ  
 է. — Կանգու՛նք երեք ու կէս սկուտի կը ծախեմ զայն.  
 — Շատ սուղ կը դանեմ (է). — Ասուիին զինը չիջա՛ւ.  
 — Զիջաւ. բոլոր վաճառաց զինն իջաւ, բայ ի աս-  
 ուիինէն. — Երեք սկուտ կու տամ. — Այս դնով չեմ  
 կրնար թողուլ (սալ) ձեզի, քանզի ինծի աւելի  
 կ'արժէ. — Կ'աւղէ՞ք շորո՞ք ընել ցցունել ինծի անդ-  
 ղիական ասուիի կտոր մը (թօփ). — Շատ հաճու-  
 թեամբ. — Այս ասուին ձեզի կը յարմարի՞. — Զի յար-  
 մարիր. — Ինչո՞ւ չի յարմարիր. — Ես ան զի չափա-

դանց սուղ է . եթէ անկէ բան մը կոտորել կ'ուզէք քսան կանգուն կը գնեմ . — Աւելի չպահանջելու համար՝ բան մը չեմ կրնար կոտորել . — Քաղիերէն կը սորվիք . ձեր վարպետը ձեզի թարգմանել կու տայ . — Կարգալ , գրել եւ թարգմանել կու տայ . — Օտար ընդու մը սորվելու ատեն (սորվելով) թարգմանել օգտակար է . — Յատակար է , եթէ մարդ սորված ընդուն գրեթէ գիտէ . բայց երբ մարդ դեռ բան մը չի գիտեր , ասիկա (թարգմանելը) բարորակն անօգուտ է . — Ձեր գաղիերէնի վարպետը ձեզի ի՞նչ ընել կու տայ . — Ինծի դաս մը կարգալ կու տայ . յետոյ Քերմաներէն համարներ Քաղիերէնի թարգմանել կու տայ մեր կարգացած դասին վրայ . եւ դասին ակիզքէն մինչեւ վերջը Քաղիերէն կը խօսի , եւ ինծի պէտք է որ անոր նոյն ընդուաւ պատասխանեմ . — Այս եղանակաւ շատ սորվեցա՞ք . — Կը տեսնէք որ արդէն բան մը սորված եմ , քանզի հազիւ երեք ամիս կայ որ Քաղիերէն կը սորվիմ , եւ արդէն ձեզ կը հասկնամ , երբ ինծի կը խօսիք , եւ կրնամ պատասխանել . — Կրնա՞նք այնպէս աղէկ կարգալ . — Այնպէս աղէկ զիտեմ կարգալ եւ գրել , ինչպէս խօսել . — Ձեր վարպետը Քերմաներէն ալ կը սորվեցնէ՞ . — Կը սորվեցնէ . — Անոր հետ ծանօթանալ բաղձալով , ձեզի պիտի ազաչեմ զիս անոր քով մուծանելու :

## 206. Հրահանգ

Օրը քանի՞ համար կը թարգմանէք . — Եթէ համարները գծուարին չեն , նրկու երեք (հաս) կը թարգմանեմ օրը , եւ երբ գծուարին են , հաս մը միայն կը թարգմանեմ . — Այսօր ս'ըջափ բրիք . — Նորոքն է որ կը թարգմանեմ . բայց վաղը կը յուսամ թէ կրնամ հաս մը աւելի ընել , քանզի մինակ պիտի ըլլամ . — Հօ-

բաքրոջ ալցելութիւն ըրի՞ք . — Երկու ամիս է որ  
 դանի տեսնելու գացի , եւ որովհետեւ ինծի գէշ գէժք  
 բրաւ , այն ժամանակէն ի վեր այլ եւս անոր տունը  
 չգացի . — Այսօր ի՞նչպէս էք . — Շատ գէշ եմ . — Այս  
 ապուրն ի՞նչպէս կը դասէք . — Շատ գէշ կը դասեմ .  
 բայց յորմէ հետէ ախորժակս կորսնցուցի , բան մը ին-  
 ծի աղէկ չի թուիր . — Այս պաշտօնը ձեր հօրը սրջափ  
 ( եկամուտ ) կը բերէ . — Չորս հազար սկուտէն աւելի  
 կը բերէ . — Նորէն ի՞նչ կ'ըսուի . — Նորէն բան մը  
 չըսուիր . — Այլազիւ ի՞նչ ընելու միտք ունիք . — Որ-  
 սի մը երթալու դիտաւորութիւն ունիմ ( կ'առաջա-  
 դրեմ ) . — Ձեր եղբայրը դիտաւորութիւն ունի՞ մաս  
 մը ( բարթի մը ) գնդի խաղալու . — Գիտաւորութիւն  
 ունի մաս մը նարտ խաղալու . — Ինչո՞ւ կան մարդիկ  
 որ կը խնտան երբ կը խօսիմ . — Անքաղաքաւար մար-  
 դիկ են . դուք ալ խնտալու էք , եւ այլ եւս չեն ծաղ-  
 բեր ձեզ . — Այժմէ ինծի պէս ընէիք , աղէկ կը խօսե-  
 իք . — Ձեզի պէտք է ամէն օր քիչ մը ուսանել , եւ  
 այլ եւս սլիտի չլախնաք խօսելու . — Պիտի ջանամ  
 ձեր խրատին հետեւել . քանզի առաջադրած եմ ամէն  
 ստառ ժամը վեցին ելլել , մինչեւ տասն ուսանել եւ  
 կանուխ պառկել . — Ձեր քոյրն ինչո՞ւ կը գանդատի .  
 — Ձեմ գիտեր . քանզի անոր ամէն բան կը յաջողի եւ  
 երջանիկ է , ձենէ եւ ինէ իսկ երջանիկ . ինչո՞ւ կը  
 գանդատի . — Թերեւս կը գանդատի , վասն զի այս  
 գործին տեղեակ չէ . — Արնայ ըլլալ :

## ԿԶ. ԴԱՍ. Soixante-sixième Leçon.

Տեսակ մը .	Une espèce, une sorte.
Շատ տեսակ կենդանիներ կան .	Il y a bien des sortes d'animaux.
Ասիկա թ' նչ տեսակ պտուղ է .	Quelle espèce de fruit est cela ? ( կամ est-ce là ? )
Կուռը .	Le noyau. Գեղձի, ծիրանի, սալորի, կուտ մը .
Սալորի պտուղներ .	Des fruits à noyau.
Կուռը կտրելու է՝ նուշի առ- նելու համար .	Il faut casser le noyau pour avoir l'amande ( առակ ) .
Նուշ մը . կորեղ մը .	Une amande, un pépin.
Կորեղով պտուղներ .	Des fruits à pépin.
Կորեղով պտուղ մըն է .	C'est un fruit à pépin.
Քաղել, քաղած, քաղելով .	Cueillir; cueilli; cueillant.
Կը քաղեմ, կը քաղես, կըն .	Je cueille, tu cueilles, il cueille.
Պտուղ քաղել .	Cueillir des fruits.
Ապուրը, մըգեղէնները սեղան բերել .	Servir la soupe, le dessert.
Պտուղ, le fruit. Երբան մը ,	un abricot. Գեղձ մը ,
պէ՛ս .	une pêche. Սալոր մը ,
	une prune.
Ձուարձալի պատմութիւն մը .	Une anecdote.
Խորոված (քէպուպ) .	Du rôti.
Վերջինը .	Le dernier. ( իգ . )
Անցեալ շաբաթ .	La dernière.
Գաղթել .	Cesser de. Կարդալէն կը դադրեմ .
Կուռը կը դադրի .	Elle cesse de parler.
Խղիս տալ, զղուշանալ .	Eviter.
Պրծել, ազատել .	Echapper.
Գժրախառութենէ մը պրծել .	Echapper à un malheur.
Քախալ մահահէ պրծելու համար .	Il a pris la fuite pour échapper à la mort.

Կրնալ տուանց բանի մը բլլալ .	Pouvoir se passer de-
Աւանց հացի կրնա՞ք բլլալ .	Pouvez-vous vous passer de pain ?
Կրնամ բլլալ .	Je puis <i>համ</i> je peux m'en passer.
Շատ բան կայ որոցմէ զուրկ բլլալ պէտք է .	Il y a bien des choses dont il faut se passer.
Յանձնարարութիւն մը կատարել .	S'acquitter d'une commission faire une commission.
Զեր յանձնարարութիւնը կատարեցի .	Je me suis acquitté de votre commission. J'ai fait votre commission.
Յանձնարարութիւնս կատարեցի՞ք .	Vous êtes-vous acquitté de ma commission, <i>համ</i> avez-vous fait ma commission ?
Կատարեցի, բրի .	Je m'en suis acquitté. Je l'ai faite.
Խբ պարտքը կատարել .	{ Remplir son devoir. { S'acquitter de son devoir.
Այս մարդը միշտ իւր պարտան կանութիւնը կը կատարէ .	Cet homme fait, remplit toujours son devoir.
Ղստահել .	Compter sur.
Անոր կը վստահեմ .	Il y compte.
Զեզի կը վստահեմ .	Je compte sur vous. Je me fie à vous.
Կրնաք անոր վստահիլ .	Vous pouvez vous fier à lui. Vous pouvez vous y fier. Vous pouvez compter sur lui.
Բաւել, բաւած, բաւելով .	Suffir; suffi; suffisant.
Այս հացը ձեզի կը բաւէ .	Ce pain vous suffit-il ?
Կը բաւէ .	Il me suffit.
Կը բաւեմ, կը բաւես .	Je suffis, tu suffis.
Այս ստակն այս մարդուն պիտի բաւէ .	Cet argent suffira-t-il à cet homme ?
Պիտի բաւէ .	Il lui suffira. ♡
Այս գումարն այս մարդուն բաւե՞ց .	Cette somme a-t-elle suffi à cet homme ?
Բաւեց .	Elle lui à suffi.
Գոհ եղաւ անկէ .	Il s'en est contenté.
Բանով մը գոհ բլլալ .	Se contenter de quelque chose.

Անոր պիտի բաւէր, եթէ մի- այն քանի մը սկրւտ աւել- ցնել աւելիք.	Elle lui suffirait, si vous vouliez seulement y ajou- ter quelques écus.
Գոհ պիտի բլլար, եթէ աւել- իք միայն քանի մը սկրւտ ա- ւելցնել.	Il s'en contenterait, si vous vouliez seulement y ajou- ter quelques écus.
Իմաստունը քիչով գոհ կ'ըլ- լայ, կը շատանայ.	Le sage se contente de peu, le sot est content de peu.
Ինձի բաւական է գիտնալ թէ դուն ապրուստդ կը շահիս.	Il me suffit de savoir que tu gagnes ta vie.

Աւելցնել. Ajouter. Շինել. Bâtir.

Առադաստ մը. Une voile. Նաւ մտնել. S'embarquer.

ԳԻՏ. Le voile, *արական կը նշանակէ* քող :

Անիկա քող մը գնեց .	Elle s'est achetée un voile.
Նաւով նամբայ ելլել .	Mettre à la voile.
Նաւել .	Faire voile.
Նաւարկել Ամերիկա .	Faire voile pour l'Amérique (aller en Amérique) .
Նաւով երթալ .	Aller à la voile. marcher.
Լեցուն առագաստով (արագ) .	À pleines voiles (à toutes voiles) .
Լի առագաստիւ երթալ .	Marcher à pleines voiles, cingler.
Անցեալ ամսուն տասնեւվեցին նաւը մտաւ .	Il s'est embarqué le seize du mois dernier.
Առագաստի նաւով գնաց ներ- սայ ամսոյս երեքին .	Il a mis à la voile le trois du mois courant.
Ներկայ ամիսը .	Le mois courant.
Այս ամսուն չորսին կամ հին- գին .	Le quatre ou le cinq de ce mois.
Նամակն ամսոյս վեցին է .	La lettre est du six de ce mois.
Այսինքն .	C'est-à-dire; savoir.
Եւսլին .	Et le reste (etc) .
Գրիչս ձերինէն աղէկ է .	Ma plume est meilleure que la vôtre.

Ձենէ աղէկ կը գրեմ՝ J'écris mieux que vous.  
 Ապուրը պիտի տաքցուի . On fera réchauffer la soupe.  
 Կերակուրը սեղանն է . On a servi.  
 Ձեզի ապուր տա՞մ . Vous servirai-je de la soupe?  
 Քիչ մը կ'ուզեմ . Je vous en demanderai un peu.

( Կերակուրը սեղան ) բերել ,  
 ( մէկուն բան մը ) հրամայել . } Servir.  
 նել .

207. Հրահանգ

Կ'ուզէի զխանայ թէ ինչո՞ւ համար ձեզի պէս աղէկ խօսել չեմ գիտեր . — Ձեզի ըսեմ . ճիշդ ինծի պէս աղէկ կը խօսէիք , եթէ այնպէս երկչոտ չըլլայիք՝ Բայց եթէ ձեր դասերն աւելի աղէկ սորված ըլլայիք , խօսելու չէիք վախնար . Քանզի աղէկ խօսելու համար պէտք է զխանայ . եւ շատ բնական է որ երկչոտ ըլլայ այն որ սորվածն աղէկ չի գիտեր . Այնպէս երկչոտ չէիք ըլլար ինչպէս էք , եթէ սխալ չընելու ապահով ըլլայիք :

Ձեզի բարի լոյս մաղթելու կու գամ . — Շատ մարդասէր ( aimable ) էք . — Ինծի հաճութիւնն մը ընել կու գաք . — Ըսէք ինծի ինչ որ պէտք է , քանզի ձեզի ծառայութիւնն մը ընելու համար ( pour vous obliger ) ամէն բան պիտի ընեմ . — Հինգ հարիւր սկուտի պէտք ունիմ , եւ կ'աղաչեմ որ փոխ տաք : Ստակըս ընդունելուս պէս ձեզի կու տամ : Ձիտ շատ երախտապարտ կ'ընէիք , եթէ այս ծառայութիւնն ինծի ընել ուզէիք . — Բոլոր սրտով կ'ընէի , եթէ կարենայի . բայց բոլոր ստակա կորսնցուցած ըլլալով , անկարելի է ինծի այս ծառայութիւնը ձեզի ընել ( rendre service ) . — Կ'ուզէ՞ք հարցնել ձեր եղբորը թէ դո՞ւ է ստակէն զոր անոր զրկեցի . — Եղբորս դա-

լով ( եղբայրս ), դո՛հ է , բայց ես չեմ . քանզի նա  
 ւարեկուժիւն ըրած ըլլալով , պէտք ունիմ սասակին  
 զոր ինձի պարտական էք :

## 208. Հրահանգ

Ապուրը բերուեցա՞ւ . — Քանի մը բոսկէ կայ որ  
 քերուեցաւ . — Ուրեմն ( alors ) պազած ըլլալու է , եւ  
 ես տաք ապուրը միայն կը սիրեմ . — Ձեզի համար  
 տաքցունեն . — Նրախտապարտ կ'ըլլամ . — Այս խո-  
 բովածէն ձեզի տա՛մ ( servir ) . — Քիչ մը կը խընդ-  
 բեմ . — Այս ոչխարի միտէն ուտել կ'ուզէ՞ք . — Շե-  
 նորհակալ եմ , վառեակն աւելի կը սիրեմ . — Ձեզի  
 գինի տա՛մ . — Քիչ մը կը խնդրեմ . — Մրդեղէնը բեր-  
 ուեցա՞ւ . — Բերուեցաւ . — Պտուղը կը սիրեմ , բայց  
 այլ եւս ախորժակ չունիմ . — Քիչ մը պանիր ուտել  
 կ'ուզէ՞ք . — Քիչ մը ուտեմ . — Ձեզ անզղիակա՞ն պա-  
 նիր տամ թէ Հոլանտայի պանիր . — Քիչ մը Հոլան-  
 տայի պանիր ուտեմ . — Ասիկա ի՞նչ տեսակ պտուղ  
 է . — Կուտով պտուղ են . — Ասիկա ի՞նչպէս կը կոչ-  
 ուի . — Այսպէս կը կոչուի . — Ձեր ձեռուրները լուալ  
 կ'ուզէ՞ք . Կ'ուզէի լուալ , բայց անձեռոց ( essuie-main )  
 չունիմ ձեռուրներս սրբելու համար . — Ձեզի անձե-  
 ոց մը , աճառ եւ ջուր տալ կու տամ . — Ձեզի ե-  
 բրախտապարտ պիտի ըլլամ . — Կրնա՞մ համարձակիլ  
 քիչ մը ջուր խնդրելու . — Ահաւասիկ . — Կրնա՞ք ա-  
 ոանց աճառի ըլլալ . — Աճառի գալով , կրնամ առանց  
 անոր ըլլալ , բայց ձեռուրներս սրբելու համար անձե-  
 ոց մը պէտք է . — Շատ անգամ առանց աճառի կ'ըլ-  
 լա՞ք . — Շատ բան կայ որ առանց անոնց պէտք է  
 ըլլալ . — Այս մարդն ինչո՞ւ համար միախաւ . — Այս-  
 րէ՛ն զի ուրիշ միջոց չունէր պրծելու պատժէն ( puni-  
 tion ) որուն արժանի էր . — Ձեր եղբայրներն ինչո՞ւ

աւելի աղէկ ձի մը չհայթայթեցին . — Նթէ իրենց հին ձին ծախած ( se défaire ) ըլլային , աւելի աղէկ մը կը հայթայթէին . — Ձեր հայրն արդէն հասա՞ւ . — Գեռ ոչ , բայց կը յուսանք թէ այսօր պիտի հասնի . — Ձեր բարեկամը ժամանակին ( à temps ) մեկնեցա՞ւ . — Ձեմ գիտեր , բայց կը յուսամ թէ ժամանակին մեկնած է :

209. Հրահանգ

Յանձնարարութիւնս կատարեցի՞ք . — Կատարեցի . — Ձեր եղբայրը կատարե՞ց յանձնարարութիւնը զոր անոր տուի . — Կատարեց . — Ինծի յանձնարարութիւն մը ընել կ'ուզէ՞ք . — Ձեզի այնչափ երախտապարտ եմ որ միշտ պիտի կատարեմ ձեր յանձնարարութիւնները , եթէ ինծի ընել հաճիք . — Կ'ուզէ՞ք խնդրել վաճառականէն թէ կրնայ տալ ինծի այն գրնով զոր իրեն մատուցի ( առաջարկեցի ) . — Ապահով եմ որ անով պիտի շատանար , եթէ քանի մը սկուտ աւելցնել ուզէիք . — Նթէ այս բանիս վրայ ապահով ըլլայի , քանի մը սկուտ ալ կ'աւելցնէի . — Բարի լոյս , տղաքս , ձեր պարտականութիւնը կատարեցի՞ք . — Գիտէք որ միշտ կը կատարենք , եթէ միայն ( à moins que ) հիւանդ չըլլանք . — Մենէ ի՞նչ ընել կը խնդրէք այսօր . — Ձեզի կու տամ ուսանելու ութսուներորդ դասը , եւ ընել անկէ կախում ունեցող համարները , այսինքն 207 երորդը , 208 երորդը եւ 209 երորդը : Պիտի ջանա՞ք որ սխալ չընէք . — Պիտի ջանանք չընել . — Այս հայր ձեզի կը բաժէ՞ . — Կը բաւէր , եթէ շատ անօթի չըլլայի . — Ձեր եղբայրը ե՞րբ նաւ մտաւ Ամերիկա ( երթալու ) համար . — Անցեալ ամուռն երեմնին առադաստի նաւով ճամբայ ելաւ ( mettre à la voile ) . — Ինծի կը խոստանա՞ք ձեր եղբորը խօսելու . — Կը խոստանամ : կրնաք վստահիլ .

—Ձեր վրայ վստահ եմ. —Գալ դասին համար աւելի աղէկ պլիտի աշխատի՞ք, քան որչափ ատր համար աշխատեցաք. —Աւելի աղէկ պլիտի աշխատի՞մ. —Կրնամ վստահիլ. —Կրնաք :



ԿԻ. ԳԱՍ. Soixante-et-septième Leçon.

Բանէ մը հասկնալ.	Se connaître en quelque chose.
Ատուիէ կը հասկնա՞ք.	Vous connaissez-vous en drap ?
Կը հասկնամ.	Je m'y connais.
Չեմ հասկնար.	Je ne m'y connais pas.
Շատ աղէկ կը հասկնամ.	Je m'y connais très-bien.
Շատ չեմ հասկնար.	Je ne m'y connais pas beaucoup.

Գծագրել. Dessiner. Նկար մը ընդօրինակել. Calquer.

Գիւղանկար մը գծագրել.	Dessiner un paysage.
Բուճը, ընականը նկարել.	Dessiner d'après nature.

Գծագրութիւնը. Le dessein. Գծագրողը. Le dessinateur. Բնութիւնը. La nature.

Ընել, ի կիր արկանել.	S'y prendre.
Ասանց աւնելեաց ( մտչա ) կը բակ վառելու համար թ՛նչ պէս կ'ընէք.	Comment vous y prenez-vous pour faire (allumer) du feu sans pincettes ? (*)
Այսպէս կ'ընեմ.	J'y m'y prends comme cela.
Գէշ կ'ընէք, կը գործածէք.	Vous vous y prenez mal.
Աղէկ կ'ընեմ, կը վարուիմ.	Je m'y prends bien.
Ասիկա ընելու համար ձեր եղբայրն թ՛նչպէս կ'ընէ.	Comment votre frère s'y prend-il pour faire cela ?

(\*) ԳԻՏ. ւո վերջաւորող գոյականներն իզական են, բայց ի նկատեալներէն, un amulette, բժժանք. un

aquelette, կմախ . եւ քանի մը բարդ անուշներէ , ինչ-  
պէս՝ un porte-mouchettes, բազմակալոց ( մում մադասը  
թասպլասը ) , un tire-botte, կօշկահան . un casse-noiset-  
te, կաղնաբնկ ( ֆընսըդ դըբաճադ ) :

Յաջողակութեամբ . Adroitement.

Առանց յաջողակութեան . Maladroitement.

Արդելու . Défendre.

Ատիկա ընել ձեզի կ'արդելում Je vous défends de faire  
( էր սրտուիրեմ չընել ) . cela.

Իջնցնել , խնարհնցնել . Baisser.

խնարհնցնել աչուքնէր , վա- Baisser les yeux, la toile, le  
բազըրը . rideau.

Վարագոյրը կը վերնայ ( կը La toile se lève.  
բացուի ) .

Կ'իջնէ ( կը գոցուի ) . Se baisse.

Փոխանակագլինն իջաւ . Le change a baissé.

Օրը կը խնարհի . Le jour se baisse. Գիշեր կ'ըլլայ . Il se  
fait nuit. Ժամանակը կ'անագանի . Il se fait tard.

Մտիլ , խնարհել . Se baisser. Հոտիլ . Sentir.

Խտտը կը հոտի . Il sent l'ail.

Մէկուն նրակը գննել . Tâter le pouls à quelqu'un.

Բանի մը հաւանել . Consentir à quelque chose.

Կը հաւանիմ . J'y consens.

Մածկել . Cacher. Միտք , խելք . L'esprit.

Ճշմարտապէս . En vérité. Արդարեւ . En effet, vraiment.

Ճշմարտութիւնը . La vérité. Արդիւնքը . L'effet.

Ճշմարիտ . Vrai. Ճշմարտախօս մարդ մը . Un homme vrai.

Ահա այս նկարին բուն տեղը . Voilà la vraie place de ce  
tableau.

Յարդէլ , բանի տեղ գնել մէկը . Faire cas de quelqu'un.

Յարդել մէկը . Estimer quelqu'un.

Այս մարդուն մեծ յարգ չեմ Je ne fais pas grand cas de  
cet homme .

Անոր մեծ յարգ կու տամ . Je fais grand cas de lui.

չստ կը յարգեմ . Je l'estime beaucoup.

Գեղքը . Le cas. Ծաղիկը . La fleur.

Բանի մը երեսին հաւասար , A fleur de.  
վայելն քերկրով .

Այս տան հիմունքն արդէն Les fondements de cette mai-  
դեանին հաւասար են . son sont déjà à fleur de  
terre.

Թումըը դեռ ջուրին երեսին La digue n'était pas encore  
հաւասար էր . à fleur d'eau.

Այս մարդուն աչուքները ճակ- Cet homme a les yeux à  
տին հաւասար են . fleur de tête.

Ծաղկէլ . Fleurir (+) . Աճել . Croître; crû; croissant.

ԳԻՏ. (\*) Eleurir բային ընդունելութեան ներկայն  
ևւ սահմանական անկատարը երկու են . fleurissant,  
fleurissait, ևւ florissant, florissait. Վերջին կերպը կը  
գործածուի այլաբանօրէն . Un empire florissant, une  
ville florissante. Ծաղկեալ տէրութիւն , քաղաք . Cet  
auteur florissait sous son règne. Այս հեղինակն անոր  
թագաւորութեան ատենը կը ծաղկէր . Les arts et les  
sciences florissaient alors. Արուեստք ևւ գիտութիւնք  
կը ծաղկէին յայնժամ :

Կ'աճիմ , կ'աճիս , կ'աճի . Je crois, tu crois, il croît.  
Արագ աճել . Croître rapidement.

Մեծնալ .

Grandir.

Այս տղան զգալի կերպով կը Cet enfant grandit à vue  
մեծնայ . d'œil.

Այս տղան քիչ ատենուան մէջ Cet enfant a bien grandi en  
շատ մեծցաւ . peu de temps.

Այս անձրեւը ցորենը մեծցուց . Cette pluie a fait grandir  
les blés.

Ցորեն . Du blé ցնակ . Une chaumière.

Կրածկոց , անքոյթ , վրան դոց Un abri, un couvert-  
տեղ .

- Ապաստանարան . Un abri, un refuge, un asile .
- Բանէ մը ծածկուիլ, պաշտպանուիլ . Se mettre à l'abri de quelque chose .
- Անձրևէն, հովէն պաշտպանուիլ . Mettons-nous à l'abri de la pluie, du vent .
- Մտնենք սա հոսքուելու, օդին վնասներէն պատարարուելու . Entrons dans cette chambre pour être à couvert de la tempête, pour être à l'abri des injures du temps .
- Ամէն տեղ . Partout . Բոլոր քաղքին մէջ . Par toute la ville .
- Բոլոր երկրիս վրայ . Par toute la terre .
- Հովանի, շուք մը . Une ombre . Ընդ հովանեաւ . A l'ombre .
- Ելլեմք այս ծառին շուքին տակ նստելու . Allons nous asseoir à l'ombre de cet arbre .
- Չեւայնել, կեղծել . Faire semblant de .
- Այս մարդը քնանալ կը կեղծէ . Cet homme fait semblant de dormir .
- Այս օրեորդը Վաղերէն գիտնալ կը ձեւայնէ . Cette demoiselle fait semblant de savoir le français .
- Մեզի մտանալ կը կեղծեն (կ'ընեն) . Ils font semblant de s'approcher de nous .
- Հիմա . Maintenant . Ի վեր . . . . . Dès . . . . .
- Առտուրնէ ի վեր . Dès le matin . Լուսնայէն ի վեր . Dès le point du jour . Բերրցէն . Dès le berceau . Հիմա կուրնէ, արդէն . Dès à présent .
- . . . ուն պէս . Dès que .
- Չանի տեսնելուս պէս պիտի խօսիմ անոր . Dès que je le verrai, je lui parlerai .
- Վախէն, չըլլայ թէ, գուցէ . De crainte de, de peur de .
- Պաղել, պաղ առնուլ . Se refroidir, prendre du froid .
- Չուրս ելլելու կը վախնամ, որ չըլլայ թէ պաղ առնում . Je ne veux pas sortir, de peur de me refroidir .

Քաղաք երթալ չուղեր, իւր պարտատերներէն մէկուն հանդիպելու վախէն .	Il ne veut pas aller à la ville, de peur de rencontrer un de ses créanciers.
Իւր քսակը բանալ չուղեր, ստակը կորսնչնելու վախէն .	Il ne veut pas ouvrir sa bourse, de peur de perdre son argent.
Ընդօրինակել, օրինակել .	Copier (տես Դաս Կ. Դիւս. Ա.)
Հոլովել . Décliner . Մտքուրբ քաշել, գրել .	Mettre au net.
Գոյական մը, ածական մը, դէ-բանուն մը .	Un substantif, un adjectif, un pronom.
Բայ մը, նախադրուածիւն մը .	Un verbe, une proposition.
Քերականութիւն մը, բառաբան մը .	Une grammaire, un dictionnaire.

## 240. Հրահանգ

Ասուիէ կը հասկնա՞ք (կը ճանչնա՞ք) . — Կը հասկընամ . — Ինծի քանի մը կանգուն գնել կ'ուզէ՞ք . — Յի՞ծէ ինծի ստակ տալ կ'ուզէ՞ք, կը գնեմ . — Ձիս երախտապարտ կ'ընէ՞ք . — Այս մարդն ասուիէ կը հասկնայ . — Շատ չի հասկնար . — Ասիկա ընելու համար ինչպէ՞ս կ'ընէ՞ք . — Այսպէս կ'ընեմ . — Կ'ուզէ՞ք ինծի ցուցնել (սորվեցնել) թէ ինչպէս կ'ընէ՞ք . — Կ'ուղեմ (չատ աղէկ) . — Ինծի վաղիւ ի՞նչ ընել պէտք է . — Ձեր համարներուն մաքուրը պիտի գրէ՞ք, ուրիշ երեք հատ ալ պիտի ընէ՞ք, հետեւեալ դասն ալ պիտի սորվի՞ք . — Առանց ստակի վաճառք հայթայթելու համար ի՞նչպէս կ'ընէ՞ք . — Ապառիկ կը գնեմ . — Ձեր քոյրն առանց բառարանի դադիներէն սորվելու համար ի՞նչպէս կ'ընէ (ի՞նչպէս կ'ընէ որ . . . կը սորվի) . — Սա եզանակաւ կ'ընէ . — Շատ յաջողակաբար կ'ընէ . — Իսկ ձեր եղբայրն ինչպէս կ'ընէ . — Շատ անյաջողաբար կ'ընէ . կը կարգայ եւ բառերը բառարանին մէջ կը փնտռէ . — Կրնայ այս եզանակաւ քսան տարի սորվի՞լ առանց խօսք մը շինել գիտնա-

լու . — Այր քոյրն ինչո՞ւ աչուքները կը խոնարհեցնէ .  
 — Ար խոնարհեցնէ , վասն զի իւր պարտքը (դասը) ը-  
 րած չըլլալուն կ'ամչնայ . — Այսօր պարտէզը պիտի  
 ձաշե՞նք . — Օգն այնպէս գեղեցիկ է որ պէտք է վայե-  
 լիլ . — Այս սուրճն ի՞նչպէս կը գտնէք . — Աքանչելի  
 կը գտնեմ . — Ինչո՞ւ կը ծռիք . — Ար ծռիմ թաշկինա-  
 կը վերցնելու համար զոր ձգեցի . — Այր քոյրերն ին-  
 չո՞ւ կը թաքչին . — Աէին թաքչիր , եթէ տեսնուելու  
 չվախնային . — Որով՞ կը վախնան . — Իրենց դաստիա-  
 րակուհիէն (institutrice) որ դանոնք երէկ յանդիմա-  
 նեց , վասն զի իրենց պարտքն ըրած չէին :

211. Հրահանգ

Որդիս արդէն տեսա՞ք . — Դեռ չտեսայ . ինչպէս է .  
 — Շատ աղէկ է . զանի պիտի չճանչնաք , քանզի քիչ  
 ատենուան մէջ շատ մեծցաւ . — Այս մարդն ինչո՞ւ  
 աղքատաց բան մը չի տար . — Շատ ազահ է . իւր  
 քսակը բանալ չուզեր ստակը կորսնցնելու վախէն .  
 — Օգն ի՞նչպէս է . — Շատ տաք է . երկայն ատեն է  
 որ անձրեւ չունեցանք . կարծեմ թէ ամպրոպ մը պի-  
 տի ունենանք . — Արնայ ըլլալ . — Հովը կ'ելլէ , ար-  
 դէն կ'որոտայ . կը լսէ՞ք . — Այո , կը լսեմ , բայց  
 ամպրոպը դեռ շատ հեռու է . — Ոչ այնչափ հեռու  
 որչափ կը կարծէք . տեսէք ինչպէս կը փայլատակէ .  
 — Տէր Աստուած , ի՞նչ տարափ . — Եթէ տեղ մը մըա-  
 նենք , ամպրոպէն ապահով (à l'abri) կ'ըլլանք .  
 — Մտնենք ուրեմն սա տնակը . հոն անձրեւէն եւ հո-  
 վէն ապահով կ'ըլլանք . — Հիմա ո՞ւր երթանք . ի՞նչ  
 ձամբայ բռնենք . — Ամենէն կարճն ամենէն աղէկն է .  
 — Չափազանց արեւ է , եւ դեռ շատ յոգնած եմ . այս  
 ծառին հովանոյն մէջ նստինք . — Ծառին տակը նըս-  
 տող մարդն ո՞վ է . — Չեմ ճանչնար . — Ա'երեւի թէ

մինակ ըլլալ կ'ուզէ . քանզի երբ անոր կը մտնանք ,  
քնանալ կը ձեւացնէ . — Ձեր քրոջը պէս է . դաղին-  
րէն շատ աղէկ կը հասկնայ , բայց երբ անոր հետ  
խօսել կը սկսիմ , զիս չհասկնալ կը ձեւացնէ . — Ին-  
ծի խոստացաք որ նաւապետին խօսիք . ինչո՞ւ չը-  
րիք . — Ձանի գեռ չտեսայ . բայց տեսնելուս պէս ,  
անոր կը խօսիմ .



ԿԸ. ԳԱՍ. Soixante-huitième Leçon.

ԱՆՅԵԱԼ, ՈՐՈՇԵԱԼ. Du Passé Défini.

Առաջին լծորդութեան բայերուն Անցեալ որոշեալը  
կը շինուի , ընդունելութիւն անցեալին é գիրը՝ ai, as,  
a, âmes, âtes, èrent ի փոխելով . ինչպէս

Aimer. Ընդունելութիւն Անցեալ. aimé. Անցեալ որոշեալը  
կ'ըլլու՝ J'aimai, tu aimas, il aima. Nous aimâmes, vous  
aimâtes. ils aimèrent.

Երկրորդ եւ Գորրորդ լծորդութեան բայերուն Անց-  
եալ որոշեալները կը շինուին , ընդունելութիւն անց-  
եալին i եւ u գիրերը is, is, it. îmes, îtes, irent ի փո-  
խելով . ինչպէս

Finir. Ընդունելութիւն անցեալ. fini. Անցեալ որոշեալը՝  
Je finis, tu finis, il finit. Nous finîmes, vous finîtes, ils  
finirent.

Rendre. Ընդունելութիւն անցեալ. rendu. Անցեալ որոշեալը՝  
Je rendis, tu rendis, il rendit. Nous rendîmes, vous ren-  
dîtes, ils rendirent.

Երրորդ լծորդութեան բայերուն Անցեալ որոշեալը  
կը շինուի , ընդ . անցեալին u գիրը , us, us, ut. âmes,  
âtes, urent ի փոխելով , ինչպէս՝

Recevoir, Ընդունելութիւն անցեալ reçū. Անցեալ որոշեալք  
կ'ըլլայ՝

Je reçus, tu reçus, il reçut. Nous reçûmes, vous reçûtes, ils reçurent.

Այս կանոնին համեմատ են նաև գրեթէ բոլոր դար-  
տուղի բայերուն անցեալ որոշեալք, եւս եւ այն բայե-  
րուն՝ որոնց ընդ անցեալք is կամ it կը վերջաւորին,  
ինչպէս .

Mettre. Ընդունելութիւն անցեալ mis. Անցեալ որոշեալք .  
Je mis, tu mis, il mit. Nous mîmes, vous mîtes, ils mirent.

Dire. Ընդունելութիւն անցեալ dit. Անցեալ որոշեալք կ'ըլլայ՝  
Je dis, tu dis, il dit. Nous dîmes, vous dites, ils dirent.

Հետեւեալ բայերն այս կանոնէն կը զարտուղին ,  
այսինքն անոնց Անցեալ որոշեալներն Ընդունելութիւն  
անցեալներէն չեն ելլեր .

Couvrir. Ընդունելութիւն անցեալ . couvert. Անցեալ որոշ-  
եալ Je couvris.

Այսպէս կ'ըլլան նաև offrir, ouvrir, souffrir.

Tenir, Ընդունելութիւն անցեալ tenu. Անցեալ որոշեալ  
Je tins, tu tins, il tint. Nous tînmes, vous tîntes, ils tin-  
rent.

Ասոր պէս է նաև Venir, venu, je vins, եւայլն .

Mourir.	Ընդ.	Անց.	Mort.	Անց.	որոշ.	Je mourus.
Vêtir.	„	„	Vêtu.	„	„	Je vêtis.
Voir.	„	„	Vu.	„	„	Je vis.
Prévoir.	„	„	Prévu.	„	„	Je prévis
Ceindre.	„	„	Ceint.	„	„	Je ceignit, եւայլն.

Այսպէս կ'ըլլան բոլոր indre վերջաւորող բայերը ,  
craindre, feindre, joindre, peindre plaindre, teindre.  
եւայլն , ասոնց ընդունելութիւն անցեալները կ'ըլլան՝  
craint, feint, joint, peint, plaint, teint. Իսկ անցեալ ո-

որոշեալները *կ'ըլլան*՝ je craignis, je feignis, je joignis, je ceignis, je plaignis, je teignis.

Բոլոր սրբ վերջաւորող բայերուն, *խնչպէս*՝ conduire, construire, détruire, instruire, réduire, traduire, luire, nuire, ընդունելութեան անցեալները (բայ է luire եւ nuire էն որոնց ընդունելութեան անցեալը *կ'ըլլայ* lui, lui) կը վերջաւորին nit, *խնչպէս* conduit, construit եւայլն. իսկ Անցեալ որոշեալները կը վերջաւորին uisit. *խնչպէս*, je conduisis, je détruisis եւայլն. je luisis, je nuisis.

Coudre.	Ընդ. անց.	cousu.	Անցեալ որոշ.	je cousis.
Ecrire.	„ „	écrit.	„ „	j'écrivis
Etre.	„ „	été.	„ „	je fus.
Faire.	„ „	fait.	„ „	je fis.
Naître.	„ „	né.	„ „	je naquis.
Vaincre.	„ „	vaincu.	„ „	je vainquis.

ԳԻՏ. Ա. Անցեալ որոշեալը կը գործածուի, երբ գործողութիւնը բոլորովին անցած լինցած ժամանակի մը մէջ է. ուստի *կ'ըսուի*՝ Je vis, j'écrivis hier, la semaine passée, l'année dernière, *եղն*. Բայց ոչ երբէք կըրնայ ըսուիլ՝ Je vis, j'écrivis aujourd'hui, cette semaine, ce mois, cette année.

ԳԻՏ. Բ. Անցեալ որոշեալը կը գործածուի նաեւ, երբ անոր նշանակած գործողութիւնը՝ իրմէ առաջ կատարուած գործողութենէ մը ետքն է. *խնչպէս*,

Չաշած էինք, երբ անհկա հա- Nous avions diné, lorsqu'il arriva.

Խօսելէն ետքը գացիք. Après avoir parlé, vous vous en allâtes.

Ածիլուելէս ետքը, երես լուա- Après m'être rasé, je me lavai la figure.

Տաքնալէն ետքը պարտէզ գա- Après s'être chauffés, ils allèrent au jardin.

Չանգակը զարնելուն պէս ար- Dès que la cloche sonna,

<i>Թընցար .</i>	vous vous réveillâtes.
Չիս կանչելնուն պէս , ելայ .	Dès qu'ils m'appelèrent, je me levai.
Պատրաստ բլլարուն պէս , զիս տեսելու եկաւ .	Aussitôt qu'il fut prêt, il vint me voir.
Լւր ձին ունենալուն պէս , զայն ինծի ցուցնելու եկաւ .	Aussitôt qu'il eut son cheval, il vint me le montrer.
Շատ անգամ՝ փորձելէն ետքը , ընելու յաջողցան .	Après avoir essayé plusieurs fois, ils parvinrent à le faire.
Չանի տեսնելուս պէս , առի՛ ինչ բանի որ պէտք ունէի .	Aussitôt que je le vis, j'obtins ce dont j'avais besoin.
Ան՝ բխտելուս պէս , ըբաւ՝ ինչ որ անոր կ'ըսէի .	Aussitôt que je lui parlai, il fit ce que je lui disais.
ԱՆՅԵԱԼ, ՅԱՌԱՋԱԳՈՅՆ .	Du passé Antérieur.

Այս ժամանակը բաղադրնայ է , եւ կը շինուի օ՝ ժանգակին անցեալ որոշեալէն , եւ բային ընդունելու թիւն անցեալէն . զոր օրինակ , J'eus parlé, nous eûmes écrit, il fut tombé, vous fûtes venus, ils furent arrivés.

ԴԻՏ. Ա. Այս ժամանակը սովորաբար հետեւեալ շաղկապներուն մէկովը կը գործածուի :

Aussitôt que, sitôt que, dès que . . . ուն պէս .

Après que, . . . էն ետքը .

Lorsque, quand, երբ .

Ne—pas plus tôt—que, այն ինչ .

A peine—que, հազիւ թէ .

ԴԻՏ. Բ. Անցեալ յառաջագոյնէն ետքը եկող նախադասութեան բայն անցեալ որոշեալ կ'ըլլայ :

Գործս ընցնելուս պէս անոր տարի .

Aussitôt que J'eus fini mon ouvrage, je le lui portai.

Հագուելուս պէս , դուրս ելայ .

Aussitôt que je me fus habillé, je sortis.

Երբ խաղը ընցուցին , երգելու սկսան .

Quand ils eurent fini de jouer, ils se mirent à chanter.

Երբ ճաշեցի, կէսօրը զարկաւ. Quand j'eus diné, midi sonna.  
Հրաւիրեալները ժողովուելուն Dès que les convives se fu-  
պէս, կերակուրը սկսաւ. rent assemblés, le repas  
commença.

Ձինուորները քաղաքը կողոպտե- Après que les soldats eurent  
լէն ետքը, կանայք և աղջիկք pillé la ville, ils égorgè-  
անխնայ կոտորեցին. rent sans pitié les femmes  
et les enfants.

Հազիւ թէ հասանք, մեղ թա- A peine fûmes-nous arrivés  
թաւորին տարին. qu'on nous conduisit chez  
le roi.

Մեղ տեսաւ շտեսաւ, դէպ թ Il ne nous eut pas plus tôt  
մեղ յառաջ եկաւ. aperçus, qu'il s'avança  
vers nous.

ԳԻՏ. Գ. Ինչպէս վերի օրինակներէն կը տեսնուի, անցեալ յառաջագոյնին նշանակած դործողութիւնն առաջ կատարուած է. իսկ անցեալ որոշեալին նշանակածն՝ անկէ ետքը կատարուած, կամ անոր հետևորդ դործողութիւնն է: Ուստի այս երկու ժամանակները, Անցեալ յառաջագոյն եւ Անցեալ որոշեալ մէկտեղ կը դուզընթանան:

## 212. Հրահանգ

Ի՞նչ ըրիք, երբ ձեր նամակը լմնցուցիք. — Եղբորս տունը գացի, որ զիս թատրոն տարաւ, ուր հաճութիւն ունեցայ բարեկամներուս մէկը գտնելու զոր տարիէ ի վեր տեսած չէի. — Երէկ առտու (անկողնէն) ելլելէն ետքը ի՞նչ ըրիք. — Երբ Պուրնիայի կողմին նամակը կարդայի, զուրս ելայ այցելութիւն ընելու իշխանին թատրոնին զոր դեռ տեսած չէի. — Ձեր հայրն ի՞նչ ըրաւ, երբ նախաճաշեց. — Ածիւռուեցաւ եւ դուրս ելաւ. — Ձեր բարեկամը պատելու երթալէն ետքը ի՞նչ ըրաւ. — Պարոնին տունը գնաց. — Պարոնը հացը կտրելէն ետքը միտը կտրեց. — Մի-


աը կտրելէն ետքը հացը կտրեց . — Ն՛րք կը մեկնիք .  
 — Վաղիւ միայն կը մեկնիմ . քանզի մեկնելէն առաջ  
 կ'ուզեմ անգամ մ'ալ բարի բարեկամներս տեսնել .  
 — Ձեր տղայքն ի՞նչ ըրին , երբ նախաճաշեցին . — Ի-  
 բնեց սիրելի ուսուցչին հետ պտոյտ մը ընելու գացին .  
 — Ձեր հօրեղբայրը տաքնալէն ետքը մէր գնաց .  
 — Տեղ մը չգնաց . տաքնալէն ետքը հանուեցաւ եւ  
 պառկեցաւ . — Ժամը քանիի՞ն ելաւ . — Արեւը ծա-  
 գելուն ելաւ . — Չանի արի՞թնցուցի՞ք . — Արի նշնելու  
 պէտք չունեցայ , քանզի ինէ՛ առաջ ելաւ . — Ձեր  
 հօրեղբօրոցին ի՞նչ ըրաւ , երբ իւր ազնուագոյն բա-  
 րեկամին մահը լսեց . — Շատ վշտացաւ եւ առանց  
 բառ մը ըսելու պառկեցաւ . — Նախաճաշելէն առաջ  
 ածիլուեցա՞ք . — Ածիլուեցայ , երբ նախաճաշեցի .  
 — Պառկեցա՞ք , երբ ընթրեցիք . — Երբ ընթրեցի ,  
 նամակներս գրեցի , եւ երբ գանտնք գրեցի , պառկե-  
 ցայ . — Ի՞նչ բանի վրայ վշտացա՞ք . — Այս գէտքին  
 վրայ վշտացայ . — Ձեր ազգականին մահուանը վրայ  
 վշտացա՞ք էք . — Շատ վշտացած եմ . — Ձեր ազգա-  
 կանը ե՞րբ մնաւ . — Անցեալ ամիս մնաւ . — Որմէ՞  
 կը գանգատիք . — Ձեր մանչէն կը գանգատիմ . — Ին-  
 չո՞ւ կը գանգատիք անկէ . — Վասն զի սպաննեց սի-  
 բուն շունը զոր բարեկամներուս մէկէն ընդունած էի .  
 — Ձեր հօրեղբայրն ի՞նչ բանէ գանգատեցաւ . — Ձեր  
 ըրածէն գանգատեցաւ . — Նամակէ՞ն գանգատեցաւ  
 զոր եռանդ անոր գրեցի . — Անկէ գանգատեցաւ :

213. Հրահանգ

Ինչո՞ւ աւելի երկայն ատեն Հօլանտա չմնացիք .  
 — Երբ հոն էի , աղբիլը սուղ էր , եւ աւելի երկայն  
 ատեն մնալու համար բաւական ստակ չունէի . — Օգն  
 ի՞նչպէս էր , երբ Վիէնայի ճամբուն վրայ էիք . — Օգը

չատ գէշ էր , քանզի ամպրոպ եւ ձիւն էր , եւ յորդ  
 (à verse) կ'անձրեւէր . — Ձեզ չտեսնելէս ի վեր ո՛ւր  
 էիք . — Երկայն ատեն ծովեզերքը ընակեցանք մին-  
 չեւ նաւի մը գալը որ մեզ Գաղիա տարաւ . — Ձեր  
 պատմութիւնը շարունակել կ'ուզէ՞ք . — Հաղիւ Գա-  
 ղիա հասած էինք , թաղաւորին տարուեցանք , որ  
 մեզ շատ աղէկ ընդունեց եւ մեզ մեր երկիրը ղրկեց .  
 — Գեղացի մը տեսնելով որ ծերունիք կարգալու հա-  
 մար ակնոց կը գործածեն , ակնոցաւաճառի մը (un  
 opticien) գնաց եւ ակնոց խնդրեց : Ան ատեն գեղա-  
 ցին գիրք մը առաւ , եւ բանալով ըսաւ թէ ակնոց-  
 ներն աղէկ չեն : Ակնոցաւաճառն իւր խանութին մէջ  
 գտած ամենէն աղէկ ակնոցներէն ուրիշ զոյգ մը անոր  
 (աչքը) գրաւ . բայց գեղացին միշտ (տակաւին) չկրք-  
 նալով կարգալ , վաճառականն անոր ըսաւ . « Բարե-  
 կամ , թերեւս բնաւ կարգալ չես զիտեր : » « Եթէ  
 կարգալ գիտնայի , » ըսաւ գիւղացին , « ձեր ակնոց-  
 ներուն պէտք չէի ունենար : » — Հենրիկոս Գ . , որ  
 մը իւր սլալատին մէջ մարդու մը հանդիպելով որ իրեն  
 անծանօթ էր , անոր հարցուց թէ որո՛ւ կը վերաբե-  
 րէր . « Ես ինծի կը վերաբերիմ , » պատասխանեց  
 (répliquer) մարդը : « Բարեկամ , » ըսաւ թաղաւորը ,  
 « դուն անմիտ տէր մը ունիս » : — Պատմեցէք մեզ  
 ինչ որ ձեզի պատահեցաւ անցեալ օր . — Շատ յօ-  
 ժարութեամբ (très-volontiers) բայց սա պայմանաւ որ  
 ինծի մտիկ ընէք առանց զիս ընդհատելու . — Ձեզ  
 պիտի չընդհատենք , կրնաք վստահ ըլլալ . — Մօտե-  
 բըս (dernièrement) տեսարանն ըլլալով , խօսող նկար  
 եւ Լացոդ կիսն (խաղերուն) ներկայացուիլը տեսայ :  
 Այս վերջին խաղը (pièce) ինծի համար դրօնեցուցիչ  
 չըլլալով , նուազածութեան գացի , ուր երաժշտու-  
 թիւնն ինծի սաստիկ անգար (la migraine) պատճառեց :  
 Ան ատեն նուազածութիւնը թողուցի , անիծելով

գայն , եւ շխտակ յիմարանոց (l'hôpital des fous) գացի  
 հօրեղբորորդիս տեսնելու : Հօրեղբորորդւոյս յիմարա-  
 նոցը մանկելով սոսկմամբ բռնուեցայ ոչ սակաւ խնն-  
 թեր տեսնելով որ ինծի մօտեցան ցատկատելով եւ  
 սոնալով . — Ան աանն ի՞նչ բրիք . — Ես ալ այնպէս  
 բրի , եւ ես քաշուելով սկսան խնդալ :



ԿԹ. ԴԱՍ. Soixante-neuvième Leçon.

- Ինքդինք ծեծել տալ . Se faire battre.
- Իրեն վճարել տալ . Se faire payer.
- Ինքդինք ճաշի հրաւիրել տալ . Se faire inviter à dîner.
- Կախ . D'abord, premièrement, en premier lieu.
- Երկրորդ . Secondement, en second lieu.
- Երրորդ . Troisièmement, en troisième lieu.
- Ձեր մայրը տունն է . Votre mère est-elle chez elle, à la maison ?
- Հան է . Elle y est. Անոր տունը կ'երթամ . Je vais chez elle.
- Նիւթ , պատճառ մը . Un sujet.
- Վշտի , արամուտեան նիւթ մը . Un sujet de chagrin, de tristesse.
- Տրամուտեան նիւթ , պատճառ . Elle a un sujet de tristesse-մը ունի .
- Վշտը , le chagrin. Տրամուտեանը , la tristesse.
- Վանդատելու նիւթ , պատճառ . Il a sujet de se plaindre-ունի .
- Անոր պատճառ , նիւթ տրուե . On lui en a donné sujet-ցաւ ( արամուտեան ) .
- Վանդատելու պատճառ տալ . Donner sujet de plaindre, կամ de se plaindre.
- Բարկանալու , նեղանալու պատճառ ունիմ . J'ai sujet d'être en colère, կամ de me fâcher.
- Առանց պատճառի կը ծիծաղի . Il rit sans aucun sujet.
- Ասիկա երբեմն պատճառ , տե . Cela donne quelquefois sujet.

դի, առիթ կու առջ վէճի.	lieu, occasion à une dispute.
Այս կինը գուրս ելլելու պատ- րաստ է.	Cette femme est-elle prête à sortir ?
Է.	Elle l'est.
Հակառակ, ի հեճուկս.	Malgré, en dépit de.
Ասոր հայառակ.	Malgré cela.
Անոր, անոնց հակառակ.	Malgré lui, elle, eux, elles.
Վրան նայել.	Donner sur.
Պատուհանը փողոցին, գետա- կին վայ կը նայի.	La fenêtre donne sur la rue, la rivière.
Ետեւի դուռը պարտեղին վը- րայ է.	La porte du derrière donne sur le jardin.
Հեղձուցանել (ջուրի մեջ խեղդել).	Noyer.
Շուն մը հեղձուցանել.	Noyer un chien.
Ինքզինք հեղձուցանել.	Se noyer.
Պատուհանէն ցատկել, նետել.	Sauter, jeter par la fenêtre.
Կը հեղձնում.	Je me noie (Յեւ Դաս ԻԳ. Դիտ. Գ.)
Պատուհանէն ցատկեց.	Il sauta par la fenêtre.
Կցել, կապել.	Attacher.
Ծառին կապեցին.	On l'attacha à un arbre.
Անասունք (սխար, արջառ).	Le bétail, les bestiaux.
<b>ԳԻՏ. Ա. Bétail յոքնակի չունի :</b>	
Ինքզինք տաք, զով, մաքուր բանել.	Se tenir chaud, frais, propre.
Մէկուն դէմ զգոյշ կենալ.	Se tenir en garde contre quelqu'un.
Այս մարդուն դէմ զգոյշ կե- ցէք.	Tenez-vous en garde contre cet homme.
Զգուշանալ.	Prendre garde à.
Իթէ այս ձիէն չէք զգուշա- նար, ձեզ կ'արթցէ.	Si vous ne prenez pas garde à ce cheval, il vous don- nera un coup de pied.

- Ձգուշացէք որ չիխուք . Prenez garde de tomber.
- Ձգոյշ բլլալ բանէ մը . Etre sur ses gardes (avec համ՝ contre) .
- Ձգուշացէք . Tenez-vous, համ՝ soyez sur vos garde. Prenez garde.
- Իտրհուրք մը . Une pensée. Գաղափար մը . Une idée.
- Ձուարճարանու թիւն մը , հանճարեղ խօսք մը . Une saillie.
- Միտքը գալ . Venir à l'idée, venir en pensée, tomber dans l'esprit.
- Միտքս բան մը հու գայ . Il me vient une idée.
- Ասիկա երբէք միտքս չեկաւ . Cela ne m'est jamais tombé dans l'esprit.
- Յանդիմել , մտարեբել . S'aviser de.
- Անցեալ օր զիս գողնալու ( կողսպակալու ) մտարեբել . Il s'avisa l'autre jour de me voler.
- Ի՞նչ բանն է մտարեբէք . De quoi vous avisez-vous ?
- Իմ , ձեր , անոր տեղը . A ma place, à votre place, à sa place.
- Ամէն բան իւր տեղը դնել պէտք է . Il faut mettre chaque chose à sa place.
- Բոլորտեք , շուրջանակի . Autour, tout autour.
- Անդդից բոլորտեք նաւեցինք . Nous naviguâmes autour de l'Angleterre.
- Քաղաքը պտտեցան չքնաղ բաները տեսնելու համար . Ils se promenèrent par la ville, pour en voir les curiosités.
- Տանը բոլորտեք պտտել . Aller autour de la maison-faire le tour de la maison.
- Տունը պտտել . Se promener par համ՝ dans la maison.
- Արժեք , բլլալ ( աշխատի ) . Coûter.
- Ասիկա ձեզի քանիք է . Combien cela vous coûte-t-il ?
- Այս գիրքը ձեզի քանիք է գալ . Combien ce livre vous coûte-t-il ?
- Ինձի երէք ու կէս սկուտի է . Il me coûte trois écus et demi.

- Այս սեղանն անոր եօթը սկու... Cette table lui coûte sept  
տի եղաւ . écus.
- Միայն . Seul, իգ . seule.
- Մինակ էի . J'étais seul! Միայն կին մը . Une seule femme.
- Միայն Աստուած մը . Un seul Dieu.
- Աստուած միայն կրնայ ընել  
ասիկա . Dieu seul peut faire cela.
- Ասոր մտածութիւնը միայն  
յանցանք է . La seule pensée de cela est  
criminelle.
- Անգամ մը միայն կարդայր ըս- Une seule lecture ne suffit  
ւական չէ ճաշակ ունեցող  
մարդ մը գոհ ընելու . pas pour contenter un  
homme qui a du goût.
- Հրացանի հարուածով մը ըս- Tuer d'un coup d'arme à  
պաննել . feu.
- Մէկուն ըզեզն այրել ( գլխուն  
հրացան պարպելով սպան- Brûler la cervelle à quel-  
նել ) . qu'un.
- Ինք իւր ըզեզն այրել ատրճա- Se brûler la cervelle d'un  
նակով ( ինքզինք սպաննել ,  
գլխուն հրացան պարպելով ) . coup de pistolet.
- Իւր ըզեզն այրեց . Il s'est brûlé la cervelle.
- Երկայն ատեն ծառայեց , պա- Il servit longtemps, parvint  
տաններու հասաւ և գոհ մե- aux honneurs et mourut  
ռաւ . content.
- ԴԻՏ. Բ. Երբ քանի մը բայերու տէր բային Գ. դէմ-  
քի դերանունն է , եւ ըայերը միեւնոյն ժամանակն են ,  
դերանունը չի կրկնուիր :
- Աղքատ եկաւ , քիչ ժամանա- Il arriva pauvre, devint ri-  
կի մէջ հարուստ եղաւ և ո- che en peu de temps et  
ւելի քիչ ժամանակի մէջ  
կորսնցուց ամէն բան . perdit tout en moins de  
temps encore.


214. Հրահանգ

Ի՞նչ սենիք : Ինչո՞ւ այսպէս սուամաղձոտ կ'երև-  
 ւիք . — Այսպէս սուամաղձոտ (ախուր) չէի երեւեր ,  
 եթէ արամութեան պատճառ մը չունենայի : Լսեցի որ  
 բարեկամներէս մէկն ատրճանակի հարձուածով մը իւր  
 ըղեղն այրեց , եւ կնոջն ամենէն աղնիւ բարեկամու-  
 հիններէն մէկը չի՞նք հեղձամահ ըրաւ . — Մէր հեղձոց  
 ինքզինք . — Իւր ասնը ետեւէն անցնող գետին մէջ  
 խողզուած է : Երէկ առտուան ժամը չորսին , առանց  
 բան մը ըսելու մէկէն ելաւ , պարտէզին վրայ նստող  
 պատուհանէն ցատկեց , եւ ինքզինք գետակը նետեց  
 ու հեղձաւ . — Մեծ փափաք ունիմ այսօր լողանա-  
 լու . — Մէր կ'ուզէք լողանալ . — Գետակին մէջ .  
 — Ձէք վախնար որ կը հեղձնուք . — Ո՛հ , ո՛չ . լողալ  
 դիտեմ . — Ո՞վ սորվեցուց ձեզի . — Անցեալ ամառ  
 լողացման դպրոցին մէջ քանի մը դաս առի . — Ձեր  
 պարտքը ( դասը ) ե՞րբ լմնցուցիք . — Լմնցու-  
 ցած էի դայն , երբ գուք մտաք . — Անոնք որ ա-  
 մենէն աւելի նշագատեցին անոր իւր նախնեաց դահը  
 ելլելուն՝ անոնք են որ հիմա կ'աշխատին ամենէն ա-  
 ւելի կատաղութեամբ զանի գահավէժ ընելու . — Կե-  
 սար Բուրիկոն անցնելուն պէս , ալ խորհելու պէտք  
 չունեցաւ : Պարտաւորեցաւ յաղթել կամ մեռնել .  
 — Կայսր մը , աստեղաբաշխի մը դէմ բարկանալով ,  
 անոր հարցուց . « Թշուառական , ի՞նչ տեսակ մահ-  
 ուամբ կարծես թէ պիտի մեռնիս : » « Տենդէ պիտի  
 մեռնիմ , » պատասխանեց աստեղաբաշխը : « Կը սը-  
 տես , » ըսաւ կայսրը , « անմիջապէս ( հիմա ) ըոնի  
 մահուամբ պիտի մեռնիս : » Երբ ձերբակալ ըլլալու  
 վրայ էր , ըսաւ կայսր . « Տէր , հրամայեցէք որ երա-  
 կըս զմենն , պիտի գտնուի ( իմացուի ) որ տենդ ու-  
 նիմ : » Այս զուարճարանութիւնը փրկեց անոր կեանքու

## 245. Հրահանգ

Ար տեսնէ՞ք սա տունը վարը . — Ար տեսնեմ . ի՞նչ տուն է . — Պանդոկ մըն է . եթէ կ'ուզէք , դաւաթ մը գինի խմելու համար հոն մանենք , քանզի շատ ծարաւի եմ . — Միշտ կը ծարուիք , երբ պանդոկ մը կը տեսնէք . — Եթէ հոն մանենք , ձեր առողջութեանը պիտի խմեմ . — Ա՛լ չնարեմ չխմել , մանաւանդ քան պանդոկ մը մանել . — Մըբ պիտի վճարէք ինծի ինչ որ պարտական էք . — Մըբ ստակ ունենամ . այսօր ինէ խնդրել անօղուտ է . քանզի շատ աղէկ դիտէք որ բան մը չառնուիր անկէ որ բան մը չո՛ւնի . — Մըբ ստակ ունենալ կը կարծէք . — Գալ տարի ունենալ կը կարծեմ . — Ա՛լ ուզէ՞ք ընել ինչ որ ձեզի պիտի ըսեմ . — Ա՛լ ուզեմ ընել , եթէ չափազանց դժուարին չէ . — Ինչո՞ւ վրաս կը խնդաք . — Ձեր վրայ չեմ խնդար , այլ ձեր հանդերձին վրայ . — Ձերինին չի՞ նըմանիր . — Ձի նմանիր , քանզի իմինս կարճ է , ձերինը չափազանց երկայն . իմինս սեւ է , եւ ձերինը կանաչ . — Ինչո՞ւ այս մարդուն քով կը յաճախէք . — Անոր քով չէի յաճախեր , եթէ ինծի մեծամեծ ծառայութիւններ ըրած չըլլար . — Մի վստահիք , քանզի եթէ զգոյշ չըլլաք , ձեզ կը խարէ . — Ինչո՞ւ այնչափ կ'աշխատէք . — Ա՛շխատեմ որ մը հայրենեացս օգտակար ըլլալու համար . — Գեռ աղայ ըլլալով ( եղած ստեղծ ) որ մը հօրս ըսի . « Առուտուրէ չեմ հատկընար եւ ծախել չեմ գիտեր . թող տուէք ինձ խաղալ : » Հայրս ժպտելով պատասխան տուաւ . « Առուտուր ընելով կը սորոխի սակարկել . եւ ծախելով կը սորվուի ծախել : » « Բայց , սիրելի հայր » , պատասխանեցի , « խաղալով ալ խաղալ կը սորվուուի : » « Իրաւունք ունիք , » ըսաւ ինծի . բայց նախ պէտք է սորվել ինչ որ հարկաւոր եւ օգտակար է . — Մի

գատէք, դուք որ դատուել չէք ուղեր: Ինչո՞ւ ձեր ընկերին աչքին մէջ շիղը կը տեսնէք, դուք որ ձեր աչքին մէջ եղած դերանը չէք տեսներ. — Ձեր համարները կ'օրինակէի՞ք, եթէ ես իմիններս օրինակէի. — Կ'օրինակէի դանոնք, եթէ դուք ձերիններն օրինակէիք. — Ձեր քոյրն իւր նամակը նորէն գրած պիտի ըլլա՞ր, եթէ ես իմինս նորէն գրած ըլլայի. — Նորէն գրած պիտի ըլլա՞ր. — Մեկնած պիտի ըլլա՞ր, եթէ ես մեկնած ըլլայի. — Ձեռք կրնար ձեզի ըսել թէ ինչ բրած պիտի ըլլար, եթէ դուք մեկնած ըլլայիք:



Հ. ԴԱՍ. Soixante-et-dixième Leçon.

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ. De l'impératif.

ԴԻՏ. Ա. Հրամայականն առաջին դէմք չունի: Եւ գակի Բ. դէմքը սահմանական ներկային եղակի առաջին դէմքին հետ նոյն է՝ առանց դերանուան: Չոր օրինակ.

Մմ. Գերկ.	Հրամ.	Մմ. Գերկ.	Հրամ.
1. Լծ. Je parle.	parle.	2. Լծ. Je finis.	finis.
3. Լծ. Je reçois.	reçois.	4. Լծ. Je rends.	rends.

ԴԻՏ. Բ. Հրամայականին յոքնակի Ա. եւ Բ. դէմքերը նոյնպէս Սահմանական ներկային նոյն դէմքերն են առանց դերանուան. ինչպէս,

Մմ. Գերկ.	Հրամ.	Մմ. Գերկ.	Հրամ.
1. Լծ. Nous parlons.	Parlons.	Vous parlez,	Parlez.
2. Լծ. Nous finissons.	Finissons.	Vous finissez,	Finissez.
3. Լծ. Nous recevons.	Recevons.	Vous recevez,	Recevez.
4. Լծ. Nous rendons.	Rendons.	Vous rendez,	Rendez.

Հրամայականին երրորդ դէմքերը Ստորագասականն երկային երրորդ դէմքերուն հետ նոյն են : Ստորագասականին վրայ ետքը պիտի խօսինք :

ԳիՏ. Գ. վերի կանոնէն կը զարտուղին հետևեալ բայերուն հրամայականները .

Avoir,	j'ai.	Aie,	ayons,	ayez.
Etre,	je suis.	Sois,	soyons,	soyez.
Aller,	je vais.	Va,	allons,	allez. ( կանոնաւոր ) .
Savoir,	je sais.	Sache,	sachons,	sachez.
Vouloir,	je veux.	Veuille,	veuillez.	

Համբերեցէք . Ayez patience ! Ուշադիր եղիք . Soyez attentif ! Գացէք հոն . Allez-y. Տուէք թնձ . Donnez-le-moi. Անոր զրկեցէք զայն . Envoyez-le-lui. Փոխ տուէք թնձի . Prêtez-le-moi.

Աս պիտակն թնձի մատուցանելու շնորհք բրէք . Ayez la bonté de me passer ce plat.

Փոխ առնուլ . Emprunter à կամ de.

Ձեռնէ ստակ փոխ առնուլ կ'ուր . Je veux vous emprunter de l'argent.

Անկէ փոխ տուէք . Empruntez-le-lui կամ de lui.

Անկէ փոխ կ'առնում . Je le lui emprunte. Je l'emprunte de lui.

Այս գումարը բարեկամէ մը փոխ առաւ . Il a emprunté cette somme d'un ami կամ à un ami.

Անոր մի ըսէք . Ne le lui dites pas.

Անոնց մի տար . Ne le leur rendez pas.

Համբերութիւնք . La patience.

Անհամբերութիւնք . L'impatience.

Երթաւորք . le prochain. Քթախտախ տուփք . la tabatière.

Գումարք . La somme.

Բարի եղիք . Soyez bon. Գիացէք . Sachez-le.

ԳիՏ. Գ. Երբ խօսքը հաստատական է , հրամայականին զերանուէն խնդիրներն ընդհանրապէս բայէն

ևաքք կը դրուին , և Երկուքին մէջտեղ դիծ մը ( trait-d'union ) կը դրուի . ինչպէս՝ Donnez-moi, prêtez-le-lui, allons-y, ևն : Բայց երբ խօսքը բացասական է , դե-  
րանուն խնդիրներն առաջ կը դրուին . ինչպէս . Ne me  
donnez pas. Ne le lui prêtez pas, ևն :

Հնազանդիլ . Obéir . Մխիթարել . Consoler . Վշտացնել , սրբ-  
գողցնել . Offenser . Գործել , գործադրել . Pratiquer .

Հնազանդեցէք ձեր վարպետներ . Obéissez à vos maîtres, et  
բուն , և անոնց վիշտ մի պատ- ne leur donnez jamais de  
ճառէք . chagrin .

Հատուցէք ինչ որ պարտիք , Payez ce que vous devez,  
մխիթարեցէք արամեալները consolez les affligés et fai-  
և բարիք բրէք անոնց որ ձեզ tés du bien à ceux qui  
վշտացուցած են . vous ont offensés .

Վերեցէք դ Աստուած և ձեր ըն- Aimez Dieu et votre pro-  
կերը ձեզի պէս . chain comme vous-mêmes .

Աւարինութիւնը սիրենք և գոր- Aimons et pratiquons tou-  
ծենք միշտ , և այս ու միւս jours la vertu, et nous se-  
աշխարհի մէջ երջանիկ պիտի rons heureux dans cette  
բլլանք . vie et dans l'autre .

Տեսնենք ով աղէկ պիտի պար- Voyons qui tirera le mieux .  
պէ ( հրացան ) .

Բացատրել . Exprimer . Մեռքը յայտնել . S'exprimer .

Միտքը հասկցնել .

Se faire comprendre .

Սովորութիւն ունենալ .

Avoir l'habitude, la coutume .

Սովորեցնել .

Accoutumer, habituer .

Սովորել .

S'accoutumer à .

Պէտք է տղայք կանուխ աշխա- Il faut accoutumer de bonne  
տութեան սովորեցնել . heure les enfants au tra-  
vail .

Սովորել .

Etre accoutumé .

Սովորած եմ ասոր .

J'y suis accoutumé .

Չեմ կրնար միտքս Գաղիերէն Je ne peux pas bien m'ex-  
աղէկ յայտնել , քանզի խո- primer en français par ce  
տելու սովորութիւն չունիմ . que je n'ai pas l'habitude  
de le parler .

de le parler .

Ըստ արժանւոյն կը խօսիք . Vous parlez comme il faut.  
 Շատխօսել, շաղփաղփել . Causer, bavarder, jaser.  
 Շատախօս . Un causeur, էգ. une causeuse.  
 Շաղակրատ . Un jaseur, ,, une jaseuse.  
 Շաղակրատ . Un bavard, ,, une bavarde.

ԳԻՏ. Ե. Causer, կը նշանակէ ընտանեքար խօսել  
 դորժի մը կամ ջնչին բանի մը վրայ : Chuchoter, ա-  
 կանօրին փսփսալ ըսել է : Jaboter, կը նշանակէ մէկ-  
 դի քաշուելով առանձինն եւ կամաց խօսել , այնպէս  
 որ ուրիշ ներկայ եղողները չկարենան լսել : Jaser, կը  
 նշանակէ շատ եւ անխորհրդաբար խօսել : Caquetter,  
 շարունակ եւ բարձրաձայնի խօսել կը նշանակէ . այն-  
 պէս որ ուրիշները կը ձանձրանան : Bavarder, կը նը-  
 շանակէ ջնչին բաներու վրայ խօսելով ձանձրացնել :

Կրթել .	Exercer.
Խօսելու կը կրթուիմ .	Je m'exerce à parler.
Թող տալ .	Permettre.
Թողլատուութիւն , հրաման .	La permission.
Կը թողում որ երթաք .	Je vous permets d'y aller.
Աշքատներուն բարիք ըրէք ,	Faites du bien aux pauvres,
թշուառներուն գթացէք ,	ayez compassion des mal-
և մնացածը կը հոգայ Աստ- ուած .	heureux, et le bon Dieu aura soin du reste.

Բարիք ընել . Faire du bien. Գթալ . Avoir pitié de. Գք-  
 Թութիւն . La compassion, la commisération, la miséricor-  
 de, la pitié. Մնացածը , մնացորդը . Le reste.

Եթէ կու գայ , ըսէք որ պար- S'il vient, dites-lui que je  
 տէղն եմ . suis au jardin.

ԳԻՏ. Չ. Si շաղխապին i դիրը , il, ils գերանուհնե-  
 րէն առաջ կը կրճատուի , s'il, s'ils. Բայց ոչ elle եւ  
 elles էն առաջ :

Երբ on գերանուհնէն առաջ et, ou, où, si բառերը

կանս , ձայնի քաղցրութեան համար երկուքին մէջտեղ  
 1' կը գրուի :

Վաճառականին հարցուր թէ Demandez au marchand s'il  
 կրնայ ինձի ձին տալ այն peut me donner le cheval  
 դ՛նով զոր անոր առաջար- au prix que je lui ai offert.  
 կեցի .

Յարգացի , և ինձի պատմուե- J'ai lu et l'on m'a raconté.  
 ջաւ .

Եթէ ձեր բրածք զխոցուէր . Si l'on savait ce que vous  
 avez fait.

Երկիրն ուր ազամանդը կը գրա- Le pays où l'on trouve le  
 նուի . diamant.

Ձեզի ըսուեցաւ , կամ ընդ On vous a dit déjà, ou l'on  
 հույ պիտի ըսուի . vous dira bientôt.

ԴԻՏ. Է. Եթէ ձայնի քաղցրութեան համար հարկ  
 ըլլայ , que եւ qui էն ետքն ալ on ին վրայ 1' կը գրու-  
 ուի :

Աղէկ հասկցուածն աղէկ կը Ce que l'on conçoit bien,  
 բացատրուի . s'énonce clairement.

Ծարգ չի սիրեր տեսնել զանոնք On n'aime pas à voir ceux  
 որոց պարտականութիւն մը à qui l'on doit tant.  
 ունի .

ԴԻՏ. Ը. Երբ on էն ետքը le, la, les կայ , on էն ա-  
 ռաջ 1' գիրը չի գրուիր . Je ne veux pas qu'on le tour-  
 mente. եւ ոչ que l'on le tourmente.

216. Հրահանգ

Համբերէ , սիրելի բարեկամ , արտում մի ըլլար .  
 քանզի արտումութիւնը բան մը չի փոխեր , եւ անհամ-  
 բերութիւնը չարիքն աւելի կը սաստկացնէ . — Ձեր  
 պարտատէրներէն մի վախնաք . ապահով եղիք որ ա-  
 նոնք ձեզի մնաս պիտի չընեն . պիտի սղասեն , եթէ  
 տակաւին չէք կրնար անոնց վճարել . — Ե՞րբ պիտի

վճարէք ինչ որ ինծի պարտական էք . — Ստակ ունենալուս պէս , ձեզի պիտի վճարեմ ինչ որ ինծի համար կանխաւ տուիք : Մոռցած չեմ , քանզի ամէն օր անոր վրայ կը խորհիմ : Ձեր պարտապանն եմ , եւ երբէք պիտի չուբանամ . — Այդ ի՞նչ գեղեցիկ կաղամար ունիք . ինծի փոխ տուէք զայն , կ'աղաչեմ . — Ձայն ի՞նչ ընել կ'ուզէք . — Յրոջս ցուցնել կ'ուզեմ . — Առէք , բայց հող տարէք եւ մի կտարէք . — Մի վախնաք . — Նղրօրմէս ի՞նչ կը բաղձաք . — Անկէ ստակ փոխ առնուլ կ'ուզեմ . — Ուրիշէ մը փոխ առէք . — Նթէ այն ինծի փոխ տալ չուզեր , ուրիշէ մը փոխ առնում . — Աղէկ կ'ընէք . — Մի փափաքիք ինչ որ չէք կրնար ունենալ , այլ դո՛ հելիք անտղ որ Նախախնամութիւնը ձեզի տուած է , եւ խորհեցէք որ շատ մարդիկ կան որ ձեր ունեցածը չունին . — Կեանքը կարճ ըլլալով , ջանանք զայն այնպէս դուարձալի ընել որչափ կարելի է : Բայց նկատենք նաեւ որ հեշտութեանց զեղծումը զայն դառն կ'ընէ . — Ձեր համարներն բրի՛ք . — Ձանոնք չկրցայ ընել , քանզի եղբայրս տունը չէր . — Պէտք չէ որ դասերը ձեր եղբորն ընել տաք , այլ պէտք է որ դուք անձամբ ընէք . — Ի՞նչ կ'ընէք հոս . — Ձեր փոխ տուած գիրքը կը կարդամ . — Ձայն միշտ կարդալ աղէկ չէք ընէր . — Ի՞նչ ընելու եմ . — Այս գիւղանկարը գծադրեցէք , եւ երբ գծադրած ըլլաք , գոյականներու հետ միացեալ ածականներ հարովեցէք :

## 247. Հրահանգ

Երջանիկ ըլլալու համար ի՞նչ ընել պէտք է . — Միշտ սիրեցէք եւ գործեցէք առաքինութիւնը , եւ երջանիկ պիտի ըլլաք այս եւ միւս կեանքին մէջ . — Որովհետեւ երջանիկ ըլլալ կ'ուզենք , աղքատաց բարիքը ը-

նենք, և թշուառաց գլխանք. մեր վարպետներուն հնազանդինք և անոնց երբէք վիշտ չտանք. դժբախտները մխիթարենք, մեր ընկերը մեզի պէս սիրենք, և չատենք զանոնք որ մեզ վշտացուցած են. մէկ խօսքով միշտ մեր պարտականութիւնը կատարենք, և Աստուած կը հոգայ մնացածը. — Որդեակ, սիրուելու համար պէտք է աշխատասէր և խելօք ըլլալ: Կ'ամբաստանուիս որ քու գործերուդ մէջ ծոյլ և անհոգ ևս. գիտես սակայն որ եղբայրդ չար ըլլալուն համար պատժուեցաւ: Անցեալ օր քաղաքն ըլլալով, զաստիարակէդ նամակ մը ընդունեցայ, որուն մէջ անիկա քննէ կը գանգատէր: Մի լար. գնա հիմա քու սենեակդ, դասդ սորվէ, և խելօք եղիր. ապա թէ ոչ (autrement) ճաշելու բան մը պիտի չունենաս. — Այնպէս խելօք պիտի ըլլամ, սիրելի հայրս, որ ինէ ստուգիւ դո՛ւ պիտի ըլլաք. — Փոքրիկ մանչն իւր խօսքը բռնեց. — Ոչ բոլորովին, քանզի ասիկա ըսելէն ետքը, իւր սենեակը գնաց, առաւ իւր գիրքերը, սեղանի մը առջև նստաւ և նիրհեց. — «Շատ աղէկ մանչ մըն է, երբ կը քնանայ,» ըսաւ հայրը, դանի քիչ մը ժամանակ ետքը տեսնելով. — Բարիւոյս, օրիորդ. — Ո՛հ, վերջապէս եկա՞ք: Անհամբերութեամբ ձեզի սպասեցի. — Ինծի ներեցէք, սիրելիս, աւելի կանուխ չկրցայ գալ. — Նստեցէք, եթէ կը հաճիք. — Ձեր մայրն ի՞նչպէս է. — Այսօր աւելի աղէկ է քան որչափ էր երէկ. — Շատ ուրախ եմ. — Երէկ պարահանդէս գացի՞ք. — Գացի. — Շատ զբօսա՞ք. — Բաւական. — Ժամը քանի՞ն տուն կ'կաք. — Ժամը տանուամէկը քառորդ անցած:

## 218. Հրահանգ

Շատո՞նց է որ Գաղիերէն կը սորվիք . — Ոչ, տէր, վեց ամիսէ ի վեր կը սորվիմ . — Կարելի՞ է . այսչափ քիչ ժամանակի համար շատ աղէկ կը խօսիք . — Կատակ կ'ընէք . զխոցածս դեռ մեծ բան մը չէ . — Ճըմարիտ, արդէն աղէկ կը խօսիք . — Կարծեմ զիս քիչ մը կը շողոքորթէք . — Ոչ ընաւ . ըստ արժանւոյն կը խօսիք . — Ըստ արժանւոյն խօսելու համար, աւելի պէտք է զիտնալ որչափ ես չեմ գիտեր . — Ձեր միտքը հասկցնելու համար բաւական գիտէք . — Դեռ շատ սխալ կ'ընեմ . — Այս բան մը չէ (Ֆրանս չունի) պէտք չէ երկչոտ ըլլալ . դարձեալ՝ ձեր ըսածներուն մէջ սրխալ չըրիք . — Դեռ երկչոտ եմ, վասն զի կը վախնամ թէ կը ծաղրուիմ . — Շատ անքաղաքավար ըլլալու է ձեզ ծաղրելու համար : Ո՞վ այնչափ անքաղաքավար կրնայ ըլլալ ձեզ ծաղրելու համար . — Առակը չէ՞ք գիտեր . — Ի՞նչ առակ . — Այն որ աղէկ խօսել կ'ուզէ, գէշ խօսելով սկսելու է . — Կը հասկնամք ինչ որ կ'ըսեմ . — Շատ աղէկ կը հասկնամ . բայց դեռ միտքըս աղէկ չեմ կրնար բացատրել Գաղիերէն, քանզի խօսելու վարժութիւնը չունիմ . — Ասիկա ժամանակաւ կու դայ . — Բոլոր սրտով կը փափաքիմ :

Երբեմն եղբայրս կը տեսնէ՞ք . — Երբեմն կը տեսնեմ : Երբ անցեալ օր անոր հանդիպեցայ, ձեր վրայով դանդատեցաւ : « Եթէ աւելի աղէկ վարուած ըլլար, եւ աւելի խնայող եղած ըլլար, պէտք չէր ունենար, եւ ես անոր դէմ նեղացած չէի ըլլար . » — Անոր ազակեցի որ ձեզի դիմայ, անոր ըսելով թէ դուք հաց դնելու համար անգամ բաւական ստակ չունիք . — « Անոր ըսէք, երբ կը տեսնէք, » ըսաւ ինծի, « որ անոր ինծի դէմ գէշ վարմանը հակառակ, անոր կը նե-

բևմ : » « Ըսէ նաև , » շարունակեց , « թէ պէտք չէ ծաղրել զանոնք որոց մարդ երախտապարտ է . շքնորհք ըրէք ասիկա ընելու , եւ ձեզի շատ երախտապարտ պիտի ըլլամ , » ըսաւ հեռանալով :



ՀԱ. ԴԱՍ. Soixante-et-onzième Leçon.

- Կանգնել , կենալ . Etre *կամ* se tenir debout, être debout, se soutenir.
- Ելլել ( անկողնէն ) . Etre debout, être levé.
- Հսկել , չպառկել . Rester, demeurer debout; veiller.
- Կ'ուզէ՞ք ինձի թողլ տալ շուկա երթալու . Voulez-vous me permettre d'aller au marché ?
- Փուխտալ , անապարել . Se dépêcher.
- Փուխտացէք եւ շուտով եկէք . Dépêchez-vous et venez bientôt.
- Գացէք անոր ըսելու որ այսօր չեմ կրնար գալ . Allez lui dire que je ne puis venir aujourd'hui.
- Եկաւ մեզի ըսելու թէ չէր կրնար գալ . Il vint nous dire qu'il ne pouvait pas venir.
- Գացէք մեր բարեկամները տեսնելու . Allez voir nos amis !
- Լալ . Pleurer.
- Ամենէն պզտիկ ( թեթեւ ) հարուածը զանի կը լացունէ . Le moindre coup le fait pleurer.
- Վախցնել . Effrayer. Վախնալ . S'effrayer de . . .
- Դոյզն բան մը զանի կը վախցնէ . La moindre chose l'effraie.
- Մի վախնաք . Ne vous effrayez pas.
- Ի՞նչ բանէ կը վախնաք . De quoi vous effrayez-vous ?
- Իմ փնասով . A mes dépens. Անոր փնասով . A ses dépens. Մեր փնասով . A nos dépens. Ուրիշին փնասով . Aux dépens d'autrui.

- Այս մարդն ամենուն վնասողը կ'ապրի . Cet homme vit aux dépens de tout le monde.
- Կախեալ բլլալ . Dépendre de.
- Ասիկա պարագաներէն կախում ունի . Cela dépend des circonstances.
- Ասիկա ինէ կախում չունի . Cela ne dépend pas de moi.
- Ասիկա ընել անկէ կախում ունի . Il dépend de lui de faire cela.
- Ո՛հ, այո, ասիկա անկէ կախում ունի . Oh ! oui, cela dépend de lui.
- Զարմացնել . Etonner . Զարմանալ . S'étonner . Զարմանալ . Etre étonné de . . .
- Անոր վրայ զարմացած եմ . J'en suis étonné.
- Կարգէ գուրս բան մը պատահեցաւ որ ամէն մարդ զարմացուց . Il arriva une chose extraordinaire, qui étonna tout le monde.
- Պատահել, դիպել . Se passer, arriver.
- Անցնիլ . Se passer.
- Շատ բաներ պատահեցան որ ձեզ պիտի զարմացնեն . Il s'est passé bien des choses qui vous surprendront.
- Ամառը շուտ պիտի անցնի . L'été se passe bientôt.
- Զարմացնել . Surprendre.
- Ասկէ մինչև հոն շատ օրեր պիտի անցնին . Il se passera plusieurs jours d'ici là.
- Մարդ մը մտաւ որ ինծի հարցուց թէ ինչպէս էի . Il entra un homme qui me demanda comment je me portais.
- Ապա, ուրեմն . Donc . Վասն որոյ . C'est pourquoi.
- Անցեալ օր . L'autre jour . Մօտերս . Dernièrement.
- Քիչ ատենէն . Dans peu de temps.
- Մէջ . Dans ( ապագայ ժամանակի համար ) . En ( անցեալ ժամանակի համար ) .
- Ութ օրէն պիտի գայ . Il arrivera dans huit jours.
- Այս ճամբորդութիւնը ութ օրուան մէջ բրաւ . Il a fait ce voyage en huit jours.
- Երեք ամսէն իւր ուսմանըը լնացած պիտի բլլայ . Il aura fini ses études dans trois mois.

Տարուան մը մէջ ուսմանըը լմնաց .	Il a fini ses études en un an.
Գլխաւորաբար երկրաչափութեան դասընցաւ .	Il s'est appliqué principalement <i>կամ</i> particulièrement à la géometrie.
Գլխաւորաբար երկրաչափութիւն սորվեցաւ .	Il a fait une étude particulière de la géometrie.
Շատ բարեկամներ ունի .	Il a bien des amis, <i>կամ</i> beaucoup d'amis.

ԳԻՏ. Bien, շատ, *խնդիրը յօդով կ'ուղէ* du, de la, des. Beaucoup, *աւանց յօդի* de, d' ուլ *միայն կ'անու* խնդիր :

Շատ համբերութիւն ունիք .

{ Vous avez bien de la patience.  
Vous avez beaucoup de patience.

Շատ ստակ ունին .

{ Ils ont bien de l'argent.  
Ils ont beaucoup d'argent.

Շատ քաջասրտութիւն ունիք .

{ Vous avez bien du courage.  
" " beaucoup de "

Ընծայ ընել բան մը մէկուն .

Faire présent, cadeau de quelque chose à quelqu'un.

Պարոն Լամպեր ինծի գրեց անցեալ օր թէ իւր քոյրերը պիտի գան հաս քիչ ասուներն, և աղաչեց ինծի ձեզի ըսել : Ուստի կրնաք զանոնք տեսնել, և ձեր գնած գիրքերն անոնց տալ : Անոնք կը յաւան թէ գիրքերն անոնց ընծայ պիտի ընէք : Անոնց եղբայրը զիս ապահովեց (ըսաւ) թէ անոնք ձեզ կը յարգեն, առանց ձեզ անձամբ ճանչնալու :

Monsieur Lambert m'écrivit l'autre jour que mesdemoiselles ses sœurs viendraient ici dans peu de temps, et me pair de vous le dire. Vous pourrez donc les voir et leur donner les livres que vous avez achetés. Elles espèrent que vous leur en ferez cadeau. Leur frère m'a assuré qu'elles vous estiment, sans vous connaître personnellement.

Ձանձրանալ .

S'ennuyer de *կամ* à.

Ձեր քով ի՞նչպէս կրնայի ձանձ- րանալ .	Comment pourrais-je m'en- nuyer auprès de vous ?
Ամէն տեղ կը ձանձրանայ .	Il s'ennuie partout.
Մպասելէն կը ձանձրանայ .	Il s'ennuie d'attendre.
Հաճոյ .	Agréable.
Այս ամանը հաճելի ձեւ մը ու- նի .	Ce vase a une forme agréa- ble.
Մտրդասէր .	Complaisant, obligeant.
Ինծի հետ շատ սիրով վարուե- ցաւ .	Il en a usé fort obligeam- ment համ՝ complaisam- ment à mon égard.
Բարո Վ գալ .	Etre le bienvenu.
Ամէն տեղ աղէկ կ'ընդունուիք .	Vous êtes partout le bien- venu.

## 219. Հրահանգ

Տաշտ (ֆիլճան) մը չայ խմել կ'ուղէ՞ք . — Շնորհա-  
կալ եմ : չայը չեմ սիրեր . — Սուրճը կը սիրէ՞ք . — Այր  
սիրեմ , բայց նոր խմեցի . — Հոս չէ՞ք ձանձրանաք .  
— Ի՞նչպէս կրնամ ձանձրանալ այս հաճելի ընկերու-  
թեան մէջ . — Իսկ ես , միշտ կը ձանձրանամ . — Եթէ  
ինծի պէս ընէիք , չէիք ձանձրանաք . քանզի մտիկ  
կ'ընեմ բոլոր անոնք որ ինծի բան մը կ'ըսեն . այս ե-  
ղանակաւ հազար հաճելի բան կը սորվիմ , եւ ժամա-  
նակ չեմ ունենար ձանձրանալու . բայց դուք ասոնց-  
մէ բան մը չէք ըներ , ահա ինչու համար կը ձանձ-  
րանաք . — Ես ալ ճիշդ ձեզի պէս կ'ընէի , եթէ տըր-  
տում ըլլալու պատճառ չունենայի . — Ար . Վամպէրը  
տեսա՞ք . — Տեսայ . ըսաւ թէ իւր քոյրերը քիչ ատե-  
նէն հոս պիտի ըլլան (դան) , եւ աղաչեց ինծի որ  
ձեզի ըսեմ : Երբ անոնք համայն (դան) , կրնաք ա-  
նոնց տալ ոսկիէ մասնին զոր գնեցիք . կը յուսան թէ  
դայն իրենց ընծայ պիտի ընէք , քանզի ձեզ կը սի-  
րեն առանց ձեզ անձամբ ճանչնալու . — Քոյրս ձեզի

դրեց . — Գրեց , եւ ես սլիտի պատասխանեմ . — Պէ՞տք է անոր ըսել թէ հոս էք . — Ըսէք . բայց մ'ըսէք թէ անհամբերութեամբ անոր կը սպասեմ . — Ինչո՞ւ ձեր քայրը չբերեք . — Ո՞րը . — Այն դոր միշտ կը բերէք , կրտսերը . — Դուրս ելլել չէր ուղեր , քանզի շատ աղէկ աղջիկ մի է . — Քանի՞ տարեկան է . — Գրեթէ տասնեւհինգ տարեկան է . — Տարիքին նայելով բաւական մեծ է . — Քանի՞ տարուան էք , — Քսանեւերկու տարուան եմ . — Կարելի է . կը կարծէի թէ դու քսան տարեկան չէք :



ՀՐ. ԳԱՍ. Soixante-douzième Leçon.

ԲԱՅԱՍՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Ոչ. Ne—pas. Ne point.

ԳԻՏ. Ա. Ne անմիջապէս բայէն առաջ կը դրուի , իսկ pas, բայէն ետքը , բաղադրեալ ժամանակներու մէջ ընդունելութիւն անցնալէն առաջ . Je ne parle pas— Je n'ai pas parlé.

ԳԻՐՔԱ չունի՞ք . N'avez-vous pas mon livre ? Զու՞հիմ . Je ne l'ai pas. Այս մարդուն մի խօսիք . Ne parlez pas à cet homme. Եղբայրս չե՞ստա՞ք . N'avez-vous pas vu mon frère ? Գողիերէն չսորվեցա՞ւ . N'a-t-il pas appris le français ? Զըսորվեցաւ . Il ne l'a pas appris.

ԳԻՏ. Բ. Ne եւ pas երկուքն ալ աներկուայթէն առաջ կը դրուին .

Զիս այնչափ կը սիրէ որ չի կրնար չընել .	Il m'aime trop pour ne pas le faire.
Կ'երթամ , անոր անհամար չըլլալու համար .	Je m'en vais pour ne pas lui déplaire.

Քիչ խելք ունենալու է ասի- Il faut être peu sensé pour  
կա չտեսնելու համար . ne pas voir cela.

ԴԻՏ. Գ. Cesser de, դադրել . Oser, համարձակել .  
Pouvoir, կրնալ եւ Savoir, գիտնալ բայերուն հետ ne  
միայն կը գործածուի առանց pas ՚ :

Ինչ ստակ խնդրելէ չէք դադ- Vous ne cessez de me de-  
րիք . mander de l'argent.  
Գանդատելէն չի դադրիք . Elle ne cesse de se plaindre.  
Ձեռնէ խնդրելու չեմ համարձա- Je n'ose vous le demander.  
կիք .  
Ձեզի ըսելու չի համարձակիք . Elle n'ose vous le dire.  
Ձեմ կրնար հոն երթալ . Je ne puis y aller. կամ je  
ne peux pas y aller.  
Ձեմ կրնար ըսել ձեզի . Je ne saurais vous le dire.  
Ձեիք կրնար հաւատալ . Vous ne sauriez le croire.

ԴԻՏ. Դ. Pas լոկ կը բացասէ . point բնաւ ՚ նշանա-  
կութիւն ունի . Il ne dort pas. Il ne mange pas. կը նը-  
շանակենն ճիմա չի քնանար (կոր), ճիմա չուտեր (կոր) .  
Il ne dort point, il ne mange point, կը նշանակենն՝ ընաւ .  
չի քնանար, ընաւ չուտեր, այսինքն քնոյ եւ ախոր-  
ժակի պակասութիւն ունի :

ԴԻՏ. Ե. Երբ խօսքին մէջ բացասող բառ մը կայ,  
ինչպէս aucun, nul, rien, personne, jamais, ni, այն ա-  
տեն pas չի գործածուիր .

Բան մը չըսեր . Il ne dit rien. Ամենեւին գիրք չունիմ . Je  
n'ai aucun livre. Այս անձը երբէք չտեսայ . Je n'ai jamais  
vu cette personne.

Բաց աստի, դարձեալ . En outre, d'ailleurs.

Բաց ի . Outre. Բաց ասկէ . Outre cela. Հիմա ըսածէս զատ .  
Outre ce que je viens de dire.

Քշել, մղել .

Pousser.

- Համբուռն, փողոցին երկայնու- Le long du chemin, de la  
թեանը . rue.
- Բայր երկայնութեանը . Tout le long de.
- Բայր սարւոյն ընթացքին մէջ . Tout le long de l'année.
- Կարող ընել . Mettre à même de . . .
- Կարող, ի վիճակի ըլլալ . Etre en état de, être à même de . . .
- Առիթ, պատահութիւն տալ . Procurer, fournir l'occasion de . . . Donner occasion de.
- Աջ դին, աջէն . A droite; à main droite.
- Ձախ դին, ձախէն . A gauche; à main gauche.
- Ձէք կրնար ըսել ինձի որն է Ne pourriez-vous pas me le  
ամենէն կարճ ճամբան քաղ- dire quel est le chemin le  
քին դուռը հասնելու . plus court pour arriver à la porte de la ville.
- Այս փողոցէն դացէք, և երբ Suivez cette rue, et quand  
ծայրը հու դար, աջ դար- vous serez au bout, tour-  
ձէք պիտի գտնէք քառուղի նեք որմէ անցէք .  
մը որմէ անցէք .  
vous traverserez.
- Եւ ետքը . Et puis ?
- Ետքը պիտի մտնէք բաւական Puis vous entrerez dans une  
լայն փողոց մը որ ձեզ պի- rue assez large qui vous  
տի տանի մեծ հրապարակ մը ուր պիտի տեսնէք անձը (չըգմաղ) մը . mènera sur une grande place, où vous verrez un impasse կամ cul-de sac (այս վերջինը քիչ կը գործածուի) .
- Մնել փողոցն աջդին թողէք Vous laisserez l'impasse à  
և անցէք քովի կամարակապ gauche et vous passerez  
ճամբուռն տակէն, և ապա sous les arcades qui sont  
հարցուցէք . à côté. Ensuite vous de- manderez.

Կամարածեւ ճամբայ մը . Une arcade. Քառուղի (տեղիթեւոլ ազրը) . Le carrefour. Անել փողոցը . Le cul-de-sac կամ l'impasse. Քետակը, դետը . La rivière, le fleuve.

Ամուսնանալ . Se marier avec.

Անուղ մէկը (ամուսնութեան) . Epouser quelqu'un.

Ամուսնացնել . Marier, donner en mariage, à, avec.

Հօրեղբորորդիս իւր քայրք կար- Mon cousin, ayant marié sa  
գելով, ինքն ալ Տէլլիի օրի- sœur, épousa mademoiselle  
որդն առաւ . Delby .

Ձեր հօրեղբորորդին ամուսնա- Votre cousin est-il marié ?  
յած է .

Ոչ, դեռ ամուրի է . Non, il est encore garçon .

Ամուրի ըլլալ .

Etre garçon .

Շփոթեալ, վարանեալ .

Embarrassé .

Շփոթուածիւն, վարանք մը . Un embarras . Ձեռ կը վարանե-  
ցնէք . Vous m'embarrassez . Ձեռ վարանման մէջ կը գնէք .  
Vous me mettez dans l'embarras .  
Vous me mettez dans l'embarras .

Ամուսնութիւն . Le mariage . Քոյրս առնուլ կ'ուզէ . Il de-  
mande ma sœur en mariage .

Չափ, միջոց, հնարք .

La mesure .

Հնարք, միջոց ձեռք առնուլ . Prendre des mesures .

Ուրիշ հնարք ձեռք կ'առնում . Je prendrai d'autres mesures .

Իմբէ, ժամանակն ի՛նչպէս Mon Dieu ! que le temps pas-  
շուտ կ'անցնի ձեր ընկերու- se vite dans votre société  
թեան մէջ . k'ad votre compagnie .

Մեծարանք, քաղաքավարու- Le compliment .

թիւն .

Ինձի քաղաքավարութիւն մը . Vous me faites un compli-  
կ'ընէք որուն չեմ գիտեր ինչ- ment auquel je ne sais que  
պատասխանեմ , répondre .

Յանցանքք . La faute . Յանցանքն իմն չէ . Ce n'est pas ma  
faute . Ինձի յանցանք մի համարիք . Ne m'imputez pas cette  
faute .

Յանցանք գնել, մեղադրել . Imputer ( արական ինդիք կ'ու-  
ղէ ) .

Յանցանքն որո՞ւ է . A qui est la faute ?

Ձեմ գիտեմ ինչ ընեմ . Je ne sais k'ad saurais qu'y  
faire .

Յապաղումը . Le délai . Անյապաղ կ'ընէ . Il le fait sans  
délai .

Կ'երթամ, մեկնելու եմ. Je me sauve. Il faut que je m'en aille

Գացէք, կորսուեցէք. Allez-vous en!

Պիտի անձրեւէ, երթամ. Il va pleuvoir, je me sauve.

Կատակ ընել. Plaisanter, badiner. Կատակը. La plaisanterie, le badinage.

Կատակ կ'ընէք, կը ծաղրէք. Vous badinez. vous vous moquez.

Կատակ չի դիտեր. Il n'entend pas raillerie.

Ներում խնդրել մեկնն. Demander pardon à quelqu'un.

Ներել. Pardonner. Ներումը. Le pardon. Ներում կը խնդրեմ. Je vous demande pardon.

Յառաջանալ. Avancer. Ժամացոյցը յառաջ կ'երթայ. La montre avance.

Ետ մեալ. Retarder. Ժամացոյցը ետ կը մնայ. La montre retarde.

Կեանալ. S'arrêter. Ժամացոյցս կեցաւ. Ma montre s'est arrêtée.

Ո՞ւր էիք. Où en étions-nous?

Քառասներորդ դասին էիք, էջ հարիւր երեսուն և վեց. Nous en étions à la quarantième leçon, page cent trente six.

Դի՛Տ. Ձ. Օù sommes-nous? կը նշանակէ. Ո՞ւր, ո՞ր տեղ ենք. Օù en sommes-nous? կը նշանակէ, զիրքի մը կամ զործողութեան մը ո՞ր կէտին հասած ենք.

Ժամացոյց մը լարել. Remonter une montre.

Ժամացոյց մը ուղղել. Régler une montre.

Ձեր ժամացոյցը քսան րոպէ առաջ է, իսկ իմինս քառորդ մը ետք է. Votre montre avance de vingt minutes, et la mienne retarde d'un quart d'heure.

Կեսը պիտի զարնէ. Il va sonner midi.

Կեսօրը զարկա՞ւ. Midi est-il déjà sonné?

Չարնել. Sonner.

Պայմանաւ . A condition; sous condition. Ենթադրելով .  
Supposé.

Ձեզի ստակ փոխ պիտի տամ  
սա պայմանաւ որ այսուհե-  
տեւ աւելի խնայող պիտի  
բլտք քան որչափ ցարդ է-  
իք . Je vous prêterai de l'argent  
à condition que vous serez  
désormais plus économe que  
vous ne l'avez été jusqu'à  
présent.

Այսուհետեւ , առ յապա . Désormais, dorénavant, à  
l'avenir.

Ապագան . L'avenir.

Խնայող . Econome, économique,  
ménager.

Խաղէ հրաժարել , ես կենալ . Renoncer au jeu.

Մէկուն խորհուրդին հետեւիլ . Suivre un conseil.

Շատ տխուր , սեւամաղձաւ  
կ'երեւարք . Vous avez l'air si mélan-  
colique.

Մնար բարով . Adieu. Au plaisir de vous revoir, կամ  
սոյորարար , au revoir.

## 220. Հրամանգ

Ժամը քանի՞ն է . — Ժամը մէկ ու կէսն է . — Կ'ը-  
նէք թէ ժամը մէկ ու կէս է . իմ ժամացոյցս դեռ  
կէսօր ու կէս ( տասուերկուք ու կէս ) է . — Ընդհուպ  
երկուք պիտի զարնէ . — Ներկեցէք , դեռ ժամը մէկը  
չղարկաւ . — Ապագանոյցնեմ ձեզ որ ժամը մէկը քը-  
սան եւ հինգ բողէ անցած է , քանդի ժամացոյցս  
չատ աղէկ կ'երթայ . — Տէ՛ր Աստուած , ժամանակն  
ի՛նչ շուտ կ'անցնի ձեր ընկերութեան մէջ . — Ինծի  
քաղաքավարութիւն մը կ'ընէք որուն շեմ դիտեր ինչ  
պատասխանեմ . — Ձեր ժամացոյցը Բարի՛դ գնեցիք .  
— Ձանի չգնեցի , հօրեղբայրս զայն ինձ ընծայ ըրաւ .  
— Այս կիներ ձեզի բնչ վատահացաւ . — Ինծի կոմսի  
մը դաղանիքը վատահացաւ , որ մեծ վարան մը մէջ  
է իւր աղջիկներէն մէկուն առուսնութեան պատճա-

առաւ . — Մէկը զայն ամենէլ կ'ուզէ . — Զանի ուղողը  
 գրացի ազնուական մըն է . — Հարճառ է . — Ոչ ,  
 խեղճ մարդ մըն է որ ստակ մը չունի . — Ա՛րսէ՛ք թէ  
 ձեր աշակերտակիցներուն մէջ բարեկամ չունիք , բայց  
 յանցանքը ձերը չէ : Անոնց վրայ գէշ խօսած էք , եւ  
 անոնք ձեզ վշտացուցած չեն : Անոնք ձեզի բարիք  
 քրած են , բայց եւ այնպէս դուք անոնց հետ դժակե-  
 ցաք : Հաւատացէք ինձ . այն որ բարեկամ չունի՝ ու-  
 նենալու արժանի չէ :

221. Հրահանգ

Գերձակի մը եւ անոր մանչուն մեզտեղ  
 խօսակցութիւն .

Շարլ , հանդերձները Նարիսի կոմսին տարի՛ք . — Ա-  
 յո , տէր , տարի . — Ի՞նչ ըզաւ . — Բան մը չըսաւ ,  
 եթէ ոչ թէ մեծ փախաք ունէր ինձի ապտակ զար-  
 նելու , վասն զի զանոնք աւելի կանուխ չտարի .  
 — Անոր ի՞նչ պատասխան տուիք . — Տէր իմ , ըսի ա-  
 նոր , ես այս կատակը չեմ հասկնար . վճարեցէք ին-  
 ծի ինչ որ պարտիք . եւ եթէ խեղճն չէք ըներ , ու-  
 բիշ հնարք ձեռք կ'առնուամ : Հագիւ թէ ասիկա ըսի ,  
 ձեռքը սուրին տարաւ , եւ ես փախայ :

222. Հրահանգ

Ի՞նչ բանի վրայ կը դարմանաք . — Չեղ զեռ անկու-  
 ղինը գտնելուս կը զարմանամ . — Եթէ գիտնայիք թէ  
 փ'նչպէս հիւանդ եմ , չէիք զարմանար . — Աէսօրը  
 զարկա՛ւ . — Այո , տիկին , արդէն կէսօր եւ կէս է .  
 — Այսպէս ուշ է . կարելի՞ է . — Ուշ չէ . դեռ կանուխ  
 է . — Ձեր ժամացոյցն աղէկ կ'երթայ . — Ոչ , օրի-  
 օրս . քառորդ մը առաջ է . — Իսկ իմինս կէս ժամ

եա կը մնայ . — Թերեւս կեցած է . — Արդարեւ , իրաւունք ունիք . — Լարուած է . — Լարուած է , բայց եւ այնպէս չերթար . — Կը լսէ՞ք . ժամը մէկ կը զարնէ . — Ուրեմն ժամացոյցս ուղղեմ եւ տուն երթամ . — Կ'աղաչեմ , քիչ մ'ալ կեցէք . — Ձեմ կրնար , քանզի ճիշդ ժամը մէկին կը ճաշենք . — Մնաք բարով , ուրեմն , նորէն կը տեսնուինք :

### 223. Հրահանգ

Ի՞նչ ունիք , սիրելի բարեկամս . ինչո՞ւ այնպէս տըխուր կ'երեւաք . — Բան մը չունիմ . — Թերեւս սրտը նեղութիւն ( վիշտ ) մը ունիք . — Բան մը չունիմ , եւ նուազ քան ոչինչ , քանզի ստակ մը չունիմ , եւ սարտատեարցս շատ սպրտք ունիմ : Շատ թշուառ չեմ . — Երբ մարդ առողջ է , եւ բարեկամներ ունի , թըշուառ չէ . — Ձենէ ծառայութիւն ( շնորհք ) մը խընդրելու կրնամ համարձակիլ . — Ի՞նչ կը բաղձաք . — Շընորհք ըրէք ինծի յիսուն սկուտ փոխ տալու . — Բուր սրտով փոխ կու տամ ձեզ , բայց սա սպայմանս որ խաղէ հրաժարիք եւ աւելի իննայող ըլլաք քան որչափ ցարդ եղաք . — Հիմա կը տեսնեմ որ բարեկամս էք , եւ ձեզ այնչափ կը սիրեմ որ չեմ կրնար ձեր խըրատուն չհետեւիլ :

Ժա՛ն . — Ի՞նչ կ'ուղէք , տէր . — Գինի բեր . — Հիմա , տէր . — Հանրի . — Տիկի՛ն . — Կրակ ըրէք . — Աղախինն արդէն ըրաւ . — Ինծի թուղթ , դրիչ եւ մելան բերէք : Բերէք նաեւ աւազ կամ ծծուն թուղթ , կնքամով եւ ճրագ : Գացէք ըսելու քրոջս որ ինծի չսպասէ , եւ կէսօրին եկէք նամակներս նամակատունը տանելու . — Շատ աղէկ , տիկին :

ՀԳ. ԳՍՍ. Soixante-treizième Leçon.

Տեւել, գիմանալ. Durer. Այս ասուին աղէկ պիտի գիմանայ. Ce drap durera bien. Այս վերարկուն ս'ըջափ ասեն դէմացաւ ձեղի. Combien de temps cet habit vous a-t-il duré ?

Ըստ հաճոյս իմ. A mon gré.

Ամէն մարդու հաճոյից համեմատ. Au gré de tout le monde. Անոր հաճոյից, ուզածին համեմատ բան մը չի կրնար բլլալ. On ne saurait rien faire à son gré.

Թոշակատուն մը, գիշերօթիկ դպրոց. Une pension, un institut d'éducation, un pensionnat.

Թոշակաւորներ պահել. Tenir pension.

Թոշակաւոր լլալ. Etre en pension, se mettre en pension.

Գռչել. S'écrier. Անհանգիստ ընել (մտօք), հոգ պատճառել. Inquiéter. Անհանգիստ բլլալ, հոգ ընել. S'inquiéter, être inquiet, իգ. inquiète (\*).

Տրտմիլ, տխրիլ. Se chagriner, s'affliger, s'attrister.

(\* ) ԳԻՏ. et վերջաւորած ածականներն իգական կ'ըլլան վերջը օ աւելցնելով. ինչպէս՝ muet, իգ. muette՝ քայ ի քանի մը հասէն որոնք միայն օ գիրը կ'առնուն, եւ նախընթաց օ ին վրայ ծանր շեշտ, accent grave կը գրուի : Ասոնք հետեւեալներն են, complet, concret, discret, inquiet, replet, secret, որոնց իգականն է complète, concrète, եւայլն :

Ինչու հոգ կ'ընէք. Pourquoi vous inquiétez-vous ? Հոգ չեմ ընէք. Je ne m'inquiète pas. Այս լուրն ինձի հոգ պատճառեց. Cette nouvelle m'inquiéta. Լուր չառնելուս վրայ հոգ կ'ընեմ. Je suis inquiet de ne point recevoir de nouvelles. Անիկա այս բանիս վրայ հոգ կ'ընէ. Elle est inquiète sur cette affaire. Հոգ մ'ընէք. Ne vous inquiétez pas.

Անհանգստութիւնը, հոգք. L'inquiétude.

Հանգարտ, Tranquille. Հանգարտեցնել, Tranquilliser.

Հանգարտ, անհոգ եղիք. Tranquillisez-vous.

փոխել. Changer. Այս մարդը շատ փոխուած է քանի որ տեսած չեմ. Cet homme a beaucoup changé depuis que je ne l'ai vu.

Ծառայել (բանի մը համար Servir.  
բլլալ) .

Ասիկա ձեզի ի՞նչ բանի կը ծառայէ. A quoi cela vous sert-il ?

Ասիկա ինձի բանի մը չի ծառայեր. Cela ne me sert à rien.

Ասիկա ձեր եղբորն ի՞նչ բանի կը ծառայէ. A quoi cela sert-il à votre frère ?

Ասիկա անոր բանի մը չի ծառայեր. Cela ne lui sert à rien.

Այս դաւաղանը ձեզի ի՞նչ բանի կը ծառայէ. A quoi ce bâton vous sert-il ?

Շուներս ծեծելու կը ծառայէ. Il me sert à battre mes chiens.

Այս ձիւն ձեր եղբորն ի՞նչ բանի կը ծառայէ. A quoi ce cheval sert-il à votre frère ?

Իւր խաւարաբ կը շուկան տանելու կը ծառայէ. Il lui sert à porter ses légumes au marché.

Այս շիշերը ձեր պանդոկատի տէր ի՞նչ բանի կը ծառայեն. A quoi ces bouteilles servent-elles à votre hôte ?

Անոնց մէջ իւր գինին դնելու կը ծառայեն. Elles lui servent à y mettre son vin.

(Բանի մը) տեղ բլլալ. Servir de.

Հրացանս ինձի դաւաղանի տեղ է. Mon fusil me sert de bâton.

Այս ծակն անոր տան տեղ է. Ce trou lui sert de maison.

Անոր փողպատը գիշերնոցի տեղ կը լուսն. Si cravate lui a servi de bonnet de nuit.

Օգուտ բլլալ. Servir (ետեւէն աներեւոյթի լուսնի լուսնի).  
de ուղ) .

Լալէն ձեզի ի՞նչ օգուտ է. A quoi vous sert-il de pleurer ?

Ասիկա բանի մը օգուտ չունի. Ce ne sert de rien.

Հանդէպ, դիմացը. Vis-à-vis (տեսական կ'աւղէ) .

Այս տանը , պարտէզին դիմացը . Vis-à-vis de cette maison, de ce jardin. Խմ դիմացս . Vis-à-vis de moi. Ճիշդ դիմացը . Tout vis-à-vis.

Գղեակին դիմացը կը բնակի . Il demeure vis-à-vis du château.

Թագաւորական գրատան դիմացը կը բնակի . Il demeure vis-à-vis de la bibliothèque royale.

Գրաւել, բռնել . S'emparer d'une chose.

Յուցնել, յայտնել . Témoigner. Մէկուն դէմ վկայել . Témoigner contre quelqu'un. Ինձի շատ բարեկամութիւն ցուցուց . Il m'a témoigné beaucoup d'amitié.

Մէկը խոյտառակ ընել . Tourner quelqu'un en ridicule.

Խոյտառակ, ծաղր բլլալ . Tomber en ridicule.

Ինքզինք ծաղրելի ընել . Se rendre ridicule.

Ի բնէ, ծննդեամբ բլլալ . Etre natif de . . .

Մնած բլլալ . Etre né (en, dans) . . .

Ո՞ւր ծնած էք . Où êtes-vous né ? Ես այս երկրին մէջ ծնած եմ . Je suis né dans ce pays. Je suis natif de ce pays.

Ձեր քոյրն ո՞ւր ծնած է . Où votre sœur est-elle née ?

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ ծնած է . Elle est née aux Etats-Unis de l'Amérique du Nord.

Ձեր եղբայրներն ո՞ւր ծնած են . Où vos frères sont-ils nés ?

Գաղիա ծնած են . Ils sont nés en France.

Թոշակաւորը . Le pensionnaire. Որսորդի մախաղ . La gibecière. Գլխու բարձ մը . Un oreiller. Փետրակ . Le duvet.

## 224. Հրահանգ


Տէր , կը համարձակիմ հարցնելու ձեզ թէ ուր կը բնակի Պ. կոմսը . — Գղեակին մօտ կը բնակի , դեռ տակին անդին . — Կրնա՞ք բնել ինձի թէ ինչ ճամբայ բռնելու եմ հոն հասնելու համար . — Գետակին երկայնութեամբ ( եղերքն ի վեր ) գացէք , եւ ապա պի-

ախ տեսնէք փոքր փողոց մը աջ դին , որ ձեզ շիտակ պիտի տանի անոր տունը : Գեղեցիկ տուն մըն է . դիւրաւ կը գտնէք . — Շնորհակալ եմ , տէր . — Նկոմսը հոս կը բնակի . — Այո , տէր , մտէք , եթէ կը հաճիք . — Տէր կոմսը տո՛ւնն է : Կը բազմամ պատիւ ունենալ անոր հետ խօսելու . — Այո , տէր , տունն է . հրամանքնիդ ո՛վ էք . — Ես Պ. եմ , եւ Կ. կը կոչուիմ . — Զինարանը երթալու համար ամենէն կարճ ճամբան ո՛րն է . — Գացէք այս ճամբէն , եւ երբ ծայրը կը հասնիք , ձախ դարձէք . քառուղի մը պիտի գտնէք , որմէ անցէք : Յետոյ պիտի մտնէք աւելի նեղ փողոց մը որ ձեզ պիտի տանի մեծ հրապարակ մը ուր պիտի տեսնէք անկ փողոց մը . — Անկէ անցնի՛մ . — Ոչ , քանզի ելք չկայ : Չայն թողէք աջ կողմը , եւ անցէք քովի կամարակապ ճամբէն . — Ետքը՞ . — Ետքը հարցուցէք . — Շատ շնորհակալ եմ ձեզ . — ( Շնորհակալութեան ) բան չկայ :

### 223. Հրահանգ

Ձեր մայրն ինչո՞ւ հոգ կ'ընէ . — Հոգ կ'ընէ լուր չառնելուն համար իւր որդիէն որ բանակն է . — Անոր վրայ հոգ ընելու պէտք չունի , քանզի անիկա ամէն անգամ որ վտանդի մէջ կ'ըլլայ , անկէ աղատել գիտէ : Անցեալ ամառ , երբ մենք մէկտեղ որսի էլինք , գիշերը վրայ հասաւ մեր գեղի տունէն գոնէ տասը մղոն հեռու . — Աղէկ . գիշերն ո՛ւր անցուցիք . — Ես ի սկզբան շատ հոգ կ'ընէի , բայց ձեր եղբայրն ամենեւին . ընդհակառակն զիս կը հանդարտեցնէր : Վերջապէս գեղացւոյ տնակ մը գտանք ուր անցուցինք գիշերը : Հոն առիթ ունեցայ տեսնելու թէ ձեր եղբայրը ո՛րչափ յաջողակ է : Քանի մը նստարան եւ խուրձ ( տէմէթ , bottle ) մը յարդ անոր ծառայեցին :

անդորր անկողին մը շինելու . շիշ մը անոր աշտանակի տեղ եղաւ , մեր որսի մասագնները մեզի գըլխու բարձ եղան , եւ մեր փողպատները՝ զիշերնոց : Երբ առտուն արթնցանք , այնպէս դալար եւ առոյգ ( gaillard ) էինք , որպէս թէ փետրակի եւ մետաքսի վրայ պառկած էինք . — Հետամուտ մը ( un candidat ) Բրուսիոյ թագաւորէն պաշտօն մը կը խնդրէր : Իշխանն անոր հարցուց թէ ուր ծնած էր : « Պէրլին ծընած եմ , » պատասխանեց անիկա : « Գնա , » ըսաւ թագաւորը ( le monarque ) , « բոլոր Պէրլինցիները բան մը չեն արժեք : » « Կը ներէք , Տէր , » պատասխանեց հետամուտը , « աղէկներ ալ կան , եւ ես երկուք կը ճանչնամ : » « Ո՛վ են այս երկուքը , » հարցուց թագաւորը : « Առաջինը կրկնեց հետամուտը , ձեր վեհափառութիւնն է , երկրորդը ես եմ : » Թագաւորը չկրցաւ ծիծաղը բռնել այս պատասխանին վրայ , եւ խնդրուածն անոր շնորհեց :



ՀԳ. ԴԱՍ. Soixante-quatorzième Leçon.

Տեսութենէ կորսնցնել , ալ Perdre de vue.  
չտեսնել .

Տեսութիւնը . La vue.

Ահնոց կը կրեմ՝ քանզի կար- Je porte des lunettes parce  
ճատես եմ . que j'ai la vue basse.

Կարճատես եմ . J'ai la vue courte կամ basse. Je suis myope.

Նաևն այնչափ հեռու է որ տես- Le bâtiment est si loin que  
սութենէ սկիտի կորսնցնենք nous le perdrons bientôt  
զայն . de vue.

Ասիկա տեսութենէ կորսնցուցի . J'ai perdu cela de vue.

Որովհետեւ շատանց է որ Անգ- Comme il y a longtemps que  
ղիս դացած չեմ՝ , ձեր եղ- Je n'ai été en Angleterre,

- բայրը տեսութենէ կորսնցուցած եմ. j'ai perdu de vue votre frère.
- Արովհետեւ Գաղիերէն զիբը չունիմ, այս լեզուին ուսումս մէն այլ եւս չեմ շարունակիր. Comme je n'ai pas de livres français, j'ai discontinué l'étude de cette langue.
- ԳԻՏ. Ա. comme շողկասպը խօսքի մը սկիզբը որովհետեւ կը նշանակէ :
- ԳԻՏ. Բ. Պետք էիք, պարտաւանգ էիք խօսքերը Գաղիերէն *devoir*, պարտիլ բային թէականովը կը բացատրուին. Je devrais, j'aurais dû.
- Ասիկա սարաւար էիք ընել. Իւր հօրը այսպէս խօսելու չէր. Vous devriez faire cela. Il ne devrait pas parler ainsi à son père.
- Հոն կանուխ երթալու էինք. Nous devrions y aller de meilleure heure.
- Ձեր ըսածը մտիկ ընելու էին. Ils devraient écouter ce que vous leur dites.
- Ըսածիս աւելի ուշագրութիւն ընելու էիք. Vous devriez faire plus d'attention à ce que je dis.
- Ասիկա ըրած ըլլալու էիք. Vous auriez dû faire cela.
- Ըրածէն աւելի ազէկ ըրած ըլլալու էր. Il aurait dû s'y prendre mieux qu'il n'a fait.
- Ուրիշ եղանակաւ ըրած ըլլալու էիք. Vous auriez dû vous y prendre d'une autre manière.
- Իմ ըրածիս պէս ըրած ըլլալու էին. Ils auraient dû s'y prendre comme je m'y suis pris.
- Անոց ըրածէն տարբեր եղանակաւ մը ընելու էինք. Nous aurions dû nous y prendre d'une autre manière qu'ils ne s'y sont pris.
- Մաղթել, ըզձալ. Souhaiter ( ետեւէն աներեւոյթը *de ով* ).
- Ձեզի բարի լոյս կը մաղթեմ. Je vous souhaite le bon jour.
- Ձեզի բարի նախապարհ կը մաղթեմ. Je vous souhaite un bon voyage.
- Ձեզի բարի տարի կը մաղթեմ. Je vous souhaite la bonne année.

Մաս մը զնդի խաղալ . Faire une partie de billard.  
 Արինդ հարկանել . Jouer de la flute.

Անկում մը . Une chute. Անկում մը ընել . խնալ . Faire une chute, tomber.

Ընակութեան , կենայուսել . Un séjour.

Ընակութիւն ընել , մնալ , կենայ . Faire un séjour, séjourner.

Բազմին մէջ երկայն կենայու մտք ունի՞ք . Comptez-vous faire un long séjour dans la ville ?

Երկայն կենայու մտք չունիմ . Je ne compte pas y faire un long séjour.

Առաջադրութիւն ունենալ , մտքը գնել . Se proposer ( ետեւէն անկուցութիւն de ով ) .

Ճամբորդութիւն ընելու առաջադրութիւն ունիմ . Je me propose de faire le voyage. Առաջադրութիւն ունիմ որտե երթալու . Je me propose d'être d'une partie de classe.

Գուշակել , մտքէն անցնել . Se douter ( սեռականով ) .  
 Ըրածք կը գուշակեմ . Je me doute de ce qu'il a fait.

Մտքէն չանցնիր թէ իրեն ինչ պիտի պատահի . Il ne se doute pas de ce qui va lui arriver.

Խորհել մեկուն , բանի մը վրայ . Penser à .

Որո՞ւ վրայ կը խորհիք . A qui pensez-vous ?

Ի՞նչ բանի վրայ կը խորհիք . A quoi pensez-vous ?

Խօսք , խնդիր բլլալ . S'agir de, être question de.

Խօսքն այս ինչ բանի վրայ է . Il s'agit de.

Խօսքը ձեր գուարճութեանը վրայ չէ , այլ ձեր յառաջադիմութեան վրայ . Il ne s'agit pas de votre plaisir, mais de vos progrès.

Գուք կը խաղաք , պարտն , բայց ոչ թէ խաղալ , այլ ուսանել պէտք է . Vous jouez, monsieur, mais il ne s'agit pas de jouer, il est question d'étudier.

Խնդիրն ի՞նչ է . De quoi s'agit-il ? Խնդիրը սա է թէ մեր մասնակից զուարճութեամբ անցնելու համար ի՞նչ ընելու կիք .

Il s'agit de savoir ce que nous ferons pour passer notre temps agréablement.

Գիտամամբ, գիտութեամբ.      Exprès.  
Կը ներէք, գիտամամբ չբրի.      Je vous demande pardon, je ne l'ai pas fait exprès.

Էսել, լռած, լռելով.      Se taire, tu, taisant.

Կը լռէք. Vous taisez-vous ? Կը լռեմ. Je me tais. Կը լռէ.  
Il se tait.

Կէս ժամ խօսելէն ետքը, լք-      Après avoir parlé (pendant)  
ուեց.      une demi-heure, il se tut.

## 226. Հրահանգ


Գող մը օր մը գիշերօթիկ դպրոց մը մտնելով, երեք մեկնոց (manteau) գողցաւ : Գուրս ելլելու տանը հանդիպեցաւ թոշակաւորներէն մէկուն որ գեղեցիկ ժապաւինեալ մեկնոց մ'ունէր : Ախչափ մեկնոցներ տեսնելով հարցուց մարդուն թէ ուստի՞ առած էր զանոնք : Գողը պաղ կերպով մը պատասխանեց թէ անոնք տանը մէջէն երեք հոգւոյ կը վերաբերէին որոնք տուին զանոնք իրեն որ կող մաքրէ : « Իմի նիս ալ կող մաքրեցէք, քանզի շատ պէտք ունի, » ըսաւ թոշակաւորը . « բայց, » յաւել, « պէտք է որ ժամը երեքին բերէք : » « Շատ աղէկ, տէր, » պատասխանեց գողը, չորս մեկնոցը տանելով, զոր դեռ բերած չէ . — Կ'երգէք, տեարք, բայց երգել չի պահանջուիր ( il ne s'agit pas ), պարտ էիք լռել եւ ձեզի ըսուածը մտիկ ընել . — Վարանեալ ենք . — Ի՞նչ է ձեր վարանքը . — Ձեզի ըսեմ . խնդիր է գիտնալ թէ մեր ժամանակն ի՞նչպէս զուարճալի կերպով անցունենք . — Մաս մը գնչի խաղացէք կամ մաս մը նարտ . — Առաջադրութիւն ունինք որո՞ի երթալու . մեզի հետ կու գա՞ք . — Ձեմ կրնար, քանչի դեռ հա-

մարտ չըրի . եւ եթէ զանց ընեմ , վարպետս զիս կը  
յանդիմանէ . — Դուք զիտէք . եթէ աւելի կ'ընտրէք  
տունը մնալ քան թէ որսի կրթալ , չենք կրնար ձեզ  
արգելուլ . — Պարոն Պ. մեզի հետ կու գայ . — Թե-  
րեւս . — Ձեմ սիրեր անոր հետ կրթալ , քանզի կա-  
րի շատախօս է նա . բայց հանգերձ այսու շիտակ  
մարդ է . — Ի՞նչ ունիք . նեղացած կ'երեւիք . — Նե-  
ղանալու պատճառ ունիմ , քանզի հիմա ստակ հայ-  
թայթելու միջոց չկայ . — Պարոն Ա. ի տունը գա-  
ցի՞ք . — Անոր տունը դացի , բայց անկէ փոխ ամեն-  
լու միջոց չկայ : Միտքէս կ'անցնէր թէ ան ինծի փոխ  
չի տար . ահա ինչու համար չուղեցի անկէ ինչորեւ .  
եւ եթէ դուք ինծի ըսած չըլլայիք որ այնպէս ընեմ ,  
ես այս մերժուելու նախատինքը յանձն չէի աճուր :

### 227. Հրահանգ

Միտքէս կ'անցնէր որ դուք պիտի ծարաւէիք , եւ  
ձեր քոյրերը պիտի անօթենային . ահա ինչու համար  
ձեզ հոս բերի . — Կը ցաւիմ սակայն ձեր մայրը չտես-  
նելուս . — Ինչո՞ւ ձեր սուրճը չէք խմիր . — Եթէ քուն  
չունենայի , կը խմէի . — Մերթ քուն ունիք , կը մը-  
սիք , մերթ տաք էք եւ մերթ ուրիշ բան մը ունիք :  
Կարծեմ թէ ձեր բարեկամուհւոյն պատահած դժբախ-  
տութեան վրայ չափազանց կը մտածէք . — Եթէ ես  
չմտածէի , ո՞վ պիտի մտածէր . — Ձեր եղբայրն որո՞ւ  
վրայ կը խորհի . — Խմ վրաս կը խորհի . քանզի մննք  
միշտ իրարու վրայ կը խորհինք , երբ մէկտեղ չենք .  
— Այսօր վեց խաղացող տեսայ որոց ամէնքն ալ մի-  
եւնոյն ժամանակ կը շահէին . — Ասիկա կարելի չէ .  
քանզի խաղացող մը չի կրնար շահիլ բայց եթէ երբ  
ուրիշ մը կորսնցնէ . — Իրաւունք կ'ունենայիք , եթէ  
թուղթ կամ գնդի խաղացողներուն վրայ խօսէի :

բայց եւ սրինգ եւ վին հարկանողներուն վրայ կը խօսիմ . — Երբեմն երաժշտութիւն կ'ընէ՞ք . — Շատ լաճախ , քանզի շատ կը սիրեմ . — Ի՞նչ նուագարան կը զարնէ՞ք . — Ես վին կը զարնեմ եւ քոյրս դաշնակ կը զարնէ : Եղբայրս որ բամբ կը զարնէ , մեզի հետ կ'ընկերանայ , եւ օ. փորդ Սղոց երբեմն մեզ կը ծափահարէ . — Այն ալ նուագարան մը չի՞ զարներ . — Անիկա տալիզ կը զարնէ , բայց այնչափ մեծամիտ է որ մեզի հետ երաժշտութիւն չընէր . — Քաւական աղքատ քաղաք մը տօներու եւ լուսաւորութեանց մեծ ծախք ըրաւ իւր իշխանին անցնելուն առթիւ : Ասիկա ( իշխանը ) զարմացաւ : « Քաղաքը , » ըսաւ սպառատական մը , « իւր պարտքը միայն ըրաւ » : « Հշմարիտ է , » ըսաւ միւսը , « բոլոր ըրածը պարտք է : »



ՀԵ. ԳԱՍ. Soixante-quinzième Leçon.

Դէպ ի (տեղ մը) . Vers. Դէպ ի (բարոյասէտ) , մէկուհի  
հետ . Envers.

Դէպ յիս կուգայ .	Il vient vers moi.
Դէպ յիս , ինծի հետ շատ ազէկ վարուեցաւ .	Il s'est comporté très-bien envers moi.
Դէպ առ ամենայն մարդիկ միշտ ազէկ վարուելու ենք .	Il faut nous comporter toujours bien envers tout le monde.

Ուրիշներուն վարմունքը մերինին արձագանգն է : Եթէ մենք դէպ առ իստա ազէկ կը վարուինք , անոնք ալ դէպ առ մեզ ազէկ կը վարուին . բայց եթէ մենք անոնց հետ դէշ կը վարուինք , անոնց	La conduite des autres n'est qu'un écho de la nôtre. Si nous nous comportons bien envers eux , ils se comporteront bien aussi envers nous ; mais si nous en usons mal avec eux , nous ne de-
---	--

կողմէն լուսադրոյնի ակնկալե- լու չենք .	vous pas attendre mieux de leur part.
Վարուիլ աղէկ, դէշ մեկուն հետ .	En user bien, mal avec quel- qu'un.
Որովհետեւ դուք ինծի հետ միշտ աղէկ վարուեցաք, ես ալ ձեզի հետ դէշ չեմ վար- ուիր .	Comme vous en avez toujours bien usé avec moi, je n'en userai pas mal avec vous.
Որովհետեւ ինծի հետ միշտ ա- ղէկ վարուեցաւ, ես ալ ա- նոր հետ միշտ նոյն եղանա- կաւ վարուած եմ .	Comme il en a toujours bien usé avec moi, j'en ai tou- jours usé de la même ma- nière avec lui.
Ուշանալ .	Tarder ( ետեւէն աներեւոյ- թը à ով ) .
Ետ դառնալու մի ուշանաք .	Ne tardez pas à revenir.
Դառնալու, նորէն գալու չեմ ուշանար .	Je ne tarderai pas à revinir.
Շատ կը ցանկամ .	Il me tarde de . . . ( մեղեմ կը դործածուի ) .
Եզրայրս տեսել շատ կը ցան- կամ .	Il me tarde de voir mon frère.
Խր ստացն առնելու շատ կը ցանկայ .	Il lui tarde de recevoir son argent.
Ճաշել շատ կը փափայրինք, քանզի շատ սնօթի ենք .	Il nous tarde de dîner, parce que nous avons bien faim.
Պառկելու շատ կը փափայրին, քանզի շատ յոգնած են .	Il leur tarde de se coucher parce qu'ils sont très fa- tigués.
Դիւրութեան, անդորրու մէջ ըլլալ .	Etre à son aise.
Դիւրութեան, անդորրու մէջ չըլլալ .	Etre mal à son aise.
Նեղութեան մէջ ըլլալ .	
Այս աթոռին վայ շատ ան- դորր եմ .	Je suis bien à l'aise sur cet- te chaise.
Դուք ձեր աթոռին վայ ան- դորր չէք .	Vous êtes mal à l'aise sur votre chaise.
Արեկա ի՞նչ կրնայ ըլլալ .	Qu'est-ce que cela peut être ?
Այս թռչողուսան մէջ անդորր	Nous sommes mal à notre

չնք .	aise dans cette pension.
Այս մարդն անդորրու մէջ է , քանզի շատ ստակ ունի .	Cet homme est à son aise , car il a beaucoup d'argent.
Այս մարդն անդորրու մէջ չէ , քանզի աղքատ է .	Cet homme est mal à son aise , car il est pauvre.
Անդորր բլլալ .	Se mettre à son aise.
Անդորր եղիք .	Mettez-vous à votre aise.
Նեղութեան մէջ , նեղն բլլալ .	Etre gêné , être mal à son aise.
Նեղուիլ , նեղն բլլալ .	Se gêner.
Մի նեղուիք .	Ne vous gênez pas.
Այս մարդը երբէք չի նեղուիք . մէկուն համար չի նեղուիք .	Cet gomme ne se gêne ja- mais ; il ne se gêne ja- mais pour personne.
Կրնաք , առանց նեղուելու , ձեր հրացանն ինձի փոխ ասլ .	Pouvez-vous , sans vous gé- ner , me prêter votre fusil ?
Թախանձել , թախանձանօք ա- զաչել .	Faire des instances ; prier avec instances.
Ամէն կարելի թախանձանօք անոր ազաչեցի .	Je l'en ai sollicité avec toutes les instances possibles.
Ազաչել , պաղատել .	Solliciter ( deով ) , prier (*)

(\*) ԴԻՏ. Prier բայն à նախադրութեամբ ի պաշտօ-  
նէ հրաւիրել կը նշանակէ . Il m'a prié ( invité ) à diner  
pour dimanche prochain.

Մէկուն ազաչել .	Solliciter quelqu'un.
Բան մը ազաչել .	Solliciter quelque chose.
Հոս , հոն .	Par-ci , par-là.
Սրբեմն երբեմն , ատեն ատեն .	De loin en loin.
Բաւական , սանկ .	Tant bien que mal. Passablement.

Շարագրութիւնս բաւական ա-  
զէկ ըրի . J'ai fait ma composition pas-  
sablement bien.

Ասիկա վաղուան թողուիք . Remettons cela à demain.

Յապաղել , ուրիշ ատենուան թողալ . Remettre à.

Այս դասն ուրիշ անգամուան թողուիք . Remettons cette  
leçon à une autre fois. Տօնը կիրակիի մը թողուեցաւ .  
La fête a été remise à un dimanche.

Մեկը մասնակից ընել բանի մը . } Faire part de qch. à qqn.  
 Հաղորդել մեկուն բան մը . } Communiquer qch. à qqn.

Ասիկա ձեր հորը հաղորդեցի՞ք . Avez-vous fait part de cela à votre père ?  
 Հաղորդեցի . Je lui en ai fait part.

Որչափ որ . Quelque—que ( Տես Դաս Զ. ),  
 ինչ որ . quoi—que ( Դաս Զ. ),  
 երկուքն ալ ստորագասականով կը գործածուին :

Ի զուր խօսել, խնդալ, եւն . Avoir beau parler, rire, եւն.

ԴիՏ. Բ. Avoir beau էն կտքը կկող անկերուոյթը նալ  
 խաղրութիւն չուղեր :

Ի զուր կը խօսիք, ձեզ չի լսեր, քանզի խուլ է . Vous avez beau parler, il ne vous entend pas, car il est sourd.

Ի զուր, վայրատար . En vain; vainement.

Ի զուր բարբառիքս նայեցայ . ոչ մտրդ ոչ տուն կը տեսնէի, և ոչ դպրն երեւոյթ բնակութեան . En vain j'avais regardé tout autour de moi; je ne découvrais ni homme, ni maison, pas la moindre apparence d'habitation.

Բնակութիւն, բնակարան մը . Une habitation.

Ի զուր կը խօսեմ, ինծի մտիկ չէք ընէր . J'ai beau parler, vous ne m'écoutez point.

Ի զուր ձեռքէս եկածը կ'ընեմ, անոր չեմ կրնար հանոյ ըլլալ . J'ai beau faire de mon mieux, je ne puis rien faire à son gré.

Ի զուր կ'ըսէք, ոչ որ ձեզի կը հաւատայ . Vous avez beau dire, personne ne vous croira.

Ի զուր ստակ կը վաստակին ( որչափ ստակ կը վաստակին ), չեն կրնար հարուստ ըլլալ . Ils ont beau gagner de l'argent, ils ne seront jamais riches.

Ի զուր կը փնտաւնք, մեր կորսնցուցածը պիտի չգտնենք . Nous avons beau chercher, nous ne trouverons pas ce que nous avons perdu.

Ողջունել . Saluer. Պատիւ ունիմ ձեզ ողջունելու . J'ai l'honneur de vous saluer.

Անոր բարեւեներս տուէք . Faites-lui mes amitiés. կամ Dites lui bien des choses de ma part.

Կ'աղաչեմ որ իմ բարեւեներս տաք ձեր քրոջը . Je vous prie de faire mes compliments à mademoiselle votre sœur. Մեծարանքս անոր մատուցէք . Présentez-lui mes respects.

Չանցառութիւն չեմ ընել . Je n'y manquerai pas.

Ներկան . Le présent. Անցեալը . Le passé. Ապառնին . L'a-venir; le futur. Ժամանակի կորուստը . La perte du temps.

Աւարձինութեան թող տուած բոլոր հեշտութիւնները վայելեցէք . Jouissez de tous les plaisirs que la vertu permet.

## 228. Հրահանգ

Ձեր Գաղիներէն շարադրութիւնն ըրի՞ք . — Որք . — Ձեր ուսուցիչը գո՛հ եղա՞ւ . — Ձեզաւ . զուր կրցածիս չափ կ'աշխատիմ, անոր հաճոյ չեմ կրնար ըլլալ . — Ի զուր կ'ըսէք (որչափ ըսէք), ոչ ոք ձեզի կր հաւատայ . — Կրնա՞ք առանց նեղուելու, ինծի հինգ ֆըրանք վոխ տալ . — Որովհետեւ ինծի հետ միշտ աղէկ վարուած էք, ես ալ ձեզի հետ աղէկ պիտի վարուիմ . — Ձեզ վոխ կու տամ ձեզի պէտք եղած ստակը, բայց սա պայմանաւ որ դալ շաքթու ինծի հատուցանէք . — Կրնաք վստահիլ . — Որդիս ձեզի հետ ի՞նչ պէս վարուեցաւ . — Ինծի հետ աղէկ վարուեցաւ, քանզի ամենուն հետ աղէկ կը վարուի . — Անոր հայրը շատ անգամ անոր կ'ըսէր . « Ուրիշներուն վարմունքը մերինին արձագանդն է : Եթէ մենք անոնց հետ աղէկ վարուինք, անոնք ալ մեզի հետ աղէկ կը վարուին . բայց եթէ մենք զէշ կը վարուինք անոնց հետ, անոնց կողմէն լաւագունի սպասելու չենք : » — Ձեր եղբայրները կրնա՞մ տեսնել . — Վաղիւ կը տեսնէք : Որովհետեւ երկայն ճամբորդութենէ մը նոր եկած են, շատ կը փափաքին քնանալ, քանզի շատ յոգնած են . — Քոյրս ի՞նչ ըսաւ . — Ըսաւ թէ շատ կը ցանկար ճաշել, քանզի շատ անօթի էր . — Ձեր թոշակատան մէջ աղէկ էք . — Հոն շատ աղէկ եմ . — Ձեզի ըսածս ձեր եղբորը հաղորդեցի՞ք . — Որովհետեւ շատ յոգնած էր, շատ կը փափաքէր քնանալ, այնպէս որ անոր հաղորդելը վաղուան թողի :

229. Հրահանգ


Պատիւ ունիմ ձեզի բարիւոյս մաղթելու . ի՞նչպէս էք . — Շատ աղէկ , շնորհակալ եմ . — Տունէն ի՞նչպէս են . — Բաւական աղէկ . փառք Աստուծոյ : Քոյրս քիչ մը հիւանդացաւ , բայց առողջացաւ . ինծի ապրտարեց որ ձեզի անոր բարեւները տամ . — Շատ ուրախ եմ լսելով որ աղէկ է : Իսկ դուք , նոյն իսկ առողջութիւնն էք . ձեր դէմքը շատ աղէկ է . — Հիւանդ ըլլալու ժամանակ չունիմ . գործերս չեն թողուր . — Հրամայէք , նստեցէք . ահա ակտո մը . — Ձեզ ձեր գործերէն զբաղեցնել չեմ ուզեր . գիտեմ որ վաճառականի մը համար ժամանակը անստուական է . — Հիմա ստիպողական գործ մը չունիմ . սուրհանգակաւ արդէն գնաց . — Աւելի չեմ կենար : Ուղեցի միայն , հանդիպելով ձեր առողջութեանը տեղեկանալ . — Ինծի շատ պատիւ կ'ընէք . — Այսօր օղը շատ գեղեցիկ է : Եթէ թոյլ կու տաք , կէսօրէն ետքը ձեզ նորէն տեսնելու հաճութիւնն ունենամ , եւ եթէ ժամանակ ունիք , մէկտեղ պտոյտ մ'ընելու երթանք . — Մեծ հաճութեամբ : Ուրեմն կը սպասեմ . — Դէպ ի ժամը եօթնին ձեզ աննելու կու դամ . — Մնաք բարով ուրեմն , նորէն կը տեսնուինք . — Պատիւ ունիմ ձեզ ողջունելու :

230. Հրահանգ

Ժամանակի կորուստն աննորոգելի կորուստ է : Բոլոր աշխարհի ասիւովը վայրկեան մը միայն չի կրնար ստացուիլ : Ուստի շատ կարեւոր է աղէկ գործածել ժամանակը որ ըտպէսերու մէջ կը կայանայ , որոցմէ օգուտ քաղել պէտք է : Ներկան միայն ունինք . անցեալն այլ եւս բան մը չէ , եւ ապագան անստոյգ է :

—Ամբաւ մարդիկ շուայտութիւն ընելով կը կործանին : Եթէ մարդոց մեծ մասն իրենց ունեցածովը շատանալ գիտնար , երջանիկ կ'ըլլային . բայց անոնց ժլատութիւնը շատ անգամ դանոնք թշուառ կ'ընէ : Երջանիկ ըլլալու համար , պէտք է անցեալը մոռնալ , ապագային համար հոգ չընել , եւ ներկան վայելել .

—Շատ ախուր էի , երբ հօրեղբորորդիս տունս եկաւ : « Ի՞նչ ունիք , » հարցուց : « Ո՛հ , սիրելի հօրեղբորորդիս , » պատասխանեցի , « այն ստակը կորսընցուսելով , ամէն բան կորսնցուցի : « Հոգ մ'ընէք , » ըսաւ , « քանզի ձեր ստակը դատայ : »



## ՉՈՐՐՈՐԴ ԱՄԻՍ . Quatrième Mois.

### ՀԶ . ԳԱՍ . Soixante-seizième Leçon.

Նշանակել , ըսել ուզել . Vouloir dire .

Ի՞նչ ըսել կ'ուզէք . Que voulez-vous dire ? Ըսել կ'ուզեմ . Je veux dire . Այս մարդն ի՞նչ ըսել կ'ուզէ . Que veut dire cet homme ? Ըսել կ'ուզէ . Il veut dire .

Ասիկա ի՞նչ ըսել է . Qu'est-ce que cela veut dire ? Que veut dire cela ? Ասիկա ըսել է . Cela veut dire . Ասիկա բան մը չի նշանակեր . Cela ne veut rien dire . Ձեմ գիտեր ինչ ըսել է . Je ne sais ( pas ) ce que cela veut dire .

ձիշդ : Սալ . Y regarder de près .

Այս մարդուն հետ գործ ունենալ չեմ ուզեր , քանզի շատ ճիշդ է . Je n'aime pas à avoir affaire avec cet homme , car il y regarde de trop près .

Անհամբեր ըլլալ . S'impatienter de .

Ասոր համար անհամբեր մի ըլլաք . Ne vous impatientez pas de cela .

Հսկել . Veiller . Բոլոր գիշերը հսկեցի . J'ai veillé toute la nuit .

Խորհուրդ տալ . Conseiller ( ետեւէն աներ . de adj ) .

Ձեզի խորհուրդ կու տամ մեկնել . Je vous conseille de partir .

Հագուսար . La mise . Փառաւոր հանդերձ մը . Une mise élégante .

Հագուել . Se mettre . Այս մարդը մինչտ աղէկ կը հագուէ . Cet homme se met toujours bien .

Ըսելու բան մը գտնել . Trouver à redire à quelque chose .

Այս մարդն ամէն տեսանին վրայ ըսելու բան մը կը գտնէ . Cet homme trouve toujours à redire à tout ce qu'il voit .

Ասոր բան մը կը գտնէ՞ք ըսելու . Trouvez-vous à redire à cela ?

Ըսելու բան մը չեմ գտներ . Je n'y trouve rien à redire .

Պտոյտ , շրջան , խաղ . Un tour . Խաղ մը խաղալ . Jouer un tour .

Մէկուն խաղ մը խաղալ .

Jouer un tour à quelqu'un .

Պտոյտ , շրջան մը ընել .

Faire un tour de promenade .

Պարտէզը պտոյտ մը բրբ .

J'ai fait un tour de jardin .

Պարտէզը երկու պտոյտ բրբալ .

Il a fait deux tours de jardin .

Այլեւս , ալ , նաեւ .

De plus ; encore .

Ինծի երեք գիրք տուաւ , բայց երեք հաս ալ կ'ուզեմ .

Il m'a donné trois livres , mais j'en veux encore trois .

Բաց ի , զատ .

Outre .

Չեր ինծի տուած երեք գիրքէն զատ , կ'ուզեմ նաեւ երեք հաս աշխարհագրական ատկատակ .

Outre les trois livres que vous m'avez donnés , je veux encore trois cartes géographiques .

Նուազ . De moins . Երեք նուազ . Trois de moins . Երեք աւելի . Trois de trop .

Կարողութիւնս . Ma portée . Իմ կարողութեանս , ձեռքիս ատկ . A ma portée . Իմ կարողութեանէս վեր . Au dessus (hors) de ma portée .

Այս բաներն ամէն մարդու կա . Ces choses n'ont pas à la portée de tout le monde .

Հրացանի դիպակի հեռաւորութեան մէջ . A la portée du fusil . A une portée de fusil .

Հրացանի դիպակի մը կրկին հեռաւորութեամբ . A deux portées de fusil .

Ո՞րչափ հրացան պարպեցիք .	Combien de coups de fusil avez-vous tirés ? (Տես Գառ ԽԸ .)
Կ'ուզէի գիտնալ թէ ինչո՞ւ այս մարդն այսպէս աղմուկ կ'ընէ .	Je voudrais bien savoir pourquoi cet homme fait un tel bruit ?
Յորչափ որ .	Tant que .
Յորչափ որ աղէկ կը վարուիք , պիտի սիրուիք .	Tant que vous vous comporterez bien, vous serez aimés .

Վերցունել . Elever. Բերան մը լեցուն . Une bouchée. Լեցունել . Combler. Մէկը ուրախութեամբ լեցունել . Combler quelqu'un de joie .

Վեհանձն . Généreux. Բարերար . Bienfaisant, charitable. Ձիս երախտեզք լեցուցիք . Vous m'avez comblé de bienfaits .

Անկեղծ . Sincère ( ած . ) Անկեղծարար . Sincèrement ( մկր . ) Օղուտ մը , առաւելութիւն . Un avantage .

Վնաս . Le désavantage .

Երբէք ի վնաս ձեր բան մը պիտի չըսեմ . Je ne dirai jamais rien à votre désavantage .

Անձնատուր բլլալ . Se rendre. Թշնամիք անձնատուր եղան . Les ennemis se sont rendus .

Նախապատիւ համարել . Préférer. Նախապատիւ կը համարեմ օգտակարը զուարճալիէն . Je préfère l'utile à l'agréable .

ԳԻՏ . Գոյականարար դորձածուած բայեր եւ ածականներ արական են :

Խմելը . Le boire. Ուտելը . Le manger .

Նայել , նկատել . Regarder .

Նայեցէք սա գալար եւ պոյծաւ գոյներով փառաւոր ծաղիկներու . Regardez ces superbes fleurs aux couleurs si fraîches et si éclatantes .

Գոյնը . La couleur; le teint. Շուշանը . Le lis. Մանուշակը . La violette. Լերդախոտը . La germandrée. Վարդը . La rose. Այլարանական նշան . Un emblème .

Գալար կտնայն աղէկ է աչուընկրու . La verdure fraîche fait du bien à la vue .

231. Հրահանգ

Ինչո՞ւ այս մարդուն խաղ մը խաղացիք . — Վասն  
 նի ամէն բաժնիս դէմ ըսելու բան մը կը դանէ . — Այս  
 ի՞նչ կը նշանակէ , տէր . — Այս կը նշանակէ թէ ես  
 ձեզի հետ գործ ընել չեմ սիրեր , քանզի շատ ճիշդ  
 ( բժախնդիր ) էք . — Կ'ուզէի դիտնալ թէ ձեր եղ-  
 քայրն ինչո՞ւ իւր պարտքը չըրաւ . — Չափազանց  
 դժուարին էր : Բոլոր գիշերն արթուն կեցաւ , եւ չը  
 կրցաւ ընել ( պարտքը ) , քանզի այն պարտքը ( դա-  
 սը ) իւր կարողութենէն վեր էր . — Պ. Ֆ. դիս տես-  
 նելուն պէս , կը սկսի Անգղիերէն խօսել վարժելու  
 համար , եւ դիս սլատուով կը լեցունէ . այնպէս որ  
 շատ անգամ չեմ դիտեր թէ ինչ պատասխանեմ : Եղ-  
 քայրներն ալ այնպէս կ'ընեն . բայց եւ այնպէս շատ  
 աղէկ մարդիկ են . ոչ միայն հարուստ եւ քաղցրա-  
 բարոյ են , այլ եւ վեհանձն են եւ բարերար : Ձիս  
 անկեղծարար կը սիրեն . ասոր համար է որ զանոնք  
 կը սիրեմ , ուստի եւ ի միաս նոցա երբէք բան մը  
 պիտի չըսեմ : Չանոնք աւելի կը սիրէի , եթէ այն-  
 չափ արարողութիւններ չընէին . բայց ամէն մարդ  
 իւր թերութիւնն ունի . իմ թերութիւնս ալ անոնց  
 արարողութիւններուն վրայ չափազանց խօսել է :

232. Հրահանգ


Թշնամիք անձնատուր եղա՞ն . — Անձնատուր չե-  
 դան , քանզի կեանքը մահուանէ նախապատիւ չէին  
 համարեր . ոչ հաց , ոչ միս , ոչ ջուր , ոչ զէնք , ոչ  
 ստակ ունէին . բայց եւ այնպէս ուղեցին մանաւանդ  
 մեռնել քան անձնատուր ըլլալ . — Ինչո՞ւ այսպէս տը-  
 խուր էք . — Ինծի հոգ տուող բանը չէք դիտեր , սի-  
 բելի քարեկամ . — Ըսէք ինծի , քանզի կ'ապահովը-

նեմ ձեզ որ ձեր վիշտերուն այնպէս մասնակից եմ ինչպէս ձեր հաճոյքներուն . — Ստոյգ եմ որ դուք մասնակից էք իմ վիշտերուս , բայց այս վայրկենիս չեմ կրնար ըսել ձեզի ինծի հոգ պատճառող բանը : Բայց դիպող ժամու կ'ըսեմ : Ուրիշ բանի վրայ խօսինք ( խօսքը փոխենք ) հիմա . — Ի՞նչ կը խորհիք այն մարդուն վրայ որ երէկ նուազածութեան ատեն մեզի հետ խօսեցաւ . — Շատ խելացի մարդ է , եւ իւր արժանաւորութեան հաւանած չէ : Բայց ինչո՞ւ կը հարցնէք ինծի ասիկա . — Բանի մը վրայ խօսելու համար . — Ա'ըսուի . Գոհութիւնը հարստութեան անդ կը բննէ . ապա միշտ դո՞ր ըլլանք . — Մասնակից ըլլանք մեր ունեցածներուն , եւ մեր բոլոր կենաց մէջ անբաժանելի բարեկամներ մնանք : Գուք միշտ բարով եկած պիտի ըլլաք իմ տունս , ես ալ կը յուսամ այնպէս ըլլալ ձեր տունը : Եթէ ձեզ երջանիկ անանի , ես ալ նոյնպէս կ'ըլլայի , եւ դո՞ր կ'ըլլայինք մեծամեծ իշխաններէն ( թագաւորներէն ) աւելի , որոնք միշտ այնպէս չեն : Երջանիկ պիտի ըլլանք , երբ կատարելապէս դո՞ր ըլլանք մեր ունեցածովը . եւ եթէ մեր պարտականութիւնն աղէկ ընենք , Աստուած պիտի հոգայ մնացածը : Անցեալն այլ եւս բան մը չըլլալով , ապագային համար հոգ չընենք , եւ ներկան վայելենք :

### 233. Հրահանգ

Նայեցէք , տիկնայք , սա այնպէս դաւար դունով եւ այնպէս պայծառ դեղեցիկ ծաղիկներուն . Չուր միայն կը խամն : Սպիտակ շուշանն անմեղութեան գոյն ունի . մանուշակը համեստութեան նշանակ է . անիկա Ղուիզայի աչուրներուն մէջ կրնայ տեսնուիլ : Լերդախոտը երկնի գոյնն ունի , մեր ապառնի բնակու-

թեան, եւ վարդը, ծաղկանց թագուհին, դեղեց-  
կութեան եւ ուրախութեան այլաբանական նշանն է :  
Բոլոր սասնք անձնաւորեալ կը տեսնուին, գեղեցիկ  
Ամեղիան տեսնելով : Դալար խոսան ի՞նչ գեղեցիկ է :  
Մեր աչուքներուն օգուտ կ'ընէ, եւ յուսոյ գոյնն ու-  
նի, մեր ամենէն հաւատարիմ բարեկամին որ մահ-  
ուան ատենն անգամ մեզ չի թողուր . — Խօսք մ'ալ  
սիրելի բարեկամ . — Ի՞նչ կը հրամայէք . — Մոռցայ  
աղաչելու ձեզ որ իմ մեծարանքս ընէք ձեր տիկին  
մօրը : Անոր ըսէք, եթէ կը հաճիք, որ տունը չզրտ-  
նուելուս կը ցաւիմ, երբ վերջին անգամ զիս պա-  
տուէց իւր այցելութեամբ . — Անոր կողմէն չնորհա-  
կալ եմ, եւ անշուշտ պիտի կատարեմ . — Մնաք բա-  
րով ուրեմն :



ՀԷ. ԴԱՍ. Soixante-dix-septième Leçon.

Մետաքսէ շքազգեստ . Une robe de soie. Խոհանոցի սեղան .  
Une table de cuisine. Ագածուէ սեղան . Une table d'acajou-  
Քարէ տուն . Une maison de pierre. Հողմաղաց . Un moulin  
à vent. Արճաղաց . Un moulin à café.

ԴԻՏ. Ա. Բ. դասին մէջ արդէն ըսուեցաւ թէ նիւ-  
թի մը անուան ու անկէ շինուած առարկային մէջ-  
տեղ de նախադրութիւնը կը գրուի, եւ Հայերէն է-  
դէն վերջաւորած ածականներուն նշանակութիւնն ու-  
նի . զոր օրինակ, le soulier de cuir, կոշիկէ մուճակ .  
le fusil de fer, երկաթեղէն հրացան, ելն : Աթէ երկ-  
րորդ գոյականը նպատակ մը, գործածութիւն, կամ  
բանի մը բաղկացուցիչ մասերը կը նշանակէ, երկու  
անուանց մնջտեղ à նախադրութիւնը կը գրուի : Տես  
հետեւեալ օրինակները .

Թաւելէ բեղչր մը . Un chapeau de velours. Արծաթէ պոյա .  
 Un pot d'argent. Ջրաղաց (ջրով դառնայու աղորիք) . Un  
 moulin à eau. Շոգաղաց . Un moulin à vapeur. Թնդանօթի  
 (համար) վառօղ . De la poudre à canon. Հրաղէն . Des ar-  
 mes à feu. Միսնի (մէկ ձիով երթայու) կառք . Une voiture  
 à un cheval. Քառայրի կառք . Une voiture à quatre chevaux.  
 Երկանիւ (երկու անուով) կառք . Une voiture à deux roues.  
 Քառանիւ ժանուար . Un carosse à quatre roues. Միայարկ ,  
 երկայարկ , եռայարկ տուն . Une maison à un étage, à deux  
 étages, à trois étages.

Չափն անցունել . 2 Չայրացունել . Outrer.

Այս մարդն ինչ որ կ'ըսէ և ինչ որ կ'ընէ , չափը կ'անցունէ .  
 Cet homme outre tout ce qu'il dit et tout ce qu'il fait.

Տեղը բռնել . Tenir lieu de . . .

Այս մարդն ինձի հօր տեղ է . Cet homme me tient lieu de  
 père. կամ , Cet homme me sert de père.

Այս հովանոցն անոր գաւազանի տեղ է . Ce parapluie lui  
 tient lieu de canne. կամ , lui sert de canne.

Մատնաչափ մը .

Un pouce.

Մանր (վաճառել) .

En petit, en détail.

Մեծ (վաճառել) .

En grand, en gros.

Գրեթէ . A peu près, presque. Խրր . Environ, de près, à  
 peu près. Կարգաւ . Tour à tour.

Ջանալ . S'efforcer (ետեւէն աներեւոյթը de ով կամ à ով) .  
 Խնդրինք ցաւի , ուրախութեան տալ . S'abandonner à la  
 douleur, à la joie.

Հալեցնել , ձուլել . Fondre. Յարտասոււս ցնդիլ . Fondre en  
 larmes.

Մնուցանել , առթել , պատճառել . Faire naître, occasion-  
 ner, causer. Գժուարութիւններ , կռիւ , կասկած ծնուցանել  
 (հանել) . Faire naître des difficultés, des querelles, des  
 soupçons.

Այս մարդուն վարմունքը մտքիս մէջ կասկած յարոյց . La con-  
 duite de cet homme a fait naître des soupçons dans mon  
 esprit, կամ m'a donné du soupçon.

Թօթուել . Secouer. Այս ծառը թոթուէ , և պտուղները պի-  
 տի կ'յնան . Secouez cet arbre et les fruits en tomberont.

Պակտիլ , չունենալ . Manquer de. Այս մարդն ամէն բանէ

զուրկ է . Cet homme manque de tout . Ստակ չունի . Il manque d'argent . Բանի մը պակասութիւն չունիմ . Je ne manque de rien .

Սեղանի սպաս ( դանակ , տարդալ , պատաս.աքաղ ) . Un couvert . Չորեքսպասեայ ( չորս հողւղ նստելու ) սեղան . Une table de quatre couverts . Տասնսպասեայ սեղան . Une table de dix couverts .

Գրասեղան մը . Une table à écrire . Սեղանատուն մը . Une salle à manger . Ննջարան մը . Une chambre à coucher . Կրկնահար ժամացոյց . Une montre à répétition . Ձիթոյ շիշ . Une bouteille à l'huile . Մանանխոյ աման . Un pot à moutarde . Ջրոյ աման . Un pot à l'eau . Որսի հրացան . Un fusil de chasse . Ձկնորսութեան կարթ . Une ligne à pêcher .

Պահանջել . Exiger . Ինչ է ի՞նչ կը պահանջէք . Qu'exigez-vous de moi ? Ձե՛նէ բան մը չեմ պահանջեր . Je n'exige rien de vous . Կաթնաման . Un pot au lait .

ԳԻՏ . Բ . Նպատակ ցուցնող անունները փոխանակ ձի կրքեմն նաև յօդով au , à la , aux կ'անունն . Ինչպէս .

Ճագարավաճառ . L'homme aux lapins .  
Ոտարէավաճառ կինը . La femme aux huitres .

ԳԻՏ . Գ . Այս ոճն ընտանեկան է . սովորաբար կ'ըսուի , Le marchand de lapins , la marchande d'huitres . La laitière . Կաթնավաճառ աղջիկ կամ կինը .

ԼԱՏԻՆԵՐԷՆԷ ԵՒ ՅՈՒՆԱՐԷՆԷ ԱՌՆՈՒԱԾ  
ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՔ

ԿԱՆՈՆ Ա . a վերջաւորած արանց անուններն a վերջաւորութիւնը կը պահեն . բայց a վերջաւորած կանանց անուններն a ն կը փոխեն e ի .

Կալիգուլա . Caligula . Դոլաբելլա . Dolabella . Կլէոպատրա ( կին ) . Cléopâtre . Դիանա . Diane . Յուլիա . Julie .

ԿԱՆ . Բ . as եւ es վերջաւորուած յատուկ անուանք այն մասնիկները Գաղիերէնի մէջ օ ի կը փոխեն .

Ենեաս . Enée. Պիթագորաս . Pythagore. Ուլիսէս (Ոգիսեւս) . Ulysse. Սոկրատէս . Socrate.

ԿԱՆ. Գ. օ վերջաւորածներն օն կ'ըլլան .

Կիկերոն (Լատ . Cicero) , Cicéron. Դիդոն . (Dido), Didon.

ԿԱՆ. Դ. us վերջաւորած երկայնանկ անուններն հասարակօրէն նոյնպէս us կը վերջաւորին . իսկ բազմալանկներն us ը օ ի կը փոխեն .

Կիւրոս . Cyrus. Աստղիկ (Լատ . Venus) , Vénus.  
Կամիլլոս . Camille. Որփէոս , Orphée.

ԿԱՆ. Ե. Al եւ is վերջաւորածներուն մեծ մասը երկու լեզուաց մէջ ալ նոյն են .

Յարնալ . (Լատ . Juvenal) , Juvénal. Սեսոստրիս . Sésostris.

ԿԱՆ. Զ. Ander վերջաւորութիւնը կ'ըլլայ andre .

Ալեքսանդր . Alexandre. Լիւսանդր . Lysandre.

ԿԱՆ. Է. a վերջաւորած տէրութեանց , դաւառաց եւ քաղաքաց անունները Գաղիերէն a գիրն օ ի կը փոխեն .

Արաբիա . Arabie. Ասիա . Asie. Եւրոպա . Europe. Աֆրիկէ . (Africa) . Afrique. Ամերիկա . Amérique.

ԿԱՆ. Ը. Ուրիշ եւրոպական լեզուաց մէջ u ուղ գրութեամբ burg վերջաւորութիւնը , Գաղիերէն ou ուղ կը գրուի .

Ֆրիպուրկ . Fribourg. Համբուրկ . Hambourg.

Համեղ պատառը . Le bon morceau, la friandise.

Համեղ պատառներ , բաներ կը սիրէ . Il aime les bons morceaux.

Յորեկուան առեւ , լուսոյ մէջ . En plein jour.

Սեղան նստել . Se mettre à table.

234. Հրահանգ

Ձեր քոյրն այսօր դուրս ելաւ . — Բանի մը բան  
 դնելու համար դուրս ելաւ . — Ի՞նչ դնեց . — Մետաք-  
 սէ շքադղեօտ մը , թաւշէ խոյր մը եւ տանդելայէ  
 քող մը դնեց իրեն . — Իմ արծաթէ ամանս ի՞նչ ըրիք .  
 — Խոհանոցի սեղանին վրայ է , եղամանով , կաթնա-  
 մանով , մանանխոյ ամանով եւ սրճադացով . — Գին-  
 ւոյ շիշ մը կը խնդրէք . — Ոչ . շիշ մը \* գինի կը խնդ-  
 րեմ , ոչ թէ գինւոյ շիշ մը . — Աթէ գինւոյ մատանին  
 բանալին ինձի տալու շնորհք կ'ընէք , հատ մը բերե-  
 լու երթամ . — Այս մարդն ինէ ի՞նչ կը պահանջէ .  
 — Բան մը չի պահանջէր . բայց պիտի ընդունի ինչ որ  
 անոր կու տաք , քանզի ամեն բանէ դուրկ է . — Ձե-  
 ղի կ'ըսեմ որ զանի չեմ սիրեր . քանզի անոր վար-  
 մունքը մտքիս մէջ կասկած կը ծնուցանէ : Ինչ որ  
 կ'ըսէ եւ ինչ որ կ'ընէ , չափը կ'անցունէ . — Իրա-  
 ունք չունիք անոր վրայ այսպէս գէշ կարծիք ունե-  
 նալու . քանզի ձեզի հօր տեղ բռնեց (հայրութիւնը  
 բաւ) . — Գիտեմ ինչ որ կ'ըսեմ : Փոքու եւ մեծաւ  
 զիս խաբեց , եւ ամէն անգամ որ զիս տեսնելու կու  
 դայ , ինէ բան մը կը խնդրէ : Այսպէս կարգաւ (հե-  
 արզհեաէ) խնդրեց ինէ ինչ որ ունէի . որսի հրացանս ,  
 ձկնորսութեան կարթս , կրկնահար ժամացոյցս եւ ոս-  
 կիէ տշտանակս . — Զձեզ այնչափ մի թողուք ցաւոյ ,  
 ազատ թէ ոչ զիս յարտասուս ցնդել կու տաք . — Գե-  
 մակրխաէս եւ Հերակրխաէս երկու փիլիսոսփաներ են  
 տարբեր բնաւորութեամբ . առաջինը <sup>9</sup> կը ծիծաղէր  
 մարդոց յիմարութիւններուն վրայ , եւ մբւան անոնց  
 վրայ կու լար : Արկուքն ալ իրաւունք ունէին . քան-  
 ղի մարդոց յիմարութիւններն արծանի են ծաղու եւ  
 լալեաց :

## 235. Հրահանգ

Ձեր եղբորաղջիկը տեսա՞ք . — Այո , շատ աղէկ աղջիկ է որ աղէկ կը գրէ եւ աւելի աղէկ կը խօսի դաղիերէն . ուստի եւ ամենէն կը սիրուի եւ կը պատուուի . — Եղբայրն ի՞նչ կ'ընէ . — Անոր վրայով ինծի մի խօսիր . չար տղայ մըն է որ միշտ գէշ կը գրէ եւ աւելի գէշ կը խօսի դաղիերէն . ուստի եւ մէկէ մը չի սիրուիր : Աղէկ պատասաները շատ կը սիրէ . բայց գիրքերը չի սիրեր : Երբեմն ցորեկ ատեն անկողին կը մտնէ եւ հիւանդ եմ կ'ըսէ . բայց երբ սեղան կը նստի , սովորաբար առողջ է : Բժշկութիւն պիտի սորվի , բայց ամենեւին բազմանք չունի : Գրքեթէ միշտ կը խօսի իր շուներուն վրայ գործնք կաթողի (passionnement) կը սիրէ : Հայրը վերջին աստիճան նեղացած է : Մանուկ անմիտը մօտերս ըսաւ քրոջը « Խաղաղութիւն ըլլալուն պէս խկոյն գինուոր պիտի գրուիմ » :

Սիրելի հայրս եւ մայրս երէկ քանի մը բարեկամներով « Սպանիոյ թագաւորին » (պանդոկի անուն է) ճաշեցին . — Ինչո՞ւ միշտ գերմաներէն կը խօսիք եւ երբէք դաղիերէն . — Վասն զի չափազանց վախկոտ (ամէկոտ) եմ . — Կատակ կ'ընէք . գերմանացի մը երբէք վախկոտ է . — Շատ ախորժակ ունիմ . ինծի ուտելու բան մը տուր . — Ստակ ունի՞ք . — Ոչ , տէր . — Ուրեմն ձեզի համար ուտելու բան մը չունիմ) — Ինծի ապառիկ չէ՞ք սար : Պատուոյս վրայ կ'երդնում . — Ատիկա շատ քիչ է : — Ի՛նչպէս , տէր :

\* Une bouteille de vin, կը նշանակէ Շիշ մը գինի . իսկ Une bouteille à vin, գինւոյ շիշ մը :

ՀԸ. ԳԱՍ. Soixante-dix-huitième Leçon.

ԱՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ. Du présent du subjonctif.

Ստորադասական ներկային կաղմութիւնը շատ դիւրին է, եւ դրեթէ բոլոր բայերն այս ձեւին մէջ մինեւնոյն վերջաւորութիւնն ունին :

Ստորադասական ներկային եղակի Ա. եւ Գ. դէմքերը կը շինուին՝ ընդունելութիւն ներկային ant ք անձայն Ե ի փոխելով. եղակի Բ. դէմքը կ'ըլլայ es զոր օրինակ .

- 2. Լ. Finissant, que je finisse, que tu finisses, qu'il finisse.  
Որ լմնցուճեմ, որ լմնցուճես, և այլն .
- 4. Լ. Aimant, que j'aime, que tu aimes, qu'il aime.  
Որ սիրեմ, որ սիրես, որ սիրէ .
- 4. Լ. Rendant, que je rende, que tu rendes, qu'il rende.  
Որ տամ, որ տաս, որ տայ .

Յօքնակի Ա. եւ Բ. դէմքերը սահմանական անկատարին սէս ions, uez կ'ըլլան, իսկ Գ. դէմքը կը վերջաւորի ent.

Que nous aimions, que vous aimiez, qu'ils aiment.

Որ սիրենք, որ սիրէք, որ սիրեն .

Que nous finissions, que vous finissiez, qu'ils finissent.

Որ լմնցուճենք, որ լմնցուճէք. որ լմնցուճեն .

Que nous rendions, que vous rendiez, qu'ils rendent.

Որ տանք, որ տաք, որ տան .

ԳԻՏ. Ա. Պէտք է գիտնալ որ ստորադասականին եւ զակի եւ յօքնակի Գ. դէմքը հրամայական կերպով ալ դարձածով . զոր օրինակ, Qu'il aime, Թող սիրէ . Qu'ils aiment, Թող սիրեն :

ԶԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆՔ

Հետեւեալ բայերուն մէջ ստորադասական ներկային ,

բաց ի յոքնակի Ա. և Բ. դէմքերէն , մնացած դէմքերը վերի կանոնէն կը զարտուղին :

- Allant. Que j'aïlle, que tu aïlles, qu'il aïlle.  
Que nous allions, que vous alliez, qu'ils aillent  
Tenant. Que je tienne, que tu tiennes, qu'il tienne.  
Que nous tenions, qua vous teniez. qu'ils tiennent

Ասոր պէս է venir ը , և այս երկուքէն ածանցեալները , ինչպէս obtenir, contenir, ելն , devenir, revenir, ելն :

- Acquérant. Que j'acquièrè, que tu acquièrès, qu'il acquièrè.  
Que nous acquèrions, que vous acquèriez, qe'ils acquièrènt.  
Mourant. Que je meure, que tu meures, qu'il meure.  
Que nous mourions, que vous mouriez, qu'ils meurent.  
Recevant. Que je reçoive, que tu reçoives, qu'il reçoive.  
Que nous recevions, que vous receviez, qu'ils reçoivent.

Այսպէս կ'ըլլան նաև ասկէ ածանցեալները , apercevoir, concevoir և devoir բայերը :

- Valant. Que je vaille, que tu vailles, qu'il vaille.  
Que nous valions, que vous valiez, qu'ils vailent.  
Mouvant. Que je meuve, que tu meuves, qu'il meuve.  
Que nous mouvions, que vous mouviez, qu'ils meuvent.  
Voulant. Que je veuille, que tu veuilles, qu'il veuille.  
Que nous voulions, que vous vouliez, qu'ils veuillent.  
Buvant. Que je boive, que tu boives, qu'il boive.  
Que nous buvions, que vous buviez, qu'ils boivent.  
Prenant. Que je prenne, que tu prennes, qu'il prenne.  
Que nous prenions, que vous preniez, qu'ils prennent.

Այսպէս կ'ըլլան նաև անանցեալները , apprendre ,  
comprendro, entreprendre, կ'ն :

Հետևեալ բայերուն ստորագասական ներկային բա-  
յր գէ՛ծք'ըը զարասցի են .

Pouvant. Que je puisse, que tu puisses, qu'il puisse.  
Que nous puissions, que vous puissiez, qu'ils  
puissent.

Ayant. Que j'aie, que tu aies, qu'il ait.  
Que nous ayons, que vous ayez, qu'ils aient.

Etant. Que je sois, que tu sois, qu'il soit.  
Que nous soyons, que vous soyez, qu'ils soient.

Faisant. Que je fasse, que tu fasses, qu'il fasse.  
Que nous fassions, que vous fassiez, qu'ils  
fassent.

ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆԻ ԳՈՐԵԱՆՈՒԹԻՒՆԸ

1. Կասնն . Հետևեալ միտքէ՛մ բայերէն ետքը ե-  
կած նախագասութեան բայը ստորագասական կը գրը-  
ուի .

- Պէտք է որ . Il faut que.
- Հարկ է որ . Il est nécessaire que.
- Նորանշան է որ . Il est singulier que.
- Յաւաղի է որ . Il est fâcheux que.
- Արդար է որ . Il est juste que.
- Անիրաւ է որ . Il est injuste que.
- Պատշաճ է որ . Il est à propos que.
- Չարմենաղի է որ . Il est surprenant que.
- Վայելուչ է որ . Il convient que.
- Ժամանակ է որ . Il est temps que.
- Կարեւոր է որ . Il est important que, il importe que.
- Բաւական է որ . Il suffit que.
- Բաղձաղի է որ . Il est à désirer que.
- Բղձաղի է որ . Il est à souhaiter que.

- Կը թուի ( ? ) որ . Il semble que.
- Կարելի է որ . Il est possible que.
- Լաւ է որ . Il vaud mieux que.

(\*) ԳԻՏ. Եթէ il semble ինչևս տրական խնդիր մը կայ, յաջորդ բայը սահմանական կը գրուի. ինչպէս, il me semble que, il lui semble que, ելն :

## ՕՐԻՆԱԿՔ

Պէտք է որ կանուխ հոս ըլլաք .	Il faut que vous soyez ici de bonne heure.
Հարկ է որ մարդ ստակ ունենայ .	Il est nécessaire qu'on ait de l'argent.
Արդար է որ պատժուիք .	Il est juste que vous soyez punis.
Բաւական է որ ասիկա գիտնաք .	Il suffit que vous sachiez cela.
Ժամանակ է որ խօսիք .	Il est temps que vous parliez.
Կարեւոր է որ ասիկա ըլլայ .	Il importe que cela se fasse.
Պատշաճ է որ մեկնինք .	Il est à propos que nous partions.
Փափաքելի է որ դեղ երժաս .	Il est à souhaiter que tu ailles à la campagne.
Բարձալի է որ առանց ուշանալու դաս .	Il est à désirer que tu reviennes sans tarder.
Կ'երեւայ որ նեղացած էք .	Il semble que vous soyez fâché.
Կարելի է թէ վաղը մեկնիս .	Il serait possible que tu ne partisses que demain.
Եւրազոյն է որ այս առտու հասնինք .	Il vaut mieux que nous soyons arrivés ce matin.

2. Կան. երբ « Il est » միադէմ բայէն հաքը ստուգուիլուն, ճշմարտութիւն ցուցնող ածական կամ մակբայ մը կայ, ինչպէս clair, յայտնի. certain, ստույգ. vrai, ճշմարիտ. probable, հաւանալիան, ելն, յաջորդ բայը սահմանական կը գրուի, եթէ միադէմը հաստատական է. իսկ եթէ միադէմը բացասական, հարցական կամ թէական է, յաջորդ բայը ստորագասական կը գրուի. զորօրինակ,

Ստոյգ է որ իրաւունքը չու- նիք .	{ ՍՀՄ. Il est certain que vous avez tort.
Ստոյգ չէ որ իրաւունք ու- նիք .	{ Ստր. Il n'est pas certain que vous ayez raison.
Հաւանական է թէ պիտի ը- նէ .	{ ՍՀՄ. Il est probable qu'il le fera.
Հաւանական է որ ընէ .	{ Ստր. Est-il probable qu'il le fasse ?
Ճշմարիտ է թէ ընդունակ է .	{ ՍՀՄ. Il est vrai qu'il en est capable.
Եթէ ճշմարիտ ըլլար որ ըն- դունակ ըլլար .	{ Ստր. S'il était vrai qu'il en fût capable.

3. Կամ . Տարակոյս , բաղձանք , հրաման , յուս-  
հատութիւն , դանդառու իւրիշ զգացումներ ցուցնող  
բայերէն հարը ստորագրասական կը գործածուի . այս-  
պէս են հետեւեալ բայերը .

Aimer. Սիրել .	Nier. Ուրանալ .
Aimer mieux. Ուղիւ մանա- ւանդ .	Ordonner. Պատուիրել .
Approuver. Հասնել .	Permettre. Թողլ տալ .
Appréhender. վախնալ .	Préférer. Նախապատիւ հա- մարել .
Attendre. Սպասել .	Prendre garde. Զգուշանալ .
Avoir peur. վախնալ .	Prier. Աղաչել .
Commander. Հրամայել .	Regretter. Յաւիլ, գղջալ .
Consentir. Հաւանիլ .	S'étonner. Զարմանալ .
Craindre. վախնալ .	Se plaindre. Գանդատել .
Défendre. Պաշտպանել .	Se réjouir. Ուրախանալ .
Désapprouver. Զհասնել .	Souffrir. Կրել .
Désirer. Բաղձալ .	Souhaiter. Ըզնալ .
Douter. Տարակոյսել .	Supposer. Ենթադրել .
Empêcher. Արգելուել .	Trouver bon. Աղէկ գտնել, հասնել .
Etre désolé. Անթոխիթար ըլ- լալ .	Trouver mauvais. Աղէկ չգրա- նել, չհասնել .
Exiger. Պահանջել .	Vouloir. Ուղիւ .
Mériter. Արժանի ըլլալ .	

## ՕՐԻՆԱԿԲ

Կը բաղձամ որ յաջողիք .	Je désire que vous réussis-
Կը տարախուսիմ թէ հասաւ .	siez .
Կ'ուզեմ որ հնազանդի լինի .	Je doute qu'il soit arrivé .
Կ'ըզձամ որ անոր բառի .	Je veux qu'il m'obéisse .
Կը վախնամ թէ ամպրոպ մը	Je souhaite qu'on le lui dise .
պի տի ունենանք .	Je crains que nous n'ayons
Կ'ուրանայ թէ ըբաւ .	un orage .
Կը դանդառն թէ զինք չարչա-	Il nie qu'il l'ait fait ( կամ ,
բնցիք .	il nie l'avoir fait ) .
Կը ցաւիմ շատ որ բրնք .	Il se plaint que vous l'ayez
Կը ցաւիմ որ սպասելու ստիպ-	maltraité .
ուեցաք .	Je suis au désespoir que
Աղէկ պէտի դանէք որ հան չեմ	vous l'ayez fait .
եղիմար .	Je regrette que vous ayez
Գեշ էր դանէ որ ըսիք .	été obligé d'attendre .
Ի՞նչ կ'ուզէք որ այս մարդիկը	Vous trouverez bon que je
գնեն .	n'y aille pas .
Կը յուսաք թէ իւր վաճառքը	Il trouve mauvais que vous
ծեղի ձրի՞ տայ :	l'ayez dit .
Ի՞նչ կ'ուզէք որ խմեմ .	Que voulez-vous que ces
	gens achettent ?
	Attendez-vous qu'il vous don-
	ne ses marchandises pour
	rien ?
	Que voulez-vous que je
	boive ?

4. Կամ . Մտաւոր գործողութիւնն , ոչ գրագրում ,  
ցուցնող բայեր կրք հաստատական են , իրենցմէ եա-  
քը սահմանական կ'ուզեն . իսկ եթէ բացասական ,  
հարցական կամ թէական են , ստորադասական կ'ու-  
զեն . ինչպէս ,

Affirmer . Հաստատել .

Assurer . Ապահովել .

Apercevoir . Տեսնել , հասկը-  
նալ .

Avouer . Խոստովանել .

Conclure . Հետեւցնել .

Convenir . Միտչանել , խոստ-  
վանել .

Croire. Հաւատալ, կարծել.	Penser. Խորհել.
Déclarer. Յայտնել, ծանուցանել.	Prédire. Կանխաւ ըսել.
Dire. Ըսել.	Prévoir. Կանխաւ տեսնել.
Espérer. Յուսալ.	Promettre. Խոստանալ.
Juger. Քստնել.	Publier. Հրատարակել.
Jurer. Երդնալ.	Savoir. Քիտնալ.
Maintenir. Հաստատանել, պաշտպանել.	Songer. Մտածել.
Oublier. Մոռնալ.	Soutenir. Պաշտպանել.
	Supposer. Ենթադրել.
	Voir. Տեսնել.

ՕՐԻՆԱԿՅ

Կը հաւատամ թէ իրաւունք Ե՛կ .	Սհմ. Je crois qu'il a raison.
Կը հաւատամք թէ այս ձին հարիւր սկսւա կ'արծէ .	Սար. Croyez-vous que ce cheval vaille cent écus ?
Չեմ՝ կարծեր թէ հարիւր ըս- կուա կ'արծէ .	Սար. Je ne crois pas qu'il vaille cent écus.
Կը յուսամ թէ պիտի գայ .	Սհմ. J'espère qu'il viendra.
Կը յուսար թէ կու գայ .	Սար. Espérez-vous qu'il vienne ?
Կարծեմ թէ բրաւ .	Սհմ. Je pense qu'il l'a fait.
Կը կարծէք թէ բրաւ .	Սար. Pensez-vous qu'il l'ait fait ?
Եթէ կը կարծէք թէ օգը պի- տի բացուի, գեղ կըթանք .	Si vous pensez que le temps se mette au beau, partons pour la campagne.

Ճ. Կաճ. Երբ վախ կամ կասկած ցուցնող, ինչպէս  
craindre, avoir peur, բայերէն ետքը եկող բային գոր-  
ծողութիւնը չի բաղձացուիր, այն բայն առանց pas ի  
ne միայն կ'աւանու: Իսկ Եթէ գործողութիւնը կը բաղ-  
ձացուի, բայը ne—pas կ'աւանու. ինչպէս,

Կը վախնամ թէ կու գան .	Je crains qu'ils ne viennent.
Կը վախնամ թէ իմ վրայ կը խօսիք .	J'ai peur que vous ne parliez de moi.

Կը վախնամ թէ չեն գար . Je crains qu'ils ne viennent pas.

6. Կան . Եթէ վախ , Կաս'յած ցուցնող բայը բացառական է , յաջորդ բայն ամենուին բացատրական մակբայ չառնուր . զոր օրինակ ,

Զեմ վախնար թէ մարդը կու գայ . Je n'ai pas peur que l'homme vienne.

7. Կան . Doubter, nier բայերը , Եթէ բացատրական են , յաջորդ բայն ալ ne ո՛վ միայն բացատրական կը գրուի :

Մի սարակուսիք թէ միշտ ձեր բարեկամը պիտի չըլլամ . Ne doutez pas que je ne sois toujours votre ami.

Զուրանար թէ չըրեք . Il ne nie pas que vous ne l'ayez fait.

8. Կան . Շատ ածականներ կամ ընդունելութիւն անցեալներ , երբ être, paraître, sembler բայերուն հետ կը գործածուին , իրենցմէ ետքը ստորագասական կ'ուղեն :

Այս ածականներէն եւ ընդունելութիւն անցեալներէն ոմանք հետեւեալներն են .

Affigé, վշտացեալ . Enchanté, սքանչացած .

Bien aise, ուրախ . Etonné, զարմացած .

Charmé, շատ ուրախ . Fâché, ցուած , նեղացած .

Content, գոհ . Surpris, հիացած , ազդած .

Կը ցուիմ որ հիւանդ է . Je suis fâché qu'elle soit malade.

Շատ ուրախ եմ որ հոս էք . Je suis charmé que vous soyez ici.

Ուրախ եմ որ ստակն ընդունեցաւ . Je suis bien aise qu'il ait eu son argent.

Կը նեղանայ որ իմ բարեկամս էք . Elle est fâchée que vous soyez mon ami.

Զարմացած եմ որ աւելի ուշա . Je suis étonné que vous ne

դեր չէք .	soyez pas plus attentif.
Արանչալացած կամ որ ձեր քոյրն տեսողացաւ .	Je suis enchanté que votre- sœur soit rétablie.
Ձեր հայրը վշտացած է որ ձեր դասերը դանց կ'ընէք .	Votre père est affligé que vous négligiez vos leçons.
Բոլորովին ապշած կամ որ ձեր պարտքը կատարած չէք .	Je suis tout surpris que vous n'ayez pas fait votre de- voir.

ԳԻՏ. Բոլոր այս դէպքերուն մէջ de ce սեռական  
ձեւն ալ կրնայ գործածուիլ սահմանականով :

Ձեր հոս բլլալուն վրայ ուրախ կամ .	Je suis charmé de ce que vous êtes ici.
Հաս ուրախ է որ ձեր ստակն տախը .	Il est bien aise de ce que vous avez eu votre argent.

### 236. Հրահանգ

Ինծի բան մը պատմել կ'ուզէ՞ք . — Ի՞նչ կ'ուզէ՞ք որ  
պատմեմ . — Կարճ պատմութիւն մը ( anecdote ), եթէ  
կամիք . — Փոքրիկ մանչ մը օր մը սեղանին վրայ միս  
կը խնդրէր . հայրն անոր ըսաւ թէ բան մը ուզել ան-  
քաղաքատարութիւն է , եւ թէ պէտք էր սպասել որ  
խրեն տրուէր : Իսկով փոքրիկ մանչը տեսնելով որ ա-  
մէն մարդ կ'ուտէր եւ իրեն բան մը չէր տրուեր , ը-  
սաւ հօրը . « Սիրելի հայր , եթէ կամիք , ինծի քիչ  
մը ազ տուէք : » « Ի՞նչ պիտի ընես » հարցուց հայ-  
րը : « Ուտելու համար միտին հետ զոր ինծի պիտի  
տաք , » պատասխանեց տղան : Ամէն մարդ տղուն  
խելքին զարմացաւ , եւ հայրը տեսնելով որ բան մը  
չունէր , անոր միս տուաւ , առանց անոր ուղեւորուի .  
— Ո՞վ էր այն փոքրիկ մանչը որ սեղանին վրայ միս  
ուզեց . — Բարեկամներէս մէկուն որդին էր . — Ինչո՞ւ  
համար միս ուզեց . — Ուզեց , վասն զի ախորժակ ու-  
նէր . — Ինչո՞ւ հայրն անոր իսկոյն չտուաւ . — Այն

զի մոռցած էր . — Քաբրիկ մանչն անկէ ուղկուն աղէկ չըբաւ . — Աղէկ չըբաւ , քանզի սպասելու էր . — Ինչո՞ւ հօրմէն աղ խնդրեց . — Աղ խնդրեց , որպէս զի հայրը տեսնէր թէ միս չունէր եւ անոր տար :

Կուղէ՞ք որ ձեզի ուրիշ կարճ պատմութիւն մը ընեմ . — Զիս շնորհասպարտ պիտի ընէք . — Մարդ մը վաճառականի քով բան գնած ատենը , անոր ըսաւ . « Շատ վրայ կը դնէք . պէտք չէր որ խնձի այնպէս սուղ ծախէիք ինչպէս ուրիշներուն . քանզի ձեր բարեկամներէն եմ » : Վաճառականը պատասխանեց . Տէր , պէտք է որ մեր բարեկամներէն բան մը շահինք . քանզի մեր թշնամիները երբէք մեր քով չեն դար :

### 237. Հրահանգ

Մանուկ իշխան մը , եօթը տարեկան , խելքին համար ամենուն զարմանք եղած էր : Օր մը ծեր պաշտօնակալի մը ընկերութեան մէջ դանուելով , ասիկա պիտոզութիւն մը ըբաւ , մանուկ իշխանին վրայ խօսելով , թէ երբ տղաք իրենց առաջին տարիներուն մէջ այնչափ խելք ունի՞ս , սովորաբար շատ քիչ կ'ունենան , երբ կը յառաջանան հասակաւ : « Եթէ այսպէս է , » ըսաւ մանուկ իշխանը որ անոր մօտիկ ըրած էր , « պէտք է որ դուք ձեր մանկութեան ատեն յանսահման խելք ունեցած ըլլաք . » — Անդդիացի մը Գաղիա առաջին անգամ այցելութիւն ընելուն , Գալէի փողոցներուն մէջ հանդիպեցաւ շատ մանուկ տղու մը որ շատ վարժ եւ վայելուչ կերպով Գաղիերէն կը խօսէր : « Տէր Աստուած , միթէ կարելի՞ է , » դօչեց , որ տղաք անգամ հոս մաքուր Գաղիերէն խօսին : »

Բայրիներուն բարեկամութիւնը վնասենք , եւ շարերուն ընկերութենէն խոյս տանք . քանզի դէ՛ ընկերութիւնները բարի բարքերը կ'ապականեն . — Այսօր

օգն ինչպէս է . — Տակաւին կը ձիւնէ , ինչպէս որ երեկ ձիւնեց , եւ ինչպէս կ'երեւայ , վաղն ալ պիտի ձիւնէ . — Փող ձիւնէ . կ'ուղէի որ եւս աւելի ձիւնէր , քանզի միշտ ասողջ եմ , երբ շատ ցուրտ է . — Իսկ ես միշտ աղէկ եմ , երբ ոչ ցուրտ է եւ ոչ տաք . — Այսօր շատ հով է , եւ աղէկ կ'ընէիք տունը մեալ . — Օգն ինչպէս որ ըլլայ , պէտք է որ դուրս ելլեմ . քանզի խօսք ատի քրոջս տունը երթալ ժամը տասնումէկը քստորդ անցած , եւ պէտք է որ խօսքս բռնեմ :



ՀԹ. ԴԱՄ. Soixante-dix-neuvième Leçon.

ՍՏՈՐԱԴ. ԱՆԿ. Imparfait du subjonctif.

Այս ժամանակը կը շինուի անցեալ որոշեալէն (ԿԸ. Դ.տա), այսինքն՝ Ա. լծորդութեան մէջ անցեալ որոշեալին ai մասնիկը asse ի փոխելով , իս'կ միւս երեք լծորդութեանց մէջ անցեալ որոշեալին վրայ se աւելցնելով . զոր օրինակ .

- |                   |  |
|-------------------|--|
| Անց. որոշ.        | Ստոր. անկ.   |
| 1. լծ. Je parlai. | Que je parlasse, que tu parlasses, qu'il parlât; que nous parlussions, que vous parlassiez, qu'ils parlassent. |
| 2. լծ. Je finis.  | Que je finisse, que tu finisses qu'il finît; que nous finissions, que vous finissiez, qu'ils finissent.        |
| 3. լծ. Je reçus.  | Que je reçusse, que tu reçusses, qu'il reçût, que nous reçussions, que vous reçussiez, qu'ils reçussent.       |
| 4. լծ. Je rendis. | Que je rendisse, que tu rendisses, qu'il rendît; que nous rendissions, que vous rendissiez, qu'ils rendissent. |

ԳԻՏ. Ա. Ստորագոտական անցեալը (subjonctif passé) եւ Ստորագոտական գերակատարը (subjonctif plusque parfait) բաղադրեալ ժամանակներ (temps composé) են, եւ առաջինը օժանդակին ստորագոտական ներկայէն, երկրորդն ալ օժանդակին ստորագոտական անկատարէն ու բային ընդունելութիւն անցեալէն կը շինուին. *ինչպէս,*

Que j'aie aimé.	Որ սիրած ըլլամ.
Que je sois venu.	Որ եկած ըլլամ.
Que j'eusse aimé.	Որ սիրած ըլլայի.
Que je fusse venu.	Որ եկած ըլլայի.

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԻՆ ԳՈՐԾԱԵՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ  
ՈՒՐԻՇ ԳԻՏԵԼԻՔ

9. Կսմին. Հետեւեալ շաղկապներէն ետքը բայը ստորագոտական կը գրուի.

A moins que, բայց եթէ.	Jusqu'à ce que, մինչեւ որ.
En cas que, ի դեպուածն որ.	Loin que, թող որ.
Au cas que, եթէ.	Non pas que, ոչ եթէ.
Avant que, յառաջ քան թէ,	Nonobstant que, ոչինչ ընդ- մինչեւ.
De crainte que, չըյայ թէ.	Posé que եթադրեալ թէ.
De peur que, դուցէ.	Supposé que " "
Pour que, որդէս զի.	Quoique, թէպէտ եւ, թէեւ.
Afin que, " "	Bien que " " "
Pour peu que, քիչ մը որ.	Encore que " " "
Si peu que, " " "	Sans que, առանց որ.
Pourvu que, բաւական որ.	Sois que, ըլլայ որ.

ՈՐԻՆԱԿՔ

Կ'ուզէ՞ք հոս մնալ, մինչեւ որ կարենամ ձեզի հետ դուրս ելլել. Voulez-vous rester ici jusqu'à ce que je puisse sortir avec vous, կամ que je puisse, եւն.

Անոր դարձն առաջ դուրս պիտի Je sortirai avant qu'il re-  
կլլեմ . vienne .

Ի դիպուածն որ ( եթէ ) ձեր En cas que (\*) vous eussiez  
չունեցածն ունենաք , հա- ce que vous n'avez pas,  
բուստ պիտի ըլլաք . vous seriez riche .

(\*) ԳԻՏ . Լուսադոյն է բուճի , Dans le cas que vous au-  
րiez ce que vous n'avez , ելն :

Բեկեւ ձեր աղայքը ծոյլ են , Bien que vos enfants soient  
յառաջադիմութիւն կ'ընեն . paresseux, ils font des  
progrès .

Բեկեւս փոքր է եւ ազեղ , բայց Quoi qu'elle soit petite et (\*)  
եւ այնպէս սիրուն է . qu'elle ait mauvaise mine,  
elle ne laisse pas d'être  
aimable .

(\*) Հոս que կը նշանակէ quoique , եւ quoique չկրկ-  
նելու համար ստորութիւնն է այսպէս ընել :

Բաւական է որ իմ բարեկամ- Pourvu que vous soyez de  
ներէս էք , գոհ եմ . Թէ ի- mes amis, je suis content, }  
բաւունք ունենաք , եւ թէ soit que vous ayez raison  
ու . ou tort .

40. Կսմ . Կան քանի մը շաղկապներ որ մերթ սահ-  
մանական եւ մերթ ստորադասական կ'ուղեն . սահ-  
մանական՝ երբ խօսքին իմաստն որոշ է . ստորադա-  
սական՝ երբ տարակուսական կամ հաւանական է : Ա-  
սոնք հետեւեալներն են : De façon que, de manière que,  
de sorte que, en sorte que, tellement que . այնպէս որ :

Sinon que .  
Այնպէս կը վարուիք որ ա- } ԱՏԸ . Vous vous conduisez de  
նենէն կը սիրուիք . } ֆաշոն que vous êtes  
aimé de tout le monde .  
Այնպէս վարուեցէք որ սիր- } Սար . Conduisez-vous de façon  
ուիք . } que vous soyez aimé .

11. Կա՛ն . Que շաղկապը վերո՛խշեալ շաղկապնե՛րուն տեղը կը գրուի , զանոնք չկրկնելու համար , եւ այն ատեն ալ բայը ստորադասական կամ սահմանական կը գրուի , ըստ պահանջելոյ այն շաղկապին որուն տեղ գրուած է que .

Քրոջեաեւ զանի կը ճանչնաք , եւ ( որոջեաեւ ) անոր երաշխաւոր կ'ըլլաք .

ՍՏՏ. Dès que vous le connais-  
siez et que vous ré-  
pondez de lui .

Բան մը պիտի չսորվիր , եթէ ուշադիր չըլլաք , եւ ( եթէ ) ձեր պարտքերը կանոնաւոր կերպով չկատարէք .

Ստր. Vous n'apprendrez rien  
à moins que vous ne  
soyez attentif et que  
vous ne fassiez régu-  
lièrement vos devoirs .

12. Կա՛ն . Que շաղկապը si շաղկապը չկրկնելու համար կը գործածուի . եւ իրմէ կտքը ստորադասական կ'ուղէ .

Եթէ ձեր բարեկամն հոս ըլլար , եւ զիս տեսնելու գալ ուզէր .

Si votre ami était ici , et  
qu'il voudût venir me voir .

Եթէ զիս կը սիրէր եւ անկեղծօրէն կը բաղձար իմ երջանկութիւնս .

S'il m'aimait et qu'il désirât  
sincèrement mon bonheur .

Եթէ մէկը կու գայ եւ ես տունք չըլլամ , զիս կանչել տուէք .

Si quelqu'un vient et que je  
ne sois pas à la maison ,  
envoyez-moi chercher .

13. Կա՛ն . Que ստորադասական կ'ուղէ , երբ Գ կանոնին մէջ յիշուած շաղկապներէն մէկուն տեղ կը գործածուի . զոր օրինակ , փոխանակ afin que , soit que , sans que , autant que , ելն , շաղկապներուն .

Փութաջան եղիք որ ձեր ծրնողքը գոհ ըլլան .

Appliquez-nous que vos pa-  
rents soient contents ( հոս  
que , afin queի տեղ է ) .

Թէ կարդամ եւ թէ գրեմ , ը-

Que je lise ou que j'écrive ,

<p>սեղու. բան մը կը գտնեն .</p> <p>Ապասեցէք որ ( մինչև. որ ) ձեր հօրը գայ .</p>	<p>ou y trouve toujours à redire ( հաս que, soit que թ տեղ է ) .</p> <p>Attendez que votre père revienne ( que հաս jusqu'à ce que թ տեղ է ) .</p>
---	---

238. Հրահանգ

Պր. Թխբէն վաճառականներէն երբէք սպասիկ բան մը պնել չէր ուղեր , « չըլլայ որ , կ'ըսէր , անոնց մէկ մասը կորսնցունեն , » եթէ իրեն մեանիլ պատահէր : Բայց գործաւորն'ըզ զօրս իւր ասն մէջ կը գործածէր՝ պատուէր ունէին իրենց ցուցակները ( փուտուշա ) բերելու , իւր պատերազմի երթալէն առաջ , եւ կանոնաւորապէս կը վարուէին :

Նրբէք պիտի շարքուիք , եթէ չթողուք գէշ բնկերութիւնը ուր կը յաճախէք . — Այս իրիկուն ձեր աշխատութիւնը չէք կրնար բնիշտանել , եթէ ձեզի շօշնեմ . — Ձեզի մեկնեմ բոլոր դժուարութիւնները , որպէս զի չլիտարիք ձեր ձեռնարկութեան մէջ . — Ննթադրելով թէ ձեր բարեկամները կորսնցնէք , ի՞նչ պիտի ըլլաք . — Եթէ իմ ձեռնատութեանս պէտք ունենաք , կանչեցէք զիս , եւ ձեզի օգնեմ . — Ինտատուն եւ խոճեմ մարդ մը խնայութեամբ կ'ապրի , երբ մանուկ ( կէնճ ) է , սրպէս զի իւր աշխատութեան պրտաւոր մայելէ , երբ ծերանայ . — Այս ստակը Պր. Ա. ի տարէք , որպէս զի կարող ըլլայ իւր պարտքը վճարել . — Ինծի այս ստակը փոխ առ կ'ուզէք . — Ձեզի դայն փոխ չեմ առք , եթէ ինծի խօսք չէք տար կարելի եղածին չափ շուս հատուցանելու . — Զօրապար հասա՛ւ . — Նրբէկ առաւ բանակեալք հասաւ , յոյնած եւ խոնջած , բայց ի գէղ ժամու . անմիջապէս հրամանները առաւ կուրն սիսելու համար . թէպէտ եւ բոլոր իւր գործը զեւ չունէր . — Ձեր քայրերը եր-

ջանի՞կ են . — Չեն , թէպէտ հարուստ են . քանզի գո՛հ  
 չեն . — Թէպէտ աղէկ յիշողութիւն ունին , ասիկա բա-  
 ւական չէ որ եւ իցէ լեզու մը սորիչու . պէտք է որ  
 իրենց գատողութիւնը գործածեն . — Նայեցէք , ի՞նչ-  
 պէս սիրուն է այս տիկինը . թէպէտ հարստութիւն  
 չունի , բայց եւ այնպէս կը սիրեմ զանի . — Անր վի-  
 նը ( քէման ) ինծի փոխ կու տա՞ք . — Չեղի փոխ կու  
 տամ , բաւական է որ այս իրիկուն տաք . — Անր  
 մայրը զիս անմննչ պիտի գտ՛յ . — Պիտի դայ . միայն  
 թէ զանի նուազածութեան ասնելու խօսք տաք .  
 — Չանի թախանձեղ պիտի չգազրիմ , մինչև որ ին-  
 ծի ներէ . — Չմելինն ինծի տուր . — Կու տամ . մի-  
 այն թէ դայն գէշի չգործածէք . — Կնտրա պիտի եր-  
 թա՞ք . — Պիտի երթամ . միայն եթէ ինծի ընկերա-  
 նաք . եւ նորէն պիտի գրեմ ձեր եղբօրը , եթէ նա-  
 մակա ընդունած չէ :

### 239. Հրահանգ

Գործին առննն ո՛ւր էիք . — Անկողինն էի վէրքերս  
 կապել տալու համար . Աստուած տար որ հոն եղած  
 ԸԼԼայի : Պիտի ուզէի յազթել կամ կորսուիլ . — Կըռ-  
 ուէն զգուշացան որ չըԼԼայ թէ բոնուէինք , անոնց  
 զօրութիւնը մերինէն աւելի ԸԼԼալով . — Աստուած չը-  
 նէ որ ձեր վարմունքը պարսուեմ . բայց ձեր գործ-  
 քերը պէտք եղածին պէս պիտի չկատարուին , եթէ  
 զանոնք անձամբ չկատարէք . — Ընդհուպ պիտի մեկ-  
 նի՞ք . — Պիտի չմեկնիմ , մինչև որ չճաշեմ . — Ինչո՞ւ  
 համար ինծի բոք թէ հայրս եկած է , թէպէտ հա-  
 կառակը գիտէիք . — Այնպէս գիւրազրդիտ ( prompt )  
 էք որ , մէկը ձեզի քիչ մը հակառակելուն պէս , խու-  
 կոյն կը բարկանաք . — Եթէ ձեր հայրն այսօր չի հաս-  
 նիր , եւ դուք ստակի պէտք ունենաք , ձեզի փոխ

կու տամ . — Անգի շատ շնորհապարտ եմ . — Անր պարտաւորութիւնն բրի՞ք . — Ոչ բոլորովին . եթէ ժամանակ ունեցած ըլլայի եւ այնպէս հող չընէի հօրս գալուն վրայ , ամբողջ ըրած պիտի ըլլայի . — Եթէ կը սորվիք եւ ուշագիւր էք , կ'ապահովեմ ձեզ որ Գաղիերէն լեզուն քիչ ատենուան մէջ պիտի սորվիք . — Այն որ արուեստ մը սորվեցնել կ'ուզէ , զայն հիմնովին գիտնալու է . պէտք է որ անոր վրայ ճիշդ եւ սղէկ դիտուած ծանօթութիւններ տայ . պէտք է որ գանձնք աշակերտին մտքին մէջ խոթէ , եւ մանաւանդ անոր յիշողութիւնը չճանրարեանէ անօգուտ եւ չնչին կանոններով :

Արեւի բարեկամն , ինծի լուի ( ոսկի ) մը փոխ տուէք . — Կէկին սեղ ահա երկուք . — Որչափ շնորհապարտ եմ ձեզ . — Միշտ գո՞ւ եմ , երբ ձեզ կը տեսնեմ , եւ իմ երջանկութիւնս ձերինին մէջ կը դանեմ . — Այս տունը ծախսու է . — Գնել կ'ուզէ՞ք . — Ընդէ՞ր ոչ . — Անր քոյրն ինչո՞ւ չի խօսիր . — Ար խօսէր , եթէ միշտ այսպէս ցրուեալ մտք չըլլար . — Գեղեցիկ կարճ պատմութիւնները կը սիրեմ . անոնք խօսակցութիւնը կը համեմնն եւ ամէն մարդ կը դրօսեցնեն . — Կ'աղաչեմ որ ինծի քանի մը հատ պատմէք . — Տեսէք , եթէ կը հաճիք , ձեզի փոխ տուած գիրքիս հարիւր քառասուն եւ ութերորդ էջը , եւ պիտի դանէք :



- Ձեր վայելած երջանկու թիւնն ինչ որ բլլայ, ես ևնէ աւելի երջանիկ եմ. Quel que soit le bonheur dont vous jouissiez, je suis plus heureux que vous.
- Ձեր ունեցած հարստութիւնն ինչ որ բլլայ, վայրկենի մը մէջ կրնար կորսնցնել. Quelle que soit la fortune que vous possédiez, vous pouvez la perdre en un instant.
- Ձեր բրած ջանքերն ինչ որ բլլան, ձեր նպատակն պետի չհասնիր. Quels que soient les efforts que vous fassiez, vous n'atteindrez jamais votre but.
- Ձեր յանձն աւած ներութիւններն ինչ որ բլլան երբէք ձեզի շնորհակալութիւն պետի չբլլայ. Quelles que soient les peines que vous preniez, jamais on ne vous en saura gré.

ԳԻՏ. Գ. Quelque chose que, quoi que, ինչ որ, կը նշանակէ: եւ բայը ստորադասական կ'ուզէ: Բայէ մը ետքը *quoi que ce soit կը գործածուի:*

- Հորս համար ինչ որ ընէք, մեզ կը վարձատրէ. Quelque chose que (կամ *quoi que*) vous fassiez pour mon père, il vous en récompensera.
- Ինչ որ բլլայ, կամ որ ե իցէ բանի վայ չեմ գանդատիր. Je ne me plains pas de quoi que ce soit.

ԳԻՏ. Գ. Qui que ce soit, ով որ, միշտ ստորադասական կ'ուզէ: *personne, pas un, aucun, rien, երբևի՜ միայն ստորադասական կ'ուզեն:*

- Որու վայ որ խօսէք, չորս խօսելու գրուչացէք. De qui que ce soit que vous parliez, gardez-vous de médire.
- Ձեմ՝ նանչար մէկը որ ձեզի չափ բարի բլլայ. Je ne connais personne qui soit aussi bon que vous.
- Բան մը չանայ որ պարտուելի բլլայ անոր վարքին մէջ. Je n'ai rien vu qu'on puisse blâmer dans sa conduite.

ԳԻՏ. Ե. Le plus, la plus, les plus, le moins, ելն, գլբարականներէն ետքը եկող *qui, que յարբերականներուն* բայը ստորադասական կը գրուի:

Գ.ու.ք. ամենէն սիրուն տիկինն  
էք զոր ես կը ճանչնամ.

Vous êtes la dame la plus  
aimable que je connaisse.

Ամենէն նորանշան մարդն է  
զոր երբէք տեսած եմ.

C'est l'homme le plus ex-  
traordinaire que j'aie ja-  
mais vu.

Ամենէն գուժաջան աշկերա-  
ներս էք զոր ես երբէք ու-  
նեցայ.

Vous êtes les élèves les plus  
studieux que j'aie jamais  
eus.

Ամենէն արէկ պահանջող զոր  
Թագաւոր մը կրնայ ունենալ,  
իւր հոգատակներուն սիրտն է.

La meilleure garde qu'un  
roi puisse avoir, c'est le  
cœur de ses sujets.

ԳԻՏ. Չ. Երբ *qui* կամ *que* յարարերականէն առաջ  
դասական թուական մը կայ, յարարերականէն ետքը  
եկող ըսյը երբեմն ստորադասական կը գրուի. իսկ  
premier մընա ստորադասական կ'ուղէ :

Առաջին մարդն է որ համար-  
ձակեցաւ ըսել ինձի.

C'est le premier homme qui  
ait osé me le dire.

Գ.ու.ք. երկրորդ սերուն տիկինն  
էք, որուն այս քաղքին մէջ  
հանդիպեցայ.

Vous êtes la deuxième dame  
aimable que j'aie rencon-  
trée dans cette ville.

ԳԻՏ. Է. Երբ *qui* կամ *que* յարարերականէն առաջ  
le seul, l'unique բառերը կան, ըսյը ստորադասական  
կը գրուի :

Գ.ու.ք. միայն էք որուն վտայ  
կրնամ վաստիլ.

Vous êtes le seul sur qui je  
puisse compter.

ԳԻՏ. Ը. Բայց բոլոր այս տեսակ խօսքերու մէջ,  
երբ *qui* կամ *que* յարարերականէն առաջ իջրեւ յա-  
րարերնալ սեռական մը կայ, յարարերականին ըսյը  
ոահմանական կը գրուի :

Ամենէն գեղեցիկն այն է կա-  
նանց որ օրերային էին.

C'est la plus belle des fem-  
mes qui étaient à l'opéra.

Չեմ ճանչնար և ոչ մէկն այն  
անձանց որ այս առտու ձեր  
տունը եկան.

Je ne connais aucune des  
personnes qui sont ve-  
nues chez vous ce matin.

Այլ յուսամ թէ ձեզի ծածուկ J'espère que vous ne direz  
բաճնեղէս բան մը չէք յայտ- rien de ce que je vous ai  
նէր . confié .

Ատրդացի առաջին հատորն J'ai lu le premier volume  
այն գիւղին զոր նմի փոխ de l'ouvrage que vous  
առեք . m'avez prêté .

ԳԻՏ. Թ. Խօսքի մը սկիզբն եղող բայ մը որ զար-  
մանք , իղձ , անխճք կը յայտնէ՝ ստորագասական կը  
գրուի . զոր օրինակ ,

Աստուած տայ որ այսպիսի Fasse le ciel que pareil mal-  
չարիք մը ձեզն չգատասհի . heur ne vous arrive ja-  
mais !

Աստուած տար . Plût à Dieu, au ciel .

Աստուած տար որ այսպէս Plût à Dieu qu'il en fût  
բլլար . ainsi !

Աստուած տար որ բրած բլլար . Plût à Dieu qu'il l'eût fait !

Աստուած տար որ բոլոր թա- Plût à Dieu que tous les  
գաւորը խաղաղութիւնը սի- grands seigneurs aimas-  
րէին . sent la paix !

Աստուած տար որ երբէք ա- Plût au ciel que nous ne  
ւելի թշուառ չբլլայինք . fussions jamais plus mal-  
heureux !

Եղև երջանիկ բլլայիք . Puissiez-vous être heureux ?

Այս տեսակ խօսքերը զեղչեալ են , եւ ամբողջը  
այիտի բլլայ . Je désire que le ciel fasse, ելն . Je voudrais  
qu'il plût à Dieu, au ciel, ելն :

Ասկէ հարիւր մղոն հեռու ալ Fussent-ils à cent lieues  
բլլան , զանոնք կը բերեմ . d'ici, j'irai les chercher .

Այսինքն Quand même ils seraient à  
cent lieues d'ici, եսլն .

ԳԻՏ. Ժ. Պէտք է գիտնալ որ , երբ խօսքի մը գրւ-  
խաւոր եւ երկրորդական անգամները միեւնոյն տէր-  
բալին ունին , երկրորդ բայը փոխանակ ստորագասա-

կանի աներևույթ կը դրուի, եթէ իմաստը հոմ կամ երկդիմի չէ :

Կու գամ ձեզ տեսնել .

Je viens vous voir.

Եւ ոչ, Je viens pour que je vous  
voie.

Չեմ կարծեր թէ վաղը կարող  
Կրտսի ըլլամ դուրս ելլել .

Je ne crois pas pouvoir  
sortir demain.

Եւ ոչ թէ, Je ne crois pas que je puisse  
sortir demain.

Բայց երբ խօսքին երկրորդ անգամին տէր բային առջի անգամին տէր բայիէն տարբեր է, այն առին երկրորդ բայը դիմաւոր, երբեմն նաեւ ստորադասական կը դրուի :

Չեմ կարծեր թէ կարող պիտի  
ըլլաս դուրս ելլել .

Je ne crois pas que tu pusses  
sortir demain.

ԳԻՏ. ԺԱ. Վերջապէս պէտք է զիտնալ որ խօսքի մը երկրորդ անգամը որ que, qui, dont, où, եւ ուրիշ ասոնց նման բառերով կապուած է առաջին անգամին հետ, բայց երբեմն սահմանական կ'ուղէ, երբեմն ստորադասական : Սահմանական՝ երբ խօսքին իմաստը որոշ, ստոյգ է . ստորադասական՝ երբ անստոյգ, տարակուսական է :

Կին մը պիտի առնու՞մ որ ին-  
ծի հաճոյ է .

} ՍՀճ: J'épouserai une femme  
qui me plaira.

Առնելու կ'ինս ինծի հաճելի  
ըլլալու է .

} Ստր. J'épouserai une femme  
qui me plaise.

Ահա գիրք մը, որուն ի հար-  
կաւորութեան կրնաք խոր-  
հուրդ հարցունել .

} ՍՀճ: Voilà un livre que vous  
pourrez consulter au  
besoin.

Ինծի գիրք մը տուէ՛ք, որուն  
ի հարկաւորութեան կա-  
րենամ խորհուրդ հար-  
ցունել .

} Ստր. Donnez-moi un livre que  
je puisse consulter au  
besoin.

Ինծի փոխ տուէք զերբ որուն պէտք չունիք .

{ ՍՏՄ. Prêtez-moi le livre dont vous n'avez pas besoin.

Ինծի փոխ տուէք զերբ մը որուն պէտք չունենաք .

{ ՍՄՐ. Prêtez-moi un livre dont vous n'avez pas besoin.

Մի թողուք տեղ մը ուր հանդարտ էք, և ուստի աղէկ կը լսէք .

{ ՍՏՄ. Ne quittez pas une place où vous êtes commodément et d'où vous entendez bien.

Ընտրեցէք տեղ մը ուր հանդարտ ըլլաք, և ուստի աղէկ լսէք .

{ ՍՄՐ. Choisissez une place où vous soyez commodément et d'où vous entendiez bien.

240. Հրահանգ


Պէտք է որ համբերութիւն ունենաք, թէպէտ բաղձանք չունիք . քանզի պէտք է որ ես ալ սպասեմ մինչև որ ստակս ընդունիմ : Եթէ այսօր ընդունիմ, կը վճարեմ ինչ որ ձեզի պարտիմ : Մի կարծէք թէ մոռցած եմ, քանզի ամէն օր անօր վրայ կը խորհիմ : Կամ թերևս կը կարծէք թէ ընդունեցայ . — Ձեմ կարծեր թէ ընդունեցաք . բայց կը վախճամ թէ ձեր միւս պարտատէրներն ընդունած են . — Դուք կ'ողէք աւելի ժամանակ ունենալ սորվելու համար . ձեր եղբայրներն ալ կ'ուզեն սորվելու պէտք չունենալ . — Աստուած տար որ ունենայիք ինչ որ կ'ըզձաք, և ես ունենայի ինչ որ կը բաղձամ . — Թէպէտ չունեցանք ինչ որ կ'ըզայինք, զրեթէ միշտ գո՛հ եղանք . և պարոնայք Պ. զրեթէ միշտ տժգո՛հ եղան . թէպէտ ունեցան ինչով որ խելացի մարդ մը կրնայ գո՛հ ըլլալ . — Մի կարծէք, տիկին, որ ձեր հովհարն ունեցայ . — Ո՞վ կ'ըսէ թէ կը հաւատամ . — Քեռայրս կ'ուզէր չունենալ ինչ որ ունեցաւ . — Ինչո՞ւ համար, — Միշտ շատ պարտապան ունեցաւ և ընաւ ստակ : — Լք բաղձամ որ ինծի հետ միշտ Գաղիերէն խօսիք ,

ևւ պէտք է որ ինծի հնազանդիք , եթէ սորվել կ'ուզէք , եւ չէք ուղեր ձեր ժամանակն յանօգուտս կորսընցնել : Կ'ուզէի որ աւելի փութաջան եւ աւելի ուշադիր ըլլայիք , երբ ձեզի կը խօսիմ : Եթէ ձեր բարեկամը չըլլայի , դուք ալ իմինս չըլլայիք , ձեզի այսպէս չէի խօսեր : Պ. Ա. ի մի վստահիք , քանզի ձեզ կը շողոքորթէ : Կը կարծէք թէ շողոքորթ մը կրնայ բարեկամ ըլլալ . — Դուք դանի չէք ճանչնար այնպէս՝ ինչպէս ես , թէպէտև դանի ամէն օր կը տեսնէք . — Մի կարծէք թէ անոր գէմ բարկացած եմ , քանզի հայրը զիս վշտացուց . — Մհ , ահա կուգայ . դուք անձամբ կրնաք ըսել անոր ամէն բան :

## 24. Հրահանգ

Մեր թագաւորին վրայ ի՞նչ կը խորհիք . — Կրնեմ թէ մեծ մարդ մըն է , բայց կ'աւելցնեմ թէ , թագաւորները որչափ եւ հզօր ըլլան , իրենց հպատակներուն ամենէն արուպին պէտ կը մեռնին . — Բոյրերէս դո՞ հեղա՞ք . — Նշայ . քանզի որչափ աղեղ ալ են , տակաւին շատ սիրուն են , եւ մեր գրայիներուն աղջիկները որչափ եւ դիտուն են , տակաւին երբեմն կը խաբուին . — Անոնց հայրը հարուտ չէ՞ . — Արչափ եւ հարուտ է , մէկ վայրկենի մէջ կրնայ ամէն բան կորսընցնել . — Ինչ որ ըլլայ թշնամին որուն չարութեանէն կը վախնաք , ձեր անամուրթեան վրայ պարտիք յենուլ . բայց օրէնքները կը դատաւարանն բոլոր յանցաւորները , ով որ ըլլան . — Ինչ որ ըլլան ձեր դիտաւորութիւնները , պարտէիք աարբեր վարուիլ . — Ինչ վատտ որ բերէք , չարդարացներ ձեր գործը որ ինքնին պարտաւելի է . — Ինչ որ պատահի ձեզ ալ խարհիս մէջ , ստուռածային Նախախնամութեան գէմ երբէք մի քրթմնջէք . քանզի մարդ ինչ որ կրէ , ալ-

ժանի է . — Ինչ որ ընեմ , երբէք գո՛ւ չէք . — Ինչ որ  
բռնէք , ձեր քայրերը պիտի պատժուին , եթէ արժա-  
նի են եւ եթէ ուղղուելու չեն ջանար . — Ո՞վ է որ  
խմ ոսկի ժամացոյցս առաւ . — Չեմ գիտեր : Մի կար-  
ծէ՛ք թէ ես առի , կամ թէ օրիորդ Ս . առաւ ձեր ար-  
ձաթէ , քթախոտի տուիր . քանզի երկուքն ալ տեսայ  
ձեր քրոջը ձեռքը , երբ գրաւականն ( gage touché ) կը  
խաղայինք . — Ապրիւ Տուր երթալու համար պիտի  
մեկնեմ . բայց տասնեւհինգ օրէն նորէն պիտի դամ ,  
եւ այն ատեն պիտի դամ ձեզ անսնել , ձեզ եւ ձեր  
ընտանիքը . — Չեր քոյրն հիմա ո՛ւր է . — Բարիդ է ,  
եւ եղբայրս Պէրլին է . — Ա՛րտուի թէ այս փոքրիկ  
կիներ պիտի ամուսնանայ ձեր բարեկամին ֆ . դօրա-  
պետին հետ . ճշմարիտ է . — Անոր վրայ խօսուելը չը  
լսեցի . — Մեր մեծ բանակին վրայ ի՞նչ լուր կայ .  
— Ա՛րտուի թէ Վէդէրի եւ Ռենտսի մէջտեղն է . — Ինչ  
որ սուրհանդակն ինձի բաւ , շատ ճշմարտանման եւ  
քննալով , անմիջապէս անուն դացի , քանի մը նա-  
մակ գրեցի եւ Վոնտրայի համար ճամբայ ելայ :



ՁԱ. Գ.Ս.Ս. Quatre-vingt-unième Leçon.

- |  |   |
|--|---|
| Շատ քիչ , կարելի եղածին<br>չափ քիչ .                   | Tant soit peu; quelque<br>peu.  |
| Կրնա՞ք չորհրդք ընել ինձի ընչ<br>մը հաց տալու .         | Voulez-vous me faire le<br>plaisir de me donner un<br>morceau de pain ? |
| Շատ կ'ուզէ՞ք .   | En voulé՞z-vous beaucoup ?  |
| Ոչ , կարելի եղածին չափ քիչ .                           | Non, tant soit peu.   |
| Երեւցնել , ծախել .                                     | Faire valoir.   |
| Այս մարդն իւր տաղանդները<br>բեւցնել , ծախել չի գիտեր . | Cet homme ne sait pas faire<br>valoir ses talents.                      |
| Այս մարդն իւր ստակն առեւ .                             | Cet homme fait valoir son   |

- տուրի մէջ կը բանեցնէ .  
 Զեր ստակն ի՞նչպէս կը բանե-  
 ցընէք .  
 Զանի հասարակաց թուղթե-  
 բով կը բանեցնեմ .  
 Ինքզինք արժեցնել .  
 Մարդ մը այն կ'արժէ , ինչ որ  
 ինքզինք կ'արժեցնէ .  
 Այս մարդը չեմ սիրեր , քան-  
 զի ինքզինք շափէն աւելի  
 կ'արժեցնէ .  
 Բայց և այնպէս .  
 Այս մարդը քիչ մը ստահակ  
 է , բայց և այնպէս իբր ա-  
 ղէկ մարդ կը համարուի .  
 Այս մարդը թէպէտ առողջ  
 չէ , բայց և այնպէս շատ  
 կ'աշխատի .  
 Թեպէտ այս կինը գեղեցիկ  
 չէ , բայց և այնպէս շատ  
 սիրուն է .  
 Թեպէտ այս մարդն ամենեւին  
 քանքար չունի , բայց եւ  
 այնպէս ինքզինք շատ կ'ար-  
 ժեցունէ .  
 Թեպէտեւ այս պանդոկապե-  
 տին կինը քիչ մը թուխ է ,  
 բայց և այնպէս անհամոյ  
 չէ .  
 Խիցը ( թափա , մանթար ) .  
 Աղէկ գինին ինքզինք կը յայտ-  
 նէ .  
 Զեր նամակն ( ամսոյս ) հին-  
 գին ընդունեցայ .  
 Վ՛կցին .
- argent dans le commerce-  
 Comment faites-vous valoir  
 votre argent ?  
 Je le fais valoir dans les  
 fonds publics.  
 Se faire valoir.  
 Un homme ne vaut que ce  
 qu'il se fait valoir.  
 Je n'aime pas cet homme,  
 parce qu'il se fait trop  
 valoir.  
 Ne laisser pas de-  
 Cet homme est tant soit peu  
 fripon, mais il ne laisse  
 pas de passer pour un  
 honnête homme.  
 Quoique cet homme ne se  
 porte pas bien, il ne lais-  
 se pas de travailler beau-  
 coup.  
 Quoique cette femme ne soit  
 pas bien jolie, elle ne lais-  
 se pas d'être fort aimable.  
 Quoique cet homme n'ait  
 aucun talent, il ne laisse  
 pas de se faire beaucoup  
 valoir.  
 Quoique la femme de cet  
 aubergiste soit tant soit  
 peu basané, elle ne lais-  
 se pas de faire valoir le  
 bouchon.  
 Le bouchon.  
 A bon vin il ne faut point  
 de bouchon ( առակ . )  
 J'ai reçu votre lettre le  
 cinq.  
 Le six.

Ղառնայլ .	Retourner.
Վերբ, en haut.	Վարբ . En bas.
Բիճելու վեր .	Jusqu'en haut.
Երէջ եղբայրբ .	Le frère aîné.
Երէջ քոյրբ .	La sœur aînée.
Երէջն է .	C'est l'aîné.
Երևալ, երևցած, երևալով .	Paraître; paru; paraissant.
Կ'երևամ, կ'երևաս, ևլն .	Je parais, tu parais, il paraît.
Պահել, սնուցանել .	Entretenir.
Ապրուստս .	Mon entretien.
Ապրուստս ինձի տարին հար- իւր ֆրանք կ'արժէ .	Mon entretien me coûte six cents francs par an.
Ընկղմել, խոթել .	Enfoncer.
Խոսակցիլ մեկուեւ հետ .	S'entretenir avec quelqu'un.
Խոսակցութիւն .	Un entretien.
Խնայել .	Épargner.
Ձեր ստակը խնայեցէք .	Épargnez votre argent.
Յողնել . Se laisser, être las, իդ . lasse. ( ետեւէն եկած աներեւոյթբ de ուլ ) .	
Ղործածել զործիք մը .	Manier un instrument.
Կրթնիլ բանի մը վրան, բանի մը .	S'appuyer sur, contre, de.
Վրաս կրթնացէք .	Appuyez-vous sur moi.
Պատին կրթնեցէք .	Appuyez-vous contre la muraille.
Խւր հօրբ հեղինակութեանը ( ազգեցութեանը ) կ'ապա- ւինի .	Il s'appuie de l'autorité, du crédit de son père.
Գիրի մտնել ( նշան առնել ) .	Coucher en joue.
Կարճ .	Court.
Յանկարծ կենալ ( խօսելու անան ) .	S'arrêter tout court.
Աւարկնութիւնը սիրուն է .	La vertu est aimable.
Մալութիւնն ատելի է .	Le vice est haïssable.

ԳԻՏ. Ա. Գաղիերէնի մէջ երբ անուն մը ընդհանուր

մտքով անուած է , այսինքն՝ երբ ամեն նշանակու-  
թիւնն ունի , որոշեալ յօդ ( le, la, les ) կ'անու :

Մարդիկ ( ամէն մարդ ) մահ- Les hommes sont mortels.  
կանացու են .

Ոսկին ( ամէն ոսկի ) մեծագին է . L'or est précieux .

Յորենք էր ծախուի քոռք մէկ Le blé se vend un écu le  
սկուտ . boisseau .

Եղան միսք կ'արժէ լիպրան 11 Le bœuf coûte onze sous la  
ուտ . livre .

Մոլութենէ սոսկալ և առա- L'horreur du vice et l'a-  
քինութիւնը սիրել իմաստ-  
նոյն հեշտութիւնն է .  
amour de la vertu sont les  
délices du sage .

Անգլիա գեղեցիկ երկիր մըն է . L'Angleterre est un beau  
pays .

ԳԻՏ. Բ. Թագաւորութեանց , երկիրներու և գա-  
ւաններու անունները որոշեալ յօդ կ'անուան , եթէ ի-  
րենցմէ առաջ en կամ de չկայ :

Գաղիայէ դառնալու ատեն J'irai en Allemagne à mon  
Գերմանիա պիտի երթամ .  
retour de France .

Իտալիա Եւրոպոյ պարտէզն L'Italie est le jardin de  
է . l'Europe .

Շունը ( ամէն շուն ) մարդուն Le chien est l'ami et le com-  
( մարդ արարածին ) բարեկա-  
մը և ընկերն է .  
pagnon de l'homme

ԳԻՏ. Գ. Թէ որոշեալ յօդը և թէ մասնական յօդը  
( du, de la, des ) ամէն անուան վրայ կը կրկնուի , և  
անուան հետ սեռիւ և թուով կը համաձայնի :

Թեսալիա յառաջ կը բերէ գի- Thessalie produit du vin,  
նի , նարինջ , կիտրոն , ձի-  
թապաուղ և ամենայն տե-  
սակ միք .  
des oranges, des citrons,  
des olives et toutes sortes  
de fruits .

Հացը , միսը , խնձորները և Il a mangé le pain, la vian-  
կարկանդակները կերաւ . գի-  
նէն , գարեջուրը և մրգոյը  
խմեց .  
gateaux; il a bu le vin,  
la bière et le cidre .

242. Հրահանգ

Գալ տարի մեր պիտի երթաք . — Անդղիա պիտի երթամ , քանզի գեղեցիկ թաղաւորութիւն մըն է , ուր միտք ունիմ ամառն անցունել՝ Գաղիայէ դառնալուս . — Չմտն մեր պիտի երթաք . — Իտալիա պիտի երթամ եւ անկէ արեւմտեան Հնդկաստան . բայց ասկէ առաջ , պէտք է որ Հոլանտա երթամ բարեկամներէս հրաժեշտ առնելու . — Այս ժողովուրդներն ի՞նչ երկիրներ կը բնակին . — Եւրոպիոյ հարաւային գին կը բնակին . անոնց երկիրն Իտալիա , Սպանիա եւ Բորգոնիա կը կոչուի , իրենք ալ՝ Իտալացի , Սպանիացի եւ Բորթոնիէզ . բայց Բուս , Սուէս եւ Պոլանիացի կոչուած ժողովուրդները կը բնակին Եւրոպիոյ հիւսիսային կողմը , եւ անոնց երկիրներուն անուններն են Բուսիա , Սուետիա եւ Պոլանիա . — Գաղիա Իտալիայէ բաժնուած է Ալպեան լեռներով , եւ Սպանիայէ՝ Պիրենեան լեռներով . — Թէպէտ գինի գործածել արգելուած է Մահմետականաց , անոնցմէ ոմանք խմել զանց չեն ըներ . — Ձեր եղբայրն այս առտու բան մը կերաւ . — Շատ կերաւ թէպէտ ըսաւ թէ ակործակ չունի , բոլոր միտք , բոլոր հացը եւ բոլոր բանջարեղէնն ուտելու , եւ բոլոր դինին եւ բոլոր դարեջուրը եւ բոլոր միզուղը խմելու զանց չըրաւ . — Հաւելիքն հիմա սճւղ է . — Հարիւրը վեց ֆրանքի կը ծախուի . — Իսաղողը կը սիրէ՞ք . — Այ միշտն իսաղողը կը սիրեմ , այլ եւ սալորը , նուշը , ընկոյզը եւ ամէն տեսակ պտուղներ . — Թէպէտ համեստութիւնը , անկեղծութիւնը եւ քաղցրութիւնը պատուական յատկութիւններ են , սակայն կան տիկնայք որ ոչ համեստ են , ոչ անկեղծ եւ ոչ քաղցրաբարոյ . — Մահուան երկիւղը եւ կենաց սէրը մար-

դուս ընականն ըլլալով, պէտք էր մոլութենէ փախչիլ եւ առաքինութիւնը սիրել :



2Բ. ԴԱՍ. Quatre-vingt-deuxième Leçon.

Տեղի, պատճառ տալ .	Donner lieu, sujet ( ետեւէն աներեւոյթք de ուլ ) .
Գանդատելու տեղի մի տար անոր .	Ne lui donnez pas lieu de se plaindre.
Որովհետեւ կը գանդատի, պատճառ արուած է անոր .	Puisqu'il se plaint, on lui en a donné sujet.
Մէկը վկայ կոչել, կամ անոր խօսքին, որոշմանը յանձնել .	S'en rapporter à quelqu'un.
Հանել, հաւանել .	S'en rapporter.
Վերաբերել բանի մը .	Se rapporter à quelque chose, s'y référer.
Զեր խօսքին, ձեզի կը դիմեմ .	Je m'en rapporte à vous.
Գուք վկայ եղիք .	
Աղէկ առեւտուր մը .	Un bon marché.
Բանով մը գոհ ըլլալ, անկէ անդին չերթալ .	S'en tenir à.
Ձեր ինծի բրած առաջարկուածն կը կենամ, անկէ անդին չեմ անցնիք .	Je m'en tiens a l'offre que vous m'avez faite.

ԴԻՏ. Ա. Երբ doubt բայը բացասականով է, ետեւանէն եկած բայը որ անկէ կախում ունի՝ ne ուլ ստորագրասական կը դրուի :

Ձեմ տարակուսիք ( տարակոյս չունիմ ) որ իմ բարեկամն էք .	Je ne doute pas que vous ne soyez mon ami.
Տարակոյս չունիմ որ ( անտարակոյս ) պիտի ընէ .	Je ne doute pas qu'il ne le fasse.
Երէլ, ենթակայ ըլլալ .	Essuyer.
Քերդին բոլոր կրակին ենթակայ եղան .	Ils essayèrent tout le feu de la place.

Ի՛կհաւն բերնէն ըսն առնել .	Tirer les vers du nez à quel- qu'un.
Անոր հարցումներ ըրի, և այս միջոցաւ անոր բոլոր գործե- րուն տեղեկացայ .	Je l'ai questionné, et par ce moyen je me suis mis au fait de toutes ses affaires.
Յանձն առնուլ, հանել .	En passer par.
Պիտի ստիպուելք անոր բոլոր ուղանն յանձն առնուլ .	Vous serez obligé d'en pas- ser par tout ce qu'il vou- dra.
Թանձր .	Épais, էք . épaisse.
Թանձր անց մը .	Un nuage épais.
Թանձր մորուք մը .	Une barbe épaisse.
Աղղրնուտրութիւն .	Un éclat.
Գործի մը սղղրնուտրութիւնք (պտտութիւնք) արդելուլ .	Empêcher l'éclat d'une af- faire.
Քրքրիլ, բարձրաձայն (գա՛հ գա՛հ) ձիծալ .	Une éclat de rire, une risée.
Պայծառութիւնք, աղմուկք .	L'éclat.
Աղմուկ, շշուկ ընել .	Faire de l'éclat, du bruit.
Լուսաւորել, լոյս բռնել .	Eclairer.
Թողուլ զինք որ ծեծեն, գար- նեն .	Se laisser battre, frapper.
Իյնուլ .	Se laisser tomber.
Թողուլ զինք որ նախատեն .	Se laisser insulter.
Թողուլ զինք մեռնել .	Se laisser mourir.
Ղաւթայ տալ .	Renvoyer.
Գողել, հաշակել .	Venter.
Պարծել .	Se vanter de.
Գացէք .	Allez-y.
Երթանք .	Allons-y.
Գնա .	Va. Vas-y. (Տես Գաւ Է.)
Գնա, կորիք .	Va-t-en.
Թող երթայ .	Qu'il y aille.
Թող երթան .	Qu'ils y aillent.
Գացէք .	Allez-vous-en.
Երթանք .	Allons-nous-en.
Թող երթայ .	Qu'il s'en aille.
Տուէք ինձի .	Donnez-moi.

Ձայն ինձի տուէք .  
 Ձայն անոր տուէք .  
 Անկէ անոր տուէք .  
 Թող զայն ինձ տայ .  
 Ձեզի վճարել տուէք .  
 Մեկինք .  
 Նախաճաշէք .  
 Կէս օրին հաս թող ըլլայ .  
 Թող ինձի գրկէ զայն .  
 Թող հաւատայ .  
 Լմեցուցէք .  
 Թող լմեցուցէ .  
 Թող առնէ զայն .  
 Թող բռնէ զայն .

Donnez-le-moi .  
 Donnez-le-lui .  
 Donnez-lui-en .  
 Qu'il me le donne .  
 Faites-vous payer .  
 Partons .  
 Déjeûnons .  
 Qu'il soit ici à midi .  
 Qu'il me l'envoie .  
 Qu'il le croie .  
 Finissez .  
 Qu'il finisse .  
 Qu'il le prenne .  
 Qu'elle le dise .

Տարմահաւ , տարմաձուկ .  
 Անշուշտ .  
 Ինկիչ , սյդուհածինք .  
 Անյաղթելի դժուարութիւնք .  
 Եթէ հիմա ձեզի հարցումեք  
 տայի սյն հարցմանց պէս  
 զբռնք երբեմն մեր առաջին  
 դասերուն մէջ կ'ընէի , ի՞նչ  
 պիտի պատասխանէիք .

Le sansonnet .  
 En tout cas .  
 L'indigène .  
 La difficulté insurmontable .  
 Si je vous posais des questions  
 comme celles que  
 je vous adressais quelque-  
 fois dans nos premières  
 leçons, que répondriez-  
 vous ?

Ի սկզբան սյն հարցումները  
 քիչ մը ծաղրելի դասնք ,  
 բայց ձեր մեթոտին վրայ կա-  
 տարեալ վստահութեամբ  
 աննց պատասխան տուինք  
 որչափ որ մեզի կը թողուք  
 մեր սյն առնն ունեցած բա-  
 սերու և սկզբունքներու  
 պաշարը .

Nous avons d'abord trouvé  
 ces questions tant soit peu  
 ridicules; mais pleins de  
 confiance en votre méthode,  
 nous y avons répondu aus-  
 si bien que nous le per-  
 mettait la petite provision  
 de mots et de principes  
 que nous avions alors .

Շատ ջանցու հասկանք որ  
 հարցումները դիտամախ էին  
 մեզի , յեղյեղելու համար  
 սկզբունքները ( կանոնները )  
 և մեզ կրթելու համար խո-  
 սելու հարցապատասխանեաց

Nous n'avons pas tardé à  
 nous apercevoir que ces  
 questions étaient calculées  
 pour nous inculquer les  
 principes et nous exercer  
 à parler au moyen des

Միջոցաւ զոր ստիպուած է- ինք ընել .	réponses contradictoires que nous étions forcés d'y faire.
Հիմա գիտեմք ( կրնանք ) գրե- թէ գիւրաթեամբ Գաղին- րէն խօսակցել .	Maintenant nous savons nous entretenir en français presque avec facilité.
Այս խօսքը մեզի տրամաբան- օրէն ուղիղ չերևար .	Cette phrase ne nous paraît pas logiquement correcte.
Ազերախտ էինք , եթէ այսպի- սի դեղեցիկ պատահութիւն մը փախցնէինք առանց յայտ- նելու ձեզ մեր ամենէն եւամե- դուն շնորհակալութիւնը .	Nous serions ingrats, si nous laissions échapper une si belle occasion, sans vous témoigner la reconnaissance la plus vive.

243. Հրահանգ

Տաշտ մը սուրճ խմել կ'ուզէ՞ք . — Շնորհակալ եմ ,  
սուրճ չեմ սիրեր . — Այն ատեն դաւաթ մը գինի խը-  
մեցէ՞ք . — Նոր խմեցի . — Պատյա մը ընելու երթանք .  
— Շատ աղէկ . բայց ո՛ր երթանք . — Ինձի հետ հօ-  
րաքնոս պարտէ՞ն եկէ՞ք . հոն դուարձալի ընկերու-  
թիւն մը պիտի գտնենք . — Այնպէս է , բայց դիտ-  
նալու եմ թէ այն դուարձալի ընկերութիւնը զիս կ'ու-  
զէ՞ . — Գուք ամէն տեղ կ'ընդունուիք . — Ի՞նչ ու-  
նիք , բարեկամ : Այս գինին ի՞նչպէս կը գտնէք .  
— Աքանչիլի կը գտնեմ . բայց բաւական խմեցի .  
— Մէյ մ'ալ խմեցէ՞ք . — Ոչ , չտիէն աւելի գինին ա-  
սողջարար չէ . իմ խաւովուսածքս գիտեմ . — Մի՛խաք .  
— Ի՞նչ ունիք . — Ան գիտեր , բայց զլուխս կը դա-  
նայ . կարծեմ թէ պիտի թաղանամ . — Ես ալ այնպէս  
կը կարծեմ . քանդի գրեթէ մտելի գոցն ունիք . — Ո՞ր  
երկրէն էք . — Գերմանացի եմ . — Գաղիերէն այնպէս  
աղէկ կը խօսիք որ ձեզ ի ծնէ Գաղիացի կարծեցի .  
— Առտակ կ'ընէք . — Ներեցէք , ես ամենեւին կա-  
տակ չեմ ընել ( չեմ ծաղրեր ) . — Ո՞րչափ ատեն է որ  
Գաղիա էք . — Բանի մը օր է , — Ստուգի՛ւ . — Թե՛

րեւս կը տարակուսիք, վասն զի Գաղլերէն կը խօսիմ. Գաղիա գալէս առաջ գիտէի. — Այսպէս աղէկ ի՞նչպէս սորվեցաք. — Խոհեմ տարմածուկի պէս բրի:

Ըսէք ինծի, ինչո՞ւ համար դժուար էք ձեր կնոջը հետ, եւ ինչո՞ւ համար անօգուտ արուեստներով կը զբաղիք: Պաշտօն մը ձեռք բերելու այնչափ դժուարութիւն կայ. դուք այնպէս աղէկ պաշտօն մը ունիք, եւ զանցառութիւն կ'ընէք: Ապագան չէ՞ք մըտածեր. — Հիմա թող որ ես խօսիմ: Ձեր բոլոր բնածնները բանաւոր կ'երեւան. բայց յանցանքն իմա չէ, եթէ համբաւս կորուսի. յանցանքը կնոջն է. իմ ամենէն գեղեցիկ հանդերձներս, մատնիներս եւ ոտկի ժամացոյցս ծախեց: Պարտքով բեռնաւորեալ եմ, եւ չեմ գիտեր թէ ի՞նչ ընեմ. — Ձեր կինն արդարացնել չեմ ուզեր. բայց գիտեմ որ դուք ալ ձեր կորստեանը նպաստեցիք: Կանայք ընդհանրապէս բարի են, եթէ բարի թողուին:


## 244. Հրահանգ

### Խ Օ Ս Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ուսուցիչը. եթէ ձեզի հիմա հարցումներ ընէի, ինչպէս կ'ընէի երբեմն իմ առջի հրահանգներու մէջ, զոր օրինակ՝ Եղբօրս ունեցած բեզոյրն ունի՞ք. Անօրի եմ. Եղբայրս պարտեղին ծառն ունի՞, եղն, ի՞նչ պիտի ըսէիք:

Աշակերտք. Ստիպեալ ենք խոստովանել որ ի սկզբնայն այս հարցումները քիչ մը ծաղրական դատեք. բայց ձեր ուսուցանելու կերպին վրայ լի վստահութեամբ ստատախանեցինք անոնց, որչափ մեղի թող կու տար բառերու եւ կանոններու փոքր պաշարը զոր այն ատեն ունէինք: Արդարեւ շատ չանցաւ տեսանք որ այն հարցումները դիտմամբ շինուած (հաշուուած,

calculer) էլին մեզի կանոններն յեղյեղելու եւ կրթե-  
լու համար մեզ ի խօսակցութիւն՝ պատասխաններ տա-  
լով զոր ստիպուած էինք ընել : Բայց հիմա որ դրե-  
թէ կրնանք խօսակցութիւն ընել ձեր մեզի սորվե-  
ցուցած գեղեցիկ լեզուով ձեզի պիտի պատասխա-  
նենք . Անկարելի է որ ունենանք նոյն բեղոյրը զոր  
ձեր եզրայրն ունի . քանզի երկու անձինք չեն կրը-  
նար միեւնոյն բանն ունենալ : Արկորդ հարցման պի-  
տի պատասխանէինք թէ Անկարելի է որ մենք գիտ-  
նանք թէ դուք անօթի՞ էք թէ ոչ : Վերջնոյն դալով,  
պիտի ըտէինք թէ Պարտէզի մը մէջ ծառ մը միայն  
չըլլար . ուստի երբ մեզի կը հարցնէք թէ Պարտէզին  
ծառն ունի՞, խօսքը մեզի տրամաբանօրէն ուղիղ չե-  
րեւար : Ազաքէն ապերախտ պիտի ըլլայինք, եթէ  
այսպիսի գեղեցիկ առիթ մը ժախցունէինք առանց  
յայտնելու ձեզ մեր եռանդուն շնորհակալութիւնը ձեր  
կրած աշխատութեանց համար : Այս խմատուն մի-  
ջոյներով յաջողեցանք յեղյեղուլ մեզ դրեթէ անզգա-  
լապէս լեզուին կանոնները եւ մեզ կրթել խօսակցու-  
թեան : Աթէ ուրիշ կերպով սորվեցուի այս լեզուն օ-  
տարականաց, եւ երկրին մէջ ծնած մարդոց իսկ,  
դրեթէ տնյաղթելի դժուարութիւններ կը ծագին :



29. ԴԱՍ. Quatre-vingt-troisième Leçon.

Քառորդ մը պակաս է .

Կէսը պակաս է .

Ո՞րչափ պակաս է .

Այլ եւս շատ պակաս չէ .

Քիչ բան պակաս է .

Մաս մը պակաս է որ ձեզի  
չափ մեծ ըլլամ .

Il s'en faut d'un quart.

Il s'en faut de la moitié.

Combien s'en faut-il ?

Il ne s'en faut plus guère.

Il s'en faut de peu de chose.

Il s'en faut d'un pouce que  
je sois aussi grand que  
vous.

Շատ բան պահաս էր որ ձեռքի չափ հարուստ ըլլայի . Il s'en fallait de beaucoup que je fusse aussi riche que vous.

Կէսը . La moitié.

Երրորդ մասը . Le tiers.

Քառորդը . Le quart.

Կը կարծէք թէ բոլորն ինձի առիք, բայց շատ բան պահաս է . Vous croyez m'avoir tout rendu; il s'en faut de beaucoup.

ԳԻՏ. Ա. Il s'en faut իւր ետեւէն de կ'ուղէ, երբ ետեւէն եկած բառը քանակութիւն կը ցուցնէ . բայց երբ երկու բանի մէջ եղած սարքերութիւնը կը ցուցուի, թէ զանց կ'անուի :

Կրասերն երկրուն չափ իմաստուն չէ, շատ պահաս է . Le cadet n'est pas si sage que l'ainé, il s'en faut beaucoup.

ԳԻՏ. Բ. Երբ il s'en faut հարցական, կամ բացասական (guère, rien ելն . բաներով) խօսքի մը մէջ է, ետեւէն եկած նախադրութիւնը ne կ'ուղէ :

Գրեթէ բան մը չի պակտեր, որ եղբորը չափ մեծ չբլլայ . այսինքն՝ Գրեթէ եղբորը չափ մեծ է . Il ne s'en faut presque rien qu'il ne soit aussi grand que son frère.

Երբեմն գրեթէ անկէ աւելի շուտ կ'երթայ . Il s'en faut peu qu'il n'aille quelquefois plus vite que lui.

Ափեղջիկեղ . A tort et à travers.

Խենթի պէս փեղջիկեղ կը խօսի . Il parle à tort et à travers comme un fou.

Իրօք կուսի սկսել . Venir à des voies de fait.

Իրողութիւն մը . Un fait.

Իրողութիւն մըն է . C'est un fait.

Կամ . Ou, ou bien.

Երաշխի . Se moquer de.

Մէկը սուտ հանել .	Démentir quelqu'un.
Աթէ է այսպէս ըսէր, սուտ էր հանէի .	S'il disait cela, je le démentirais.
Գործքերը խօսքերը սուտ էր հանեն .	Ses actions démentent ses paroles.
Ճանկուտակ .	Egratigner.
Ազատիլ բանով մը .	En être quitte pour . . .
Կտանին բարձրութենէն ինկայ, բայց շատ չիսասուեցայ .	Je suis tombé du haut de l'arbre, mais je ne me suis pas fait beaucoup de mal.
Ճանկուտուածով մը ազատեցայ .	J'en ai été quitte pour une égratignure.
Գողը բռնուեցաւ, բայց քանի մը ամիս բանտարկութեամբ պիտի ազատի .	Le voleur a été pris, mais il en sera quitte pour quelques mois de prison.
Շատ . . . ով .	A force de.
Շատ աշխատելով .	A force de travailler.
Շատ լալով .	A force de pleurer.
Շատ լալով, ձեր աչուքները պիտի կորսնցնէք .	A force de pleurer, vous perdrez les yeux.
Շատ ազակելով անիկէ այս շքնորհքն ընդունեցայ .	J'obtins de lui cette faveur à force de prier.
Բաց ասիկէ, առանց ասոր .	A cela près.
Առանց այս թերութեան, աղէկ աղայ մըն է .	A ce défaut près, c'est un bon garçon (bon enfant) .
( Իրարու հետ ) մրցելով .	A l'envie (l'un de l'autre) .
Այս մարդիկը կ'աշխատին ( իրարու հետ ) մրցելով .	Ces hommes travaillent à l'envie (l'un de l'autre) .
Մաքուր .	Propre.
Մաքուր ձորձ .	Du linge propre կամ blanc.
Այնչափ աւելի . . . որչափ .	D'autant plus . . . que.
Այնչափ նուազ . . . որչափ .	D'autant moins . . . que.
Ինչ շատ երսիտիք տեսած ըլլալուն համար մանաւանդ ատգոս կ'ամոր վարմունքն .	Je suis d'autant plus mécontent de sa conduite, qu'il m'a beaucoup d'obligations.

Ինձի բարեկամ՝ բլլալու պար- տական բլլալուն համար մա- նուանդ. գոհ չեմ անոր զար- մունքին .	Je suis d'autant moins sa- tisfait de sa conduite, que j'avais plus de droits à son amitié.
Կ'ուզէի .	Je voudrais que.
Կ'ուզէի որ այս տունն իմն բլ- լար .	Je voudrais que cette maison fût à moi.
Խորհել, միտքը բանի վրայ բլլալ .	Rêver ( ետեւէն աներեւոյթը de ու ) .
Երկայն ատեն այս գործին վը- րայ խորհեցայ .	J'ai rêvé longtemps à cette affaire.

ԳԻՏ. Գ. Rêver de կը նշանակէ Երագ անսնել .

Երագնս մէջ դրացիս տեսայ .	J'ai rêvé de mon voisin.
Մերկ, բաց բլլալ .	Etre nu, իք. nue.
Գլուխը բաց բլլալ .	Avoir la tête nue.
Ոտքը բոկ բլլալ .	Avoir les pieds nus.

ԳԻՏ. Գ. Երբ ու անականը գոյականէ մը առաջ է ,  
անհոնոնիս կը մնայ , եւ նրկուքին մէջտեղ գիծ կը  
դրուի :

Բոկոտն բլլալ .	Etre nu-pieds.
Գլխեբաց բլլալ .	Etre nu-tête.
Առանց համարի ձի հեծնել .	Aller à poil.
Քիչ մնալ .	Manquer, faillir, penser.

ԳԻՏ. Ե. Manquer էն ետքը եկած աներեւոյթը à եւ  
de կրնայ ունենալ . manquer աներեւոյթը à ու կը նը-  
շանակէ պարտականութեան պակասութիւն . Իւր պար-  
տականութիւնները չկատարողը յարդ չունի . On n'es-  
time pas celui qui manque à remplir ses devoirs. Իսկ  
manquer աներեւոյթը de ու կը նշանակէ մոռնալ . Ne  
manquez pas d'y aller. Երթալու մի մոռնալ :

Penser եւ faillir սովորաբար առանց նախադրու-  
թեան են :

Քիչ մնաց որ ստակս քիտի J'ai manqué de perdre mon

կորսնցնելի .

argent. J'ai pensé perdre mon argent.

Քիչ մնաց կեանքս պիտի կորսնցնելի .

Je pensais perdre la vie.

Քիչ մնաց որ մեր մատուրները պիտի կտրվինք .

Nous avons manqué de nous couper les doigts.

Քիչ մնաց որ պիտի խիտար .

Il a manqué de tomber.

Քիչ մնաց որ բանն ահոր քսածին պէս պիտի ըլլար .

La chose a failli arriver comme il l'avait dit.

ԳԻՏ. Զ. Faillir որ être bien près կամ sur le point de . . . կը նշանակէ , երբեմն de ուղ կը դարձածուի , բայց à ուղ շատ քիչ :

Քիչ մնաց պիտի կխայի .

J'ai failli tomber, կամ de tomber.

{ Il a manqué d'être tué, կամ de perdre la vie.

Քիչ մնաց որ պիտի սպանուէր .

{ Il a pensé être tué, կամ Il a failli perdre la vie.

{ Peu s'en est fallu qu'il n'eût été tué. կամ qu'il n'eût perdu la vie.

Քիչ մնաց որ պիտի մեռնէր .

Il a pensé mourir, կամ Il a failli mourir.

Ձեր ետեւէն .

A vos trousses.

Թշնամին մեր ետեւէն ինկած է .

L'ennemi est à nos trousses, կամ nous poursuit de près. Tomber.

Չարնել (կայծակ) .

La foudre est tombée.

Պայծակը զարկաւ .

Mon frère étant en pleine

Երբայրս ծովին վրայ եղած առանձն մեծ փոթորիկ մը պատահեցաւ . նախն կայծակ մը զարկաւ և բռնեցաւ, և բոլոր նաւաստիները ծովը նետուեցան որ լողալով ազատին .

mer, il survint une grande tempête; la foudre tomba sur le vaisseau, qu'elle mit en feu, et tout l'équipage se jeta dans la mer pour se sauver à la nage.

Սիւ բռնուեցաւ, տեսնելով

Il fut saisi de frayeur, vo-

որ կրակն ամէն գի կը ճա- բակէր .	yant que le feu gagnait de tous les côtés.
Զէր գիտեր թէ ինչ ընէ .	Il ne savait quel parti pren- dre.
Ալ չվարանցաւ .	Il ne balançait plus.
Գեւ անկէ լուր մը չառի .	Je n'ai pas encore eu de ses nouvelles.
Հրեշտակ մը .	Un ange.
Ճարտար գործուած մը .	Un chef-d'œuvre. յք. des chefs-d'œuvre.
Միածանը .	L'arc-en-ciel. յք. des arcs-en-ciel.

ԳԻՏ. Է. Բարդ անուններուն երկուքն ալ յոքնակիի նշանը կ'առնուն, երբ երկուքն ալ գոյական են, կամ մէկը գոյական եւ միւսն ածական է : Եթէ մէկը կամ երկուքն ալ անփոփոխ բառ են, զոր օրինակ բայ, նախադրութիւն, մակբայ, յոքնակիի նշան չեն առնուր : Երբ երկուքին մէկը նախադրութեամբ է, նախադրութիւն ունեցողը յոքնակիի նշան չառնուր, ինչպէս են վերի երկու բարդ բառերը :

Գիշերաշուտարճ (ծաղիկ) .	Շոյա (չէվիք) . Svelte.
Des belles de nuit.	Յարգանքը . Le respect.
Գեւքը . Sa physionomie.	Զարմանքը . L'admiration.
Հասակը (պղ) . Sa taille.	Վայելչութիւնը . Les graces.
Բացատրութիւնը . L'expres- sion.	Զարմանալի . A ravir.
Տեւքը . L'aspect.	Գրաւիչ . Engageant.
Գոհութիւն . Le contentement.	Գերազանց . Supérieurement
Տեւքը յարգանք և զարմանք կ'աղդէ .	Son aspect inspire du res- pect et de l'admiration.

### 245. Հրահանգ

Խնժի հետ ճաշել կ'ուղէ՞ք . — Շնորհակալ եմ . — Բա-  
րեկամներէս մէկը զիս ճաշելու հրաւիրեց . իմ սիրե-  
լի կերակուրս պատրաստել տուաւ . — Ի՞նչ կ'երակուրք

է . — Կաթնեղէն է . — Ես , կաթնեղէնը չեմ սիրեր .  
 աղէկ կտոր մը եղան մտի կամ խորովեալ հորթու մտի  
 պէս չկայ . — Ձեր կրասեր եղբայրն ի՞նչ եղաւ . — Ա-  
 մերիկա երթալու ատենը նաւաբեկութիւն ըրաւ .  
 — Պատմեցէք ինձի ատիկա . — Շատ յօժարութեամբ :  
 Երբ ծովուն մէջտեղն էին , մեծ փոթորիկ մը վրայ  
 հասաւ : Նախն փայ կայծակ ինկաւ եւ բռնկեցաւ :  
 Նաւասարները ծովը նետուեցան՝ լողալով աշատելու  
 համար : Եղբայրս չէր գիտեր թէ ինչ ընէ , լողալ եր-  
 բէք սոցլած չըլլալով : Ի դուր կը խորհէր , միջոց մը  
 չէր գտներ կեանքը փրկելու . Ահիւ բռնուեցաւ անս-  
 նելով որ կրակն ամէն զի կը ճարակէր : Չվարանեցաւ ,  
 ինքզինք ծովը նետեց . — Աղէկ , ի՞նչ եղաւ . — Ձեմ  
 դիտեր , զեռ անկէ լուր առած չըլլալով . — Բայց ձե-  
 ղի մ՛ի ըսաւ այս ամէնը . — Եղբորորդիս որ ներկայ  
 էր եւ ազատեցաւ . — Ձեր եղբորորդին հարցունեմ ,  
 հիմա մ՛ը է . — Իտալիա է . — Երկայն ատե՛ն է որ  
 անկէ լուր առած չէք . — Այսօր նամակ մը առի ան-  
 կէ . — Ի՞նչ կը գրէ . — Լը գրէ թէ օրիորդ մը կ'առ-  
 նու որ անոր հարիւր հազար սիլուա կը բերէ . — Գե-  
 ղիցի՛կ է . — Հրեշտակի պէս գեղեցիկ . Բնութեան ա-  
 մենաճարտար գործն է : Գէմքը քաղցր է եւ լի բա-  
 ցատրութեամբ . աչուրներն ամենագեղեցիկ են , եւ  
 բերանը չքնաղ : Ոչ չափազանց մեծ է , եւ ոչ չափա-  
 զանց փոքր . հասակը շոյտ է . բոլոր գործողութիւն-  
 ները ( շարժումնքը ) լի են շնորհօք եւ եղանակները  
 հաճոյական : Տեսքը յարգանք եւ դարմանք կ'ազդէ :  
 Նաեւ շատ խնդ ունի . այլեւայլ լեզուներ կը խօսի .  
 շատ գերազանց կերպով կը կաքաւէ եւ դարմանալի  
 կերպով կ'երգէ : Եղբայրս անոր վրայ թերութիւն մը  
 միայն կը գտնէ . — Ի՞նչ է այս թերութիւնը . — Ինք-  
 նահաւանութիւն ունի . — Աշխարհիս վրայ կատար-  
 եալ բան չկայ . — Ի՞նչ երջանիկ էք . հարուստ էք :

աղէկ կլին մը ունիք, սիրուն զաւակներ, զեզեցիկ տուն մը եւ ամէն բան որ կը բաղձաք. — Այ ամէն բան, բարեկամս. — Այ ի՞նչ բանի կը բաղձաք. — Գոհութիւն. քանզի զիտէք որ նա միայն երջանիկ է որ գոհ է :



27. ԳԱՍ. Quatre-vingt-quatrième Leçon.

Շտկել, պարզել.	Déméler.
Մտղերը շտկել.	Déméler les cheveux.
Գժուարութիւններ պարզել.	Déméler des difficultés.
Այս խօսքին միտքը չկըցայ պարզել.	Je n'ai pas pu déméler le sens de cette phrase.
Կռիւ, վէճ մը.	Un démélé, un différend.
Մեկուն հետ կռիւ մը ունենալ.	Avoir un démélé, կամ un différend avec quelqu'un.
Ձգուշանալ.	Se garder de.
Ասիկա ընելու շատ պիտի զգուշանամ.	Je me garderai bien de le faire.
Այս մարդուն ստակ փոխ տալու զգուշացէք.	Gardez-vous bien de prêter de l'argent à cet homme.
Կը զգուշանայ պատասխան տալ հարցման զոր տնօրէրի.	Il se garde bien de répondre à la question que je lui ai faite.

ԳԻՏ. Ա. Se garder է՞ն կտքը que ով ստորագասականալ կը զրուի. Gardez-vous qu'on ne vous surprenne. Նայեցէք որ չբռնուիք :

Հարցում մը ընել. Faire une question.  
 Եթէ ասիկա ընելու մտաբերէք Si vous vous avisez de le  
 (յանդգնիք), նեղ կը պատ- faire, je vous punirai.  
 ժեմ.

Վայելել, բլլալ (զգեստ մը). Soir; séant (Այս բայը էր-  
 րորդ դէ՛ք միայն կը գործածուի).

Ասիկա ինձի կը վայլէ՞.	Cela me sied-il ?
Ասիկա ձեզի չի վայլեր .	Cela ne vous sied pas.
Ասիկա ընել ձեզի չի վայլեր .	Il ne vous sied pas de faire cela.
Ասիկա ( հանդերձ մը ) ձեզի զարմանայի կերպով կը վայլէ .	Cela vous sied à merveille.
Անոր գլխապսիւրը գլխուն աղէկ չէր .	Sa coiffure lui seyait fort mal.
Ձեզի կը վայլէ զիս այսպէս յանդիմանել .	Il vous sied bien, de me le reprocher ( հեզօրէն ) .
Հետեւիլ .	S'ensuivre.
Կը հետեւի .	Il s'ensuit.
Ասիկ կը հետեւի որ ասիկա ընելու չէիր .	Il s'ensuit que vous ne devriez pas faire cela.
Ի՞նչպէս կ'ըլլայ որ այսպէս ուշ եկաք .	Comment se fait-il que vous soyez venu si tard ?
Չեմ գիտեր ինչպէս կ'ըլլայ ասիկա .	Je ne sais ( pas ) comment cela se fait.
Ի՞նչպէս եղաւ որ իւր հրացան ընչ չուներ .	Comment se faisait-il qu'il n'eût ( n'avait ) pas son fusil ?
Չեմ գիտեր թէ ասիկա ինչ պէս եղաւ .	Je ne sais ( pas ) comment cela s'est fait.
Երո՞մ պահել .	Jeûner.
Երո՞մ բլաւ .	Etre à jeûn.
Մեկուն ըսն մը իմացնել .	Avertir quelqu'un de quelque chose.
Այս մարդուն իմացուցէք իւր հօրը դառնալը .	Avertissez cet homme du retour de son père.
Լուսաւորել, յայտնի ընել .	Eclaircir.
Օրը կը բացուի .	Le temps s'éclaircit.
Կաղդուրել, սո՞՞ս առլ .	Rafraichir.
Քիչ մը ու՞՞ս առէք ու եկէք .	Rafraichissez-vous, et revenez tout de suite.
Ճերմկանել, լուսալ .	Blanchir.
Սեւցնել .	Noircir.
Գեղնիլ .	Pâlir.
Երեքանալ .	Vieillir ( avoir émé être ուլ .

	<i>կը խոնարհի</i> ) .
Մանկանալ .	Rajeûnir.
Կարմիրիլ .	Rougir.
Ջուարթացնել .	Egayer.
Ջուարթանալ .	S'égayer.
Մէկը ծաղրել .	S'égayer sur quelqu'un.
Չիս կը ծաղրէ .	Il s'égaie sur moi, կամ sur mon compte, կամ à mes dépens.
Կեղծել, կեղծած, կեղծելով .	Feindre; feint; feignant.
Կը կեղծեմ, կը կեղծես, էլն .	Je feins, tu feins, il feint.
Կեղծելու արուեստն ունի .	Il possède l'art de feindre.
Բան մը երկնցնել .	Traîner les choses en longueur.
( Մէկուն ) հետ գործ ունենալ .	Avoir affaire avec.
<p>ԳԻՏ. Բ. Avoir affaire à, հարապակութիւն կը ցուցնէ . On a affaire à ses supérieurs. Avoir affaire avec, կը նշանակէ սովորական յարաբերութիւն մը . Un marchand est forcé avoir affaire avec toutes sortes de personnes.</p>	
Այս մարդուն հետ գործ ունենալ չեմ սիրեր, քանզի միշտ բաները կ'երկնցնէ .	Je n'aime pas avoir affaire avec cet homme, parce qu'il traîne toujours les choses en longueur.
Ապացոյց մը .	Une preuve.
Ապացոյց մըն է .	C'est une preuve.
Կորուսիլ .	S'égarer.
Մէջէն, մէջտեղէն .	A travers le, la; au travers de.
Գնդակը պատին մէջէն անցաւ .	Le boulet a passé à travers la muraille.
Սուրը մարմնէն անցուցի .	Je lui ai passé l'épée au travers du corps, կամ à travers le corps.

## 246. Հրահանգ

Արարուս հինգերորդ կայսր օր մը որսի երթալով անտառին մէջ մտորեցաւ, եւ առն մը հասաւ, ուր մտաւ կազդուրուելու համար: Հոն կային չորս մարդիկ որ քնանալ կը կեղծէին: Անոնցմէ մէկը ելաւ, եւ կայսեր մօտենալով անոր ըսաւ թէ « Երազ տեսայ որ ժամացոյցդ անուամ » . եւ առաւ: Յետոյ ուրիշ մը ելաւ եւ ըսաւ թէ « Երազ տեսայ որ վերարկուդ ինծի շատ յարմար է » . եւ առաւ: Երրորդն անոր քսակն առաւ: « Կը շուսամ թէ չէք նեղանար, եթէ ձեզ որոնեմ », եւ անալէս ընելով կայսեր վիշը տեսաւ ոսկեղէն շղթայ մը, որուն կապուած էր սուլակ (sifflet) մը զոր ուղեց դողնալ: Բայց կայսրն անոր ըսաւ. « Բարեկամ, դիւ այս գոհարէն չըրկած, թող որ անոր գօրութիւնը քեզի սորվեցնեմ »: Աս ըսելով սուլեց: Անոր մարդիկը որ զանի կը վնտռէին՝ դիմեցին դէպի առնը, եւ զարմացան կայսրը անանելով այնպիսի վիճակի մէջ: Իսկ կայսրը գինք վտանգէ ազատ տեսնելով ըսաւ. « Ահա մարդիկ որ ինչ որ ուզեցին երազեցին: Հիմա ալ ես կ'ուզեմ երազ տեսնել », եւ քանի մը վայրկեան խորհելէն ետքը ըսաւ. « Երազ տեսայ որ գուք չորադ ալ կախուելու արժանի էք » . ասիկա ըսուելուն պէս իսկոյն գործադրուեցաւ ամեն ամբին:

Թաղաւոր մը օր մը կէսօրէն երկու ժամ ետքը քաղաք մը մտաւ, եւ ծերակոյտը զանի բարեւելու համար պատգամաւորներ դրկեց: Այն որ պիտի խօսէր՝ սկսաւ այսպէս. « Աղեքսանդր մեծ, մեծն Աղեքսանդր ». եւ պատանձեալ մնաց: Թաղաւորը որ շատ անօթի էր՝ ըսաւ. « Է, բարեկամ, Աղեքսանդր մեծ

ճաշ ըրած էր, իսկ ևս դեռ ծով եմ» : Աս ըսելով, ճամբան առաջ տարաւ դէպ ի հասարակաց պալատը ( hôtel de ville ), ուր անոր մեծաշուք ճաշ մը պատրաստուած էր :

## 247. Հրամանագ

Բարի ծեր մը շատ հիւանդ ըլլալով, կանչել տուաւ իւր ամուսինը որ դեռ շատ մանուկ էր և ըսաւ անոր. « Սիրելիս, կը տեսնէ՞ք որ վերջին ժամս կը մօտենայ և թէ ստիպուած եմ ձեզ թողուլ. ուստի, եթէ կ'ուզէ՞ք որ խաղաղութեամբ մեռնիմ, պէտք է որ ինձի հորհրք մը ընէ՞ք : Գեռ մանուկ է՞ք, և անտարակոյս պիտի նորէն ամուսնանաք, գիտեմ. բայց կ'ազաչեմ որ Պ. Լուին չտանէ՞ք, քանզի կը խոստովանիմ որ ևս միշտ անկէ նախանձեցայ դձեզ, և տակաւին կը նախանձիմ : Այդ յուսահատ պիտի մեռնիմ, եթէ աշխատ ինձի չէ՞ք խոստանար » : Ահնը պատասխանեց. « Սիրտս, կ'ազաչեմ դձեզ, որ ստիկա ձեզ շարգելու խաղաղութեամբ մեռնելու. քանզի կ'ապահովեմ դձեզ որ, զանի տունը ուղելու ալ ըլլամ, պիտի չկրնամ, քանզի արդէն ուրիշի մը խոստացուած եմ : »

Մեծն փրկեցիկս սովորութիւն ունէր, ամէն անգամ իւր թիկնապահութեանը մտնող զինուորին երեք հարցում ընել, այսինքն. « Քանի տարուան էք. Որչափ ատեն է որ իմ ծառայութեանս մէջ էք. Չեք թողակէն և ոսկէն դո՞ք էք : » Պատահեցաւ որ Գադիս ծնած մանուկ զինուոր մը որ իւր երկրին մէջ ծառայած ( զինուոր եղած ) էր, Բրուսիոյ ծառայութեան մէջ մտնել բաղձաց : Մնոր տեսքը զանի ընդունել տուաւ իսկոյն. բայց ամենեւին չէր գիտեր Գերմաներէն լեզուն, և հարիւրապետն, անոր ազգ

ընկելն կարը թէ թաղաւորը դանի առաջին անգամ տեսնելուն պէս հարցումներ պիտի ընէ անոր, խորհուրդ առաւ միանգամայն որ բերնուց սորվի երեք պատասխանները զոր պիտի տար: Ուստի հետեւեալ օրը զինուորը դաննք սորվեցաւ, եւ (զօրաց) կարգին մէջ երեւեալուն պէս, փրեղերիկոս մօտեցաւ անոր հարցում ընելու: Բայց զէպքն այնպէս բերաւ որ այս անգամ թաղաւորը երկրորդ հարցումէն սկսաւ, եւ հարցուց. « Որչափ ատեն է որ ծառայութեանս մէջ ես. » « Քսան եւ մէկ տարի, » պատասխանեց զինուորը: Թաղաւորը նայելով անոր երիտասարդութեանը որ յայտնի էր ցուցնէր թէ զէնք կրելն այնչափ երկայն ատեն չէր, անոր ըսաւ. « Քանի՞ տարուան ես (ըստ Գաղ. քանի՞ տարի ունիս): » — « Մէկ տարի, ներեցէք վեհափառ տէր: » Փրեղերիկոս եւս աւելի դարմանալով, գոչեց. « Պէտք է որ այս երկուքէն մէկը (եւ կամ գուն) խնկըը կորուսած ըլլայ: » Ձինուորն աւիկա երրորդ հարցման տեղ առնելով, շտապով պատասխանեց. « Երկուքն ալ, ներեցէք վեհափառ տէր: »



26. ԴԱՍ. Quatre-vingt-cinquième Leçon.

Կրկնել.	Doubler.
Կրկնել.	Le double.
Ձեր մասը.	Votre part.
Այս վաճառականը կրկին էր պահանջէ.	Ce marchand surfait du double.
Պէտք է որ անոր հետ սակարկէք. կէսը կը կտարէ.	Il faut que vous marchandez avec lui. Il vous rabattra la moitié.
Ձեր մասը կրկինն է, երկքկինն է.	Vous avez double part, triple part.

Նորոգել .	Renouveler.
Ապշեցնել, թմբեցնել .	Etourdir.
Ապուշ, անհանճար .	Etourdi.
Ազատ, անկեղծ .	Franc. Իդ. franche.
Մէկուն ձեռքը սնդել .	Serrer la main à quelqu'un.
Այո ըսի .	Je lui dis que oui.
Ոչ ըսի .	Je lui dis que non.
Պնդել, դոցել, պահել .	Serrer.
Ձեր ստակը պահեցէք .	Serrez votre argent. <sup>1</sup>
Գեղքս կարդալուս պէս, կը պահեմ .	Aussitôt que j'ai lu mon livre, je le serre.
Այս իրիկուն թատրոն երթալու հոգ չեմ ընէր .	Je ne me soucie pas beaucoup d'aller au spectacle (au théâtre) ce soir.
Կշտանալ, յագիլ .	Se rassasier.
Ժամ մը կայ որ կ'ուտեմ, և չեմ կրնար կշտանալ .	Il y a une heure que je mange et je ne puis me rassasier.
Կամ,	Je mange depuis une heure et je ne peux pas me rassasier.
Կշտանալ .	Etre rassasié.
Մարուն անցունել .	Se désaltérer.
Զէս ժամ է որ կը խմեմ, և չեմ կրնար ծարաւս անցունել .	Il y a une demi-heure que je bois, et je ne puis me désaltérer.
Մարուն անցունել .	S'êtrè désaltéré.
Քաղցը յաշեցնել .	Apaiser la faim.
Մարախլ .	Etre altéré de.
Արեան ծարաւի մարդ մըն է .	C'est un homme altéré de sang.
Երկու կողմէն, երկուստեք .	De part et d'autre.
Ամէն կողմէ .	De toutes parts.

## ԳԱՂԻՅԻՆ ՅԱՏՈՒԿ ԶԲՈՒՅՈՒԱՄՆԵՐ

Ինչպէս ուրիշ լեզուներ, նոյնպէս Գաղիերէնը յառակ դրուցուածներ կամ դադիարանութիւն ունի,

որ բառ առ բառ թարգմանուելով իմաստ չեն տար : Այսպիսի դրուցուածներ ընդարձակ բառարաններու մէջ կը գտնուին . ուստի եւ աշակերտներն հոն կը դրկինք . միայն քանի մը հաստ կը գնենք օրինակի համար .

Voilà des tableaux d'une grande beauté.	Ահա շատ գեղեցիկ նկարներ .
Dormir la grasse matinée.	Շատ քնանալ, ուշ ելլել .
Etre à deux doigts de sa perte.	Խւր կորուստէն երկու մաս չէառ ըլլալ .
Jeter de la poudre aux yeux.	Խաբել, մոլորեցնել .
Jeter feu et flamme.	Ստատիկ բարկանալ .
Passer quelqu'un au fil de l'épée.	Սուրէ անցունել .

Գերանուէններն ալ շատ անգամ Գաղիերէնի մէջ յառաւել կերպով մը կը դործածուին : Օրինակ հետեւեալները .

Quel quantième du mois avez-vous ? կամ Le quantième est-il ?	Ամուսն քանի՞ն է .
Est-ce là votre opinion ?	Այո ձեր կարծիքն է .
—Ne doutez point que ce ne là soit, n'en doutez pas.	—Ե՛ն աւարակուսիք, կամ Այո, անտարակոյս .
Sont-ce là vos domestiques ?	Ատոնք ձեր սպասաւորներն են .
—Oui, ce les sont.	—Այո, անոնք են .
Madame, êtes-vous la mère de cet enfant ?	Տիկին, այ տղան մայրն էք .
—Oui, je la suis.	—Այո, եմ .
Mesdames, êtes-vous les étrangères qu'on m'a annoncées ?	Տիկնայք, դուք այն օտարական կանայք էք որոնց վրայ ինձի ըսուեցաւ .
—Oui, nous les sommes.	—Այո, անոնք ենք .
Madame, êtes-vous mère ?	Տիկին, մայր էք .
—Oui, je le suis.	—Այո, եմ .
Madame, êtes-vous malade ?	Տիկին, հիւսանո՞ւք էք .
—Oui, je le suis.	—Այո, եմ .

- Mesdames, êtes-vous contentes de cette musique ? Տիկնայք, այս երաժշտութենէն գո՛հ էք .
- Oui, nous les sommes. —Այո, եմք .
- Y a-t-il longtemps que vous êtes arrivée ? Երկայն ատե՛ն է որ եկաք .
- Je le suis depuis quinze jours. —Տասն է հինգ օրէ ի վեր .
- Quoique cette femme montre plus de formeté que les autres, elle n'est pas pour cela la moins affligée ? Թեպէտ այս կինը միւսներէն աւելի համբերութիւն կը ցուցնէ, բայց և այնպէս անոնց ամենէն քիչ վշտացեալ չէ .
- Cette femme a l'art de répandre des larmes, même quand elle est le moins affligée. Այո կինն արասաւք թափելու արուեստն ունի, եւս և երբ ամենէն քիչ վշտացեալ է .
- Եսս բայեր այլեւայլ անուններով ևս նախադրութիւններով կերպ կերպ իմաստ կու տան . օրինակի համար հետեւեալները :
- Avoir le cœur sur les lèvres. Միտն ու լեզուն մէկ են .
- Avoir des affaires par-dessus les yeux. Զբաղմունքէ աչք չկրնալ բանալ .
- Avoir la tête près du bonnet. Գլուբացասուն ըլլալ .
- Se donner du bon temps. Զուարճանալ .
- Il y va de la vie. Կենաց զտանգ կայ .
- Il y va de mon honneur. Պատուոյս վտանգ կայ .
- Cela va sans dire, կամ cela s'entend de soi-même. Ասիկա ինքնին յայտնի է .
- Aller à bride abattue. Անխահեմաբար դարձել .
- Le soleil me donne dans la vue, dans les yeux. Արեւն աչքս կը մտնէ, կամ աչքիս կը դարձնէ .
- Ne savoir où donner de la tête. Ինչ ընելը չգիտնալ .
- Donner carte blanche à quelqu'un. Մէկուն լիակատար իշխանութիւն տալ .

Se donner la mort.	Ինչդիմիք սպանենել.
Faire la sourde oreille.	Սուտ խուլ բլլալ.
Je ne puis en venir à bout.	Չեմ հրնար գլուխ հանել.
En venir aux mains.	Երծկուել.
Mettre de l'eau dans son vin.	Բարկուծիւնը բռնել.
Ce vin porte à la tête.	Սոյս դիմին գլուխը կը զարնէ :
Couper la parole à quel- qu'un.	Մէկուն խօսքը կտրել.
Ne savoir sur quel pied danser.	Ինչ բնելը չգիտնալ.

*Տեսակ մը դաշխարանութիւն են առակներն . ինչ-  
պէս են հեանուեալները .*

A force de forger on de- vient forgeron.	Մարդ կըթուծեամբ զարտեա կ'բլլայ .
Jamais beau parler n'écór- cha la langue.	Աղէկ խօսելը լեղուն չի մաշե- ցընէր .
L'habit ne fait pas le moine.	Սքեմը կրօնաւոր չընէր .
Chien qui aboie ne mord pas.	Հալոգ շունը չի խածնէր .
Faire d'une pierre deux coups.	Մէկ քարով երկու թռչուն զարնել .
Il faut battre le fer quand il est chaud.	Երկաթը կը ձեծուի մինչ սաք է .
Il n'y a pire eau que celle qui dort.	Կեցող ջուրն է յաւեդդն :
Tout ce qui brille n'est pas or.	Ամէն փայլուն սակի չէ :

*ԳԻՏ. En lui comme տարրեր նշանակութիւն ունին ,  
en իրականութիւն կը ջուրնէ , comme նմանութիւն :*

Il m'a parlé en ami.	Իր բարեկամ խօսեցաւ .
J'ai ri comme un fou.	Խենդի պէս ծիծաղեցայ .
Vous vivez en roi.	Իրբեւ թաղանոր , թագաւո- րաբար կ'ապրիք .
Il travaille comme un mer- cenaire.	Վարձկանի պէս կ'աշխատի .
Il agit en furieux.	Իրբեւ կատաղի կը գործէ .
Se conduire en étourdi.	Իրբեւ ապուշ վարուել .

## 248. Հրահանգ

Մարդ մը երկու որդի ունէր . մէկը մինչեւ ցորեկ քնանալ կը սիրէր , եւ միւսը շատ աշխատասէր էր եւ միշտ շատ կանուխ կ'ելլէր : Ասիկա օր մը առտուն կանուխ ելլելով , ստակով լի քսակ մը դատաւ : Ար վազէ հղբօրը՝ զանի հազորդ ընելու իւր բարեբախտութեան , եւ սնօր կ'ըսէ . « Ար տեսնե՞ս , լուի , մարդ ինչ կը շահի կանուխ ելլելով : » « Իրաւ , » պատասխանեց հղբայրը , « եթէ այն որուն այդ քսակը կը վերաբերի քան զիս աւելի կանուխ ելած չըլլար , չէր կորսնցուներ զայն : »

Մանուկ ծոյլի մը կը հարցուէր թէ ինչու համար այնպէս երկայն առնն անկողինը կը մնար : « Զբաղեալ եմ , » ըսաւ , « խորհուրդ ընելու ամէն առտու : Աշխատութիւնը խորհուրդ կու տայ ինձ ելլել . ծուլութիւնը՝ պակաս մնալ . ասոնք ինծի հազար փաստ կը բերեն ի նպաստ եւ հակառակ : Խմ գործս է երկու կողմէն ըսուածները մտիկ ընել , եւ հազիւ թէ դատը մտիկ կ'ընեմ , ճաշը պատրաստ կ'ըլլայ : »

Ազնուական կնոջ մը վրայ գեղեցիկ գործ մը կը պատմուի . ասիկա հարցուելով թէ ուր էր ամուսինը , որ դաւաճանութեան մը հազորդ ըլլալուն համար պահուրտած էր , պատասխանեց քաջասրտութեամբ թէ ինք պահած էր զնա : Այս խոստովանութիւնը զանի թագաւորին առջեւ բերելով , թագաւորն անոր ըսաւ թէ չի կրնար տանջանքէն ազատիլ , բայց եթէ իւր ամուսնոյն պահուած տեղը յայտնելով : « Ասիկա բաւական է , » ըսաւ արիւնը : « Այո , » ըսաւ թագաւորը , « քեզի խօսք կու տամ : » « Շատ աղէկ , » ըսաւ կինը , « ես զանի սրտիս մէջ պահած եմ , հոն կրնաք գտնել : » Այս զարմանալի պատասխանը զարմացուց անոր թշնամիները :

249. Հրահանգ

Կոռնելիա, Գրակքեանց անուանի մայրը, իւր ամուսնոյն մահուանէն ետքը որ անոր տասուերկու տը-  
զաք թողած էր՝ ղինք իւր ընտանիքը խնամելու նուի-  
րեց այնպիսի իմաստութեամբ եւ խոհեմութեամբ որ  
անոր ընդհանուր յարգանք ժառանգեցուցին : Տաս-  
ուերկու քէն երեքը միայն հասուն տարիք ժամանե-  
ցին . աղջիկ մը, Սեմերոնիա, Տիբերիոս եւ Կայիոս,  
զորս Կոռնելիա մասնաւոր խնամօք անոց : Եւ թէ-  
պէտ առհասարակ զիտցուած էր թէ անոնք երջանիկ  
ձրիւք ծնած էին, կը կարծուէր թէ աւելի սպա-  
տապան էին դաստիարակութեան քան ընտրեալն :  
Պատասխանը զոր Կոռնելիա տուաւ Կամպանիացի  
տիկնոջ մը անոնց (տղոց) նկատմամբ՝ շատ երեւելի  
է, եւ տիկնանց ու մարց համար մեծամեծ խրատներ  
կը պարունակէ :

Այս տիկինը որ շատ հարուստ էր եւ պերճութիւնն  
ու փառքը կը սիրէր՝ ի տես հանած էր իւր ազամանդ-  
ները, մարդարիտներն ու սլատուական գոհարները,  
եւ շատ կը ստիպէր զԿոռնելիա որ իւր գոհարեղէն-  
ներն անոր ցուցնէր : Կոռնելիա ճարտարութեամբ խօ-  
սակցութիւնը դարձուց ուրիշ նիւթի մը վրայ, իւր  
որդւոց դանաչուն սպասելու համար որ հասա-  
րակաց զպրոցները դադած էին : Երբ անոնք տուն ե-  
կան եւ իրենց մօրը սննեակը հասան : Կոռնելիա ը-  
սաւ Կամպանիացի տիկնոջ, զանոնք անոր ցուցնե-  
լով . « Ահա իմ գոհարներս եւ միմիայն զարդս որուն  
յարդ կ'ընծայեմ : Եւ այսպիսի զարդ մը ընկերութեան  
զօրութիւնը եւ նեցուկն է, մեծ պայծառութիւն մը  
կը յաւելու քոյր արեւելեան գոհարներուն զեղեցիկու-  
թեան » :



## 22. ԳԱՍ. Quatre-vingt-sixième Leçon.

## ՔԱՆԻ ՄՐ ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

Beau, գեղեցիկ. Vilain, ազնւ. Bon, բարի, աղէկ. Mauvais, գէշ. Méchant, չար. Grand, մեծ. Gros, խոշոր. Petit, փոքր. Cher, սիրելի. Jeune, մեծուկ. Vieux, ճեր, հին. Meilleur, լաւագոյն. Moindre, փոքրագոյն. Saint, սուրբ. Եւայլն անականները գոյականէն առաջ կը գրուին :

2. Ազգի անուն, գոյն եւ ձեւ յուցնող անականները գոյականէն ետքը կը գրուին :

Երբ գոյական մը քանի մը անական ունի, ասոնք սովորաբար գոյականէն ետքը կը գրուին :

Un bon enfant.

Բարի տղայ մը .

Un méchant garçon.

Չար մեծ մը .

La langue française.

Գաղիներէն լեզուն .

Un chapeau blanc.

Սպիտակ բեղոյր մը .

Un bas noir.

Սև գուլպա մը .

Une table ronde.

Բարձրակ սեղան մը .

Mon cher ami.

Սիրելի բարեկամ .

Ma chère sœur.

Սիրելի քոյր .

Un roi bon et généreux.

Բարի եւ վեհանձն թագաւոր մը .

Une femme jeune, riche et

Մեծուկ, հարուստ եւ առա-

vertueuse.

քինի կին մը .

4. Հետեւեալ անականները գոյականէն առաջ կամ ետքը գրուելով տարբեր նշանակութիւն կ'ունենան .

Un grand homme.

Մեծ մարդ մը .

Un homme grand.

Երկայնահասակ մարդ մը .

Une grosse femme.

Գէր կին մը .

Une femme grosse.

Յղի կին մը .

Une sage femme.

Մեծկարարձ մը .

Une femme sage.

Իմաստուն կին մը .

Un galant homme.

Պատուաւոր մարդ մը .

Un homme galant.

( Կանանց հետ ) շատ քաղցր

վարուող մարդ մը .

Cher ածականը գոյականէն ետքը կը դրուի , երբ սուղ կը նշանակէ . Un fusil cher. Une table chère.

6. Մակերայները սովորաբար բայէն անմիջապէս ետքը կը դրուին , երբ բայը պարզ ժամանակ է : Արբ բայը բազմադրեալ ժամանակ է , օժանդակին եւ ընդունելութիւն անցեալին մէջտեղ :

Je sort plus tard que vous. Չնձէ ուշ դուրս կ'ելլեմ.  
 Votre sœur parle bien. Չեր քոյրն աղէկ կը խօսի.  
 Elle a bien parlé. Աղէկ խօսեցաւ .

7. Թէ գերանուն եւ թէ գոյական տէր բային բայէն առաջ կը դրուի , երբ խօսքը հարցական չէ : Իսկ հարցական խօսքերու մէջ գերանուն տէր բային բայէն ետքը կը դրուի : պարզ ժամանակներուն մէջ , բազմադրեալ ժամանակներուն մէջ օժանդակին եւ ընդունելութեան մէջտեղ կը դրուի : Աթէ տէր բային գոյական է , հարցական խօսքերու մէջ բայէն առաջ կը դրուի , բայց նոյն թուով եւ ս'տիւ գերանուն մը բայէն ետքը կը դրուի . ուստի եւ այն ատեն բային տէր բային երկուք է :

Il a le coffre. Անկա ունի արկղը .  
 L'homme a le crayon. Մարդն ունի մատիտը .  
 A-t-il mes beaux pistolets ? Իմ գեղեցիկ սարճանակներս ունի՞ .  
 L'homme a-t-il mes beaux pistolets ? Մարդն իմ գեղեցիկ սարճանակներս ունի՞ .

8. Առանց նախադրութեան էական՞ գերանուն խընդիրները բայէն առաջ կը դրուին միշտ . ուրիշ գերանուն , գոյական եւ նախադրութեամբ գերանուն խընդիրները՝ բայէն ետքը , խօսքը թէ հարցական ըլլայ թէ ոչ :

Vous l'aimez. Ձանի կը սերէք .  
 Vous m'avez dit cela. Ասկա ինձի ըսէք .

Je l'ai reçu de lui.	Անկէ ընդունեցայ զայն .
Vous aimez cet enfant.	Դուք կը սիրէք այս աղան .
J'ai écrit à mon père.	Հօրս գրեցի .
L'aimez-vous ?	Զանի կը սիրէ՞ք .
M'avez-vous dit cela ?	Ինծի ըսէ՞ք ասիկա .
L'ai-je reçu de lui ?	Անկէ՞ ընդունեցայ .
Aimez-vous cet enfant ?	Այս աղան կը սիրէ՞ք .
Ai-je écrit à mon père ?	Հօրս գրեցի՞ .

9. Հարցականն բառեր , ինչպէս qui ? que ? quel ?  
combien ? ելն , միշտ խօսքին սկիզբը կը դրուին :

Qui est là ?	Հոն ո՞վ կայ .
Qu'avez-vous fait ?	Ի՞նչ բրեք .
Quel garçon a acheté ces livres, et à qui en a-t-il fait cadeau ?	Ո՞ր աղան գնեց այս գիրքերը , և զանոնք որո՞ւ ընծայ ը- բաւ .

10. Բացասական խօսքի մէջ ne բայէն առաջ ևւ  
տէր բայիէն անմիջապէս ետքը կը դրուի . իսկ անոր  
վերաբերող pas, point, rien, ելն , բառերը , բայէն ան-  
միջապէս ետքը կու գան , եթէ բայը պարզ ժամանակ  
է . իսկ եթէ բայը բաղադրուալ ժամանակ է , օժան-  
դակէն ետքը :

Je ne l'ai pas.	Զունիմ զայն .
Veus n'avez rien de bon.	Աղէկ բան մը չունիք .
Je n'ai jamais fait de mal à personne.	Մէկուհ երբէք վնաս ըրած չեմ .
Je n'ai rien jeté.	Բան մը նետած չեմ .

11. Երբ բայն աներեւոյթ է , բացասական մակրայ-  
ներուն երկուքն ալ անկէ առաջ կը դրուին :

Il faut être peu sensé pour ne pas voir cela.	Ասիկա չտեսնելու համար ըիչ իսկք ունենալու է .
--	---

12. Հրամայականին գերանուն խնդիրները գո-  
յական խնդիրներու պէս բայէն ետքը կը դրուին , և

սեռի խնդիրը միշտ բնութեան խնդրէն առաջ կը դրուուի , եթէ երկուքն ալ դերանուն են . իսկ եթէ խընդիրներուն մէկը դերանուն եւ միւսն անուն է , դերանունն առաջ կը դրուի :

Donnez-le-moi.                    Ինձի տուէք զայն .  
 Envoyez-le-lui.                Զայն անոր զրկեցէք .  
 Donnez-moi mon crayon.      Մտախոս ինձի տուէք .

13. Եթէ հրամայականը բացասականով է , դերանունն խնդիրները բայէն առաջ կը դրուին :

Donnez-le-lui.                    Անոր տուէք զայն .  
 Ne le lui donnez pas.        Անոր մի տաք զայն .

14. Երբ բայը հարցական եւ հրամայական չէ , դերանունն խնդիրները բայէն առաջ կը դրուին ըսինք (8) . Պէտք է գիտնալ որ , եթէ դերանունն խնդիրներն երկուք են , մէկը սեռի եւ միւսը բնութեան , եւ երկուքն ալ երրորդ գէմքի դերանուն են , սեռի խնդիրը բնութեան խնդրէն առաջ կը դրուի : Իսկ եթէ մէկը Ա. կամ Բ. գէմքի է եւ միւսը Գ. գէմքի , Ա. եւ Բ. գէմքի խնդիրը Գ. գէմքի խնդրէն միշտ առաջ կը դրուի :

Je le lui ai dit.                    Զայն անոր ըսի .  
 Je les lui paye.                    Զանոնք անոր կը վճարեմ .  
 Je vous le dis.                    Զեզի կ'ըսեմ զայն .  
 Il nous les demande.        Զանոնք մենէ կը խնդրէ .  
 Il me l'a dit.                    Ինձի ըսաւ զայն .  
 Ne le leur rendez pas.        Անոնց մի տաք զայն .  
 Ne me le donnez pas.        Զայն ինձի մի տաք .

15. En եւ y դերանունները միւս դերանուններէն ետքը կը դրուին :

Je veux lui en donner.        Անոր կ'ուզեմ տալ անկէ .  
 je veux vous en donner.    Զեզի կ'ուզեմ անկէ տալ .

Je veux l'y envoyer. Կ'աւղեմ զայն հան զրկել.  
 Je les y ai conduites. Զանոնք հան տարի.

16. Y en էն առաջ կը գրուի :

Il y en enverra. Անկէ կամ անոնցմէ հան պիտի  
 գրկէ.

### 250. Հրահանգ

#### ՊԼՏՄՈՒԹՅՈՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՒ ՄԱՐԻԱՄԱՅ

Ատնոք վաճառական մը կար որ իւր կնոջ հետ  
 Հնդկաստան գացած էր : Հոն շատ ստակ շահեցաւ, եւ  
 քանի մը տարի ետքը նաւ մտաւ Ղազխա գալու ուս-  
 աի էր : Ուտար մը եւ դուտոր մը ունէր : Մանչը չո-  
 րնքամնայ էր եւ կը կոչուէր Յովհան, իսկ աղջիկը որ  
 երեքամնայ էր՝ կը կոչուէր Մարիամ : Արդ ճամբուն  
 կէսը հասան, մեծ ալէկոծութիւն մը պատահեցաւ,  
 եւ նաւուղիքն իմացուց թէ մեծ վտանգի մէջ էին,  
 քանզի հովը զանոնք գէպ ի կղզիներ կը մղէր, ուր  
 անոնց նաւն անվրէպ պիտի խորտակէր : Խեղճ վաճա-  
 ռականն այս լսելով մեծ տախտակ մը առաւ եւ ուժ-  
 գին կապեց անոր իւր կիներն ու երկու աղաքը : Զինք  
 ալ անոր պիտի կապէր, բայց ժամանակ չունեցաւ :  
 քանզի նաւը քարի մը զարկաւ, բացուեցաւ եւ բոլոր  
 անոնք որ մէջն էին՝ ծովն ինկան : Տախտակը որուն  
 վրայ էին կիներն ու երկու աղաքը՝ փոքրիկ նաւակի մը  
 սէս կեցաւ ծովին վրայ, եւ հովը զայն կղզուոյ մը  
 վրայ մղեց : Անատեն կիներ շուանները քակեց, եւ  
 ցամաք ելաւ իւր երկու աղայովք :

Ապահոջնալուն սէս, առաջին բրած բանը եղաւ  
 ծնկան վրայ գալ Աստուծոյ աղօթելու համար որ դա-  
 նի փրկեց : Իւր այրը կորուսած ըլլալուն շատ վշտու-  
 ցած էր, կը խորէր նաեւ որ ինք եւ իւր աղաք ա-

Կոթախնէ պիտի մտնէին այն կղզւոյն մէջ, կամ պիտի գիշատուէին վայրի դազաններէ: Յամանակէ մը ի վեր այս տխուր խորհարակներով լեցուած կը քալէր, երբ պողոտէք ծանրացեալ ոչ սակաւ ծաւեր տեսաւ. դուռադան մը տաւա, քանի մը հաւար ձգեց, զորս իւր փոքրիկ աղոց տուաւ, ինք ալ կերաւ: Յետոյ աւելի հետու երթալով տեսնելու համար թէ արդեօք տնակ մը կը դանէ, հատկաւ, ի մեծ յուսահատութիւն իւր, որ ամայի կղզւոյ մը մէջ էր: Սակայն իւր ճամբուան մէջ դասած էր մեծ ծառ մը որ փոք էր, և որոշեց գիշերը հոն անցունել: Աւտի հոն պատկեցաւ իւր աղայովք, և ի վաղիւն աւելի յառաջ գնաց կրղզւոյն մէջ որչափ կրցան քալել: Գտած էր նաև ճամբուան մէջ թռչնոց բոցներ, որոնց հաւկիթներն տաւ: Վերջապէս տեսնելով որ ոչ մարդ կը գտնէր և ոչ վրնաստիար գազաններ, որոշեց որ Աստուծոյ կամայը հպատակի, և կրցածն ընէ իւր աղաքը լաւ կրթելու: Իւր գրգանին մէջ Աւետարան մը և Աղօթագիրք մը ունէր. դանանք զործածեց իւր աղոցը կարգալ և գլխատուած ճանհալ սորվեցնելու համար: Յը մը փոքրիկ մանչն անոր ըսաւ. « Մայր, մեր է հայրս. » « Արեւի որդեակ, » պատասխանեց խեղճ կինը լալով, « Ձեր հայրը երկինք գնաց. բայց դուք ուրիշ հայր մը ունիք որ Աստուած է: Այն հոս է, թէպէտ դանի չէք տեսներ: Այն է որ մեզի այս պտուղներն ու այս հաւկիթները կը գրկէ, և մեզի խնամք պիտի տանի ցորչափ մենք դանի կը սիրենք մեր բո՞՞ր որտով և անոր կը ծառայենք: » Կրբ այն փոքրիկ աղայք կարգալ գիտցան, շատ հաճութեամբ կը կարգային ինչ որ իրենց գիրքերուան մէջ կար, և բոլոր օրն անոնց վերայ կը խօսէին: Գարձեալ՝ բարի էին և շատ նաւդանդ իրենց մօրը:

Արիւ տարի ետքը այս խեղճ կինը հիւանդացաւ,

և. զգալով որ մահը կը մտաէր, ի սկզբան շատ հոգ  
ըրաւ իւր խեղճ տղաց համար. բայց ի վախճանի  
խորհեցաւ թէ Աստուած որ այնպէս բարի է, անոնց  
հոգ պիտի տանէր իւր ծառին խոռոչին մէջ պառկած  
էր, և իւր տղայքը կանչելով անոնց ըսաւ. « Ես  
ընդհուպ պիտի մեռնիմ, սիրելի տղայքս, և զուք  
այլ ևւս մայր պիտի չունենաք: Սակայն յիշեցէք որ  
մինակ պիտի չըլլաք, և թէ Աստուած պիտի տես-  
նէ ինչ որ կ'ընէք: Մի պակսիք զիշեր ցորեկ անոր  
աղօթիկէ: Դուն, իմ սիրելի Յովհանս, քրոջ խը-  
նամք տար, անոր մի սաստեր, երբէք մի ծեծեր.  
դուն անկէ մեծ և անկէ զօրաւոր ևս. դուն դիս ա-  
նոր պատու և հաւկիթ վնասելու: » Քանի մը բան  
ալ Մարիամայ ըսել կ'ուզէր, բայց ժամանակ չունե-  
ցաւ. մեռաւ:

Այս խեղճ տղայք չէին հասկնար ինչ որ անոնց  
մայրն անոնց ըսել կ'ուզէր, քանզի չէին գիտեր թէ  
ինչ է մեռնելը: Արբ անիկա մեռաւ, անոնք կարծե-  
ցին թէ կը քնանար, և չէին համարձակեր աղմուկ  
ընել զանի արթնցնելու վախէն: Յովհան պատու վըն-  
տընելու գնաց, և երբ ընթրեցին, պաակեցան ծա-  
ռին քով, և երկուքն ալ քնացան: Ի վաղիւն շատ  
զարմացան որ իրենց մայրը դեռ կը քնանար, և ե-  
կան անոր թեւէն քաշելու զանի արթնցնելու համար:  
Արբ տեսան որ իրենց չէր պատասխատէր, կարծեցին  
թէ իրենց դէմ նեղացած է, և սկսան լալ, անկէ  
ներսւմ խնդրեցին, և անոր խոտտացան շատ խելօք  
ըլլալ: Բայց ի դուր. խեղճ կինը չէր կրնար անոնց  
պատասխանել: Հոն կեցան ոչ սակաւ օրեր, մինչև  
որ մարմինը սկսաւ փախլ: Աստու մը Մարիամ ըս-  
կըսաւ ազազակ բառնալ, և ըսաւ Յովհանին. « Մհ,  
եղբայր, ահա որդերը կ'ուռնն մեր խեղճ մայրը.  
պէտք է զանոնք մէկգի ընել. և կուր օգնել ինծի: »

Յովհանն մօտեցաւ , բայց մարմինը կը բուրէր այնպէս սաստիկ հաս մը որ չկրցան հոն մնալ , եւ սախալուեցան երթալ ուրիշ ծառ մը փնտռելու հոն պահակելու համար : Այս երկու տղայք չպակսեցան երբէք Աստուծոյ աղօթելէ . իրենց դիրքերն այնպէս յաճախ կը կարդային որ բերնուց զխտէին զանոնք : Երբ շատ կը կարդային , պտակու կ'երթային , կամ խոտին վրայ կը նստէին ու կը խօսակցէին :

Օր մը Յովհանն իւր քրոջն ըսաւ . « Կը վիշեմ , երբ շատ փոքր էի , տեղ մը դացի ուր մեծամեծ տուներ ու շատ մարդիկ կային . հայրս շատ ծառաներ ունէր . դեղեցիկ հանդերձներ ալ ունէինք : Յանկարծ մեր հայրը մեզ տուն մը գրաւ որ ջուրին վրայ կ'երթար , եւ յետոյ մեզ մէկէն տախտակի մը կապեց եւ ծովին տակը գնաց ուստի նորէն շեկաւ . եւ մեր խեղճ մայրն ըսաւ թէ անիկա հիմա երկինքն է : » — « Ասիկա շատ զարմանալի է , » տատասխանեց Մարիամ , « բայց վերջապէս , որովհետեւ ասիկա պատահեցաւ , ուրիմն Աստուած ուզեց . քանզի գիտէք , սիրելի եղբայրս , որ անիկա ամենակարող է : » Յովհանն եւ Մարիամ տասնեւմէկ տարի այն կղզին մնացին : Օր մը որ ծովին եզերքը նստած էին , ոչ սակաւ սեւ մարդոց նաւակով մը մօտենալը տեսան : Մարիամ ի սկզբան վախցաւ եւ ուզեց փախչել . բայց Յովհանն ըսաւ անոր . « Կենանք , քոյրս , չնս գիտեր որ մեր հայրը Աստուած հոս է , եւ պիտի արգելէ այս մարդիկը մեզի փնտա ընելէ : » Այն սեւ մարդիկը ցամաք ելլելով , զարմացան տեսնելով այս տղայք որ իրենցմէ ուրիշ դոյնով էին : Զանոնք պատեցին եւ անոնց խօսեցան . բայց անօգուտ եղաւ . քանզի այս տղայք անոնց լեզուն չէին հասկնար : Յովհանն այն վայրենիները տարաւ այն տեղը ուր մօրը ոսկրներն էին , եւ անոնց պատմեց թէ անիկա ինչպէս մտած էր . բայց

անոնք ալ զանի չէին հասկնար : Վերջապէս սուերն անոնց ցուցին իրենց փոքր նաւակը , եւ անոնց նշան ըրին որ հոն մտնեն : « Չեմ համարձակիր , » ըսաւ Մարիամ , « այս մարդոցմէ կը վախնամ . » բայց եզբայրն անոր սիրտ տուաւ :

Մտան նաւը որ զանոնք տարաւ աւելի հեռու . եւ վայրենիներէ ընակեալ կզգի մը : Բոլոր այն վայրենիները զանոնք ազէկ ընդունեցան . անոնց թաղաւորը չէր յազիր Մարիամին նայելէ , եւ յաճախ ձեռքը սրբախն վրայ կը դնէր , ցուցնելու համար որ զանի կը սիրէր : Մարիամ եւ Յովհան շուտով այն վայրենիներուն ընդուն խօսեցան , եւ անոնց վերաբերեալ բաներուն տեղեկացան : Յովհան հասկցաւ շուտով որ անոնք պատերազմ կ'ընէին մտակայ կողմները ընակող ժողովրդոց հետ , թէ իրենց դերիները կ'ուտէին , եւ թէ կը պաշտէին ազեղ կապիկ մը որ շատ մը վայրենիներ ունէր իրեն ծառայելու համար , այնպէս որ երկու աղայք շատ կը ցաւէին որ այն չար մարդոց քով ընտկելու եկան : Մակայն թաղաւորը կ'ուզէր բացարձակապէս ամուսնանալ Մարիմայ հետ , որ կ'ըսէր եղբօրը . « Կ'ուզեմ մանաւանդ մեռնել քան թէ այդ մարդուն կէն ըլլալ : » « Շատ ազեղ ըլլալուն համար է որ չես ուզեր անոր հետ ամուսնանալ , » կ'ըսէր Յովհան : « Ոչ , եղբայր , » կ'ըսէր անոր Մարիամ , « վասն զի չար է . չիս տեսնել որ մեր հայրը զՍասուած չի ճանչնար . եւ փոխանակ անոր աղօթելու , այն ազեղ կապիկն առջև կը ծնրադրէ : Գարձեալ մեր գիրքը կ'ըսէ որ սէտք է ներկէ մեր թշնամիներուն , եւ անոնց բարիք ընել . եւ զուն կը տեսնես որ փոխանակ այսր , այս չար մարդն իւր գերիները սպաննել կու տայ եւ զանոնք կ'ուտէ : »

« Միտքս խորհուրդ մը կու դայ , » ըսաւ Յովհան « Կ'թէ այն ազեղ կապիկը սատակինք , անոնք պիտի

տեսնեն որ անիկա Աստուած չէ : Պէտք է որ զանի թունասորենք : » Մարիամ հաճութիւն տուաւ , եւ հապիկը մնաւ : Անոր ինամ տանող վայրենիները որ անոր քուրմերն էին՝ թագաւորին ըսին որ Մարիամ եւ անոր եղբայրը սլաճառ էին սլաճահած չարեաց , եւ թէ ինք պիտի չկրնար երջանիկ ըլլալ , մինչև որ այն երկու ճերմակները չսպաննուէին : Իսկոյն որոշուեցաւ թէ զս՝ մը մատուցուի նոր հապիկն որ առաջնոյն տեղ դրուած էր , եւ թէ երկու ճերմակները ներկայ ըլլային այն գոհին , եւ ետքը անոնք կենդանուոյն այրուէին : — Յովհանն այս որոշումն իմանալով անոնց ըսաւ . « Եթէ ձեր հապիկն Աստուած էր , ես չէի կրնար զանի ըստաննել . ո՛չ ապաքէն ես անկէ զօրաւոր եմ : Պէտք է սլաշտել զԱստուած մեծ որ երկնի եւ երկրի արարիչ է , եւ ոչ այսպիսի տղեղ կենդանի մը : » Այս խօսքը բոլոր վայրենիները դաշբացուց . անոնք զՅովհանն եւ զՄարիամ ծառի մը կապեցին , եւ զանոնք այրելու կը սլաճարատուէին , երբ լուր առին թէ իրենց թշնամիներէն բազմութիւն մը կըլլին ելան : Վազեցին անոնց հետ կառուելու , եւ յաղթուեցան : Յաղթող վայրենիները երկու ճերմակներուն շղթաներն հանեցին , եւ զանոնք իրենց կըլլին տարին , ուր անոնք թագաւորին գնդի եղան : Մակայն այս նոր վայրենիները ստէպ սլաճերագմ կ'ընէին , եւ իրենց դրացիներուն սէպ , կ'ուտէին իրենց գերիները : Օր մը շատ մը գերի բռնեցին , քանդի շատ քաջ էին : Այս գերիներուն մէջ ճերմակ մարդ մը կար . եւ որովհետեւ անիկա շատ նիհար էր , վայրենիները որոշեցին՝ զանի գիրցունելու տակէն առաջ : Զանի տնակի մը մէջ կապեցին , եւ Մարիամայ յանձնեցին անոր ուտելիք տանել : Որովհետեւ Մարիամ գիտէր որ այն մարդը քիչ ատենէն պիտի ուտուէր , անոր շատ դուրս ունէր , եւ կ'ըսէր

տխրութեամբ անոր նայելով . « Տէ՛ր Աստուած , դժաւ անոր : » Այս ճերմակ մարդը որ շատ դարմացած էր իւր գունդով աղջիկ մը տեսնելուն , առաւել եւս զարմացաւ , երբ լսեց որ անիկա իւր լեզուն կը խօսէր : « Քեզի Գաղիերէն խօսել ո՞վ սորվեցուց , » ըսաւ անոր : « Խօսած լեզուիս անունը չեմ գիտեր , » պատասխանեց Մարիամ . « Իմ մօրս լեզուն է , եւ այն սորվեցուց ինձի : Մենք երկու գիրք ալ ունինք , որոնց մէջ ամէն օր կը կարդանք : » « Տէ՛ր Աստուած , » դոչեց մարդը ձեռուրները երկինք վերցնելով , « կարելի՞ է : Բայց , աղջիկս , կրնաս ցուցնել ինձի գիրքերը ուրոնց վրայ կը խօսիս : » « Անոնք քովս չեն , » ըսաւ Մարիամ , « բայց երթամ կանչեմ եղբայրս որ դանոնք կը պահէ , եւ այն ձեզի կը ցուցնէ զանոնք : » Նոյն ժամանակ դուրս ելաւ , եւ քիչ մը ետքը Յովհանի հետ եկաւ , որ այն երկու գիրքը բերաւ : Ճերմակ մարդը դող ելած բացաւ զանոնք , եւ առջի էջին վրայ կարդալով՝ « Այս գիրքը կը վերաբերի Յովհան Մօրիսի , » գոչեց . « Ո՛հ , սիրելի տղաքս . ձեզ կը տեսնեմ : Եկէ՛ք համբուրեցէ՛ք ձեր հայրը . կրնա՞ք ձեր մօրը վրայ ինձի լուր տալ : » Յովհան եւ Մարիամ այս խօսքերուն նետուեցան ձերմակ մարդուն գիրկը ու բախտութեան արտասուք թափելով : Ի վերջոյ Յովհան խօսելու սկսելով գոչեց :


« Արրոս ինձի կ'ըսէ որ դուք հայրս էք . սակայն չեմ գիտեր թէ ասիկա ինչպէս կրնայ ըլլալ , քանզի մայրս ինձի շատ անգամ ըսած է թէ դուք ծովն ինկած էիք : » « Արդարեւ ծովն ինկայ , երբ մեր նաւը բացուեցաւ . « պատասխանեց մարդը . » բայց տախտակ մը բռնելով , յաջողութեամբ կ'զգի մը ելայ , եւ ձեզ կորսուած կարծեցի : » Անատեն Յովհան անոր ըսաւ ամէն բան որ կրցաւ յիշել : Ճերմակ մարդը շատ լացաւ , երբ իւր խեղճ կնոջ մահն իմացաւ : Մարի-

ամ ալ շատ կուշար, բայց սրիչ բանի մը համար : « Բարէ, » գոչեց, « ի՞նչ օգուտ է որ մեր հայրը գըտանք, քանզի անիկա պիտի սպաննուի եւ ուտուի քիչ օրէն : » — « Այս շղթաները կտորելու է, » ըսաւ Յովհան, « եւ երեքս ալ անտառը փախչելու ենք : » « Հոն ի՞նչ ընենք, խեղճ տղաք, » ըսաւ Յովհան Մօրիս (անոնց հայրը) . « Վայրենիները մեզ նորէն պիտի բռնեն եւ կամ անօթութենէ մեռնելու ենք : » « Գուք ինծի թողէք, » ըսաւ Մարիամ . « Ես ձեզ ազատելու անվրէպ միջոց մը գիտեմ : »

Մարիամ այս խօսքերը ըմբոսնելով գուրս կլաւ եւ գնաց թաղաւորը գտնելու : Երբ անոր անակը մտաւ, անոր ոտքն ինկաւ, եւ ըսաւ . « Տէր, ձենէ մեծ շընորհք մը պիտի խնդրեմ . կը խոտաճանձք ինծի կատարել դայն : » « Կ'երգնում, » ըսաւ թաղաւորը, « քանզի ձենէ շատ դո՛ւ եմ : » « Լաւ, » ըսաւ Մարիամ . « զխոցէք որ այն ձերմակ մարդը որուն խընամքը յանձնեցիք ինծի, իմ եւ Յովհանին հայրն է . գուք որոշած էք զանի ուտել . ես եկած եմ ձեզի խմացունելու որ անիկա ծեր եւ նիհար է . ուր ես մանուկ եւ գէր եմ . ուտաի կը յուտամ որ պիտի ուղէք անոր տեղ զիս ուտել : Ձենէ ութ օր միայն ժամանակ կ'ուզեմ զանի աւելի երկայն ատեն տեսնելու հաճութիւնն ունենալու համար : » « Արգարեւ, » ըսաւ անոր թաղաւորը . « գուն այնպէս բարի ազջիւն մըն ես, որ ամենեւին չեմ ուզեր քեզ մեռցունել . գու եւ հայրդ ալ պիտի ապրիք : Ձեզի կ'իմացնեմ նաև որ հոս ամէն տարի ձերմակ մարդերով լեցուն նաւ մը կու գայ, որոնց մենք չկերուած գերիները կը ծախենք . այն նաւը քիչ ատենէն կու գայ, եւ ձեզի թող պիտի տամ ասկէ երթալու : »

Մարիամ թաղաւորին շատ շնորհակալ եղաւ, եւ սրտին մէջ շնորհակալ եղաւ Աստուծոյ, որ թաղա-

52  
 արին ազգեց իրեն դիմարու : Վաղեց այս աւետար  
 տարու հօրը , եւ քանի մը որ հաքք սնւ թագաւորին  
 ըսած նաւը հասաւ , եւ Մարիամ իւր հօրը եւ եղբօ-  
 րը հնա նաւարկեց : Անոնք Սպանիացիներէ ընակ-  
 ուած կղզի մը ելան : Այս կղզւոյն կառավարիչը Մա-  
 րիամի պատմութիւնը լսելով , ինքնիրեն ըսաւ .  
 « Այս աղջիկը դանդ մը չունի , եւ արեւէն այրած է .  
 բայց այնպէս բարի եւ առաքինի է որ կրնայ իւր  
 այրն աւելի երջանիկ ընել քան թէ հարուստ եւ գե-  
 ղեցիկ ըլլար : » Աւտի Մարիմայ հօրն ազաչեց որ  
 աղջիկն իրեն ամուսնութեան տար : Յովնան Մօրիս  
 հաւանեցաւ , կառավարիչն ալ կրն աւաւ դանի . իւր  
 ազգականներէն աղջիկ մ'ալ Յովնամին աուաւ : Ա-  
 նոնք շատ երջանիկ ապրեցան այն կղզին , զարմա-  
 նալով Նախախնամութեան իմաստութեան վրայ որ  
 թող աուած էր որ Մարիամ գերի ըլլար , որպէս զի  
 անոր պատեհութիւն տար իւր հօրը կեանքը փրկե-  
 լու :



ԲԱՅԵՐՈՒ ՎԲԱՅ ԳԻՏԵԼԻԻՔ

Արդէն ըսուեցաւ թէ բայերուն ժամանակներէն ունիք Նախնական ժամանակներ են, ոմանք՝ Աճանցաւ, եւ թէ՛ Աճանցեալ ժամանակները Նախնականներէն կը շինուին. Տես Գաս ԻԳ:

Նախնական ժամանակ են՝ Աներևոյթը, Ընդունելութիւն ներկան, Ընդունելութիւն անցեալը, Սահմանական ներկային եղակի երեք գէմքերը, եւ Անցեալ որոշեալը: Անցեալ ժամանակներն, ինչպէս Սահմանական ներկային յօքնակին, Անկատարը, Ապամին, եւ այլք այս հինգ նախնական ժամանակներուն մէկէն կամ միւսէն կը շինուին: Ասոնց կանոնները տես,

Սահմանական ներկային համար՝ Գաս ԻԳ. եւ ԻԵ:  
 Անկատարին համար՝ Գաս ԾԹ. եւ Կ:

Անցեալ անորոշին համար՝ Գաս ԼԳ:  
 Ապամնոյն համար՝ Գաս ԽԶ:

Անցեալ կամ Յառաջագոյն ապամնոյն համար՝ Գաս ՀԲ:

Անցեալ ներկային եւ Անցեալին համար՝ Գաս Կ:  
 Անցեալ անցեալին համար՝ Գաս Հ:

Անցեալ յառաջագոյնը (passé antérieur) կը շինուի յառաջատական ներկային համար՝ Գաս ՀԲ. եւ Սա. յառաջատական անկատարին համար՝ Գաս ՀԾ:

Անցեալ յառաջագոյնը (passé antérieur) կը շինուի անդակին Անցեալ որոշեալէն եւ բային Ընդունելուին անցեալէն. j'eus aimé, սիրեցի. je fus allé, եղախատարը (plus-que-parfait) միշտ օժանդակին տարէն եւ բային Ընդունելութիւն անցեալէն կը շինուի. j'avais aimé, սիրած էի. j'étais allé, գացած էի:

Ա  
 ՅԱ  
 ՏԻԼ

Օժանդակին աներևոյթը բայի մը (լնդունելութիւն անցեալովը կը շինէ . Անցեալ աներևոյթը ( infinitif passé ) . avoir aimé, սիրած ըլլալ . être allé, դացած ըլլալ :

Օժանդակին (լնդունելութիւն ներկան բայի մը (լնդունելութիւն անցեալով դարձեալ (լնդունելութիւն անցեալ է . ayant aimé, սիրած ըլլալով . étant allé, դացած ըլլալով :

Ուստի բայի ժամանակները կազմելու համար՝ բաւական է այն բային նախնական ժամանակները դիտել :

Զորս լծորդութեանց կանոնաւոր բայերուն նախնական ժամանակները յայտնի եւ դիւրին են ( Տես Դաս Ի՛Գ . ) :

Հոս վարտուղի բայերուն նախնական ժամանակներուն միայն պատկերը կը դնենք, բայց կը նշանակենք քանի մը վարտուղի բայերու ածանցեալ ժամանակները որ ըստ կանոնի չեն ելլեր նախնական ժամանակներէն :

Գ Ա Ղ Ի Ե Ր Ի Ն Ի Բ Յ Ի

ienne, que tu tiennes,

tiel

il ti

Venir

échoir,

U. je décé

Echoir, éci

U. il échi

Falloir,

U. il fail

Mouvoir

U. je meus

je déchois, je déchus.

échu, il échoit *համ* il échet. il échut.

llu, il faut, il fallut.

U. il faillit. *Ստոր. ներկ.* qu'il faille.

ouvant, mû, je meus, je mus.

meus, tu meus, il meut. ils meuvent. *Ստ. ներկ.* que tu meuves, qu'ils meuvent.

pourvoyant, pourvu, je pourvois, je pourvus.

je pourvoirai, *եւն*.

puvoir, pouvant, pu, je peux, je pus.

*Տմ. ներկ.* je peux, *համ* je puis, tu peux, il peut. ils peuvent. U. je pourrai, *եւն*. *Ստոր. ներկ.* que je puisse, que je pourrais, *եւն*.

seoir, s'asseyant, assis. je m'assieds, je m'assis.

*երկ.* je m'assieds, tu t'assieds. il s'assied. je m'assiérai, *եւն*. *համ* je m'asseierai, *եւն*.

voir, sachant, su, je sais, je sus.

*Տմ. ներկ.* je sais, tu sais, il sait. nous savons, vous savez. ils savent. U. je saurais, *եւն*. U. je saurai, *եւն*.

sache, sachons, sachez.

valoir, valant, valu, je vaux, je valus.

*Տմ. ներկ.* je vaux, tu vaux, il vaut. U. je voudrai, *եւն*. *համ. չուճի.* *Ստոր. ներկ.* que je vaille, que tu vailles, qu'il vaille. qu'ils vailent.

Prévaloir *բայն ալ ստոր պէս կը խոնարհի,* բայց *Ստոր. ներկ.* que je prévale, *եւն*.

voir, voyant, vu, je vois, je vis.

U. je verrai, *եւն*.

vouloir, voulant, voulu, je veux, je voulus.

*Ստ. ներկ.* je veux, tu veux, il veut. ils veulent. U. je voudrai, *եւն*. *Տմ. չուճի.* *Ստոր. ներկ.* que je veuille, que tu veuilles, qu'il veuille, qu'ils veuillent.

boire, buvant, bu, je bois, je bus.

*երկ.* je bois, tu bois, il boit. ils boivent. *Ստոր. ներկ.*

voudr  
venilles  
Boir, I  
U. Տմ

que je boive, que tu boiv  
Dire, disant, dit, je dis; **СКОРЪ**

**УСДЪ** *нѣрѣ*. je dis, tu dis, **СКОРЪ**

Redire, *дѣлать* vous redi' **СКОРЪ** dedire, interdire, médi-  
re, *дѣлать* Vous dédisez, vous interdisez, **СКОРЪ**

Faire, faisant, fait, je fais, je fis.

**УСДЪ** *нѣрѣ*. je fais; tu fais, il fait. vous faites. **СКОРЪ**

je ferai, **СКОРЪ** *нѣрѣ*. que je fasse, **СКОРЪ**


Frir, —, fri. je fris.

**УСДЪ** *нѣрѣ*. je fris, tu fris, il frit. **СКОРЪ**

Prendre, prenant, prit. je drends, je pris.

**УСДЪ** *нѣрѣ*. je prenbs, tu prends, il prend. ils **СКОРЪ**

**СКОРЪ** *нѣрѣ*. que je prenne, que tu prennes, quil pren-  
qu'ils prennent.



1  
1  
1  
1  
1

1  
1  
1  
1  
1

1  
1  
1  
1  
1  
1  
1  
1  
1  
1

1  
1  
1  
1  
1

1  
1  
1  
1  
1

1  
1  
1  
1  
1

379  
16